ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (1915-1918թթ.)

947.9 25 «1915»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (1915-1918թթ.)

ԸՍՏ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐԽԻՎԻ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ

А 89172

Կազմող և առաջաբանի հեղինակ՝
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վ. Ա. Միքայելյան

ԵՐԵՎԱՆ 2004

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)
Հ 282

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ

ՄԱՏԵՆԱՇԱՐ թիվ 4

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ Վ.Մ. Մարտիրոսյան

Հ 282 Հայոց ցեղասպանությունը Գերմանիայի դիվանագետների հաղորդագրություններում (1915-1918 թթ.): [Կազմող և առաջաբանի հեղինակ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վ. Ա. Միրզայեյան, ռուսերենից թարգմանությունը՝ պատմական գիտությունների թեկնածու Ա. Մարությանի].-Երևան, ՀՀ ԳԱԱ, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Նահապետ: 2004.- 219 էջ:

Ընթերցողներին են ներկայացվում Կայսերական Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի վավերագրերը, որոնք ուղղակիորեն վկայում են 1915-1918թթ. Հայոց ցեղասպանության մասին:

Հ $\frac{0503020913}{0076(01)-2004}$ 2004թ. ԳՄԴ 63.3(2Հ)

ISBN 99941-39-16-9

© Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ երիտթուրքական կառավարության կողմից իրագործված հայ ժողովրդի ցեղասպանության լուսաբանման արդիական նշանակությունը կապված է նաև թուրքական կողմի այն դիրքորոշման հետ, որի նպատակն է ժխտել Թուրքիայում կատարված հայ բնակչության բնաջնջման փաստը: Թուրքական գործիչները, պատմաբանները, քաղաքագետները սովորաբար դիմում են այն «փաստարկմանը», որ իբր հայոց եղեռնի վերաբերյալ անգլո-ամերիկյան և ֆրանսիական փաստաթղթերը միտումնավոր են և անընդունելի, քանի որ դրանք առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի թշնամի պետությունների փաստաթղթեր են: Այս աղերսով խիստ կարևոր են 1915-1918թթ. Թուրքիայում ծառայած գերմանացի դիվանագետների վկայությունները՝ զեկուցագրերն ու հաղորդագրությունները, որոնք ցայսօր պահպանվում են կայզերական Գերմանիայի արտգործնախարարության քաղաքական արխիվում և որոնցից շատերը մեզ հասու են 1989թ. այդ արխիվում կատարած տևական աշխատանքի շնորհիվ:[1] Խնդիրն այն է, որ գերմանացիների վկայությունների պարագայում «Թուրքիայի թշնամի պետությունների» «փաստարկումը» կորցնում է իր ուժը, որովհետև կայզերական Գերմանիան պատերազմում ոչ միայն Թուրքիայի թշնամին չէր, այլև նրա զինակիցն ու դաշնակիցն էր, և նրա կառավարության թողտվության պայմաններում էր, որ երիտթուրքերը հնարավորություն ստացան անարգել իրագործելու հայերի ոչնչացման իրենց ծրագիրը:

Նշված արխիվից քաղված փաստաթղթերի հիման վրա, ելնելով թեմայի բնույթից՝ ստորև լայն տեղ ենք տալիս փաստաթղթերի բովանդակությանը: Կարծում ենք, ներկա իրադրության պայմաններում, երբ թուրքական կողմը համառորեն չի ուզում ընդունել հայոց եղեռնի փաստը, նյութերի բովանդակության ներկայացման առավելություն տալը լիովին բացատրելի է:

Թուրքիայում հայ բնակչության զանգվածային բռնագաղթեցմանը և կոտորածին զոհ դարձան 1,5 միլիոն հայեր, իսկ նրանց հայրենիքը՝ Արևմտյան Հայաստանը, պատմական Հայաստանի տարածքի 9/10 մասը, վերածվեց ավերակների ու մոխրակույտերի: Բնականորեն առաջանում է այն հարցը, թե ինչու երիտթուրքական կառավարությունն իր պանթուրքական պլանների իրագործման ճա-

---

[1] «1915թ. Հայոց ցեղասպանությունը. պատմության և պատմագրության հարցեր», հոդվածների ժողովածու, Երևան, 1995, էջ 21-35:

նապարհին առաջին հարվածն ուղղեց հենց հայերի դեմ: Այս աղերսով նշենք երեք նկատառում:

1. Հայերը կրոնական և մշակութային առումով բոլորից առվել էին դիմադրավում իսլամացման-օսմանացման քաղաքականությանը, մինչդեռ սլավենները, չերնոգորցիները և նույնիսկ սերբերի մի մասը ընկրկեցին թուրքական իշխանությունների և մահմեդական հոգևորականության ճնշման տակ:

2. Թուրքիայի տարածքի ահագին մասը կազմում էր Արևմըտյան Հայաստանը, այսինքն Արևելյան Անատոլիան, և այդ պատճառով էլ երիտթուրքերի վերջնական նպատակի իրականացման, այն է՝ Միջերկրականից մինչև Ալթայ պանթուրքական պետության ստեղծման ճանապարհին կանգնած էին Հայաստանն ու հայերը:

3. Եվ, վերջապես, պատերազմական իրավիճակը երիտթուրքական կառավարությանը հնարավորություն էր տվել ավելի հեշտությամբ «հաշիվ տեսնել» հայերի հետ, քանի որ հայկական վիլայեթների բնակչությունը զրկված էր դրսի աշխարհի անմիջական օգնությունից:

Մի փոքր առաջ ընկնելով՝ նշենք, որ երրորդ նկատառման տեսակետից ուշագրավ է Կ. Պոլսում գերմանական դեսպան Բերնսդորֆի 1918թ. հունվարի 19-ի գաղտնի հաղորդագիրը ռայխսկանցլեր Հերտլինգին: «Քանի որ Թուրքիան այսօր պարուրված է նացիոնալիզմով,- հաղորդում է դեսպանը,- ապա անատոլիական-հայկական հարցին ավելի մեծ նշանակություն է տրվում, քան արաբականին, որովհետև առաջին դեպքում խոսքը ազգային թուրքերի և քրիստոնյաների մասին է... Ընդսմին, երկրի արաբական մասերի հարցում - թուրքական կառավարությունը, հավանաբար, ավելի շուտ պատրաստ է զիջումների: Իմ ներկայությամբ մեծ վեզիրը (Թալեաթը – Վ. Մ.) արտահայտվեց այն առումով, թե Թուրքիան կկարողանար «կամովին» երկրի արաբական մասերին տրամադրել որոշակի ինքնավարություն, քանի որ այդ դեպքում խոսքը մահմեդականների մասին է»:[2]

Հայոց եղեռնի հարցերը աչքի ընկնող տեղ են գրավում Թուրքիայում հավատարմագրված գերմանական հյուպատոսների և փոխհյուպատոսների 1915-1918թթ. զեկույցներում, հաղորդագրություններում, հեռագրերում և այլ կարգի գրություններում: Հյուպատոսներ և փոխհյուպատոսներ Շոյբներ-Ռիխտերը (Էրզրում), Ռյոսլերը (Հալեպ), Հոֆմանը (Ալեքսանդրետ), Բյուգեն (Ադանա), Հոլշտայնը

[2] Das politische Archiv des auswärtigen Amts des kaiserlichen Deutschlands (Politarchiv), R 14098, Ab. 3174.

(Մոսուլ), Կուկհոֆը (Սամսուն), Վեհրտը, Բերգֆելդը (Սվաս, Տրապիզոն) և այլք իրենց հաղորդումներում, որոնք հիմնականում հաստեագրված են Կ. Պոլսի գերմանական դեսպանին, Գերմանիայի արտգործնախարարությանը և ռայխսկանցլերին ուղարկվել են «գաղտնի» կամ «խիստ գաղտնի» մակագրով, հանգամանորեն տվել են արևմտահայ քաղաքներից ու գյուղերից կատարված հայ բնակչության տեղահանության ու կոտորածի զարհուրելի պատկերը:

Սկսենք Սամսունի փոխհյուպատոս Կուկհոֆի հաղորդագրությունից. 1915թ. հուլիսի 4-ին Կ. Պոլսում գերմանական դեսպան Վանգենհայմին ուղղած իր զեկույցում նա ընդգծում էր, թե հայ բնակչության բռնագաղթեցումն ու կոտորածը միմյանց հավասարազոր երևույթ են: Թուրքական կառավարության կողմից «կիրառվող միջոցառումները, որոնք տեղի են ունենում անատոլիական բոլոր վիլայեթներում, այնքան դաժան են և հակասում են մարդկային զգայնությանը, որ դրանց չի կարելի վերաբերվել անտարբեր: Խոսքը ոչ պակաս, քանի մի ամբողջ ժողովրդի ոչնչացման մասին է... Կառավարությունը հայկական բոլոր տներն է ուղարկում մոլեռանդ տղամարդկանց և կանանց՝ իսլամության ընդունման պրոպագանդա մղելու նպատակով, բնականաբար սպառնալով ծանրագույն պատիժներ բոլոր նրանց համար, ովքեր կմնան հավատարիմ իրենց հավատին»: Անդրադառնալով Սամսունից, նրա շրջանից և այլ վայրերից բռնագաղթեցվող հայերին, որոնց իբր թե պետք է տեղափոխեին Ուրֆա, Կուկհոֆը փաստարկում է, թե ոչ մի աքսորված հայ տեղ չի հասել: «Երկրի խորքից բոլորը տեղեկացնում են ամբողջ քաղաքների հայ բնակչության անհետացման մասին»[3], - շեշտում էր փոխհյուպատոսը:

Թուրքիայում ծառայած գերմանացի նշանավոր զինվորական ու դիվանագիտական գործիչներից էր 1915թ. Էրզրումի հյուպատոս Շոյքներ-Ռիխտերը: Նա նաև գերմանական այն սակավաթիվ դիվանագետներից էր, որոնք չէին թաքցնում նաև, թեկուզ պասսիվ ձևով, իրենց վրդովմունքը սեփական կառավարության վարքագծի հանդեպ: 1915թ. օգոստոսի 5-ին Կ. Պոլսի գերմանական դեսպան Հոհենլոհե-Լանգենբուրգին նա տեղյակ էր պահում, թե հայոց տեղահանումն ավարտված է՝ միաժամանակ նշելով, որ «կառավարությունն ու զինվորական իշխանությունները հայերի դեմ կիրառեցին անասելի դաժան միջոցներ: Բոլոր այն հայերը, որոնք դեռևս զենքը ձեռքերին ծառայում էին, դուրս հանվեցին բանակից և տեղակայվեցին աշխատան-

[3] Ibid., R 14086, AB. 1158:

քային գումարտակներում: Էրզրումի և Պասինայի սարահարթերի բնակիչ հայերը, որոնք կազմված էին կանանցից, երեխաներից և ծերերից, վտարվեցին իրենց գյուղերից և հարկադրաբար պետք է քշվեին Միջագետք: Այդ միջոցառումը իրագործվեց անողոքաբար և դաժանորեն: Էրզնջան տանող ճանապարհին նշված մարդիկ Մամախաթունի. Սանսարի, Եփրատի կամուրջի և Փերեզի մոտ քրդերի և թուրքական կամավորական ջոկատների կողմից ենթարկվել են հարձակման, կողոպտման և սպանությունների:Զոհերի թիվը հասնում է 10-20 հազարի»:[4] Նրա վկայությամբ նույն ճակատագիրն էին բաժանել նաև Էրզնջանի հայերը՝ Սատանայի կիրճ տխրահռչակ անունը վաստակած Կեմախի կիրճով անցնելիս: «Էրզնջանի սարահարթի բնակիչները Կեմախի կիրճով անցնելիս, շատ աննշան բացառությամբ, ճիշտ նույնպես կողոպտվել են, սպանվել, իսկ կանանց առևանգել են: Ընդ որում, ինչպես ձեզ արժանահավատ աղբյուրից հայտնվել է, կոտորածին մասնակցել են թուրքական զինվորականներն ու ժանդարմները»: Հյուպատոսը կարևոր է համարել առանձնացնել նաև այն, որ մյուս վիլայեթներում սպանվածների թիվը էլ ավելի մեծ է. «Խնուսի սարահարթում տեղի է ունեցել հայերի մեծ կոտորած, իսկ Տրապիզոնի վիլայեթում բոլոր տղամարդկանց սպանել են: Էրզնջանում իմ գտնվելու ժամանակ,- գրում էր նա,- այնտեղով անցնող Տրապիզոնից քշվածների շարասյունների մեջ ես փաստորեն բոլորովին ոչ մի տղամարդ չտեսա»:[5] Դատելով հյուպատոսի զեկուցագրերից, նա հանդգնել էր թուրքական իշխանություններին բողոք ներկայացնել հայերին չկոտորելու աղերսով. «Այն բանից հետո, երբ հայտնի դարձավ Կեմախի, Խնուսի, Դերջանի մոտ տեղի ունեցած ջարդի մասին, ես խիստ բողոքեցի վալիին (Էրզրումի)»:[6]

Տարիուկես անց, 1916թ. դեկտեմբերին, Մյունխեն վերադարձած Շոյբներ-Ռիխտերը, ընդհանրացնելով իր ձեռքի տակ եղած վավերագրերը, պիտի կրկին վկայեր, որ արևմտահայության ճնշող մեծամասնությունը դարձել է թուրքական բարբարոսության զոհը: «Այս ցեղի (հայերի —Վ.-Մ.) հարկադրաբար աքսորված մնացորդները, որոնք դեռ ապրում են Միջագետքում, գտնվում են ծայր աստիճանի անմխիթար վիճակում: Չափազանցություն չէ ամենևին, երբ ասում են, որ թուրքահայերը, բացառությամբ Կ. Պոլսում և մյուս մեծ քա-

[4] Ibid., R 14088, Ab. 28584:
[5] Ibid.:
[6] Ibid.:

դաքներում ապրողների, միևնույնն է, թե ոչնչացված են»:[7]

Երիտթուրքական կառավարության ծրագրով բռնագաղթեցումը դարձավ հայ բնակչությանը զանգվածաբար ոչնչացնելու ձև: Այդ բանը գիտեին ոչ միայն Թուրքիայում ծառայող գերմանացիները, այլև նրանց հայրենակից շատ գործիչներ բուն Գերմանիայում: Նրանցից մեկը հայկական հարցին իրազեկ ռայխստագի անդամ Էրցբերգերն էր: 1916թ. մարտի 3-ի իր հուշագրում, որը նախատեսված էր Էնվերին ու Թալեաթին հանձնելու համար, նա գրում էր. «Կարելի է ենթադրել, թե բռնագաղթեցումը պատժի ավելի մեղմ ձև է, քան սպանելը: Բայց իրականում առաջինը երկրորդից շատ քիչ է տարբերվում: Այն դեպքում, երբ կոտորածի ժամանակ միշտ էլ ոմանց հաջողվում է ճողոպրել, թաքնվել կամ փախչել լեռները, բռնագաղթեցման ժամանակ կենդանի մնալու շանսերը շատ քիչ են: Մարդկանց անասնահոտերի նման քշում են նշանակված վայրերը: Եվ այդպիսով աքսորյալները մահանում են սովից ու ցրտից»:[8]

Հայոց բռնագաղթեցումն ու կոտորածը հանգամանորեն արտացոլվել են Ալեքսանդրետի գերմանական փոխհյուպատոս Հոֆմանի զեկուցագրում: 1915թ. հոկտեմբերին մեկ ամսով փոխարինելով Հալեպի հյուպատոս Ռյոսլերին՝ նա նոյեմբերի 8-ին նրան է ներկայացնում փաստերով և եզրակացություններով առլեցուն մի ընդարձակ հաղորդագիր-զեկույց: Նա հայտնում է, որ հոկտեմբերին բռնագաղթեցումն իր աքցանների մեջ է առել անխտիր ամբողջ Անատոլիայի, ընդհուպ մինչև Կ. Պոլսի դարպասներն ընկած շրջանների հայերին: «Կարելի է հաստատապես ասել,- պնդում էր նա,- որ բուն հայկական վիլայեթներում բռնագաղթեցումը ուղեկցվել է մանկական հասակից բարձր արական սեռի հայերի զանգվածային ջարդով, իսկ շատ տեղերում էլ՝ հայկական բնակավայրերի ազգաբնակչության գլխովին ոչնչացմամբ»: Հոֆմանը նույնպես հավաստում էր, որ հայկական վիլայեթներում բռնագաղթեցումը ընդունել է դաժան, անմարդկային և բարբարոսական կերպարանք, կատարվել է այնպիսի եղանակով, որ Հալեպի, Մոսուլի, Թել-Աբիադի, Ռաս-էլ-Այնի հավաքակայանները հասել են ուժեղ և առողջ մարդկանց համբավ ունեցող այս ժողովրդի սոսկ ողորմելի բեկորները: Հոֆմանը երիտթուրքերին մերկացնելու անհրաժեշտությամբ այնուհետև բերում է Հալեպում բռնագաղթեցման գծով կոմիսար Էյուբ-բեյի կողմից անձամբ իրեն ուղղված հետևյալ հանդիմանական խոսքերը. «Դուք (գերմանացի-

---

[7] Ibid., R 14090, Ab. 33457:

[8] Ibid., R 14090, Ab. 5914:

ներդ) առաջվա պես չեք հասկանում, թե ինչ ենք մենք ուզում. մենք ուզում ենք արմատախիլ անել հայ անունը»:[9]

Բռնագաղթեցման և նրա տարած զոհերի ահասարսուռ պատկերը վավերագրական ծանր նկարագրություն են գտել ժամանակին Թավրիզի գերմանական դիվանագիտական ներկայացուցչության, իսկ 1915թ. վերջից նաև Հալեպի գերմանական հյուպատոսարանի աշխատակից Վիլհելմիտենի «Գրառումներում Բաղդադից Հալեպ կատարած ճանապարհորդությունից ստացած տպավորությունների մասին» վերնագրով:[9] Վիլհելմիտենն այդ ծանր ուղևորությունը ձեռնարկել է Հալեպի հյուպատոս Ռյոսլերի հանձնարարությամբ՝ խնդիր ունենալով ի մոտո իրազեկ դառնալ Միջագետք բռնագաղթեցված հայության վիճակին՝ Բաղդադից Հալեպ ընկած 18 կայարան-կետերում՝ Բաղդադից և Աբու-Մեսիրից սկսած մինչև Հալեպ, ներառյալ Դեր էլ-Զորը: Ձիասայլի վրա 1916թ. հունվարի 17-ից մինչև փետրվարի 4-ը կատարած ուղևորության ընթացքում նրա կազմած նոթերը, հիրավի, ունեն վավերագրական փաստաթղթի ուժ, քանի որ, ինչպես հեղինակն ինքն է գրում, նա «կիսափայտացած մատներով իր գրառման գրքույկում սղագրել է իր դիտարկումները, տեսածն ու լսածը»՝ օր օրի, ժամ առ ժամ, րոպե առ րոպե: «Գրառումներում» պատկերված են բնաջնջված հայերի սոսկալի տեսարանները, որոնք լուսանկարչական ճշգրտությամբ վերարտադրել է գերմանացի դիվանագետը՝ կարծես թե նպատակ ունենալով կանխելու ապագայում Թուրքիայում Հայոց Եղեռնի փաստը ժխտել միտող ամեն մի փորձ: Վիլհելմիտենի «Գրառումների» դեմ, իրոք, ոչ մի կեղծարար ի վիճակի չէ սուր ճոճել: «Գրառումների» վերջում Վիլհելմիտենը հավաստում էր. «Թուրքիայում ամենուրեք, որտեղ անապատի ավազները հարևանում են բնակավայրերին, այս օրերին կատարվում է նման ողբերգություն և նրա հարյուր հազարավոր մասնակիցների հետ: Հայերին թուրքերն անվանում են ոչ թե գերիներ, այլ վերաբնակիչներ (մուհաջիրներ), և նրանք ևս իրենց այդպես են կոչում: Եվ մահվան ամենազզվելի այդ տեսակը պաշտոնական հաղորդագրության մեջ կոչվում է «վերաբնակեցում»: «Ի՞նչ է լինելու նրանց հետ», այսինքն բռնագաղթեցված հայերի հետ, ճանապարհին հարցնում էր գերմանացի դիվանագետը թուրքերից: «Նրանք կմեռնեն»,- հետևում էր պատասխանը: Այդպիսին էր կառավարության հանդեպ ժանդարմերիայի և զինված այլ միավորումների կույր հնազանդության հետե-

[9] Ibid., R 14090, Ab. 2889 16:

վանքը»:[10]

Վերը բերվեց սոսկ մի քանի օրինակ հայոց ցեղասպանության ընդհանուր պատկերը ներկայացնող Թուրքիայում ծառայած գերմանացի առանձին դիվանագետների բնութագրումներից: Տեղի սղության պատճառով բաց ենք թողնում մյուսների շատ հաղորդագրությունները:[11] Սակայն չեմ կարող շրջանցել Հալեպի հյուպատոս Ռյոսլերին և չնշել այն գրավոր բացատրությունները, որ նա ուղղել է գերմանական կանցլեր Բետման-Հոլվեգին 1915թ. դեկտեմբերի 20-ին՝ նույն թվականի հոկտեմբերին «Ֆրանկֆուրտեր ցայտունգում» ընթերցողին ապակողմնորոշող երկու հրապարակման կապակցությամբ: Հայերի ցեղասպանության խնդրում հանդիմանելով թերթին՝ Ռյոսլերը ռայխսկանցլերին զեկուցում էր, որ թերթի վերաբերմունքը ցույց է տալիս, որ Գերմանիայում հասարակությունը տեղյակ չէ, թե ինչ է կատարվում Հայաստանում: Ռայխսկանցլերին տեղյակ պահելով այն մասին, որ Թուրքիայի ներքին գործերի մինիստրության կողմից բռնագաղթեցման գծով Հալեպ ուղարկված կոմիսարը հայտարարել է, թե «մեզ պետք է Հայաստան առանց հայերի», Ռյոսլերը այնուհետև գրում էր. «Դա այն սկզբունքն է («Հայաստանն առանց հայերի» սկզբունքը), որով ղեկավարվել և դեռ էլի ղեկավարվում է թուրքական կառավարությունը, և նրա իրականացման նպատակով Փոքր Ասիայից ամբողջ հայ բնակչության 4/5-ը, ներառյալ կանայք և երեխաներ, արտաքսվել են իրենց բնակավայրերից և քշվել մեծ մասամբ հետիոտն, երկարատև ճանապարհով Միջագետք և Սիրիա»:[12]

Ռյոսլերը կարևոր էր համարում իր կառավարությանը մի ավելորդ անգամ ևս հիշեցնել, որ տարագրյալների գերակշիռ մասը կործանվել է սովից, ուժասպառությունից ու հիվանդություններից և դեռ շարունակում է դառնալ դրանց զոհը, «չխոսելով այլևս կառավարական օրգանների և վերջիններիս զորակոչած և ոգեշնչած բնակչության կողմից հայերի կանխամտածված ոչնչացման մասին:[13] Ռյոսլերի հաշվումներից տեղեկանում ենք, որ Արևմտյան Հայաստանից քշված հայերի 75 %-ը 1915թ. աշնան կեսերին զոհվել էր: Մնացածները, գրում էր նա, որոնք եկել հասել են Միջագետք (օրինակ՝ Ռաս-էլ-

---

[10] Ibid., R 14090, Ab. 4598 16:

[11] Դրանք ավելի մեծ ընդգրկմամբ տեղ են գտել մեր կազմած "Армянский вопрос и геноцид армян в Турции. Материалы Политархива МИД кайзеровской Германии" ժողովածուում, Երևան, 1995.

[12] Politarchiv, R 14089, Ab. 468.

[13] Ibid.:

Ային կամ Թել-Աբիադ), այն աստիճանի հալումաշ էին դարձել, որ նրանց մեծ մասն էլ զոհվեց: Միաժամանակ, Ռյոսլերը հանդիմանում էր թերթի խմբագրությանը, որը կասկածի տակ էր առել 800000 հայերի ոչնչացման մասին անգլիական տվյալները: «Ցավոք սրտի, դա չի բացառվում,- գրում էր նա: Մահացությունը Միջագետք և Սիրիա եկող հայերի մեջ արտակարգ մեծ է և դեռ երկար ժամանակ մնալու է բարձր՝ որպես բռնագաղթեցման անմիջական հետևանք, բռնագաղթեցում, որի վերջը բոլորովին էլ չի մոտեցել: Այդպիսի պայմաններում, ինչպես երևում է, զոհվածների 800000 հասնող թիվը, դրան լրջորեն վերաբերվող շրջաններում, որոնք կարող են ավելի լավ իրազեկված լինել, քան ուրիշները, դիտվում է որպես հավանական և նույնիսկ հնարավոր է համարվում, որ այդ թիվը ավելի մեծ է»:[14] Այս թվաքանակը մենք չենք քննարկում երկու պատճառով. նախ, նշված 800000-ը վերաբերում է 1915թ. աշնանը, երբ բռնագաղթն ու կոտորածը դեռևս ուժգնորեն շարունակվում էին, և երկրորդ, Ռյոսլերն ինքը, նկատելով այս հանգամանքը, գտնում է, որ արդեն այդ պահին կոտորվածների թիվը պետք է ավելին լիներ: Նշենք միայն, որ Ռյոսլերի տվյալները հիմնված էին արժանահավատ աղբյուրների վրա, քանի որ Հալեպը, որտեղ նա ծառայում էր 1913-1918թթ., այն վայրն էր, ուր գալիս էին և որտեղից անցնում էին դեպի Միջագետք բռնագաղթեցված հայերի շարասյունները:

Այսպես կոչված, «հայկական ապստամբությունների», «լրտեսության» և «խռովությունների» աղերսով ևս գերմանացի դիվանագետներն արտահայտել են իրենց կարծիքը: Նրանք բոլորը ժխտում են թուրքական կողմի մեղադրանքները, գտնում, որ դրանք զուտ քարոզչական միտվածություն ունեն՝ արդարացնելու համար հայերի դեմ գործադրված բռնություններն ու կոտորածները: Նրանք անվարան փաստարկում էին այն իրողությունը, որ պատժիչ ջոկատներն ու ջարդարարները ղեկավարվում էին երիտթուրքական Ջեմիետի (կոմիտեի) որոշմամբ և պարտավոր էին անառարկելիորեն կատարել այն: Հ. Ֆիրբյուխերը նշված աղերսով մեջբերել է Թալեաթի կողմից 1915թ. սեպտեմբերի 15-ի Հալեպի պրեֆեկտուրա լրացուցիչ կարգով ուղարկված հետևյալ հրամանը. «Ձեզ արդեն հայտնի է այն մասին, որ Ջեմիետի ցուցումով որոշված է գլխովին ոչնչացնել Թուրքիայում ապրող հայերին: Նրանք, ովքեր դեմ դուրս կգան այդ որոշմանը, չեն կարող մնալ զբաղեցրած պաշտոններում: Որքան էլ որ դաժան լինեն գործադրվող միջոցառումները, պետք է վերջ դրվի հայերի գոյու-

[14] Ibid.:

թյանը: Ոչ մի ուշադրություն չդարձնեք ոչ կանանց, ոչ երեխաների ու հիվանդների, ոչ էլ խղճի խայթի վրա: Ներքին գործերի մինիստր Թալեաթ»:[15]

Միջազգային հասարակական կարծիքից իր բուն նպատակները թաքցնելու համար երիտթուրքական կառավարությունը պաշտոնական մակարդակով սկսեց տարածել այն բացարձակ կեղծիքը, որ հայերի տեղահանությունները իրականացվում են իբր թե միայն ճակատամերձ շրջաններում, թելադրված են ռազմական նկատառումներով, և իբր դրանք կյանքի են.կոչված ճնշելու կառավարության դեմ ուղղված հայկական ապստամբությունները: Ալեքսանդրետի հյուպատոս Հոֆմանը 1915թ. նոյեմբերի 8-ի իր կազմած ընդարձակ ամփոփագրում այս առիթով նշում էր, թե այլ է խնդիրը, երբ հայերի բռնագաղթեցումը կապում են այն երկյուղի հետ, որ իբր թե թշնամական ներխուժման դեպքում հայերը կարող են հանդես գալ թշնամու հետ միասին: «Այդ երկյուղը, անկասկած, հիմնավորված կլիներ, - գրում էր նա,- եթե այն վերաբերեր ոչ միայն հայերին, այլև Թուրքիայում մյուս քրիստոնյաներին և անգամ շատ մահմեդականների, ինչպես բեդերան կուսակցության քրդերին և Իրաքի ու Արաբիայի արաբական նշանավոր խոշոր ցեղերին: Համենայն դեպս, ակնհայտ է, որ դրանով կարող է արդարացվել միայն այն տարածքների մաքրումը, որոնք գտնվում են վտանգի տակ, այսինքն ամենից առաջ առափնյա շրջանների և էտապային ճանապարհների երկայնքով ընկած մարզերի տարածքների, բայց ոչ երբեք հայերի արտաքսումն առհասարակ: Դրան համապատասխան, թերևս, ճշմարտությանը բոլորից մոտ է այն ենթադրությունը, հայերի դեմ հարուցվող մեղադրանքներին չտալով լուրջ նշանակություն, որ թուրքական կառավարությունը պատերազմը դիտել է որպես ցանկալի առիթ այն բանի համար, որպեսզի ներկա պատերազմի անսպասելիորեն ներկայացված բարենըպաստ իրադրության մեջ մեկընդմիշտ ոչնչացնի հայ բնակչությանը»:[16]

«Հայկական խռովության» մասին թուրքական պնդումները կտրուկ կերպով հերքել է Շոյբներ-Ռիխտերը՝ շեշտելով, որ կանխամտածված և նախապատրաստված հայկական համընդհանուր խռովության վերաբերյալ որևէ ապացույց բացակայում է: Նա իր ասելիքն ապացուցում է Էրզրումի օրինակով, նշելով, որ Էրզրումի վիլա-

---

[15] Vierbücher H., Armenien 1915. Die Abschlachtung eines Kulturvolkes durch die Türken, Bremen, 1987, S. 82 (Anhang).
[16] Politarchiv, R 14090, Ab. 2889 16.

յեթում չեն գտել ոչ մի զենք, ոչ էլ անվանարկող որևէ փաստաթուղթ: «Եթե այստեղ պլանավորվեր որևէ խռովություն,- հայտնում էր նա,- ապա դրա համար շատ հարմար ժամանակ էր հունվարը, երբ ռուսները էրզրումից կանգնած էին 35 կմ հեռավորության վրա, և ժանդարմերիան էրզրումի կայազորում կազմված էր ընդամենը մի քանի հարյուր մարդուց, այն ժամանակ, երբ էրզրումում միայն աշխատանքային գումարտակներում ընդգրկված էին 3-4 հազար հայեր»:[17] Մնում է ավելացնել, որ Ծոյքներ-Ռիխտերի փաստարկումներն անվիճահարույց են և անառարկելի:

Գերմանական դիվանագետները ու զինվորական գործիչները, իսկապես, շատ լավ տեղյակ էին հայերին մեղադրող թուրքական քարոզչության նպատակներին: Շատ ճշմարիտ է, օրինակ, թուրքական 4-րդ բանակի շտաբի պետ, հետագայում Վրաստանում Գերմանիայի գերագույն կոմիսար ոչ անհայտ գնդապետ (հետո գեներալ) ֆոն Կրեսի կարծիքը, որ նա այս կապակցությամբ հայտնել էր Ռյոսլերին դեռ 1915թ. նոյեմբերին: «Երբ թուրքերը կարգադրում են ճանապարհին սպանել հայ տղամարդկանց, նրանք դիմում են այն պատրվակին, թե պետք է պաշտպանվեն խռովությունից, երբ բռնաբարվում և առևանգվում են կանայք, նրանք դիմում են այն պատրվակին, թե չեն կարող վերահսկել քրդերին ու ժանդարմներին»:[18]

Թուրքական կառավարության՝ հայերի հասցեին մոգոնած կեղծիքները ժխտելու հարցում հստակ դիրքորոշում էր բռնել նաև Աղանայի գերմանական փոխհյուպատոս Ռյուգեն: Նա պարզ ու հստակ գրում է. «Հայերի բռնագաղթեցման՝ ռազմական և քաղաքական դրդությունից բխող գաղափարի հիմնավորումն ու պաշտպանությունը կանոնավոր ստուգման դեպքում կորցնում է իր ուժը: Համենայն դեպս, որքանով որ նկատի են առնվում Աղանայի պայմանները (որտեղ ռազմական առումով ոչ մի կարևոր բան բացահայտել չի կարելի), հայկական լրտեսության մասին կասկածանքը դատարկ զրպարտություն է»:[19]

Թուրքերի հակահայկական քարոզչությունը նույնիսկ հայերի կամ այսպես կոչված հայկական բանդաների կողմից «թուրքերին կոտորելու» վերսիան, որին սովորաբար դիմում էին հայկական ջարդեր սկսելուց առաջ: Կոստանդնուպոլսում գերմանական ռեզիդենտը, ռայխստագի անդամ Էրցբերգերի խոսքերով «խիստ վստահելի այդ

---

[17] Ibid., R 14088, Ab. 28584:
[18] Ibid., R 14089, Ab.36213:
[19] Ibid., Konst/Ankara, 96 Ab. 5932-10 12.

աղբյուրը», օրինակ, 1918թ. փետրվարին նույն Էրցբերգերին տեղյակ էր պահել, որ թուրքական կառավարությունը պարզապես թխել է «հայկական բանդաների մասին» կեղծիքը, բանդաներ, որոնք իբր թե դաժանորեն են վարվել թուրք բնակչության հետ: Ռեզիդենտը Էրցբերգերին զգուշացնում էր, որ տվյալ դեպքում «Խոսքը սոսկ պատրվակի մասին է, որը կարող է օգտագործվել երկրի ներսում հայերի կամ քրիստոնյաների մնացորդների ոչնչացման համար: Բոլորը համոզված են, որ խոսքը թուրքական իշխանությունների հորինած հերյուրանքի մասին է»:[20] Ռեզիդենտը վերջում Էրցբերգերի միջոցով գերմանական և ավստրո-հունգարական կառավարություններին հայտնում էր իր հետևյալ մտավախությունը. «Բոլոր դեպքերում քրիստոնյաների կողմից Գերմանիայի և Ավստրո -Հունգարիայի դեմ շատ մեծ կշտամբանքներ են առաջադրվելու այն բանի համար, որ նրանք թույլ են տալիս նման բաներ (հայերի կոտորածներ – *Վ. Մ.*), վճռական միջոցներ չձեռնարկելով այդպիսի կամայականության դեմ: Եթե փաստորեն նորից սկսվի կոտորածը, ապա այդ դեպքում, որքան էլ որ ես ափսոսում եմ, ստիպված եմ լինելու ասել, որ այդ կշտամբանքները առաջադրվում են արդարացիորեն... Պատերազմից հետո մեզ համար շատ դժվար կլինի արդարանալ պատմության և մարդկության համաժողովի առաջ»:[21]

1918թ. մայիսից սկսած գերմանական կառավարությունը քանիցս համանման զգուշացումներ է ստանում թուրքական գործերին թերևս բոլորից ավելի լավատեղյակ գեներալ Լոսովից: Իր հեռագրերից մեկում նա նշում էր. «Թուրքական քաղաքականության նպատակը, ինչպես ես միշտ կրկնել եմ, հայկական շրջանների հետագա զավթումն է և հայերի բնաջնջումը: Թալեաթի և Էնվերի բոլոր հակառակ հավաստիացումները կեղծիք են... եթե պետք է կանխվի հայերի բնաջնջումը, ապա անհրաժեշտ է անմիջական մշտական ճնշում գործադրել Թուրքիայի վրա... Պահանջվում են անմիջական գործողություններ»:[22] Սակայն գերմանական կառավարությանն այս անգամ էլ ձեռնտու չէր ունկնդրել ողջամիտ գործիչների ձայնին, և 1918թ. երիտթուրքերը Արևելյան Հայաստանում ևս անկաշկանդորեն շարունակեցին իրենց հայասպան քաղաքականությունը:

Տեղի սղության պատճառով մենք հատուկ քննության նյութ չենք դարձնում հայոց-ցեղասպանության մեջ կայզերական-Գերմա-

---

[20] Ibid., R 14098, Ab. 10208:
[21] Ibid.:
[22] Ibid., R 22340, Ab. 1061:

նիայի կառավարության մեղսակցության հարցը: Սակայն այս աղերսով չենք կարող չբերել հայոց ցեղասպանության «քաղաքական ու ռազմական պատճառները» վերտառությունը կրող հատվածը Ադանայի գերմանական փոխհյուպատոսի 1915թ. նոյեմբերի 8-ին՝ գերմանական կառավարությանը հղած զեկույցից: Այդ հաղորդագրության մեջ Հոֆմանը հարկավոր է համարել նաև մեջբերել հայ հոգևորականի՝ խնդրո առարկա հարցին վերաբերող հանդիմանական խոսքերը, որ վերջինս ասել էր փոխհյուպատոսի երեսին. «Քրիստոնյա բնակչությունը,- գրում է փոխհյուպատոսը,- որը դարձել է բռնագաղթեցման վկան, համոզված է Գերմանիայի մեղսակցության և նրա լիակատար անտարբերության մեջ... Իրենք՝ հայերը, բնականաբար, առհասարակ համոզված են մեր մեղսակցության, եթե չասեմ մեր լիակատար հրձիգության մեջ: Եվ նույնիսկ այնտեղ, որտեղ որպես բացառություն ակնհայտ է դառնում, որ մեր չմիջամտելը ոչ թե հավանություն տալու, այլ քաղաքական և ռազմական նկատելի պայմանների հետևանք է, գերմանացիներին վերագրվում է մեղսակցություն, որովհետև նրանք քնել-հանգստացրել են հայ ժողովրդին լիակատար անվտանգության գիտակցությամբ: Այսպես, մի սառնարյուն դատող հայ (բողոքական) եկեղեցական ինձ ասաց. «Մենք (հայերս) մտաղրվել էինք լոյալ մնալ այնքան ժամանակ, քանի դեռ չէր սկսվել բռնագաղթեցումը: Եթե մենք բոլորս այն ժամանակ դիմադրություն ցույց տայինք մեր ժողովրդի դեմ նյութվող կոտորածին, ապա կդառնայինք դրության տերը և այսօր դատապարտված չէինք լինի կործանման: Սակայն մեր բոլոր գերմանացի բարեկամները Մարաշում, Հարունիեում, Ուրֆայում, Մալաթիայում և Մամուրեթ-ուլ-Ազիզում համառորեն մեզ խորհուրդ էին տալիս հնազանդվել և այնժամ մեզ հետ ոչինչ չի կատարվի: Մենք հավատացինք դրանց, և այն, որ մենք հավատ ընծայեցինք գերմանացիների ազդեցությանը, դարձավ մեզ համար չար ճակատագիր»:[23]

Թե ինչ հետևանք ունեցավ գերմանացիների խորհուրդներին ունկնդրելը, դա ստուգապես ճիշտ է շեշտել «սառնարյուն» հայ հոգևորականը՝ «կործանման դատապարտվելը»: Մնում է միայն ճշգրտել, որ Թուրքիայում գործող գերմանացի աստիճանավորների նմանօրինակ խորհուրդները բխում էին սեփական կառավարության հանձնարարականից՝ ջլատելու հայոց դիմադրողական ուժը, նրանց հեռու պահելով իրենց դաշնակից թուրքերին դիմադրելուց:

---

[23] Ibid., R 14090, Ab. 2889 16:

Գրեթե բոլոր գերմանական դիվանագիտական աշխատողների՝ հայոց ցեղասպանության առիթով տված հաղորդագրություններում շոշափվում է նաև նրա պատճառների խնդիրը: Նրանք բոլորը հայտնում են այն միասնական կարծիքը, թե երիտթուրքերի կողմից կազմակերպված հայ բնակչության կոտորածը բխում էր Թուրքիայի բոլոր քրիստոնյաներին թուրքացնելու, միասնական թուրքական մեկ ազգ և ազգային պետություն ստեղծելու պանթուրքական ծրագրերից: «Երիտթուրքական կոմիտեի մեծ մասը կանգնած է այն տեսակետի վրա, որ Թուրքական կայսրությունը պետք է կառուցված լինի միայն մահմեդական, պանթուրքական հիմքի վրա,- 1916թ. դեկտեմբերին կանցլեր Բետման-Հոլվեգին իրազեկում էր Էրզրումի նախկին հյուպատոսը: -Կայսրության ոչ-մահմեդական և ոչ-թուրք բնակիչները պետք է մահմեդականացվեն և թուրքացվեն, իսկ այնտեղ, որտեղ դա անհնարին է՝ ոչնչացվեն:

Այդ պլանի իրագործման համար ներկա ժամանակը այդ պարոններին թվում է ամենաբարենպաստը:

Նրանց ծրագրի առաջին կետում դրված է հայերի ոչնչացումը»:[24]

Պանթուրքական պլանի իրագործումը երիտթուրքերը համարել էին իրենց հիմնական խնդիրը: «Այսօր կառավարողների (Թուրքիայի) երկաթյա սկզբունքն է՝ իսլամացնել ամբողջ Թուրքիան և դրա համար գործի դնել բոլոր միջոցները»:[25] Սրանք արդեն Սամսունի փոխհյուպատոս Կուկհոֆի խոսքերն են: Իսկ Կ. Պոլսի գերմանական դեսպան Մետերնիխը 1916թ. շեշտում էր այն իրողությունը, որ հայերին կոտորելու լեյտմոտիվը ոչ թե կրոնական մոլեռանդությունն է, այլ հայերին կայսրության մահմեդական բնակչության մեջ միաձուլելը:[26]

Երիտթուրքերի հայջինջ պլանների մերկացմամբ 1915թ. մի խիստ պանֆլետով հանդես եկավ Հալեպի գերմանական ռեալական ուսումնարանի դասատու Մարտին Նիպագեն՝ առ ի չիք համարելով գերմանական կառավարության և նրա գրաքննության արգելքները: Գերմանացի ազնիվ այս մտավորականը, որը երկար տարիների աշխատանքի բերումով քաջատեղյակ էր երիտթուրքական քաղաքական բարքերին, չդիմացավ հայերի նկատմամբ կիրառվող գազանություններին և ի լուր աշխարհի բարձրացրեց իր բողոքի ձայնը: Անդ-

---

[24] Ibid., R 14094, Ab. 33457:
[25] Ibid., R 14086, Ab. 22101:
[26] Ibid., R 14092, Ab. 18548:

բաղառնալով պանիսլամական պլաններին և այդ աղերսով հայերի բնաջնջման պատճառներին՝ Նիպագեն գրում էր. «Երիտթուրքի աչքին երևում է միասնական ազգային պետության եվրոպական իդեալը... Քրիստոնյա ազգերից՝ հայերից, սիրիացիներից, հույներից երիտթուրքը երկյուղում է նրանց կուլտուրական և տնտեսական գերազանցության պատճառով և նրանց կրոնի մեջ տեսնում է խաղաղ ճանապարհով թուրքացման արգելքը: Ուստի նրանք պետք է կամ կոտորվեն, կամ բռնի իսլամացվեն»:[27]

Շոյբներ-Ռիխտերի, Կուկհոֆի, Մետերնիխի և Նիպագեի նման Թուրքիայում գործած մյուս գերմանացիները ևս հայկական ցեղասպանության հարցում նշում են նույն պատճառները:

Հարց է առաջանում, թե ինչու՞ Կ. Պոլսի գերմանական դեսպանի միջոցով ունենալով սեփական կառավարության հանձնարարականը՝ չմիջամտելու թուրքական իշխանությունների կողմից իրականացվող հայոց ցեղասպանությանը, Թուրքիայում Գերմանիայի դիվանագիտական և այլ կարգի ներկայացուցիչները, ինչպես տեսանք, այնուամենայնիվ տարբեր դրսևորումներով խախտում էին նշված հրահանգը և իրենց վերադասներին, ընդհուպ մինչև կանցլերը, տեղյակ պահում երիտթուրքական կառավարության բարբարոսությունների մասին՝ շատ հաճախ չթաքցնելով իրենց բողոքի ձայնը Թուրքիայի և նույնիսկ սեփական կառավարության դեմ: Նշենք, որ նրանց զեկուցագրերն ու այլ կարգի հաղորդումները, որպես կանոն, հղվում էին «գաղտնի» կամ «խիստ գաղտնի» մակագրով և հրապարակման ենթակա չէին: Նախ դա: Եվ երկրորդ, լինելով քրիստոնյա, կրթված և եվրոպական խառնվածքի տեր մարդիկ, նրանք (համենայն դեպս նրանցից շատերը) չէին կարող իրենց մարդասիրական պարտքը չհամարել մեջտեղ բերել ողջ ճշմարտությունը և հաղորդումներ կատարել իրերի իսկական դրության վերաբերյալ, հանգամանորեն պատմել երիտթուրքական կառավարության կարգադրությամբ հայ բնակչության բնաջնջման մասին: Դիվանագետներից ոմանք չէին կարող հաշտվել փաստորեն իրենց վերապահված լրակյաց դիտորդի դերի հետ: Հենց վերը նշված առիթով տեղին ենք համարում մեր ասելիքը ավարտել մեզ արդեն քանիցս ծանոթ Շոյբներ-Ռիխտերի հետևյալ խոսքերով. «Լիովին հաշվի առնելով իրերի վիճակը, ես որպես (Թուրքիայում) գերմանական կառավարության ներկայացուցիչ, իմ պարտքն եմ համարել լռելյայն չնայել թուրքական կառավարության՝ հայերի դեմ կիրառվող գործողություններին և

[27] Ibid., R 14092, Ab. 19983:

քանի որ, մի կողմից, մենք չենք կարող սկզբունքորեն արգելել այդ միջոցառումները, սակայն, մյուս կողմից, իրերի դրության համապատասխան պետք է, այնուամենայնիվ, մեզ վրա վերցնենք բարոյական պատասխանատվությունը, ես վճռեցի հասնել գոնե որքան հնարավոր է դրանց գործադրման ավելի մեղմ ձևի: Անհարմարություններ-ը և անգամ վտանգը, որոնք ինձ համար կապված էին իմ դիրքորոշման հետ, ես նույնպես հաճույքով վերցրի ինձ վրա այն պատճառով, որ հետագայում իմ կառավարությանը, հավանաբար, միայն հաճելի կլիներ իմանալ և հայտարարել, թե այստեղի նրա ներկայացուցիչը օրինական բոլոր միջոցներով, որ նա ունեցել է իր տրամադրության տակ, հանդես է եկել անմեղ տառապյալների հետ մարդասիրաբար և օրինականորեն վարվելու պաշտպանությամբ»:[28] Մեզ մնում է ավելացնել, որ պատմությունն ըստ արժանվույն կգնահատի նման գործիչների ջանքը:

Որպես ամփոփում, պիտի նշենք հետևյալը. հավանաբար, վաղ թե ուշ արդարությունը կհաղթանակի, և կգա ժամանակը, երբ պաշտոնական Թուրքիան կճանաչի հայոց ցեղասպանության փաստը: Վերջիվերջո, Թուրքիայի պաշտոնական շրջանները կհասնեն այն իրողության ըմբռնմանը, որ քաղաքական առումով անհեթեթություն է երիտթուրքական կառավարության կողմից իրագործված հայ բնակչության ոչնչացման մեղքը վերցնել իրենց վրա և առավել ևս դրանով իսկ այն բարդել թուրք ժողովրդի ուսերին:

Վարդգես Միքայելյան

А II 89172

Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека

[28] Ibid., R 14088, Ab. 28584:

№ 1

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՒՄ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԵՍՊԱՆ ՎԱՆԳԵՆՀԱՅՄԻ ԶԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

30 մայիսի 1915թ.

Հայերի զանգվածային հուզումները կանխելու համար, Էնվեր փաշան, իբրև պատրվակ օգտագործելով պատերազմական իրադրությունը, մտադիր է փակել մեծ թվով հայկական դպրոցներ, հայկական թերթեր, արգելել հայերի փոստային գրագրությունը և վերջերս հուզումներով բռնկված հայկական կենտրոններից Միջագետք տեղափոխել բոլոր այն ընտանիքներին, որոնք համարվում են ոչ այնքան հավատարիմ: Նա հաստատապես խնդրում է մեզ չխանգարել իրեն դա անել:

Անշուշտ թուրքերի միջոցառումները կրկին լուրջ հուզումներ կառաջացնեն մեր նկատմամբ թշնամաբար տրամադրված երկրներում և կօգտագործվեն մեր դեմ: Մասնավորապես դա վերաբերվում է Ամերիկայի Միացյալ Նահանգներին, կապված նրանց կողմից ստեղծված բազմաթիվ հայկական դպրոցների հետ: Բացի այդ, միջոցառումներն անշուշտ կստեղծեն մեծ դժվարություններ հայկական բնակչության համար: Ես կարծում եմ, որ մենք պետք է թուլացնենք այդ միջոցառումների բնույթը, սակայն հիմնականում չպետք է խանգարենք դրանց:

Խնդրում եմ համապատասխանաբար տեղեկացրեք պրոֆեսոր Լեփսիուսին և գերմանա-հայկական այլ հանձնաժողովներին և հասկացնել տվեք նրանց, որ, ցավոք, նշված միջոցառումներն անխուսափելի են, ելնելով Թուրքիայի քաղաքական և ռազմական իրավիճակից:

Ես գաղտնի կերպով այդ մասին տեղեկացրել եմ Էրզրումի, Մոսուլի, Աղանայի, Հալեպի և Բաղդադի հյուպատոսություններին:

Wolfgang and Sigrid Gust (ed.) in cooperation with Taner Akcam:
The Armenian Genocide during the First World War. Documents from German State Archives. A-17493. DE/PA-AA/ R14086. DuA Dok. 072 (re.gk). 1915-05-31-DE-001.

Геноцид армян. Ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий, сост. Ю. Барсегов, т.1, Москва, 2002 (այսուհետև՝ ГАОТОМС), стр. 239.

№ 2

ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՏՈՐԱԾԻ ԱՌԹԻՎ ԿՏՐՈՒԿ ԲՈՂՈՔՈՎ ՀԱՆԴԵՐՁ

Հեռագիր

Գերմանական միսիան *Կոպենհագեն, 2 հունիսի 1915*

Կոպենհագենում
N 83

Պետրոգրադի հեռագրական գործակալությունը մայիսի 24-ին հրապարակել է ռուսական կառավարության հետևյալ պաշտոնական հաղորդագրությունը: Վերջին ամսվա ընթացքում քրդերը, թուրքերը, օսմանյան իշխանությունների ակնհայտ, երբեմն նույնիսկ ուղղակի աջակցությամբ կազմակերպում են հայերի կոտորած: Նոր տոմարով ապրիլի կեսերին հայերի ջարդեր տեղի ունեցան Էրզրումում, Դերջանում, Էգինում, Բիթլիսում, Մուշում, Սասունում, Զեյթունում և ամբողջ Կիլիկիայում: Վանի շրջակա հարյուրավոր գյուղերում բնաջնջվեց ողջ բնակչությունը, բուն Վանում քրդերը պաշարել էին հայկական թաղամասը, թուրքական կառավարությունը միաժամանակ Կոստանդնուպոլսում բանտարկությունների և չտեսնված ճնշումների է ենթարկում խաղաղ հայ բնակչությանը: Նկատի ունենալով Թուրքիայի այս նոր հանցագործությունները մարդկության և քաղաքակրթության դեմ, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Անգլիայի դաշնակից կառավարությունները սույնով պաշտոնապես հայտարարում են Բարձր Դռանը, որ իրենք այս հանցագործությունների անձնական պատասխանատվությունը դնում են թուրքական կառավարության բոլոր անդամների, ինչպես նաև նահանգներում կառավարության այն ներկայացուցիչների վրա, որոնք մասնակցել են կոտորածին:

Արտաքին գործերի նախարարությանը *Դեսպանություն*

Politisches Archiv des auswärtigen Amts des Kaiserlichen Deutschlands (Politarchiv) R (reinschrift- գերմ. բնօրինակ՝ արխիվային գործի) 14086, Ab. (abschrift- գերմ. պատճեն) 17667.
Армянский вопрос и геноцид армян в Турции. Материалы Политархива МИД Кайзеровской Германии, сост. В. Микаелян, Ер., 1995, стр. 178 (Այնուհետև՝ ԱՎԳԱԹ).

№ 3

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԵՍՊԱՆ ՎԱՆԳԵՆՀԱՅՄԻ ԶԵԿՈՒՅԱԳԻՐԸ ՌԵՅԽՍԿԱՆՑԼԵՐ ԲԵԹՄԱՆ-ՀՈԼՎԵԳԻՆ

17 հունիսի 1915թ.

Հայ բնակչության տեղահանությունն իրենց տներից Արևելյան Անատոլիայի շրջաններում և նրանց վերաբնակեցումը, այլ շրջաններում իրականացում է դաժանորեն:

Տեղահանվածներին, այդ իսկ պատճառով նրանք ստիպում են թողնել իրենց տները կամ անմիջապես, կամ էլ հինգ օրվա ընթացքում. այդ իսկ պատճառով նրանք ստիպված թողնում են իրենց տները և իրենց շարժական ունեցվածքի զգալի մասը: Նրանք անգամ չեն կարող իրենց հետ ճանապարհի համար վերցնել անհրաժեշտ իրեր և սնունդ: Հասնելով նշանակված վայրը նրանք անօգնական և անպաշտպան վիճակում հայտնվում են իրենց նկատմամբ թշնամաբար տրամադրված մարդկանց միջավայրում: Որոշ տեղերով ոտքով անցնելու ժամանակ կատարվում էին հարձակումներ, հաղորդում են, որ Դիարբեքիրից Մոսուլ տեղահանված բոլոր հայերը սպանվեցին ճանապարհին: Դժվար է պատկերացնել, որ կառավարությունը տեղահանվողներին հատկացրել է գումար, սնունդ և այլ իրեր, Էրզրումում կայսերական հյուպատոսն ու ամերիկյան միսիոներներն են ցուցաբերել օգնություն, իսկ այլ վայրերում՝ հայ պատրիարքի ներկայացուցիչը:

Ակնհայտ դարձավ, որ հայերի տեղահանությունը բխում է ոչ միայն ռազմական հանգամանքներից: Ներքին գործերի նախարար Թալեաթ բեյը վերջերս անկեղծ հայտարարեց այդ մասին դոկտոր Մորգմանին, որն այժմ ծառայում է կայսերական դեսպանությունում: Թալեաթն ասաց, որ «Բարձր Դուռը մտադիր է օգտվել համաշխարհային պատերազմից, որպեսզի ամբողջովին երկիրը մաքրի ներքին թշնամիներից՝ տեղի քրիստոնյաներից այնպես, որ այլ երկրներն իրենց դիվանագիտական միջամտությամբ չխանգարեին դա անել: Այդ միջոցառումը կծառայի Թուրքիայի բոլոր դաշնակիցների և հատկապես գերմանացիների շահերին և վերջիններս էլ այդպիսով կկարողանան ամրապնդվել»:

Wolfgang and Sigrid Gust (ed.) in cooperation with Taner Akcam:

The Armenian Genocide during the First World War. Documents from German State Archives. A-19743. DE/PA-AA/ R.14086. DuA Dok. 081 (gk). 1915-07-31-DE-003.
ГАОТОМС, т.1, стр. 239-240.

№ 4

ԳԵՐՄԱՆԱՑԻ ՍԱՐԿԱՎԱԳԸ ՈՒՐՖԱ ՔԱՂԱՔՈՒՄ ԵՎ ՆՐԱ ՇՐՋԱԿԱՅՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՍԱՐՍԱՓԵԼԻ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Պատճեն
Յ.Կյունցլեր,
Ուրֆայում սարկավագը

Ուրֆա, 20 հունիսի 1915

Մեծարգո պարոն հյուպատոս,

Դեպքերը, որոնք կատարվում են այստեղ և շրջակայքում, ստիպում են ինձ գրել, որպեսզի հետագայում տեղյակ պահեմ Ձեզ կատարվող իրադարձությունների մասին:

Միևնույն ժամանակ Դուք ստացել եք իմ քարտը, որով ես տեղեկացնում էի Ձեզ մեզ վստահելի և թուրքերին հավատարիմ դեղագործ Աբրահամի բանտարկության մասին: Պարոն Էքքարտը և ես դեռ այդ նույն օրը գնացինք նահանգապետի մոտ, որպեսզի հասնենք, եթե հնարավոր է մեր երաշխավորությամբ, նրա նախնական ազատ արձակմանը: Սակայն ապարդյուն: Նրան ներկայացված է մեղադրանք, ասաց նահանգապետը: Այդ նույն օրը բանտ նետվեցին մոտ 50 հայեր, նաև հայ առաքելական և հայ բողոքական համայնքների մնացած ղեկավար անձինք, որոնք մեծ մասամբ շատ հանգիստ և երկրին հավատարիմ տարրեր են:

Այդ նույն գիշերը մի բանտարկված հայ վաճառական գավազանի մի քանի հարյուր հարված ստացավ, որից քիչ մնաց նա մահանար: Նահանգապետը, սակայն, հայ կաթոլիկ հոգևորականի առջև ժխտում էր այդ փաստը, երբ վերջինս հարցրեց, թե ինչպես է պատահել, որ կիրառել են մարմնական պատիժ: Երկու օր անց կրկին այցելեցի նահանգապետին: Ես մտավախություն հայտնեցի այն բանի վերաբերյալ, որ Հայկական հարցը կավարտվի նրանով, որ գերմանական դաշնակիցների վրա կընկնի ամոթալի խարանը, եթե հայ ժողովրդի մեջ եղած անմեղ մարդիկ մեղավորների հետ պետք է այսուհետև ևս տառապեն ու մեռնեն, այնպես, ինչպես, ասում են, դա տեղի է ունենում Դիարբեքիրի ամբողջ վիլայեթում: Այս արտահայտությու-

նը նրան ակնհայտորեն վիրավորեց, այնուամենայնիվ ես կրկնեցի դա ոստիկանապետի մոտ, որն այն կուլ տվեց որպես դառը հաբ: Այդ պահից հետո ես այլևս չեմ լսել բրածեծի մասին, ինչը այնուամենայնիվ իմ ակնարկի արդյունքն էր: Նահանգապետը նախանցյալ օրը հայ կաթոլիկ առաջնորդին կարգադրեց ներկայանալ իր մոտ և հայտնեց նրան, որ հայերը պետք է հանձնեն ամբողջ զենքը, հակառակ դեպքում ողջ բնակչությունը կտեղահանվի և, ինչպես մյուս տեղերի ու քաղաքների հայերը, կտեղափոխվեն հսկայածավալ կայսրության այլ շրջաններ: Կաթոլիկ առաջնորդը չվիճեց զենքի առկայության հարցում, սակայն ասաց, որ այն իրենց ձեռքում ուղղված է ոչ թե պատերազմի կամ կառավարության, այլ անընդհատ կոտորածով սպառնացող լավ զինված մահմեդական բնակչության դեմ: Այսօր արդեն պետք է հանձնվեն զենքով լցված երկու սայլեր: Սակայն կառավարությունը ավելին է պահանջում: Հայերը անչափ վախեցած են: 1895 թվականին նրանց նույնպես պարտադրեցին հանձնել զենքը, պաշտոնապես խոստանալով, որ դրանից հետո նրանք պաշտպանված կլինեն: Եվ ինչպիսի՞ պաշտպանություն հետևեց դրան: Կոտորվեց 7000 մարդ:

Թե ինչ պատճառով երեկ ողջ քաղաքը 3 ժամվա ընթացքում շրջափակված էր զինվորներով, ես չկարողացա իմանալ:

Դիարբեքիրի վիլայեթից ստացվում են սարսափելի լուրեր, որոնք լիովին հիշեցնում են իսպանական ինկվիզիցիան՝ այնտեղ բազմաթիվ վայրերում կիրառվում էին խոշտանգումներ և դրանից հետո միայն՝ փրկարար գնդակ: Առավել սիրված միջոց, ասում են, եղել է եղունգներ հանելը: Ցավոք, այն ամենի վերաբերյալ, ինչ այնտեղ կատարվել է, մենք ստիպված ենք բավարարվել միայն այնտեղից՝ քրիստոնյա և մահմեդական տեղի բնակիչների մեզ հասած վկայություններով, որոնք մեծապես համընկնում են: Դրանից հետո քաղաքներում և գյուղերում, ասում են, տեղի են ունեցել բնակչության ջարդեր:

Վանում տիրող իրավիճակի մասին այնտեղից եկած մի մահմեդական հաղորդեց հետևյալը. Վան եկան շրջակայքում բնակվող քրդերը, և սկսեցին իրականացնել հայերի սպանությունները: Նրանք պաշտպանվում էին: Անմիջապես քրդերին օգնության եկան այնտեղ գտնվող զինվորները, այնուհետև արյունալի մարտից հետո հայերը փախուստի մատնեցին և՛ քրդերին և՛ զինվորներին և դարձան քաղաքի տերը:

Բավականին ցավալի երևույթ էր ամբողջ հայկական քաղաքների բնակչության տեղահանությունը և նրանց տեղափոխումը

չբնակեցված, կործանարար վայրեր: Այսպես, այս տեղով գրեթե ամեն օր անցնում են Զեյթուն, Հաճն, Ալբիստան քաղաքներից եկող հայ բնակչության շարասյունները, որոնք բոլորն անխտիր գտնվում են ընկճված վիճակում: Հիվանդներին և մահացողներին թողնում էին ճանապարհներին, թողնելով նրանց բախտի քմահաճույքին: Ես ինքս տեսել եմ ճանապարհին ընկած մի 80-ամյա ծերունու, որը կաթվածահար էր եղել: Կառավարությունը որոշում է ընդունել, որ այդ հայերին ոչ մի դեպքում որևէ օգնություն չցուցաբերվի: Իսկ ի՞նչ պետք է լիներ այդ խեղճերի հետ: Նրանք պետք է բնակվեին չբնակեցված, ջրազուրկ Ջերել Աբդուլ Ազիզում: Որքան մարդկային զոհեր կպահանջվեն դրա արդյունքում, անմեղ տղամարդկանց, կանանց և երեխաների կյանքեր:

Ուրֆայի հայ կաթոլիկ առաջնորդը նահանգապետին երեկ տեղեկություն տվեց այն մասին, որ հայկական Քարմուջ գյուղին մոտ սարերում՝ Ուրֆայի մոտ, գտնվում են վտանգավոր զինված հայեր Սավարակից ու Դիարբեքիրից, մարդիկ, որոնք թեպետ և հրաժարվել են իրենց կյանքից, բայց ցանկանում են կռվել թուրքերի դեմ, որոնք իրենց քաղաքներում կրկին խոշտանգել և սպանել են իրենց եղբայրներից շատերին:

Մեծարգո պարոն հյուպատոս: Երբ ես հետևում եմ հայ ժողովրդի դրությանը և հետո հիշում եմ թուրք հայտնի մայոր Հաֆիզ բեյի խոսքերը, որն ասում էր, թե այս պատերազմից հետո իրենք պետք է ոչնչացնեն հայ ժողովրդին կամ նրան հարկադրեն տեղահանության, վախենամ, որ պատերազմի ժամանակը օգտագործվում է նրա համար, որ որքան հնարավոր է շատ կրճատվի այդ խելացի ժողովրդի թվաքանակը:

Պետք է ասեմ, որ Թուրքիայի հետ կենտրոնական տերությունների ունեցած մեծ բարեկամության և ամուր դաշնակցության պայմաններում, Թուրքիայի առաջին դեմքերին թույլ ակնարկը այն մասին, որ հնարավորինս արդարացի վերաբերմունք ցուցաբերվի հայ ժողովրդի նկատմամբ, հավանաբար, կարող է հանգեցնել հանկարծակի համերաշխության: Արդարությունը վեհացնում է ժողովրդին: Կենտրոնական տերությունները պետք է դառնան խաղաղության և ընդդեմ ցանկացած ճնշման պատվար: Ահա և արդյունավետ գործունեության համար մի դաշտ:

Հալեպում կայսերական
հյուպատոս, պարոն Ռյոսլերին

Կյունցլեր
ԱԲՐԱՏ, էջ 184-186.

№ 5

ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԱՂԵՏԱԼԻ ՀԵՏԵՎԱՆՔԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՄԱՐ

Գերմանա-հայկական ընկերություն — *Պոտսդամ, 22 հունիսի 1915*

Դեսպանի հաղորդումից հետո համաձայն մայիսի 31-ի հեռագրի Էնվեր փաշան մտադրվում էր «Ներկա խռովարար հայկական կենտրոններից կասկածելի ընտանիքներին տեղահանել Միջագետք»:

Ինչպես ես արդեն հաղորդել եմ հունիսի 18-ի իմ նամակում, խոսքը ամենևին էլ առանձին ընտանիքների տեղահանության մասին չէ, այլ անատոլիական մարզերից և Կիլիկիայից հայ բնակչության մեծ խմբերի տեղահանության մասին է տարբեր շրջաններ, և հատկապես Միջագետք:

Այս միջոցառումները չեն կարող արդարացվել ռազմական բնույթի պատճառաբանություններով: Դրանք ոչ մի կապ չունեն անընշան առիթների հետ, որոնցով դրանք փորձում են հիմնավորել: Դրանք հակասում են նաև թուրքական կառավարության հունիսի 4-ի (Կոստանդնուպոլսի WTB հեռագրատուն գործակալություն) պաշտոնական հայտարարությունն այն մասին, որ Էրզրումի, Դերջանի, Էգինի, Սասունի, Բիթլիսի, Մուշի և Կիլիկիայի հայերը չեն ենթարկվել ոչ մի պատժամիջոցների կայսերական իշխանությունների կողմից, քանի որ նրանք չեն կատարել հասարակական կարգի դեմ որևէ գործողություն: Սակայն նաև այս մարզերից նկատվել են զանգվածային տեղահանության դեպքեր, և դրանք աստիճանաբար տարածվում են հայկական բոլոր մարզերի վրա: Այն կետը, որտեղ ասված է, որ, «եթե որոշ հայեր պիտի տեղահանվեն իրենց բնակավայրերից, ապա դա տեղի ունեցավ այն պատճառով, որ նրանք բնակվում էին ռազմական գործողությունների գոտում», հիմք չի տալիս նման վարվելաձևի համար, քանի որ խոսքը մեծապես վերաբերում է այն մարզերին, որոնք գտնվում են Անատոլիայի խորքում, ռազմական գործողությունների գոտուց հեռու:

Որքանով հայտնի դարձավ, մինչ այժմ տեղահանության է ենթարկվել, հավանաբար, շուրջ 200 000 հայ: Մասնավորապես, նշվում են վերին Եփրատի (Երզնկա, Կամախ, Բայբուրթ), Տավրոսի և Ամանոսի (Զեյթուն, Հաճն, Այնթափ, Մարաշ) մարզերը և Կիլիկիան: Այլ մարզերում, ինչպիսին է օրինակ Էրզրումը, նախապատրաստ-

վում են նմանատիպ միջոցառումներ: Այսպես Թրակիայում, Ադրիանապոլսի և Մարմարա ծովի միջև ընկած տարածք քշվել էր հունական գյուղերի բնակչությունը, խոսքը ակնհայտորեն կայսրության քրիստոնյա բնակչության խիստ կրճատման փորձի մասին է, ինչը պետք է իրականացվի, շահարկելով պատերազմի իրավունքը և օգտվելով մահմեդականների սրբազան պատերազմով գրգռված զգացմունքներից և, բռնի տեղահանության միջոցով նրանց ուղարկելով բնակլիմայական անբարենպաստ ու վտանգավոր սահմանամերձ շրջաններ՝ դատապատելով մահվան:

№ 6

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԴԵՐԻ ՄԱՍԻՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱՆՀԱՅՏ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾՉԻ ՁԵԿՈՒՅԱԳԻՐԸ

6-10 հուլիսի 1915թ.

Հայերը

Որքան էլ դա տարօրինակ է, մեր ամենամեծ հույսերը մենք կապում ենք մեզ չսիրող հայերի հետ: Հայերի միջոցով մենք աստիճանաբար կներթափանցենք ամբողջ Փոքր Ասիա և Հյուսիսային Պարսկաստան և ոչ միայն ազդեցիկ կդառնանք քաղաքական առումով, այլև մեր ձեռքը կվերցնենք այդ երկրների տնտեսական կյանքը: Գերմանիայի համար ուստի շահավետ էր հայերին պահպանել Թուրքիայում:

Թուրքիան մեզ հարկավոր է ոչ միայն որպես մեր անսահման ազդեցության ոլորտ, այլև իբրև արգելք, որպիսին նա իրենից կարող է ներկայացնել Ռուսաստանի դեմ: Դրա համար հարկավոր է ուժեղացնել Թուրքիայի ռազմական հզորությունը Փոքր Ասիայում և, փորձելով կապել Կովկասը Թուրքիայի հետ, Ռուսաստանին ետ մղել Կովկասյան լեռներից այն կողմ:

Այս գործում հայ ժողովուրդը, ապրելով Թուրքիայի սրտում և զբաղեցնելով Կովկասի կենտրոնը, կարող էր ծառայել որպես Կովկասը Թուրքիայի հետ կապող օղակ: Նա կոչված է արժեքավոր ծառայություն կատարելու: Ցավոք, իրենց պահվածքով հայերն ապացուցել են, որ նրանք ընդամենը սեպ են, որը խրված է մի կողմից թուրքերի և մյուս կողմից Անդրկովկասի թաթարների միջև:

Գնահատելով հայերին, մենք ցանկանում էինք նրանց գրա-

վել մեր կողմը և այդ իսկ պատճառով ձգտում էինք զբաղվել նրանց բարեկեցության ապահովմամբ: Սակայն մենք չէինք կարող հայերին տալ այն ամենը, ինչ նրանք ցանկանում էին: Հայերի նկատմամբ տարվող մեր քաղաքականության մեջ մենք միշտ եղել ենք ճշտապահ և խոստացել ենք միայն այն, ինչ կարող էինք անել:

Հայերն ավելին ցանկացան և գնացին Ռուսաստանի հետևից, որը նրանց իր կողմը գրավելու համար կեղծ խոստումներ էր տալիս: Ռուսաստանը գիտեր, որ երբեք չի կարող ավարտին հասցնել այդ գործը և որ դա անգամ կործանարար կանդրադառնա հայերի համար: Սակայն Ռուսաստանը չէր մտահոգվում դրանով, քանզի գիտեր, որ ընկնելով այդ հունի մեջ, հայերի համար արդեն դժվար կլինի դուրս գալ դրանից: Միևնույն ժամանակ հայերը նրան հարկավոր էին որպես որևէ գործարքի ժամանակ շահավետ փոխանակման առարկա:

Դուք հավանաբար հիշում եք, թե ինչպես 1914թ. գարնանը Ցիմերմանը Ձեր հետ հանդիպման ժամանակ արտահայտեց այս ամենն անձամբ Ձեզ և զգուշացրեց այն խաղի մասին, որը ձեռնարկել էր Ռուսաստանը: Նա առաջարկում էր հաշտվել փոքր, բայց հայերի կենցաղը բարելավող ճշմարիտ ծրագրի հետ, որը կպաշտպանվեր Գերմանիայի կողմից: Նրա եզրակացություններն անուշադրության մատնվեցին, իսկ այդ նույն ժամանակ Ռուսաստանն արդեն երես էր թեքում Կոստանդնուպոլսի հայերից և շահարկում էր դա՝ Թուրքիային իր կողմը գրավելու համար: Գլխավոր տեսուչների պատմությունը վատ օրինակ չի ծառայում այդ տեսակետից:

Հայերն այն ժամանակ նույնպես չհամոզվեցին, երբ Ցիմերմանից երկու շաբաթից էլ կարճ ժամանակում կոմս Կանիցը Կոստանդնուպոլսի գերմանական դեսպանությունում Ձեզ ապացուցում էր, որ Ռուսաստանը բավականին թույլ է պաշտպանում գլխավոր տեսուչներին և որ որքան էլ թույլ լինի Գերմանիայի դերը հայկական բարենորոգումների գործում, այնուամենայնիվ, նա իրեն Ռուսաստանի կողմից վարկաբեկված է զգում Թուրքիայի առջև:

Ռուսաստանում չգիտես ինչու կարծում էին, որ փաղաքշելով Թուրքիայի ազդեցիկ անձանց, կարելի է ստիպել նրանց մոռանալ փաստերը: Արդյոք Թալեաթին ցուցաբերած ընդունելությունը կարող է ներշնչել թուրք նախարարին այն գաղափարը, որ Թուրքիային այդքան դարերի ընթացքում ջախջախող պետությունը կարող է հրաժարվել իր պատմական խնդիրներից, որոնց կատարման համար խոչընդոտ է հանդիսացել հենց Թուրքիան: Անշուշտ թուրքական նա-

խարարն այդ աստիճան միամիտ չեղավ: Իսկ հայերը տուժեցին Ռուսաստանի նման ոչ անկեղծության պատճառով:

Սակայն, չնայած այդ դառը փորձին, Թուրքիայի նկատմամբ հայերի գրաված դիրքն ապացուցեց նրանց անուղղելի ռուսամետությունը և նրանց ու թուրքերի հաշտվելու անհնարինությունը: Թուրքերի կարծիքով հայերը չափից շատ վնաս են հասցնում Թուրքիային, որպեսզի վերջինս կարողանա ներել նրանց:

Մեր դեսպան Վանգենհայմի զեկուցագրից երևում է, որ Թուրքիայում տիրապետող է այն խոր համոզմունքը, թե թուրքերի անհաջողությունները Կովկասյան ճակատում մեծապես պետք է վերագրվեն հայերին և որ եթե վերջիններս նման համառության չպաշտպանեին ռուսական գործը Կովկասում, ապա թուրքերի ճանապարհը դեպի Թիֆլիս էապես կհեշտանար: Թուրքերը չեն կարող դա ներել հայերին և այդ պատճառով այդպիսի կատաղությամբ հաշվեհարդար են տեսնում նրանց հետ:

<u>Միջոցառումները հայերի դեմ</u>

Մենք, անշուշտ, չենք կարող հավանություն տալ դաժանություններին, սակայն մենք հասկանում ենք Թուրքիայի համար հայկական ցեղի նշանակության արմատական ձևով չեզոքացման անխուսափելի անհրաժեշտությունը, որը խանգարում է մեր ծրագրերին նույնիսկ պատերազմի ընթացքում:

Այդ իսկ պատճառով մենք չզարմացանք, երբ 1915թ. ապրիլին մեր դեսպան Վանգենհայմը հեռագրեց Բեռլին, որ Էնվեր փաշան իրեն հայտնել է, որ Թուրքիայի պետական շահը պահանջում է հայերի ամբողջական տեղափոխումը Հայաստանից և խնդրում է, որ Գերմանիան չխոչընդոտի դրան. իր կողմից դեսպանը պաշտպանում և միջնորդում էր այդ հարցում:

Գերմանական տեսակետից, սակայն շահավետ չէ, այդ աշխատասեր և օգտակար ժողովրդին ամբողջովին ոչնչացնելը, այն դեպքում, երբ Միջագետքի անապատները կարիք ունեին հենց նման տարրերի: Բնակվելով Միջագետքում և այնտեղ զբաղվելով երկրագործությամբ, հայ ժողովուրդը նույնիսկ կշահի դրանից, քանզի այնտեղի հողերը բերրի են, և նա շուտով կարող է հասնել տնտեսական զարգացման: Դրանից կշահեն և՛ պետությունը, և՛ Բաղդադի երկաթգիծը:

Հայերին իսկապես սկսեցին տեղահանել դեպի Միջագետք: Տեղահանվելով հայրենիքից, հայերի մի մասն, անշուշտ, կհասցնի

բնակվել ողջ Փոքր Ասիայի քաղաքներով մեկ: Դա կմեծացվի հայկական տարրի թվաքանակն այդ տեղերում, որը շնորհիվ իր մշակույթի և եռանդի արագ այնտեղ կզբաղեցնի պատշաճ դիրք: Հենց այդպիսի տարր է հարկավոր Գերմանիային, քանզի այն ամբողջությամբ կընկնի նրա ազդեցության տակ և կծառայի նրա դիրքերի ամրապնդմանը Թուրքիայում: Նրանք Գերմանիային կտան ներկայանալի վաճառականների նրա ապրանքները վաճառելու համար, լավ արհեստավորների, աշակերտների, ուսուցիչների, իրավաբանների և բժիշկների, որոնք ներծծված կլինեն գերմանական գիտությամբ, ինչպես նաև պաշտոնյաների, որոնք ծառայելով թուրքական վարչական համակարգի բոլոր ոլորտներում, մշտապես ոգով ավելի հարազատ կլինեն գերմանացիներին, քան թուրքերին:

Հազիվ թե իրավացի լինեն այն հայերը, որոնք գտնում են, որ այսուհետ հայերի ատելությունը գերմանացիների նկատմամբ կխոչընդոտի որևէ տիպի համագործակցությանը: Հայերը շուտով կհասկանան, որ իրենք դարձան միայն իրենց միամտության զոհը: Այդ չար զգացումն ապրում է առաջին սերունդը: Հայերը պետք է շարունակեն ապրել: Մենք նրանց կտանք աշխատավարձ, մենք աստիճանաբար կմեծացնենք նրանց նշանակությունը Թուրքիայում: Նրանց գոյությունը և մշակութային առաջընթացը կախված կլինի մեզնից: Այդ իսկ պատճառով նույնիսկ առաջին սերունդը շուտով կհաշտվի մեր հետ, իսկ հաջորդներն անկասկած կդառնան մեր անկեղծ կողմնակիցները:

<u>Հայաստանի բնակեցումը թուրքերով</u>

Հայերի տեղահանությունը Հայաստանից կբերի մեծ քաղաքական նշանակության օգուտ:

Հայերից ազատված բոլոր հողերը թուրքերը կբնակեցնեն թուրքական ցեղին պատկանող մուհաջիրներով, որոնք տեղափոխվել են Եվրոպայից և այլ տեղերից: Այսպիսով կիրականանա ամբողջ Փոքր Ասիայի և Արևելյան Անատոլիայի ընդհուպ մինչև Թավրիզ և Բաքում բազմաքանակ մահմեդական ցեղով բնակեցնելու խնդիրը, ինչը հանդիսանում է միասնական ժողովրդի բաղձալի երազանքը: Այդ դեպքում դժվար չի լինի ստեղծել պողպատյա արգելք, որի վրայով Ռուսաստանի համար դժվար կլինի անցնել:

Գերմանիան անկասկած դա կկարողանա կազմակերպել այնպես, ինչպես իրեն պետք է: Մենք հավանաբար առանց հատուկ ջանքերի կկարողանանք մեր ձեռքում պահել թուրքական բանակը

նաև պատերազմի ավարտից հետո: Չէ որ այժմ էլ այդ բանակը գրեթե մերն է: Այնտեղ մեր սպաներն են, մեր թնդանոթները և հրացանները, մեր պաշարները և կազմակերպվածությունը: Թուրքերին հազիվ թե հաջողվի դուրս պրծնել մեր ձեռքից: Եվ եթե մենք չենք ուզում դրսևորել մեր իշխանությունն ու նշանակությունը, ապա միայն այն պատճառով, որ ցանկանում ենք հաշվի առնել (թուրքերի) ոգու տրամադրվածությունը: Հարկավոր է, որ ժամանակակից գործիչներն առանց աղմուկի իջնեն բեմահարթակից, և որ մենք նույնպես առանց աղմուկի կարողանանք վերցնել այն, ինչ իրավմամբ մեզ է պատկանում:

Կովկասը և Վրաստանի ինքնավարությունը

Գերմանական միության և Թուրքիայի ճակատագիրը կորոշվի ռուս-գերմանական ռազմաճակատում: Հաղթանակի դեպքում մենք Թուրքիային կմիացնենք Անդրկովկասը և կստեղծենք ինքնավար Վրաստան, այն դնելով Թուրքիայի գերիշխանության տակ: Մենք գիտենք, որ համերաշխություն է տիրում վրացիների և թաթարների միջև, և որ վրացիները հայերի նման չեն վախենում մահմեդականներից:

Թաթարներն, անշուշտ, կմիաձուլվեն թուրքերի հետ: Այսպիսով, արևելյան և արևմտյան Անդկովկասն ամուր կմիաձուլվի Թուրքիայի հետ: Մենք, անշուշտ, կապահովենք հայերի հանգիստ գոյությունը Կովկասում, սակայն նրանք արդեն մշտապես պարտադրված կլինեն հրաժարվել իրենց ազգային գաղափարից:

Հայերը չպետք է բողոքեն նման ավարտի դեմ, քանզի նրանք արժանի են դրան...

Վերջաբան

Վերը նշվածից բխում է, որ Ռուսաստանին պողպատյա շղթայով շրջապատելու գերմանական ծրագիրը չի կարելի համարել ցնորաբանություն:

ГАРФ, ф. 579, оп. 1, д. 2111, л. 1-7.
ГАОТОМС, т. 2, ч. 1, стр. 8-11.

№ 7

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԵՍՊԱՆ ՎԱՆԳԵՆՀԱՅՍԻ ԶԵԿՈՒՅԱԳԻՐԸ ՌԵՅԽՍԿԱՆՑԼԵՐ ԲԵԹՄԱՆ-ՀՈԼՎԵԳԻՆ

7 հուլիսի 1915թ.

14 օր առաջ հայերի տեղահանությունն ու վերաբնակեցումը

սահմանափակվում էր ռազմական գործողությունների թաթերաբեմին մոտ գտնվող շրջաններով, այդ պահից ի վեր Բարձր Դուռը որոշեց այդ միջոցառումները տարածել նաև Տրապիզոնի, Մամուրեթ-ուլ-Ազիզ և Սվազի վրա սկսեց իրականացնել այդ միջոցառումները, թեև այդ շրջաններին դեռևս չի սպառնում թշնամու ներխուժումը:

Ստեղծված իրադրությունը և այն, թե ինչպես է իրագործվում այդ տեղափոխությունը, ցույց են տալիս, որ կառավարությունն իրականում թուրքական կայսրության սահմաններում հետապնդում է հայ ազգի լիակատար ոչնչացման նպատակ:

Այս տեսակետից ես կցանկանայի շարադրել հետևյալ մտորումներն ի լրացում իմ նախկին զեկուցագրերի:

Ինչպես հայտնում է Տրապիզոնի կայսերական հյուպատոսը, հունիսի 26-ին այդ շրջանում հայերին հրամայեցին հինգ օրվա ընթացքում ճանապարհ ընկնել, նրանց ունեցվածքը պետք է մնար իշխանությունների վերահսկողության տակ: Բացառություն արվեց հիվանդների համար, հետագայում թույլ տվեցին մնալ նաև այրիներին, որբերին, ծերերին և հինգ տարեկանից փոքր երեխաներին, ինչպես նաև հիվանդներին և կաթոլիկ հայերին: Սակայն համաձայն ամենավերջին հաղորդումներին, բացառությունների մեծ մասը վերացվեց և թույլ տվեցին մնալ միայն երեխաներին և նրանց, ովքեր ի վիճակի չէին տեղափոխվել, վերջիններիս տեղավորեցին հիվանդանոցներում:

Ընդհանուր առմամբ միայն Տրապիզոնի վիլայեթում այս միջոցառումը վերաբերվեց գրեթե 30000 մարդու, որոնք Էրզրումով տեղահանվեցին Միջագետք: Նման զանգվածային տեղափոխությունը մի շրջան, որը գտնվում էր հարյուրավոր կմ հեռավորության վրա, առանց բավարար փոխադրամիջոցների այնպիսի շրջաններով, որտեղ չկան ոչ հանգրվաններ, ոչ էլ սնունդ, և որտեղ գլուխ են բարձրացրել վարակիչ հիվանդությունները, մասնավորապես տիֆը, ենթադրում է բազմաթիվ զոհեր հատկապես կանանց և երեխաների շրջանում: Բացի դրանից, ճանապարհը, որով անցնում են տեղահանվածները անցնում է քրդական Դերսիմ շրջանով, և Տրապիզոնի վալին բացահայտ հայտարարեց մեր հյուպատոսին՝ վերջինս իմ հանձնարարությամբ արտահայտել էր այդ կարծիքը, որ ինքը կարող է երաշխավորել տեղահանվողների շարասյան անվտանգությունը միայն մինչև Երզնկա: Այդ կետից հետո տեղահանվողները փաստորեն պետք է անցնեն քրդական հրոսակախմբերի և այլ ավազակների

վերահսկած տարածքի միջով: Օրինակ հայերի վրա, որոնք տեղահանվել էին Էրզրումի դաշտային շրջաններից, հարձակվեցին Խարբերդի ճանապարհի վրա, արդյունքում տղամարդկանց և երեխաներին մորթեցին, իսկ կանանց առևանգեցին: Էրզրումի կայսերական հյուպատոսը կարծում է, որ այնտեղ սպանվեց 3000 հայ:

Տրապիզոնում հայերի մի զանգված ընդունեց մահմեդականություն՝ անվերապահ տեղահանությունից խուսափելու և իրենց ունեցվածքը փրկելու նպատակով:

Բացի նյութական վնասից, որը հասցվում է թուրքական պետությանը բնակչության կրթված և աշխատասեր մասին տեղահանության և նրա ունեցվածքի բռնագրավման արդյունքում, իսկ նրանց տեղը ժամանակավորապես գրավող քրդերն ու թուրքերը չեն կարող հանդիսանալ հայերին արժանի փոխարինողներ, որն վնաս է հասցնում նաև երկրի այդ մասերում գերմանական բարեգործական կազմակերպությունների և մեր պետական առևտրական շահերին:

Բացի այդ Բարձր Դուռը չի պատկերացնում, թե ինչ ազդեցություն են ունենում այդ և այլ բռնի միջոցառումները, ինչպիսիք են զանգվածային սպանությունները այստեղ և երկրի հեռավոր շրջաններում, արտասահմանի հասարակական կարծիքի վրա և որ դրանք իբրև Հայկական հարցի նկատմամբ նման վերաբերմունքի հետևանք կանդրադառնան խաղաղության բանակցությունների ապագայի վրա:

Մեր հակառակորդների կողմից հետագայում հնարավոր բացահայտումներին, թե իբր մենք նույնպես մեղավոր ենք թուրքերի դաժան գործողությունների մեջ, արդյունավետ հակազդելու համար ես իմ պարտքն եմ համարում նշել Բարձր Դռանը, որ մենք կարող ենք ողջունել հայ ժողովրդի տեղահանությունն այն դեպքում, եթե դա կատարվում է, ելնելով ռազմական նկատառումներից և ծառայում է իբրև պաշտպանիչ միջոց ապստամբությունների դեմ, սակայն այդ միջոցառումների իրականացման ժամանակ տեղահանվողները պետք է ապահովված լինեն պաշտպանությամբ թալանից և կոտորածից: Մեր այս առարկություններին անհրաժեշտ կշիռ տալու համար ես դրանք շարադրեցի հուշագրի տեքստով, որն անձամբ հանձնեցի սույն ամսի 4-ին Մեծ վեզիրին, ավելի ուշ ես այդ հուշագրի պատճենները ուղարկեցի արտաքին և ներքին գործերի նախարարներին:

Վանգենհայմ

ՀԱՎԵԼՎԱԾ

Պատճեն *Հուշագիր*

Գերմանական դեսպանության կողմից հանձնված է Մեծ վեզիրին 1915թ. հուլիսի 4-ին: (Գրված է ձեռագիր՝ Ռոզենբերգի կողմից):

Քանի որ Կայսերական կառավարության կողմից Արևելյան Անատոլիայի շրջաններում հայկական բնակչության դեմ հայտարարված պատժիչ միջոցառումներն իրականացվում են ռազմական նկատառումներից ելնելով և ծառայում են իբրև պաշտպանության օրինական միջոց, գերմանական կայսրությունը բոլորովին հանդես չի գալիս դրանց իրականացման դեմ, սակայն միայն այնքանով, որքանով այդ միջոցառումները համապատասխանում են Թուրքիայի ներքին դրության ամրապնդմանը:

Այս հարցում գերմանական կառավարության կարծիքը լիովին համապատասխանում է այն բացատրություններին, որն արտահայտեց Բարձր Դուռը ի պատասխան այն սպառնալիքների, որոնք Անտանտի տերությունները վերջերս արտահայտում էին Թուրքիայում հայերի նկատմամբ իբր կատարված գազանություններից հետո:

Մյուս կողմից գերմանական կառավարությունը չի կարող ուշադրություն չհրավիրել այն վտանգի, որոնք առաջացնում են այդ դաժան միջոցառումները և հատկապես զանգվածային աքսորները, որոնց ենթարկվում են առանց խտրականության մեղավորներն ու անմեղները, առավել ևս, երբ այդ միջոցառումներն ուղեկցվում են բռնության գործողություններով, ինչպիսիք են թալանն ու կոտորածը:

Ցավոք, անգամ դեսպանի կողմից ստացված տեղեկություններից հետո էլ տեղական իշխանություններն ի վիճակի չգտնվեցին կանխելու նման երևույթները, որոնք բոլոր դեպքերում ափսոսանք են առաջացնում: Թշնամական տերությունները կշահեն դրանից հայերի շրջանում հուզումներ գրգռելով, և վերջին իրադրարձությունների մասին տեղեկությունները, որոնք լայն տարածում կստանան արտասահմանում, անխուսափելիորեն լրջորեն կգրգռեն չեզոք երկրների, հատկապես ԱՄՆ-ի հասարակայնությանը, որի ներկայացուցիչները որոշ ժամանակ առաջ սկսել են ուշադրություն դարձնել Թուրքիայում հայերի ճակատագրի վրա:

Գերմանական կառավարությունը իբրև Թուրքիայի բարեկամ և դաշնակից տերություն իր պարտքն է համարում Բարձր Դռան ուշադրությունը հրավիրել այն հետևանքների վրա, որոնք կարող են վնաս հասցնել մեր ընդհանուր շահերին ինչպես ներկայիս պատե-

ռազմի ընթացքում, այնպես էլ ապագայում. կարելի է կանխատեսել, որ խաղաղության հաստատման ժամանակ Հայկական հարցը կըրկին պատրվակ կդառնա արտասահմանյան տերությունների համար Թուրքիայի ներքին գործերին միջամտելու համար:

Դեսպանությունը անպայմանորեն անհրաժեշտ է համարում, որ նահանգների իշխանություններին անվերապահորեն հրամայվի տեղահանվող հայերի կյանքի և ունեցվածքի պաշտպանության համար արդյունավետ միջոցներ ձեռնարկելու ուղղությամբ՝ ինչպես նրանց տեղափոխման ժամանակ, այնպես էլ նոր բնակավայրերում:

Կառավարությունը նաև գտնում է, որ ցանկալի կլիներ ժամանակավորապես դադարեցնել մահապատիժների ի կատար ածելը, որոնք արդեն կայացվել են հայերի նկատմամբ մայրաքաղաքում և ծայրամասերում, մասնավորապես Դիարբեքիրում և Ադանայում:

Wolfgang and Sigrid Gust (ed.) in cooperation with Taner Akcam:
The Armenian Genocide during the First World War: Documents from German State Archives. A-21257. DE/PA-AA/ R14086. DuA Dok. 106 (gk). 1915-07-07-DE-001.
ГАОТОМС, т.1, стр. 241-243.

№ 8

ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՊԻԶՈՆԻ ՆԱՀԱՆԳԻՑ

Արտաքին գործերի նախարարություն *Տրապիզոն, 9 հուլիսի 1915*
Պատճեն A 22559
Կայսերական գերմանական
հյուպատոսություն
հաշվետվություն N 35
J N գաղտնի. 316

Թուրքիայի պատերազմի մեջ մտնելուց հետո տեղի հայերի շրջանում սկսեցին դրսևորվել լուրջ մտավախություններ իրենց անձնական անվտանգության առթիվ: Թեպետ ոչ մի նախանշան չկար սպասվելիք խժդժությունների համար, ես, այնուամենայնիվ. տեղի վալիի հետ բարեկամական եղանակով խոսեցի Տրապիզոնի և նրա շրջակայքի քրիստոնյաների պաշտպանության մասին: Նա ինձ որոշակի հավաստիացումներ տվեց, որ նրանց հանդեպ ոչինչ չի ձեռնարկվի այնքան ժամանակ, քանի դեռ նրանք իրենց հանգիստ կպահեն:

Հունիսի 24-ին ձերբակալվեցին հայկական կոմիտեի տեղական առաջնորդները և Սամսունի վրայով ուղարկվեցին երկրի խորքերը: Նույն օրը ես իմացա, որ մտադրություն կա բոլոր հայերին տեղահանության ենթարկելու և միտում նկատվեց այդ առիթը օգտագործելու տեղի հայերի հանդեպ կամայականություններ կատարելու համար: Ես դրա վրա հրավիրեցի վալիի ուշադրությունը և նրանից ստացա համոզիչ բացատրություններ, որ հայերի հնարավոր տեղահանությունը նույնիսկ զինված դիմադրության պայմաններում կիրականացվի միայն քաղաքացիական և զինվորական իշխանությունների կողմից, բացառելով որևէ անպատասխանատու մասնավոր անձանց գործողությունները: Հունիսի 26-ին հայերից պահանջեցին հինգ օրը լրանալուն պես պատրաստ լինել երկրի խորքերը տեղափոխվելուն: Նրանց արգելվեց որևէ իրի վաճառքը: Խանութների և պահեստների վրա պետք է կնիք դրվեր, բնակարաններից բոլոր իրերը պետք է տեղափոխվեին որոշակի տեղեր և հանձնվեին կառավարության հսկողությանը, փողերը պետք է հանձնվեին փոստ:

Տրապիզոնի նահանգում տեղահանության ենթարկվեց մոտ 30000 մարդ: Այսպիսի զանգվածային տեղափոխության իրականացումն այնպիսի ճանապարհներով, որտեղ չկա սնունդ և գիշերելու հնարավորություն, հարկավոր է համարել որպես 300 կմ երկարությամբ ձգվող բծավոր տիֆի համաճարակով բռնկված մի գոտի, որը հայերի՝ հատկապես կանանց և երեխաների շրջանում ահավոր զոհեր կառաջացներ, որոնք արտասահմանում, հնարավոր է նաև Գերմանիայում կառաջացնեն արդարացի քննադատություն այդ աստիճան չափն անցած միջոցառումների դեմ: Այդ իսկ պատճառով ես ծանոթացրեցի Կոստանդնուպոլսում կայսերական դեսպանությանը գործերի վիճակին և միաժամանակ փորձեցի տեղի վալիի հետ զրույցում հասնել տեղահանության պայմանների թեթևացմանը: Նա ուշադիր լսեց ինձ և ցուցաբերեց առավելագույն բարեհաճություն իմ բարեկամական եղանակով կատարված հայտարարություններին: Այսպես՝ նախ տեղահանության ենթարկվողների ցուցակներից առանձնացվեցին բոլոր մինչև 10 տարեկան երեխաները, այրիները և որբերը, ինչպես նաև բոլոր այն կանայք, որոնք ներկայիս դրությամբ մնացել են առանց տղամարդկանց պաշտպանության, բացառությունների մեջ մտան նաև զինվորական ծառայության մեջ գտնվող ընտանիքները, հիվանդները, ինչպես նաև հողի կանայք և հայ կաթոլիկները: Բացի դրանից, հիվանդներին և հողի կանանց թույլ էր տրվում իրենց տներում մնալ և նրանց խնամքի համար տանը թողնվում էր ընտանիքի ի-

գական սեռի մեկ անդամ, երեխաներին կարելի էր տեղավորել ծանոթների մոտ: Վերջապես տեղահանվողներին թույլ էր տրվում վաճառել արժեքավոր իրերը և տնային կենցաղի իրերը ոստիկանապետի թույլտվությունը ստանալուց հետո: Տեղահանության առաջին երկու օրը գործում էին այս սկզբունքներով, ընդ որում փոքր երեխաների և հիվանդ կանանց իսկապես վերաբերվում էին ներողամտաբար: Ցավոք, երրորդ օրը այս հարցում ձեռք բերված բոլոր բացառությունները կրկին վերացվեցին:

Տրապիզոնից և մերձակա շրջաններից տեղահանությունը ավարտված է: Տեղի ունեցան մի քանի ինքնասպանություններ և մեկ հրկիզում: Այլ իրադարձություններ չեն նկատվել:

Տեղահանվողների անվտանգության առթիվ տեղափոխության ընթացքում վալին ինձ տվեց հանգստացնող հավաստիացումներ: Մինչդեռ կան նշաններ, որ այլ վայրերում վարվում են այլ կերպ: Այսպես՝ Երզնկայի և Դիարբեքիրի միջև լեռնային ճանապարհի վրա հայերը սպանվել են քրդերի կողմից և Էրզրումի ու Բայբուրթի շրջանում հայտնվել են կողոպտիչների խոշոր հրոսակախմբեր՝ ֆրանսերեն խոսող առաջնորդների գլխավորությամբ:

Մյուս կողմից պետք է նշել, որ որոշ հայեր այս դեպքում ցուցաբերեցին կամքի թուլություն: Առաջինները, ովքեր միջնորդություն էին խնդրում, որ իրենց թողնեին տեղում, հոգևորականներն էին, իսկ երբ հոգևորականների համար այս հարցում բացառություն չարվեց, տեղի եպիսկոպոսի ներկայացուցիչ, ալեհեր մորուքով մի սարկավագ վալիից թույլտվություն խնդրեց մահմեդականություն ընդունելու համար, վերջինս նրան պատասխանեց, որ ոչինչ նրան չի խանգարում, նրան հարկավոր է միայն հայտարարել իր կրոնափոխության մասին և դրանից հետո ինքը կենթարկվի թլպատման, թեպետ տեղահանության միջոցառումը ուղղված է ոչ թե քրիստոնյաների, այլ հայերի դեմ, այն հայը, որն ընդունել է մահմեդականություն, կտեղահանվի որպես մահմեդական հայ: Արական սեռի հայերը տեղահանության հրամանի հրապարակումից հետո այլևս չէին լքում իրենց տները, այլ աստիճանաբար ուղարկում էին իրենց կանանց, որոշ պաշտոնյաներ և բանկային չինովնիկներ պայքարում էին իրենց տեղահանության ժամկետի հետաձգման համար և թույլ տվեցին իրենց ընտանիքներին գնալ առանց իրենց:

Կայսերական հյուպատոսության և քաղաքից դուրս մասնավոր բնակարանի միջև, որտեղ ես բնակվում էի, քաղաքը ռուսական նավատորմի հուժկու ռմբակոծությունից հետո, տեղի էին ունենում սրտաճմլիկ տեսարաններ: Բազմաթիվ կանայք աղաչում էին փրկու-

թյուն իրենց կամ ծայրահեղ դեպքում իրենց երեխաների համար: Ես պետք է ձեռնպահ մնայի առանձին անձանց շահերը պաշտպանող որևէ քայլերից և իմ ուժերը կենտրոնացնեի բոլորի վիճակը թեթևացնելու վրա: Միայն մեկ դեպքում ես ստիպված եղա բացառություն անել: Սույն ամսի 6-ի լույս 7-ի գիշերը քաղաքի հայկական թաղամասի թաղապետն իր ընտանիքի հետ հյուպատոսության պարսպի վրայով անցել էր հյուպատոսության տարածք և ապաստան էր փնտրում այնտեղ: Ապաստանի իրավունքի հարցի բարձրացումից խուսափելու նպատակով, ես միջնորդեցի վալիին, որ նա մնա այստեղ: Վալին համաձայնություն տվեց, պայմանով, որ նա իր թաղապետի դերում օգնի իշխանություններին հայկական տները կնքելու, այդ տների պաշտպանության միջոցառումների իրականացման գործում և այլն: Հայը հայտնեց իր պատրաստակամությունը այդ գործում:

Իմ այստեղի գործընկերները հեռագրով տեղեկացրել են Կոստանդնուպոլսի իրենց դեսպանություններին տեղահանության հրամանի մասին: Իտալիայի և Ամերիկայի ներկայացուցիչները, որոնց արգելված է ծածկագրված կապն իրենց դեսպանությունների հետ, պետք է սահմանափակվեին փոստի կարճ հաղորդումներով: Ավստրո-Հունգարիայի հյուպատոսը նշում էր իր վերադաս մարմնին այն մեծ վտանգը, որով հղի է կանանց և երեխաների զանգվածային տեղահանությունը: Իմ ավստրիացի գործընկերը միջնորդում էր տեղի վալիի առջև որոշ երեխաների համար, իսկ ամերիկյան հյուպատոսը՝ պարսկահայերի համար, որոնք հանձնվել էին նրա պաշտպանությանը՝ երկուսն էլ ընդսմին ապարդյուն: Իտալացի գործընկերը, վախենալով անկարգություններից, գտնվում է հոգեպես ընկճված վիճակում: Ավստրիացի գործընկերոջ հետ ես քննարկեցի այն քայլերը, որոնք ես պետք է ձեռնարկեի վալիի առջև: Իր կողմից միջնորդություն կատարելուց նա ձեռնպահ մնաց: Ես իմ համաձայնությունը հայտնեցի դրա հետ: Քանզի վալին ինձ ցուցաբերում է առավելագույն վստահություն, ինչն ինձ թույլ է տալիս անկեղծորեն նրա հետ քննարկել այն կարգի կնճռոտ բնույթի կառավարական միջոցառումները, ինչպիսիք են հայերի տեղահանությունը՝ առանց վնաս հասցնելու այն լավ փոխհասկացողությանը, որը ներկայիս դրությամբ հաստատվել է մեր երկու գերատեսչությունների միջև:

Ճգնաժամային օրերին ոստիկանության տեղամասը, որը գտնվում էր անմիջապես Կայսերական հյուպատոսության մերձակայքում, ուժեղացվեց ռազմական առումով և իմ անձնական բնակարանը աննկատ ձևով պահպանվում էր զինվորականների կողմից: Իմ

անձի պաշտպանությունը ես մերժեցի՝ հեղինակության և դեպի քաղաք և ետ հեծյալ ճանապարհորդելու պատճառով:

Նորին գերազանցություն *Դոկտոր Բերգֆելդ*
ռայխսկանցլեր պարոն
դոկտոր ֆոն Բեթման-Հոլվեգին *Staatsarchiv Drasden, B 1. N 1952, p. 13-18*
ԱԲՊԱՏ, էջ 191-193.

№ 9

ԲԱՐՁՐ ԴՌԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՒՇԻՑ ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հեռագիր

Կայսերական դեսպանը *Բերա, Կոստանդնուպոլիս,*
արտաքին գործերի նախարարությանը *11 հուլիսի 1915*
N 1575

Վերծանում

Խնդրում եմ տեղեկացնել Մայնի Ֆրանկֆուրտի գերմանական օգնության միությանը, որ Բարձր Դռան հայտարարությամբ Մուշի հայերի տեղահանությունը սկսվելու է վաղը և Բարձր Դուռը անհրաժեշտ է գտնում Մամուլեթ-ուլ-Ազիզ որբանոցի իգական անձնակազմի մեկնումը՝ նրա անվտանգության շահերից ելնելով: Հեռագրի միջոցով ես որբանոցի ղեկավարության հայեցողությանը թողեցի այդ խորհրդին հետևելու հարցը:

Այդ կապակցությամբ խնդրում եմ օգնության միությանը Կայսերական դեսպանությանը, որքան հնարավոր է շտապ, ներկայացնել Թուրքահայաստանում իրենց հաստատությունների և դրանց անձնակազմի ցուցակը:

Վանգենհայմ
R 14086, Ab. 1158.
ԱԲՊԱՏ, էջ 194.

№ 10

ԶԵԿՈՒՅԱԳԻՐ ՍԱՄՍՈՒՆԻՑ ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կայսերական գերմանական *Բերա, Կոստանդնուպոլիս,*
դեսպանություն *16 հուլիսի, 1915*

Պատիվ ունեմ Ձերդ գերազանցությանը փոխանցելու Սամսունում կայսերական փոխհյուպատոսի սույն ամսի 4-ի հայերի տեղահանության մասին զեկուցագիրը: Ես հայտնեցի պարոն Կուկհոֆին, որ համաձայն եմ նրա դիրքորոշման և արտահայտությունների հետ և նրան տվեցի հրահանգներ Գերմանիայի շահերի ապահովելու նպատակով: Զեկուցագիրը կրկին ցույց է տալիս, որ թուրքական կառավարության դաժան միջոցառումները չեն կարող արդարացվել: Իմ ներգործությունը Բարձր Դռան վրա, ցավոք, խոստանում են միայն չնչին հաջողություն:

Եվ եթե ես վերջին ժամանակներս ավելի մանրամասն հայտնում եմ Ձերդ գերազանցությանը այդ դեպքերի մասին, ապա դա կատարվել է փոխհյուպատոս Կուկհոֆի այն ներկայացման հետևանքով, որ մեր թշնամիներն ավելի ուշ մեզ կմեղադրեն դրանում ունեցած որոշակի մեղսակցության մեջ: Իմ այս հաշվետվությունների միջոցով մենք պետք եղած ժամանակ կկարողանանք ապացուցել թշնամական աշխարհին, մասնավորապես մամուլի միջոցով, որ մենք անընդհատ եռանդուն ձևով մեղադրել ենք թուրքական կառավարության չափն անցնող միջոցառումները և առավել ևս տեղական մարմինների խժդժությունները:

Նորին գերազանցություն
ռայխսկանցլեր պարոն
ֆոն Բեթման-Հոլվեգին

Վանգենհայմ

R 14086, Ab. 22101.
ABTAT, էջ 194-195

ՀԱՎԵԼՎԱԾ

Պատճեն
Կայսերական գերմանական
փոխհյուպատոսություն
N 349

Սամսուն, 4 հուլիսի 1915

Ձեռնարկված հակամիջոցները (ամենայն հավանականությամբ անատոլիական բոլոր վիլայեթների համար նախատեսված) այնքան դաժան են և այնքան են հակասում մարդկայնության զգացումին, որ հնարավոր չէ դրանց անտարբեր վերաբերվել՝ խոսքը ոչ ավելի, ոչ պակաս ողջ ժողովրդի բնաջնջման կամ բռնի մահմեդականացման մասին է, որի ներկայացուցիչներն անմիջականորեն մասնակցություն չեն ունեցել հեղափոխական շարժման մեջ, հետևաբար հանդիսանում են անմեղ զոհեր: Տեղահանությունը հրամանի իրա-

գործման բնույթով սպառնում է ընդունել այնպիսի ձևեր, որոնք նմանություն ունեն միայն հրեաների հետապնդումների հետ Իսպանիայում և Պորտուգալիայում: Կառավարությունը մոլեռանդ, ուղղափառ մահմեդական տղամարդկանց և կանանց ուղարկում էր հայկական տներ մահմեդականություն ընդունելու քարոզչության նպատակով, բնականաբար, ծանր հետևանքների սպառնալիքով նրանց համար, ովքեր հավատարիմ կմնային իրենց հավատքին: Որքան ինձ հայտնի է, ներկայիս դրությամբ շատ ընտանիքներ այստեղ ընդունել են մահմեդականություն և նրանց թիվը օրեցօր ավելանում է: Դժբախտներից շատերը մինչ այժմ դիմակայում էին կրոնափոխության գայթակղությանը և օրեցօր խմբերով տեղահանվում են դեպի երկրի խորքերը: Գրեթե ոչ մեկը ժամանակ չուներ իրենց գործերը կարգավորելու համար: Վերցնելով միայն ամենաանհրաժեշտ իրերը, նրանք ստիպված էին թողնել իրենց տներն ու ունեցվածքը: Ինչպես ես իմացա, այժմ նրանք գտնվում են ոչ հեռավոր կետերում, որպեսզի այնտեղ մեկ անգամ ևս հիմնավորապես ենթարկվեն մահմեդականություն ընդունելու մշակմանը, նրանցից ոմանք այդ նպատակով վերադարձվել են այստեղ: Սամսունի և շրջակա հայկական գյուղերը մահմեդականացվեցին այնպես, ինչպես Ունիայում: Ոչ մեկին զիջումներ չարեցին: Առանց բացառության բոլոր հայերը՝ տղամարդիկ, կանայք, ծերերը, երեխաները՝ ընդհուպ մինչև ծծկեր մանուկները, հնադավանները, բողոքականները և կաթոլիկները, պետք է տեղահանվեին: Ոչ մի հայ քրիստոնյա չհամարձակվեց մնալ այստեղ, նույնիսկ օտար պետության հպատակություն ունեցողները, վերջիններս նույնպես պետք է տեղահանվեին: Մութասերիֆի ասելով, Սամսունից տեղահանվածների հանգրվանը հանդիսանում է Ուրֆան:

Ինքնըստինքյան ենթադրվում է, որ հայ քրիստոնյաներից ոչ մեկը չի հասնի այդ նպատակակետին: Երկրի խորքերից եկած լուրերը հայտնում են քաղաքների ամբողջ տեղահանված բնակչության անհետացման մասին:

Ի գիտություն ընդունելով վերը նշված պարագաները, ես անցյալ ամսվա 29-ին Ձեր ուղարկած երկու հեռագրերին հուլիսի 1-ին ուղարկեցի հետևյալ պատասխանը՝ «Պարտապանների մի մասը փոխել է դավանանքը և պահպանում է իր արտոնությունները, նրանց մեծ մասը տեղահանվեց: Տեղահանվածների կալվածքներն ու առկա ապրանքները պետք է բռնագրավվեն, իսկ դրանցից ստացված օգուտը՝ պետք է ծառայի որպես երաշխիք գերմանացի վարկատուների համար: Նահանգապետի ասելով պետք է ստեղծվի հանձնաժողով այդ գործերը կազմակերպելու համար: Բանկերում և առևտրական տնե-

ռում ես հավաքում եմ գերմանական ֆիրմաների և ակտիվների ցուցակները: «Թորք մադա» և «Արբուէզ» ֆիրմաները ներքին գործերի նախարարությունում եռանդուն ջանքեր են գործադրում վարկատուներին հավաքելու նպատակով: Գերմանական ընկերությունները, որոնք զբաղվում են կյանքի ապահովագրությամբ, մեծ շահեր ունեն այդ գործում, այդ իսկ պատճառով ես համառորեն ջանք եմ թափում նրանց պաշտպանելու համար»:

Քանի որ ես չեմ կարող ծածկագիր հեռագրեր հաղորդել, ուստի թույլ եմ տվել ինձ եզրափակիչ երկու արտահայտություններում շղարշված ուշադրություն դարձնել ներկայումս իշխող իրադրության վրա, ես ջանք եմ թափում բոլոր միջոցներով ներազդել նահանգապետի վրա այն առումով, որ կառավարության միջոցառումը հնարավոր լինի սահմանափակել 17-ից 60 տարեկան արական բնակչության ժամանակավոր արտաքսումով, որպեսզի այդ ձևով հնարավոր լինի բացահայտել իսկական մեղավորներին: Ես նաև նրա ուշադրությունը դարձրեցի այն անչափ անբարենպաստ տպավորության վրա, որը կառաջացնեն այդ միջոցառումները Գերմանիայի և Ավստրիայի քրիստոնյա բնակչության շրջանում: Ամեն ինչ ապարդյուն էր՝ ազգայնամոլների համար անհասանելի են բանականության հիմնավորումները: Եվ ինչպիսին էին հետևանքները: Անատոլիայում հայկական տարրի բնաջնջման հետևանքով խախտվում է ողջ առևտուրը և անհնարին է դառնում երկար տարիներով երկրի տնտեսական զարգացումը, քանի որ բոլոր վաճառականները, ձեռնարկատերերը և արհեստագործները գրեթե բացառապես հայեր էին: Այս կետը ես նույնպես բացատրեցի նահանգապետին, ցավոք՝ անարդյունք:

Այսօր կառավարողների երկաթյա սկզբունքն է՝ մահմեդականացնել ամբողջ Թուրքիան և դրա համար կիրառել բոլոր միջոցները: Նրանց մոտ բացակայում է ահավոր կորուստների չնչին հասկացողությունը, որոնք ունենում է երկիրը, ինչպես նաև տեղական և արտասահմանյան գործարար աշխարհը հայկական տարրի բնաջնջման հետևանքով: Հավանաբար գերմանացի վարկատուները նույնպես հայտնվեցին բավականին ծանր դրության մեջ: Նրանց շահերի պաշտպանության համար դեռևս չեն կարող վերջնական միջոցներ ձեռք առնվել, քանի որ դեռևս հայտնի չէ, թե պարտապաններից ով կընդունի մահմեդականություն և կմնա այստեղ, իսկ ով կանհետանա:

Ինչպես «Օտտոման և Սալոնիկ» բանկից, այնպես էլ «Հոֆշտրասերից» ես ստացել եմ պարտապանների ցուցակները, որտեղ նշված են պարտք վերցրած գումարների չափերը: Մութասերիֆի հետ ես խոսեցի նաև ձեռք առնված միջոցների մասին: Կոստանդնու-

պոլսում պետք է նախապատրաստվի համապատասխան օրենք, որպեսզի հնարավոր լինի կարգավորել գործերը: Դեռևս տեղահանվածների ամբողջ ունեցվածքի վրա արգելակալանք է դրված:

Պետք է կանխատեսել, թե ինչպիսի հետևանքներ կառաջացնեն Հայկական հարցի սարսափները, երբ դրանց մասին հայտնի կդառնա: Ամբողջ քրիստոնյա աշխարհի բողոքի ձայնն անխուսափելի է: Ոչնչացվել է բողոքական և կաթոլիկ միսիաների ամբողջ աշխատանքն Անատոլիայում: Մեր թշնամիները դրանից գերազանց կապիտալ կկորզեն, և մեր հայրենակիցներին, հավանաբար, նույնպես խորին բողոքի զգացում կհամակի:

Իսկ ամենավատն այն է, որ ամբողջ աշխարհը դրա մեղքը կբարդի Գերմանիայի վրա, քանի որ բարեկամները և թշնամիները գտնում են, որ Բարձր Դռան իշխանությունը ամբողջությամբ գտնվում է մեր ձեռքում և որ այդչափ կտրուկ միջոցը կարող էր իրականացվել միայն Գերմանիայի համաձայնությամբ:

Մահմեդականների զրգռված մոլեռանդությունը և մեր սեփական դիրքորոշումը Թուրքիայում ներկայիս միջազգային դրության պայմաններում, ինչպես նաև Ոսկե Եղջյուրի[1] ափերին քաղաքական ղեկավար շրջանների տրամադրությունները թույլ են տալիս կանխատեսել այն դժվարությունները, որոնք հակադրվում են Հայկական հարցի բավարար լուծմանը մարդկայնության և առողջ բանականության տեսանկյունից:

Այնուամենայնիվ հուսով եմ, որ Ձերդ գերազանցության փորձված հմտության շնորհիվ կհաջողվի դադարեցնել երկրագնդի ամենահին և ամենաղժբախտ ժողովուրդներից մեկի մեծ մասի վերջնական ոչնչացումը:

Չգիտեմ, իմ հեռագրերը ժամանակին են տեղ հասել կամ տեղ են հասել արդյոք ընդհանրապես: Համենայն դեպս, համարձակվում եմ առաջարկել ծածկագիր հաղորդագրություններ ուղարկելու հնարավորություն ընձեռել ինձ, որպեսզի ես կարողանամ ստույգ տեղեկություններ հաղորդել, հակառակ դեպքում ով գիտե, թե որքան անմեղների արյուն է թափվել այս հաշվետվության ուղարկման ժամանակ:

Կայսերական գերմանական փոխհյուպատոս
ստորագրություն. Կուկհոֆ

R 14086, Ab. 22101.
ԱՎԳԱՏ, էջ 195-197

---

[1] Կոստանդնուպոլսի:

№ 11

ԶԵԿՈՒՅԱԳԻՐ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԵՐԻ ԴԵՄ ՁԵՌՆԱՐԿՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կայսերական գերմանական հյուպատոսություն
K, N 79
B N 1553

Հալեպ, 17 հուլիսի 1915

Պատիվ ունեմ Ձերդ գերազանցությանը ներկայացնելու ինձ հասած որոշ տեղեկություններ, որոնք պատկերացում են տալիս այն մասին, թե ինչպիսի անմարդկային ձևով թուրքական կառավարության կողմից ձեռնարկված միջոցառումներ են իրականացվում հայերի դեմ՝

1) Գետի հոսանքով Ջերաբուլուս եկավ մի դիակ: Երբ զինվորական կայմակամին հարցրեցին, թե ինչու նա թույլ չի տալիս գոնե թաղել այն, քանի որ դուրանը նախատեսում է հուղարկավորություն, նա պատասխանեց, որ ինքը չի կարող պարզել՝ մահմեդական է նա, թե քրիստոնյա: (Դիակի սեռական օրգանները կտրված էին): Միայն մահմեդականին նա թույլ կտար հուղարկավորել:

Եվ ընդհանրապես հայտարարվել է, որ մահացած հայերը չպետք է հուղարկավորվեն:

Սույն ամսի 14-ին Հալեպ եկած հայերի շարասյունը, այն բանից հետո, երբ այն Հաճնից չորս շաբաթվա ընթացքում կիզիչ արևի տակ դանդաղ ընթացքով եկավ այստեղ, իր հետ բերեց 12 դիակներ:

2) Դիարբեքիրի վիլայեթում մի կայմակամի բանավոր փոխանցվեցին հրահանգներ այն մասին, թե ինչպես վարվել հայերի հետ: Նա հրաժարվեց դրանք կատարել, եթե դրանք չկրկնվեն գրավոր ձևով: Դրանից հետո նա հեռացվեց և Դիարբեքիրի ճանապարհին սպանվեց: Այս տեղեկությունը ես սկզբից ստացել էի միայն տեղի քրիստոնյաներից և այդ պատճառով մի կողմ էի դրել: Այժմ այդ տեղեկությունը հաստատվեց բավականին վստահություն ներշնչող մահմեդական կողմից: Բազմաթիվ ծառայողներ, հավանաբար, սպանվեցին, քանի որ նրանք առանց դաժանության էին վերաբերվում իրենց շրջանի բոլոր հայերին:

3) Որոշ կանայք, որոնք անցնում էին Հալեպի միջով, թաքցրեցին իրենց փոքր երեխաներին ծածկոցների տակ, որպեսզի նրանց իրենց հետ չտանեն ակնհայտ մահվան կամ ծայրահեղ աղքատության:

4) Շատ կանայք ճանապարհին ծննդաբերեցին շատ տառապանքների դիմանալով, ընդ որում, ուղեկցող խմբի կոպիտ վերաբեր-

մունքի պայմաններում: Նորածին և այլ փոքր երեխաները թողնվում էին ճանապարհին, ինչպես հաղորդվում է բոլոր վայրերից: Մի նշանավոր մահմեդական Թել Աբիադից արևելք ընկած անապատում իր մոտ վերցրեց լքված երկու երեխաների և փրկեց նրանց, թեև արդյունքում, հավանաբար, իրեն ենթարկեց գլխացավանքների:

5) Հայերի մի խմբի մոտ, որը շարժվում է Դեր-էլ-Զորով, բռնկվեց ծաղիկի համաճարակ: Հիվանդները սարսափելի ձևով տանջվում էին արևի կիզիչ ճառագայթների տակ:

Հայերի մյուս խումբը, որը հատեց Բաղդադի երկաթգիծը Եփրատից արևելք, ահավոր տառապում էր դիզենտերիայով: Շինարարական բաժնի ծառայողի կողմից այնտեղ ուղարկվեց երկաթգծի բժիշկը օգնություն ցույց տալու համար, այն դեպքում, երբ կառավարությունը հոգ չէր տանում նրանց մասին: Հալեպում գաղթականների շրջանում առաջացել է տիֆ:

Ավելի ակնհայտ է դառնում, որ կառավարության ձեռնարկած տեղահանության խիստ ու դաժան իրականացման հրամանները տանում են դեպի Ֆաքրի փաշան և բխում են նրանից:

Այդուհանդերձ, լուրեր են տարածվում, որ Հյուսիսային Միջագետքի և Դիարբեքիրի վիլայեթի բնակչության շրջանում ցրվել են թռուցիկներ, որով նրանց գրգռում էին հայերի դեմ: Թվում է, որ նույնիսկ փորձ է կատարվում թռուցիկների բաժանման այդ փաստը ներկայացնել որպես Գերմանիայի կողմից ձեռնարկված մի փորձ, ինչը դյուրին է դառնում շնորհիվ այն բանի, որ թռուցիկները սովորաբար բաշխվել են գերմանացիների կողմից:

Նմանատիպ հաշվետվություն ուղարկում եմ կայսերական դեսպանությանը:

Նորին գերազանցություն
ռայխսկանցլեր պարոն
դոկտոր ֆոն Բեթման-Հոլվեգին

Ռյոսլեր

R 14086, Ab. 23232.
ABTAT, էջ 198-199

№ 12

ՀԱԼԵՊԻ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍԻ ԶԵԿՈՒՅՑԱԳԻՐԸ ՌԱՅԽՍԿԱՆՑԼԵՐ ԲԵԹՄԱՆ-ՀՈԼՎԵԳԻՆ

27 հուլիսի 1915թ.

Ներքոհիշյալը ինձ հայտնի դարձավ իմ հուլիսի 17-ի N 79

վերջին զեկուցագրից հետո, որը վերաբերում էր հայերի տեղահանությունների և դրա իրականացման ուղիներին ու մեթոդներին:

5. Ելնելով հրամանների իրականացման դժվարությունից, որոնք հրապարակվում են կառավարության կողմից, վերաբերմունքը նրանց նկատմամբ, ով գտնվում է ճանապարհին, քիչ թե շատ կապված է առանձին պաշտոնյաների, այն շրջանների ժանդարմների բարի կամքից, որտեղով որ նրանք ստիպված են անցնել: Այդ իսկ պատճառով նրանց երբեմն կերակրում են, երբեմն էլ՝ ոչ ...

6. Առավել ակնհայտ է դառնում, որ կառավարությունը կանխամտածված կամ ոչ մտածված ձևով թույլատրում է, որ իր կողմից ընդունված միջոցառումների կյանքի կոչերն անցնի մյուսների ձեռքերը և վերածվի հայերի կոտորածի, որը կարծես թե աստիճանաբար դառնում է չերքեզների և քրդերի գործը:

7. Բոլորովին վերջերս հայերը Ռաս-ուլ-Այն էին ժամանում Խարբերդից, Էրզրումից և Բիթլիսից: Խարբերդի հայերը պատմում են, որ քաղաքից ոտքով մի քանի ժամ դեպի հարավ ճանապարհի վրա գտնվող մի գյուղում տղամարդկանց առանձնացրեցին կանանցից: Տղամարդկանց սպանեցին և նրանց դիակները գցեցին ճանապարհի երկու կողմերը, որտեղով որ հետո պետք է անցնեին կանայք: Կանանց և աղջիկների մի խումբը ամբողջությամբ առևանգվեց բեդվինների կողմից Մարդինի և Ռաս-ուլ-Այնի միջև ընկած ճանապարհահատվածում: Բեդվինները պարզապես ուժով շարասյունից տանում էին նրանց, ում հավանում էին: Ի՞նչ կլինի այդ դժբախտ արարածների հետ, երբ նրանք կմտնեն բեդվինների հողերի խորքերը: (...)

9. Կոստանդնուպոլսից աքսորվելուց հետո խորհրդարանի հայտնի անդամ հայերը՝ Զոհրապը և Վարդգեսը որոշ ժամանակ գտնվում էին Հալեպում: Նրանք գիտեին, որ պետք է սպանվեին, եթե իրագործվի Դիարբեքիր իրենց աքսորելու կառավարության հրամանը: Այդ ամենի մասին ես հայտնեցի կայսերական դեսպանությունն: Նրանց ուղեկցող ոստիկանների հեքիաթները, որոնք այժմ վերադարձել են Հալեպ, թե իբր իրենք հանդիպել են ավազակների, որոնք այնպես պատահեց, որ գնդակահարեցին խորհրդարանի երկու անդամներին, այլևս ոչ մի կասկած չեն թողնում, որ կառավարությունը արել է այնպես, որ նրանք սպանվեն Ուրֆայի և Դիարբեքիրի միջև ընկած ճանապարհին:

10. ... Իմ համեստ կարծիքով, հայ ժողովրդի նկատմամբ նկարագրված վերաբերմունքը արժանի է հատուկ ուշադրության ոչ միայն նշված պատճառներով, այլև նրա համար, որ բնակչության

լայն շրջանները, ինչպես նաև մահմեդականները, այդ ամբողջը վերագրում են թուրքական կառավարության վրա գերմանացիների ունեցած ազդեցությանը: Ասում են, որ Գերմանիան դրդել է թուրքական կառավարությանը կոտորել հայ ժողովրդին մինչև նրա ամբողջական ոչնչացումը: Թուրքական կառավարությունը հավանաբար կանի ամեն ինչ, որպեսզի խրախուսի այդ խոսակցությունները:

Իմ նախորդ հեռագրով հաղորդագրությունները և գրավոր զեկույցները պետք է ցույց տային, որ թուրքական կառավարությունը արդարացի անվտանգության միջոցառումներից ավելի հեռու գնաց հայերի իրական և հնարավոր գործողություններին հակազդելու նպատակով: Դրանց իրագործումը նրանք պարտադրում էին կատարել բացառիկ դաժանությամբ և ամենասանձարձակ ձևով կանանց և երեխաների նկատմամբ: Կառավարությունը գիտակցաբար ձգտում է հասնել հայ ժողովրդի որքան հնարավոր է մեծ մասի ոչնչացմանը, այդ նպատակով կիրառելով մեթոդներ, որոնք փոխառվել են շատ վաղ ժամանակներից, սակայն որոնք պատիվ չեն բերում կառավարությանը, որը ցանկանում է մնալ Գերմանիայի դաշնակիցը: Քանի որ թուրքական կառավարությունը գտնվում է Անտանտի հետ պատերազմական վիճակում և քանի որ գերմանական դաշնակիցը նպատակահարմար չի գտնում բողոքները նման ժամանակահատվածում, կառավարությունը ձգտում է օգտվել ընձեռնված հնարավորությունից մեկընդմիշտ լուծելու Հայկական հարցը, հնարավորինս թողնելով միայն մի քանի տարանջատված հայկական համայնքներ, և դրանում ոչ մի կասկած լինել չի կարող: Ոչ մեծ թվով մեղավորների հետ զոհ դարձավ անմեղ մարդկանց ահռելի զանգված:

Արդյո՞ք հնարավոր չէ դադարեցնել հետագա գազանությունները և համենայն դեպս փրկել Հալեպի վիլայեթի ափամերձ շրջաններում ապրող հայերին, որոնք ենթակա են տեղահանության: Եթե ռազմական տեսակետից նրանց տեղահանությունն անխուսափելի է՝ արդյո՞ք հնարավոր չէ ծայրահեղ դեպքում նրանց տեղափոխումը մեկ կամ երկու ամսով հետաձգել և մանրամասն նախապատրաստել այն, տրամադրելով լծկան անասուններ և սննդամթերքի պաշար: Արդյո՞ք չեն կարող նրանք մնալ Հալեպում կամ Ուրֆայում, հաշվի առնելով արդեն հրապարակայնորեն նրանց տրված հետագայում իրենց տները վերադառնալու իրավունքը: «Օսմանյան կառավարությունը հանդես է գալիս հակառակորդի մեղադրանքների դեմ» վերնագրված հռչակագրում, որը հրատարակվել է հունիսի 9-ին «Նորդդոյչե ալգեմայնե ցայտունգ» թերթում, թուրքական կառավարությունը պնդում է, որ տեղահանությունը ժամանակավոր միջոց է: Նա բա-

ցատրում է. «Եթե որոշակի քանակությամբ հայեր ժամանակավոր վերաբնակեցվել են կայսրության այլ շրջաններում, ապա այն պատճառով, որ նրանք ապրել են ռազմական գործողությունների շրջանում...»: Կարելի՞ է արդոք հավատալ նրա խոսքին: Արդյոք Քեյլանը, Սուքլուկը, Քեսաբը և այլն կարելի է համարել ռազմական գործողությունների շրջաններ: Արդյո՞ք այդ շրջաններում կանաց և երեխաների ներկայությունը վտանգ էր ներկայացնում, եթե գրեթե բոլոր տղամարդիկ արդեն զորակոչվել էին:

Հուլիսի 13-ի, N 132-ի առաջին էջում «Նորդդոյչե ալգեմայնե ցայտունգ» թերթը հրատարակում է «Աջենս Միլլի» օսմանյան տեղեկատվական պաշտոնական գործակալության հաղորդագրությունը, որը բողոքում է «Գազետ դե Լոզան»-ի հայտարարության դեմ, թե օսմանյան կառավարությունը իր պաշտպանության տակ է առնում Թուրքիայում ապրող հայերի դեմ կատարվող հուզումները, և այդ հակումները հաճախ ավարտվում են կոտորածով:

Ցավոք, շատ իրադարձություններ վկայում են «Գազետ դե Լոզան»-ի այդ պնդման օգտին:

Իմ հեռագրային հաղորդումը բավականին հավաստի փաստի մասին Թել Էրմենիում կատարված ջարդերի մասին արդեն ստացվել էր, երբ մամուլում հայտնվեց այդ հերքումը: Մայոր ֆոն Միկուշը լուսանկարեց կոտորածի զոհերին և կարող էր ներկայացնել դրանք: Ապացուցված է, որ այդ սպանությունները քրդերը կատարել են թուրքական կառավարության զինված զորամիավորումների ներկայությամբ, հավանաբար նույնիսկ նրանց ակտիվ մասնակցությամբ: Թուրքական կառավարությունը հազարավոր հայ հպատակներին, նկատենք, որ անմեղ մարդկանց, քշում էր անապատ (ընդհուպ մինչև հուլիսի կեսերը ավելի քան 30000 մարդ Ադանայի վիլայեթից և Մարաշից: Տեղահանության շրջանը էապես ընդարձակվում է) ռազմական գործողությունների շրջաններից նրանց տեղահանման պատրվակով, բոլորին անխտիր, չխնայելով ո՛չ հիվանդներին, ո՛չ հղիներին, ո՛չ զինվորականների ընտանիքներին, առանց նրանց բավարար չափով և պարբերաբար սնունդ և ջուր տրամադրելու. կառավարությունը ոչինչ չարեց համաճարակների առաջացումը կանխելու համար, որոնք տարածվում էին տեղահանվողների շրջանում, կանանց հասցրել են այնպիսի անհուսալի վիճակի, որ նրանք թողնում էին իրենց մանուկներին և նորածիններին ճանապարհի եզրին, վաճառում էին իրենց չափահաս աղջիկներին, հուսահատ նետվում էին գետը՝ անգամ իրենց փոքրահասակ երեխաների հետ: Թուրքական կառավարությունն այդ կանանց թողել է ուղեկցորդների

քմահաճույքին, ուստի և անարգանքի, ուղեկցորդները շարասյունից հանում էին աղջիկներին և վաճառում նրանց: Կառավարությունը տվեց նրանց բեդվինների ձեռքը, որոնք զբաղվում էին թալանով և առևանգում էին կանանց: Տղամարդկանց առանց որևէ հիմնավորման գնդակահարում էին անապատային վայրերում և նրանց դիակները թողնում էին, որ ուտեն շները և գիշատիչ թռչունները: Կառավարությունը, ինչպես կարծում են, կազմակերպեց նրանց սպանությունը, ում ուղարկում էր աքսորի: Նա բանտից ազատ արձակեց թուրք բանտարկյալներին, նրանց զինվորական համազգեստ հագցրեց և ուղարկեց այն շրջաններ, որոնցով պետք է անցնեին տեղահանվողները: Նա չերքեզներից ձևավորել է կամավորական ջոկատներ և ուղղել դրանք հայերի դեմ: Սակայն ի՞նչ է նա առաջարկում իբրև կիսապաշտոնական բացատրություն: «Օսմանյան կառավարությունը իր մեծահոգի պաշտպանությունն է առաջարկում Թուրքիայում ապրող բոլոր ազնիվ քրիստոնյաներին...»

Ես չկարողացա հավատալ իմ աչքերին, երբ տեսա այդ բացատրությունը և չեմ կարող բառեր գտնել, որ արտահայտեմ այդ ստի խորության աստիճանը: Թուրքական կառավարությունը չի կարող իրենից հեռացնել պատասխանատվությունն այն ամենի համար, ինչ կատարվում է, հոգատարության և կանխատեսելիության բացակայության, գործադիր մարմինների ծախվածության և արևելյան շրջաններում տիրող դրության, որը մոտենում էր անիշխանության, հետևանքով: Վերջիվերջո, կառավարությունը իսկապես մտադրված տեղահանվածներին քշել է այդ քաոսի մեջ: Նա այլ ելք չգտավ, քան պատասխանատվություն կրելը, նույնիսկ անգամ եթե նա զրկվեր այն տարրերի վրա եղած վերահսկողությունից, որոնց նա գործի էր դրել, ինչպես դա ամենայն հավանականությամբ կատարվեց Դիարբեքիրի վիլայեթում: Այդ նույն ձևով հայերի ոչնչացումը այս երկրում ընկալվում է իբրև թուրքական կառավարության նկատմամբ գերմանական հրահրման արդյունք, թուրքական կառավարությունը փորձում է մեր ներկայությամբ քողարկվելով, թաքցնել իր պահվածքը եվրոպական հասարակայնությունից:

Ես կցանկանայի Ձերդ գերազանցությանն առաջարկել մտածել, արդյոք արժե գերմանական մամուլում հրապարակել թուրքական մեկնաբանությունները Հայկական հարցի հետ կապված և արդյոք վտանգ չկա, որ մեր դաշնակիցները դրանով կվարկաբեկեն մեզ: Այս նույն զեկուցագիրը ուղարկում եմ կայսերական դեսպանությանը:

Ռյոսլեր

Այս զեկուցագրի վրա կա Գերմանիայի ԱԳՆ պետական քարտուղար Ցիմերմանի նշումը, որում մասնավորապես ասված է. «Ձերդ գերազանցությունը պետք է հանգստացնի և որքան հնարավոր է մանրամասն տեղեկացնի հյուպատոս Ռյոսլերին հայերի սադրիչ գործողությունների և այն քայլերի մասին, որոնք մենք այդուհանդերձ ձեռնարկում ենք նրանց օգնելու համար:

Wolfgang and Sigrid Gust (ed.) in cooperation with Taner Akcam: The Armenian Genocide during the First World War. Documents from German State Archives. A53a /1915/ 4563 A-2391. DE/PA-AA/ R14087. DuA Dok. 120 (gk); 144 (gk). 1915-07-27-DE-001.
ГАОТОМС, стр. 253-255.

№ 13

ԷՐԶՐՈՒՄԻ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍ ՇՈՅԲՆԵՐ-ՌԻԽՏԵՐԻ ԴԵՍՊԱՆ ՎԱՆԳԵՆՀԱՅՄԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԶԵԿՈՒՅԱԳՐԻՑ

28 հուլիսի 1915թ.

Տեղի վալի Թղսին-բեյի կողմնակիցները անկեղծ խոստովանում են, որ նրանց գործունեության վերջնական նպատակը Թուրքիայում հայերի լիակատար ոչնչացումն է: Պատերազմից հետո «մեզ մոտ Թուրքիայում հայեր արդեն չեն լինի», - ահա հոչակավոր անձանցից մեկի բառացի արտահայտությունը:

Քանի որ այդ նպատակին հնարավոր չէ հասնել տարբեր տեսակի ջարդերի միջոցով, այստեղ հուսով են, որ մինչև Միջագետք տանող երկարատև ճանապարհի զրկանքները և անսովոր կլիման կավարտեն այդ գործը: Հայկական հարցի այդ «լուծումը» կատարյալ է թվում ծայրահեղ ուղղության բոլոր կողմնակիցներին, որոնց թվին են պատկանում զինվորական և կառավարության գրեթե բոլոր պաշտոնյաները: Թուրք ժողովուրդը որևէ ձևով համաձայն չէ Հայկական հարցի նման լուծման հետ և արդեն հիմա զգում է ծանր տնտեսական կարիք, որն առաջացավ երկրի այս մասից հայերին արտաքսելու արդյունքում:

Deutschland und Armenien, 1914-1918, Sammlung Diplomatischer Aktenstucke, Herausgeleben und Eirgeleitet von Dr. Johannes Lepsius, Potsdam 1919, S.113.
ГАОТОМС, т.1, стр. 255.

№ 14

ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԱՂԵՏԱԼԻ ՀԵՏԵՎԱՆՔԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՄԱՐ

Գերմանա-հայկական ընկերություն — *Պոտսդամ, 22 հունիսի 1915*

Դեսպանի հաղորդումից հետո համաձայն մայիսի 31-ի հեռագրի Էնվեր փաշան մտադրվում էր «Ներկա խռովարար հայկական կենտրոններից տեղահանել դեպի Միջագետք կասկածելի ընտանիքներին:

Ինչպես ես արդեն հաղորդել եմ հունիսի 18-ի իմ նամակում, խոսքը ամենևին էլ առանձին ընտանիքների տեղահանության մասին չէ, այլ անատոլիական շրջաններից և Կիլիկիայից հայ բնակչության մեծ խմբերի տեղահանության մասին է դեպի տարբեր շրջաններ, և հատկապես Միջագետք:

Այս միջոցառումները չեն կարող արդարացվել ռազմական բնույթի պատճառաբանություններով: Դրանք ոչ մի կապ չունեն անընշան առիթների հետ, որոնցով դրանք փորձում էին հիմնավորել: Դրանք հակասում են նաև թուրքական կառավարության հունիսի 4-ի (հեռագրական գործակալություն WTB Կոստանդնուպոլսից) պաշտոնական հայտարարությունն այն մասին, որ Էրզրումի, Դերջանի, Էգինի, Սասունի, Բիթլիսի, Մուշի և Կիլիկիայի հայերը չեն ենթարկվել ոչ մի պատժամիջոցների կայսերական իշխանությունների կողմից, քանի որ նրանք չեն կատարել հասարակական կարգի և հանդարտության դեմ որևէ գործողություն: Սակայն նաև այս շրջաններից նկատվել են զանգվածային տեղահանության դեպքեր: Այն կետը, որտեղ ասված է, որ, «եթե որոշ հայեր պետք է տեղահանվեն իրենց բնակավայրերից, ապա դա տեղի ունեցավ այն պատճառով, որ նրանք բնակվում էին ռազմական գործողությունների գոտում», հիմք չի տալիս նման վարվելաձևի համար, քանի որ խոսքը մեծապես վերաբերում է այն շրջաններին, որոնք գտնվում են Անատոլիայի խորքում, ռազմական գործողությունների գոտուց հեռու:

Որքանով հայտնի դարձավ, մինչ այժմ տեղահանության է ենթարկվել, հավանաբար, շուրջ 200 000 հայեր: Մասնավորապես, նշվում են վերին Եփրատի (Երզնկա, Կամախ, Բայբուրթ), Տավրոսի և Ամանոսի (Զեյթուն, Հաճն, Այնթափ, Մարաշ) շրջանները և Կիլիկիան: Այլ շրջաններում, ինչպիսին է օրինակ Էրզրումը, նախապատ-

բաստվում են նմանատիպ միջոցառումներ: Այսպես Թրակիայում, Աղրիանապոլսի և Մարմարա ծովի միջև քշվել էր հունական գյուղերի բնակչությունը, խոսքը ակնհայտորեն կայսրության քրիստոնյա բնակչության խիստ կրճատման փորձի մասին է, ինչը պետք է իրականացվի շահարկելով պատերազմի իրավունքը և օգտվելով մահմեդականների սրբազան պատերազմով գրգռված զգացմունքներից և, բռնի տեղահանության միջոցով դեպի բնակլիմայական անբարենպաստ ու վտանգավոր սահմանամերձ շրջաններ նրանց ուղարկելով, դատապատել մահվան:

Ահա մի օրինակ, թե ինչպես են վարվում նման դեպքերում: Տավրոսյան լեռնազանգվածի Զեյթունի արական բնակչության մոտավորապես 27000 բնակիչները ուղարկվեցին եփրատյան հարթավայրի Դեյր-էս-Զոր արաբական տեղաբնիկ ցեղերի մոտ (500 կմ հյուսիս-արևելք), դրան հակառակ, կանայք, աղջիկները և երեխաները տեղափոխվեցին Անգորայի շրջան (500 կմ դեպի հյուսիս-արևելք) այսպիսով տղամարդիկ առանձնացվեցին իրենց ընտանիքներից հազար կմ տարածությունով: Տեղահանության ժամանակ երիտասարդ աղջիկներին բռնի ուղարկում էին թուրքական հարեմներ, մահմեդական գյուղերում կանանց նկատմամբ կատարում էին բռնություն: Այն ժամանակ, երբ մահմեդական բոսնիացիներին Զեյթունի տեղահանված շրջաններում բնակեցնելու համար կառավարության կողմից հատկացվեց 20000 թուրքական ֆունտ, հայերը զրկված էին իրենց ունեցվածքից և առանց միջոցների ուղարկված էին օտարության:

Նման միջոցառումները, որոնք տեղի են ունեցել միայն հին ասորիների տեղահանության ժամանակ, չեն կարող արդարացվել ռազմական նպատակներով, այլ միայն հանգում են քրիստոնյաների քողարկված կոտորածի: Ծավալներով այն, ամենայն հավանականությամբ, գերազանցում է Աբդուլ Համիդի ժամանակ եղած կոտորածներին:

Ես իմ պարտքն եմ համարում ուշադրություն հրավիրել Թուրքիայի այդ միջոցառումների հետևանքների վրա:

1. Այն պահին, երբ Եվրոպայում և Ամերիկայում հայտնի կդառնան այդ փաստերը, դրանք ոչ միայն «կրկին մեծ հուզումի պատճառ կդառնան մեզ թշնամական ամբողջ աշխարհում և կօգտագործվեն մեր դեմ», ինչպես ենթադրում է դեսպանը հունիսի 4-ի հաղորդագրության մեջ: Դրանք կառաջացնեն նաև Գերմանիայի ողջ ավետարանչական եկեղեցու դժգոհությունը, որը չի կարող թեթևացվել թուրք ժողովրդի հանդեպ եղած ամենաանկեղծ համակրանքով:

2. Թուրքական ներկայիս իշխանությունների կողմից իրականացվող բնաջնջման քաղաքականության հետևանքով ամբողջ հայ ազգին (այսինքն՝ երկու մլն ռուսահայեր և երկու մլն թուրքահայեր) հետևողականորեն ներշնչվում է ատելություն թուրքերի հանդեպ, ինչը բխում է միայն Անտանտի երկրների շահերից և վերին աստիճանի վնասակար է Գերմանիայի ազդեցության համար Թուրքիայի տնտեսական զարգացման վրա, որը հիմնականում ընկած էր հայերի ուսերին: Օրինակ, Կիլիկիայից հայերի տեղահանության հետևանքով այնտեղի գերմանական ձեռնարկությունները (բամբակագործական ընկերությունները և այլն) զրկվեցին ամբողջ աշխատանքային ուժից:

3. Մի երկրում, որտեղ կառավարությունն ի սկզբանե գործում է ահաբեկչական եղանակներով, այլ կերպ չէր էլ կարող լինել, որ բնաջնջման քաղաքականությունը նույնությամբ ահաբեկչության մեջ ներքաշեր նաև տուժածներին: Չի կարելի մոռանալ, որ ներկայիս կառավարությունն ունի նաև ուժեղ և վտանգավոր ընդդիմադիր կուսակցություն թուրք և արաբ հպատակների շրջանում, որոնց ձեռքն են ընկնում նախկինում օրինապաշտ թուրքահայերը:

Քանի որ թուրքական ընդդիմությունը (լիբերալների միությունը) ունի Անտանտի շահերին մոտ նպատակներ, ապա մեր անհետաձգելի քաղաքական շահը պետք է հանդիսանա այն, որ մենք չներքաշենք թուրքահայերին ահաբեկչական ընդդիմության մեջ և չզրկենք նրանց գերմանական ազդեցությունից: Մոտ 120 դաշնակցական առաջնորդներ, որոնք բացարձակապես օրինապաշտ էին, բանտարկված են և մտավախություն կա նրանց ընդհանուր մահապատժի կապակցությամբ: Այդ օրինապաշտ մտավորականների վերացման հետևանքով ռուսահայության ահաբեկիչ տարրերը կարձակեն իրենց ձեռքերը նաև Թուրքիայում:

Օրինապաշտ հայկական կոմիտեները ամերիկյան, բուլղարական և հունական կառավարություններին խնդրել են համապատասխան ներկայացուցիչների միջոցով օգտագործել իրենց ազդեցությունը ի պաշտպանություն հայերի: Նրանք միաբերան պատասխանեցին, որ միայն գերմանական կառավարությունն է ի վիճակի այդ չարիքի դեմն առնել, քանի որ միայն նա ունի ազդեցություն թուրքական կառավարության վրա և դրա հետևանքով արտաքին աշխարհի կողմից Թուրքական կառավարության հետ միասին ճանաչվում է պատասխանատու Թուրքիայի ներսում տիրող իրադրության համար:

Արտաքին գործերի նախարարություն
Բեռլին

Յոհաննես Լեփսիուս
R 14086, Ab.19605
ABIAT, էջ 187-189.

№ 15

ԴԵՐ-ԷԼ-ԶՈՐ ՈՒՂԱՐԿՎԱԾ ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՅՆՏԵՂ ՀԱՍԱԾ ԱՔՍՈՐՎԱԾՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կայսերական գերմանական հյուպատոսություն
N 1665

Հալեպ, 31 հուլիսի 1915

Սսի կաթողիկոսը Ջեմալ փաշայից թույլտվություն է ստացել Դեր-էս-Զոր ուղարկել հոգևորականի՝ համոզվելու համար այնտեղ հասած աքսորվածների վիճակի մասին: Նա այժմ վերադարձել է այնտեղից և հատնում է հետևյալը.

Դեր-էլ-Զոր եկածները Ջեյթունի, Յարպուսի, Ալաբասկի, Ալ-բաստանի բնակիչներ են: Նրանց թիվը կազմում է 15 398, որոնցից 10000 տեղավորվեցին քաղաքում, իսկ մյուսները՝ շրջակայքում: Նրանցից շատերը ստիպված էին մնալ բաց երկնքի տակ: 300 մարդ չհաղթահարեցին ճանապարհի դժվարությունները, 98 մարդ խեղդվեց Եփրատի ջրերում: Սնունդը բացարձակապես անբավարար է: Աքսորվածները իրենց քաղցից պաշտպանելու համար ստիպված էին վաճառել իրենց ավելի քան 30 երեխաներին: Մեկ անձի սնունդը թեկուզև օրեկան 8 պֆենինգ[2] ապահովելու դեպքում, շաբաթական կպահանջվեր ավելի քան 500 թուրքական ֆունտի չափով գումար:

Մինչև հուլիսի 30-ը Հալեպ ժամանեցին 14000 աքսորվածներ, որոնցից 4000 ուղարկվեցին ավելի հեռու, այնպես, որ նրանցից ներկայումս այստեղ գտնվում են 10000 մարդ:

Արդեն եկել է Այնթափը, Քիլիսը և Հալեպի վիլայեթի ափամերձ շերտը ազատելու հրամանը, և այսպիսով կրկին աղքատության մեջ գցել 50000 մարդ: Այլ կերպ դա անհնար է անվանել, քանի որ կառավարությունը կազմակերպչական առումով չհաղթահարեց խնդիրը: Այժմ նա համենայն դեպս որոշում է ընդունել նոր աքսորվածներին ուղարկել այսուհետև ոչ թե Միջագետք, այլ Սիրիա: Այսինքն, նրանց սկզբում պետք է հասցնեն Դամասկոս: Սակայն ի՞նչ

[2] Գերմանական մանր դրամ:

կլինի նրանց հետ այդ դեպքում: Կառավարությունը նրանցից խլում է աշխատանքը և աշխատավարձը և, անկասկած, չի կերակրելու նրանց: Այնքափ քաղաքի նկատմամբ, որտեղ ապրում են կրթված և համեմատաբար ունևոր ընտանիքներ, տեղահանության իրականացումը կլինի հատկապես անարդարացի և դաժան, քանի որ քաղաքի բնակչության համար ճանապարհի դժվարությունները նրանց ուժերից վեր են, քան գյուղական բնակչության համար: Այնուամենայնիվ, Այնքափը չի գտնվում ոչ ռազմական գործողությունների գոտում և ոչ էլ տեղահանության ճանապարհին: Միայն նրա հայ բնակիչների թիվը կազմում է 38000՝ կարևոր տարր այդ տարածքի տնտեսական կյանքի համար:

Մինչև այս պահը հնարավոր չէր պարզել, թե տրված է արդյոք Մարաշը դատարկելու մասին հրամանը:

Նմանատիպ հաշվետվություն եմ ուղարկել պարոն ռայխսկանցլերին:

Ռյոսլեր

Նորին պայծառափայլություն
կայսերական արտակարգ դեսպան,
իշխան Հոհենլոե-Լանդենբուրգին,
Կոստանդնուպոլիս

R 14105, Ab.149683.
ԱԲԳԱՏ, էջ 205-206

№ 16

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՔԻ ՆՈՏԱՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԴԵՄ

4 օգոստոսի 1915թ.

Թուրքիային ուղղված իր նոտայում գերմանական կառավարությունը իր դժգոհությունն արտահայտեց «(հայ բնակչության) զանգվածային և հախուռն տեղահանության կապակցությամբ, հատկապես ելնելով նրանից, որ տեղահանությունն ուղեկցվում է բռնության այնպիսի գործողություններով, ինչպիսիք են կոտորածն ու թալանը»:

Politisches Archiv des Auswartigen Amtes, Abteilung IA, Turkei 183/37, A2127, August 4.1915; "Documentation of the Armenian Genocide in German and Austrian Sources" by Vahakn N.Dadrian, New Brunswick, Transaction Publishers, 1994, p. 98.
ГАОТОМС, т.1, стр. 256.

№ 17

ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԷՐԶՐՈՒՄԻՑ*

Կայսերական գերմանական հյուպատոսություն
J N 580
գաղտնի հաշվետվություն N 23

Էրզրում, 5 օգոստոսի 1915

Հայերի տեղահանությունը այժմ որոշակիորեն ավարտվել է, այսինքն տեղի հյուպատոսության շրջանում հայեր այլևս չկան: Այդ իսկ պատճառով, տեղին եմ համարում, ամփոփելով, հակիրճ ներկայացնել վերջին ամիսների հայերի տեղահանության հետ կապված կատարված միջադեպերի մասին:

Մինչև մայիսի սկիզբը հայերը այստեղ ապրում էին ազատ և անարգելք և կարող էին առանց դժվարությունների զբաղվել իրենց գործերով: Առանձին դեպքեր, ինչպիսին է բանկի կառավարիչ Բաստրմաջյանի սպանությունը և այլն, ընդամենը ժամանակավորապես տագնապալի տպավորություն գործեցին: Թուրքերի կողմից կոտորվելու վտանգը, անշուշտ, առկա էր և ոչ առանց հիմքերի, սակայն գեներալ Պոսսելդի, ինչպես նաև գերմանական հյուպատոսի ներկայությունն ու գործունեությունը, հավանաբար, խանգարեցին դրա բռնկմանը:

Մայիսի սկզբին Վանի հայտնի դեպքերը առիթ ծառայեցին, որ կառավարությունը և զինվորական իշխանությունները անցնեն դաժան միջոցառումների հայերի դեմ: Բոլոր հայերը, որոնք դեռ ծառայում էին զենքով, դուրս բերվեցին բանակից և տեղավորվեցին շինարարական գումարտակներում: Կանանցից, երեխաներից և ծերերից բաղկացած Էրզրումի և Բասենի դաշտավայրերի բնակիչները տեղահանվեցին իրենց գյուղերից և հարկադրաբար պետք է տեղափոխվեին Միջագետք: Ռազմական նկատառումներով հիմնավորված այս միջոցառումը իրականացվեց անխնա և դաժան ձևով: Երզնկայի ճանապարհին այդ մարդիկ Մամախաթունի, Սանսարի, Եփրատի կամրջի և Փերեզի մոտ ենթարկվեցին հարձակումների, թալանի և սպանությունների քրդերի և թուրք կամավորների կողմից: Սպանվածների թիվը, հավանաբար, կազմել է 10-20 հազար, կառավարության տվյալներով՝ ընդամենը 3-4 հազար:

Այդ նույն ժամանակ Երզնկայի դաշտավայրի բնակիչները Կամախի կիրճով անցնելու ժամանակ, աննշան բացառությամբ,

---

* Հմմ. Յ. Լեպսիուս, էջ 116-121 (վավ. N 129):

նույն ձևով թալանվեցին ու սպանվեցին, իսկ կանայք առևանգվեցին: Ընդ որում, ինչպես ինձ հավաստիորեն հայտնվեց, դրան մասնակցում էին թուրք զինվորականներ, համապատասխանաբար նաև ոստիկանները:

Հունիսի սկզբին Էրզրումից տեղահանվեց հայկական վերնախավի առաջին խումբը 14 օրվա ընթացքում: Շուրջ 500 մարդ հունիսի 13-ին հեռացան Էրզրումից և սարերով Խարբերդի վրայով անցան Ուրֆա: Կառավարության տեղեկատվությամբ նրանցից ճանապարհին սպանվել են 14 մարդ, իսկ ինձ հասած մասնավոր տեղեկության համաձայն՝ գրեթե բոլոր տղամարդիկ: Երկրորդ խումբը, մոտ 3000 մարդ, Էրզրումից հեռացավ հունիսի 19-ին և 20-ին: Բայբուրթի մոտ նրանց, հատկապես տղամարդկանց, առանձնացրին, և ես ոչինչ չկարողացա պարզել նրանց գտնվելու վայրի վերաբերյալ: Հավանաբար նրանց սպանել են: Մնացածները հասան մինչև Երզնկա, որտեղ մնացին մինչև ճանապարհները պահպանել սկսելը: Տեղահանվածների երրորդ խումբը, մոտ 300 ընտանիք, Էրզրումը լքեցին հունիսի 26-ին: Նրանք հասան մինչև Երզնկա: Չորրորդ խումբը, բաղկացած լինելով հիմնականում արհեստավորների ընտանիքներից, որոնք սկզբում կառավարությունից ստացել էին բնակվելու իրավունք, սակայն հետագայում այն վերացվեց զինվորական բարձրագույն հրամանատարության կողմից, նույնպես Բայբուրթով հասավ մինչև Երզնկա: Այսպիսով մինչև հուլիսի 15-ը գրեթե բոլոր հայերը տեղահանվեցին Էրզրումից: Առանձնահատուկ պարագաներում դեռևս այնտեղ մնացած որոշ անձինք, ինչպիսիք են անփոխարինելի պաշտոնյաները, հիվանդները և այլն, կառավարությունից ստացան բնակության հատուկ իրավունք: Էրզրումից իմ բացակայության ժամանակ հանկարծակի վերացրեցին և այդ բնակության իրավունքը բանակի բարձրագույն հրամանատարության հրամանով: Նրանք պետք է կարճ ժամանակում հեռանային Էրզրումից, և նրանցից շատերը չկարողացան իրենց ապահովել նույնիսկ ճանապարհի համար ամենաանհրաժեշտ բաներով:Այս վերջին խմբին մասամբ թալանեցին Աշկալեի և Բայբուրթի մոտ: Խմբի մեջ էին նաև հայ բժիշկները և դեղագործները, որոնց մի մասը, ինչպես հայտնում են, ռազմական դատարանի դատավճռով գնդակահարվել է Բայբուրթի մոտ: Երկրորդ, երրորդ և չորրորդ խմբերը, ինչպես արդեն նշվել է, ժամանեցին Երզնկա և մնացին այնտեղ մինչև օգոստոսի սկիզբը վրանային ճամբարում: Երզնկայում եղած ժամանակ ես անձամբ համոզվեցի դրանում: Օգոստոսի սկզբին նրանց ուղարկեցին ավելի հեռու, դեպի Ուրֆա և ասում են, որ նրանք անցան վատ համբավ ձեռք բերած

Կամախի կիրճով: Թե որքան մարդ նրանցից ողջ և առողջ կհասնի նշված վայրը, այդ հարցը ես առկախ եմ թողնում:

Ինչ վերաբերում է հարևան վիլայեթներից տեղահանված հայերին, ապա այնտեղ զոհվածների թիվը անհամեմատ ավելի մեծ է: Այսպես, օրինակ, Խնուսի դաշտավայրում հայերի մեծ կոտորած է եղել և կարծում են, որ Տրապիզոնի վիլայեթում սպանված են գրեթե բոլոր տղամարդիկ: Փաստորեն, Երզնկայում եղած ժամանակ Տրապիզոնի հայերի մեջ ես բացարձակ չտեսա այստեղով անցնող որևէ տղամարդու: Եվ տեղահանության ձևը այնտեղ առավել դաժան էր: Այսպես, օրինակ, Տրապիզոնում հայերին հատկացվել էր մի քանի ժամ և նրանց արգելված էր որևէ բան վաճառել իրենց իրերից: Նրանք նաև կառավարությունից չստացան տրանսպորտային միջոցներ, այնպես որ մեծամասնությունը պետք է տեղափոխվեր ոտքով: Նման կտրուկ ձևերով գործեցին նաև Սվազի հայերի նկատմամբ:

Ինչ վերաբերում է այս հարցի վերաբերյալ իմ դիրքորոշմանը, ապա ես ինձ թույլ տվեցի ղեկավարվել հետևյալ տեսակետներով:

Չերդ գերազանցությունից ստացված հրահանգներից ինձ հայտնի էր, որ մենք իրավունք չունենք պաշտպանել տեղահանության ենթարկված անմեղ հայերին և սովորաբար չեն իրականացվում որևէ պաշտպանության իրավունք նրանց հանդեպ: Իմ միջնորդությունն այն հայերի համար, որոնք կառավարության նկատմամբ թույլ չեն տվել որևէ զանցանք, և այդ իսկ պատճառով կարող էր և պետք է սահմանափակվել միայն նրանով, որ ես հանդես եկա նրանց կյանքի և ունեցվածքի պաշտպանությամբ՝ ընդդեմ բռնությունների գործադրման և այն բանի համար, որ ռազմական անհրաժեշտությամբ հիմնավորված տեղահանությունը ընթանար հնարավորինս մարդասիրաբար: Այս իմաստով ես նաև տեղահանության սկզբում համապատասխան հայտարարություն արեցի ինչպես քաղաքացիական վարչակարգի, այնպես էլ բանակի բարձրագույն հրամանատարության առաջ: Ընդ որում, իմ առաջարկությունը ես արեցի համաձայն հրահանգի՝ բարեկամական խորհրդի սահմաններում և խուսափեցի որևէ պաշտոնական բնույթից: Երբ հայտնի դարձավ առաջին մեծ ջարդի մասին Կամախում, Խնուսում, Դերջանում, ես շատ համառորեն բողոք հայտնեցի վալիին համաձայն հրահանգի, որն ինձ տրված էր Չերդ գերազանցությանն ուղարկված դրա վերաբերյալ իմ հաշվետվության առնչությամբ: Ընդ որում, ես ընդգծեցի, որ նման սարսափելի իրադարձությունները կարող են վնաս հասցնել Թուրքիայի հեղինակությանը չեզոք երկրներում և նրա բարեկամների շրջա-

նում: Այնուհետև ես ընդգծեցի, որ նման իրադարձությունները հեշտությամբ հող են նախապատրաստում օտարերկրյա նոր միջամտության համար հայկական գործերին և կարող են անտեղի բարդացնել Թուրքիայի դրությունը խաղաղության առաջիկա բանակցություններում: Բացի այդ, ես համառորեն վկայակոչում էի այն, թե ինչպիսի անբարենպաստ վիճակում կհայտնվի մեր կառավարությունն այդ դեպքերի պատճառով, և որ այդ պատճառով մենք պետք է եռանդուն կերպով պնդենք, որ ցանկացած դեպքում խուսափենք պատասխանատու կառավարական մարմինների կողմից դրանց կրկնությունից: Վալին ուղղակիորեն խոստովանեց, որ իմ կարծիքը ճշմարտացի է, սակայն իր կողմից նշեց, որ պատասխանատվությունը ընկնում է ոչ թե իր, այլ բանակի բարձր հրամանատարության վրա, որի ենթակայության տակ է գտնվում ինքը: Հրամանատարությունը հրամայել է իրեն, չնայած ճանապարհների ակնհայտ անպաշտպանությանը, տեղահանել հայերին՝ առանց նրանց պաշտպանություն տրամադրելու:

Խոր ափսոսանքի է արժանի այն, որ զինվորական իշխանությունների կողմից թույլտվության հետևանքով Կոմիտեի դիրքորոշումը և նրա կասկածելի սաղրիչների հայերի տեղահանության միջոցառումը վերածվեց վրեժի, նրանց թալանելու և ոչնչացնելու գործողության: Առողջ դատող թուրք բնակչության, հատկապես հողատերերի շրջանում, հայերի ոչնչացման այս քաղաքականությունը նույնպես հավանության չի արժանանում: Բնակչության այս շրջանները, որոնք համագործակցում և հաշտ էին ապրում հայերի հետ, գիտակցում են «Հայկական հարցի լուծման այդ նոր համակարգի» տնտեսական և քաղաքական մեծ վտանգավորությունը: Երկրով իմ ուղևորությունների ժամանակ հողատերերն ինձ հաճախ հարցնում էին, թե ում հյուրն եմ եղել, ինչպես նաև այն մասին, թե ինչու է գերմանական կառավարությունը թուրքական կառավարությանը դրդում նման գործողությունների: Ինձ հարց տվողներից մեկը, շատ հարգարժան ու ազդեցիկ մի բեյ, ավելացրեց, որ գուցե և նախկինում եղած լինեն հայերի կոտորածներ, սակայն դրանք ավելի հաճախ սահմանափակվում էին տղամարդկանց միջև մարտերով: Այժմ, դուրանի դրույթներին հակառակ ոչնչանում են հազարավոր անմեղ կանայք և երեխաներ: Սա գրգռվածության հասցված ժողովրդի տեղահանություն չէ, այլ Կոմիտեի[3] կառավարության հրամանով նրա պարբերական ոչնչացումն է, ինչպես Կոմիտեն շեշտադրում է դա հրամաններում:

[3] «Միություն և առաջադիմություն» կուսակցության ԿԿ:

Ընդ որում, հարկ է նշել, որ այստեղ համառորեն տարածվում է լուրն այն մասին, որ տեղահանությունը կատարվել է Գերմանիայի կառավարության պնդումով: Հայկական և թուրքական կրթված շրջաններում պատմում էին, որ պրոֆեսոր Ռորբախը կայսրին իր զեկուցման ժամանակ ընդգծել է, որ հայերը հանդիսանում են բավականին հարմար տարր Բաղդադի երկաթգծով հատվող Միջագետքի ոչ մարդաշատ տարածքները բնակեցնելու համար: Դրա հիման վրա գերմանական կառավարությունը դրդել է թուրքերին տեղահանել հայերին այնտեղ: Ես բնական է, ակտիվ հանդես եկա այդ պատմությունների դեմ, սակայն չկարողացա արգելք հանդիսանալ, որ շատերը չհավատան դրան:

Ինձ թվում է, ապագայում չի բացառվում, որ ինչպես այս դատողությունները, այնպես էլ ընդհանրապես Հայկական հարցի նկատմամբ վերաբերմունքը[4] Կոմիտեի կողմից կօգտագործվի ներկայիս կառավարության[5] թշնամիների դեմ՝ որպես քարոզչական նյութ: Այս քարոզչությունը հատկապես գործի կդրվի այն ժամանակ, երբ հաջորդ տարի նկատելի կդառնան հայկական բանվորական ուժի բացակայության պատճառով պայմանավորված տնտեսական կորուստները:

Ամփոփելով իմ զեկուցումները և գործունեությունը Հայկական հարցի բնագավառում, հարկ եմ համարում նշել հետևյալը:

Այստեղ ստիպված պետք է շատ հեռուն գնալ, պարզելու համար հայերի հուզումների պատճառները և հետազոտել՝ կարելի՞ էր արդյոք նպատակային միջոցառումների և կառավարության բանակցությունների միջոցով խուսափել դրանցից: Իմ կարծիքով, հայկական նախապատրաստված համընդհանուր և մտածված ապըստամբության որևէ կարգի ապացույցներ այնուամենայնիվ բացակայում են: Այսպես, օրինակ, Էրզրումի վիլայեթում չեն հայտնաբերել ոչ զենք և ոչ էլ վարկաբեկող փաստաթղթեր: Եթե այստեղ իսկապես ծրագրվեր ապստամբություն, ապա դրա համար ամենահարմար պահը հունվարին էր, երբ ռուսները կանգնած էին 35 կմ հեռավորության վրա Էրզրումից, իսկ Էրզրումի կայազորում ոստիկանությունը բաղկացած էր մի քանի հարյուր մարդուց, այն դեպքում, երբ Էրզրումում միայն բանվորական գումարտակներում կար 3-4 հազար հայ: Այն, որ ճնշված և սեփական կառավարության կողմից վատ վերաբերմունքի արժանացած և այդ իսկ պատճառով այլ ազգություն և այլ

---

[4] Գերմանիայի:

[5] Թուրքական:

կրոնի սահմանամերձ դժգոհ բնակչությունը միանում է իր հետ նույն հավատքի հաղթական առաջ շարժվող թշնամուն, որը իրեն ներկայացնում էր որպես ազատարար և գրավում նրան իր խոստումներով, ինձ թվում է, եթե նույնիսկ արժանի է ափսոսանքի, այնուամենայնիվ պետք է համարել բնական, քանի որ նման բան տեղի է ունեցել նաև ռազմական գործողությունների այլ թատերաբեմերում: Սակայն ես անբնական և քաղաքակրթության հավակնություններ ցուցաբերող կառավարության համար անպատվաբեր եմ համարում, երբ այն սկզբում չի ձեռնարկում որևէ միջոցներ, որ կանխվի դժգոհ ժողովրդի որոշ մասի ենթադրվող խռովությունը, լինի դա համապատասխան ռազմական միջոցառումների, թե քաղաքական բանակցությունների միջոցով, այլ հենց իր անգործության և նրա ոստիկանական մարմինների և «չեթեների» ջոկատների սադրիչ պահվածքի հետևանքով այս ժողովրդին հանել է իր դեմ: Այդպիսով նա սեփական ժողովրդի լայն շրջաններին դատապարտում է զանգվածային անսանձության, որոնք գրգռված են ազգային ատելությամբ և «խելակորույս վրեժով»: Սակայն այնուհետև այդ նույն կառավարությունը օգտագործում է հարմար առիթը, որպեսզի մշակութային և տնտեսական առումով ոչնչացնի և բնաջնջի ամբողջ ժողովուրդ:

Այն, որ այդ բնաջնջումը հնարավոր է, որ տասնյակ հազարավոր հայեր, ինչպես այստեղ պատահեց, առանց դիմադրության ոչ մեծ քանակությամբ քրդերին և պարտիզաններին թույլ տվեցին իրենց հանդեպ արյունալի հաշվեհարդար տեսնել, թերևս, նույնպես ապացույցն է այն բանի, թե որքան անբավարար մարտական և հեղափոխական էր դրսևորում իրեն այս ժողովուրդը: Հայերը, հատկապես քաղաքային բնակիչները, որոնք հմուտ առևտրականներ են և անհեռատես քաղաքագետներ, որքան ես նրանց ուսումնասիրել եմ, չեն հանդիսանում ակտիվ հեղափոխականներ: Եթե նրանք լինեին այդպիսին և զենք ունենային, հավանաբար, ունենալով թվաքանակի առավելություն և ցանկացած դեպքում լինելով մահվան սպառնալիքի տակ, նրանք ուժով կդիմադրեին տեղահանությանը: Սակայն դա տեղի ունեցավ միայն մի քանի բնակավայրերում: Սովորաբար բոլոր կողմերում տեղահանությունը անցնում էր առանց որևէ պատահարների և հետո, ավելի ուշ նրանք խոնարհաբար աստծո կամոք թույլ էին տալիս իրենց մորթել:

Այս դատողությունների հիման վրա և ամբողջովին հաշվի առնելով գործերի դրությունը, ես, որպես գերմանական կառավարության ներկայացուցիչ, իմ պարտքն էի համարում անխոս չհետևել

թուրքական կառավարության գործողություններին հայերի դեմ և նրանց նկատմամբ ձեռնարկած միջոցառումներին, և, քանի որ, մի կողմից մենք չենք կարող սկզբունքորեն ընդդիմանալ այդ միջոցառումներին, մյուս կողմից, իսկույն, այնուամենայնիվ, պետք է բարոյական պատասխանատվություն վերցնենք մեր վրա դրա համար, որոշեցի գոնե հասնել այդ միջոցառումների որքան հնարավոր է մեղմ ձևով իրագործմանը: Անհարմար վիճակը և նույնիսկ վտանգը, որոնք երբեմն առաջացել էին իմ դիրքորոշման հետևանքով, ես հաճույքով ընդունեցի, որովհետև գտնում էի, որ իմ կառավարությանը, հավանաբար, հետագայում հաճելի կլիներ իմանալ և հայտարարել, որ իր այստեղի ներկայացուցիչը բոլոր օրինական միջոցներով, որ նա ուներ, հանդես է եկել ի պաշտպանություն անմեղ տուժածների հանդեպ մարդասիրական և օրինական վերաբերմունքի:

Այս ձգտումներում ինձ պաշտպանել են առողջ մտածող թուրքեր կառավարական և զինվորական շրջաններից, որքան էլ նրանք դա թաքցնեին՝ Կոմիտեից վախենալով: Տեղական Կոմիտեում կրկին կար ցածր մակարդակի անհատների ոչ մեծ մի խումբ, որը առաջնորդվելով անձնական շահերով ու շահախնդրությամբ ահաբեկում էր մյուսներին՝ քարոզելով հայերի բնաջնջման գաղափարներ: Դրանք, թերևս, այն նույն մարդիկ էին, որոնք իրենց աննախադեպ դաժան գործողությունների հետևանքով թուրքերի կողմից գրավված շրջաններում, ինչպիսիք են Արտանուջը, Արդահանը, Օլթին և այլն, երկար ժամանակ, եթե ոչ ընդմիշտ, ձախողեցին թուրքական գործը Ռուսաստանի մահմեդական բնակչության շրջանում: Այդ մարդիկ «սրբազան պատերազմ» հասկացությունը վերածել են պատվարի ավազակության և թալանի համար, և նրանք հասան այն բանին, որ Ռուսաստանի սահմանամերձ շրջանների մահմեդական բնակչությունը ոչնչի առջև այնքան վախ չունի, որքան թուրք «ազատարարների» հանդեպ: Ցավոք, այդ կասկածելի սաղրիչների ազդեցությունը Կոմիտեում, որոնք նաև թշնամաբար են տրամադրված գերմանացիների նկատմամբ, ավելի մեծ է, քան ընդունված է կարծել: Այդ ազդեցությունը նրանք արդեն ձեռք են բերում ահաբեկման միջոցով, և այն կարելի է կասեցնել, իմ կարծիքով, միայն շատ ակտիվ դրա դեմ հանդես գալու միջոցով: Այդ մարդկանց ազդեցության և «կառավարման» մեթոդների տարածումը վտանգ է ներկայացնում ոչ միայն թուրքերի, այլև մեր՝ նրանց դաշնակիցների համար: Քանի որ Հայկական հարցի նկատմամբ նրանց վերաբերմունքի բնույթը բացահայտ ցույց տվեց, թե որքան վտանգավոր գործիք է կառավա-

ության իշխանությունը այն մարդկանց ձեռքում, որոնք չեն կրում ոչ մի պատասխանատվություն, այլ միայն ճանաչում են անձնական շահեր:

Հուսով եմ, որ ինչպես Ձերդ գերազանցությունը, այնպես էլ արտաքին գործերի նախարարությունը համաձայն կլինեն իմ դիրքորոշման հետ այս չափազանց դժվար գործում, որն ինձ շատ ծանր ժամեր է պարգևում: Ես նաև հուսով եմ, որ ինձ հաջողվեց նաև համոզել տեղական թուրքական ազդեցիկ շրջաններին Հայկական հարցում իմ խորհուրդների բարեկամական լինելու մեջ, առավել ևս, որ ես, չնայած եղած տարաձայնություններին, անձամբ նրանց հետ պահպանել եմ չափազանց լավ հարաբերություններ:

Նորին պայծառափայլություն
կայսերական դեսպան իշխան
Հոհենլոե-Լանդենբուրգին,
Կոստանդնուպոլիս

Շոյբներ-Ռիխտեր

R 14088, zu Ab.22584.
ABΓAT, էջ 207-212

№ 18

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՔԻ ՆՈՏԱՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԴԵՄ

9 օգոստոսի 1915թ.

Կրկնելով ավազակության և կոտորածի իր դատապարտումը, որը չի կարող արդարացվել, դեսպան Հոհենլոե-Լանդենբուրգն իր երկրորդ նոտայում նշեց. «Ելնելով այդ իրադարձություններից գերմանական դեսպանությունը իր կառավարության ցուցումով ստիպված է կրկին բողոքել այդ սարսափելի գործողությունների դեմ»:

Politishes Archiv des Auswdrtigen Amtes, Ableilung I A, Turkei, Ar 4507, August 9, 1915.
ΓAOTOMC, т.1, стр. 256.

№ 19

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Խ.ՀՈՀԵՆԼՈԷ-ԼԱՆԴԵՆԲՈՒՐԳԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ ՌԵԽՍԿԱՆՑԼԵՐ ԲԵԹՄԱՆ-ՀՈԼՎԵԳԻՆ

12 օգոստոսի 1915թ

Իր բնակության վայրից տեղահանված հայ ժողովրդի պարբերական կոտորածը վերջին մի քանի շաբաթների ընթացքում ընդունեց այնպիսի չափեր, որ պարտադիր է թվում, որ մենք կրկին հանդես գանք վճռական հայտարարությամբ գործողությունների նման կուրսի դեմ, որը կառավարությունը ոչ միայն հանդուրժում է, այլև ակնհայտորեն պաշտպանում է հատկապես այն պատճառով, որ այլ վայրերում տեղահանության են ենթարկվում նաև այլ ազգերին ու դավանանքներին պատկանող քրիստոնյաներ:

Այդ իսկ պատճառով հուլիսի 4-ի հուշագրից հետո ես Բարձր Դռանը հուլիսի 11-ին հանձնեցի ևս մի հուշագիր, որի պատճենը կցում եմ սույնին: Թալեաթ բեյը, որն այն ընդունեց Մեծ վեզիրի բացակայությամբ, խոստացավ որքանով որ հնարավոր է լուծել այդ խնդիրը և երբ ես հարցրեցի հավաստիացրեց ինձ, որ իշխանությունները մտադիր չեն հայերին տեղափոխել Կոստանդնուպոլսից:

Ի լրումն վերը նշվածի, հարկավոր է հիշեցնել, որ ներքին շրջանների թուրք բնակչության շրջանում շատերը գտնում են, որ գերմանական կառավարությունը համաձայն է հայերի ոչնչացման հետ և հանդիսանում է նաև այդ միջոցառումների հրահրողը: Այդ իսկ պատճառով ես հանձնարարեցի Անատոլիայում կայսերական հյուպատոսներին վճռականորեն հերքել նման տեսակետները, որոնք պարունակում են մեղադրանք կատարված հանցագործության մեջ և որոնք անգամ բացահայտորեն արտահայտվում են սպաների, հոգևորականների և ունևոր խավերի այլ ներկայացուցիչների կողմից: Ես կցանկանայի, որ Դուք, Ձերդ գերազանցություն, որոշեիք, արդյոք պետք չէ հարմար ժամանակ գերմանական մամուլում նշեինք, որ մենք անկասկած հավանություն չենք տալիս հայերի դեմ.թուրքական կառավարության կողմից ձեռնարկվող բռնի միջոցառումներին և հետևաբար պատասխանատվություն չենք կրում մեծացող հուզումների համար, որոնց դեմ մենք միայն կարող ենք առարկել և որոնց առթիվ մենք արատահայտում ենք ափսոսանք:

Վերջապես ցանկալի է թվում, որ ի պաշտպանություն այստեղ ձեռնարկվող քայլերի մենք Բեռլինում օսմանյան նոր դեսպանի ուշադրությունը հրավիրենք իր կառավարության հայերի նկատմամբ տարվող քաղաքականության հնարավոր հետևանքների և այդ հարցում մեր տեսակետի վրա:

ՀԱՎԵԼՎԱԾ
Հուշագիր

Կոստանդնուպոլիս, 9 օգոստոսի 1915թ.

Հուլիսի 4-ի իր հուշագրում գերմանական դեսպանությունը պատիվ ուներ հայտնելու Բարձր Դռանը, թե ինչ տեսակետ է պաշտպանում Կայսերական գերմանական կառավարությունը անատոլիական նահագներից հայ բնակչության տեղահանության հարցում և հրավիրելու նրա ուշադրությունն այն փաստի վրա, որ այդ միջոցառումները մի շարք տեղերում ուղեկցվում են բռնության գործողություններով, ինչպիսիք են կոտորածը և թալանը, որոնք չեն կարող արդարացվել այն քաղաքականությամբ, որը վարում է օսմանյան կայսրության կառավարությունը:

Գերմանական դեսպանությունն ափսոսանքով արձանագրում է, որ համաձայն անկողմնակալ և անկասկած հուսալի աղբյուրներից ստացված տեղեկության, նման բնույթի միջադեպերը չեն կանխվում տեղական իշխանությունների կողմից, այլ կանոնավոր կերպով հայերի տեղահանությունը իրականացնում են այնպես, որ նրանց մեծամասնությունը մահանում է նախքան նշված վայրը հասնելը: Դա մասնավորապես վերաբերվում է Տրապիզոնի, Դիարբեքիրի և Էրզրումի վիլայեթներին, որտեղ հայտնի դարձան նման դեպքերը, որոշակի տեղերում, ինչպիսին է Մարդինը, բոլոր քրիստոնյաներին, անկախ նրանց ազգությունից կամ դավանանքից, բաժին հասավ նույն ճակատագիրը:

Այդ նույն ժամանակ Օսմանյան կայսրության կառավարությունը անհրաժեշտ համարեց տեղահանության այդ միջոցառումները տարածել նաև Փոքր Ասիայի այլ շրջանների վրա: Բոլորովին վերջերս Իզմիրի շրջանում հայկական գյուղերի բնակիչները տեղահանվեցին նույն հանգամանքներում:

Ելնելով այդ իրադարձություններից, գերմանական դեսպանությունը իր կառավարության ցուցումով, իրեն պարտավոր է համարում կրկին զգուշացնել բռնության այդ գործողությունների հա-

մար և իր վրայից հանել ցանկացած պատասխանատվություն այն հետևանքների համար, որոնք կարող են առաջանալ այդ միջոցառումների արդյունքում: Դեսպանությունն իրեն առավել քան երբևէ պարտավորված է համարում օսմանյան կառավարության ուշադրությունը հրավիրել այդ հարցի վրա, քանի որ հասարակական կարծիքը հակված է այն մտքին, թե Գերմանիան, իբրև Թուրքիայի բարեկամ և դաշնակից տերություն, արդարացնում է բռնության այդ գործողությունները կամ նույնիսկ հրահրում է դրանք:

Wolfgang and Sigrid Gust (ed.) in cooperation with Taner Akcam: The Armenian Genocide during the First World War. Documents from German State Archives. A-24507. DE/PA-AA/ R14087. DuA Dok. 136. 1915-08-12-DE-001.
ГАОТОМС, т.1, стр. 260-261.

№ 20

ԴՐԵԶԴԵՆԻ ՍԱՔՍՈՆԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԽԻՎԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՑ ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՈՆ ՕԲԵՐԲՈՒՐԳՈՒՄԻՍՏՐ ԳԱՂՏՆԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԴՈԿՏՈՐ ԲՈՅԹԼԵՐԻՆ

Կոստանդնուպոլիս, Դրեզդեն
30 օգոստոսի 1915

Մեծարգո պարոն գաղտնի խորհրդական:

Քանի որ անցավ արդեն չորրորդ ամիսը, նախքան ինձ բախտ վիճակվեց մանրամասն և բարեխղճորեն պատասխանել Ձեր այն սիրալիր նամակին, ես պետք է խնդրեմ Ձեզ թույլ տալ ինձ մի քանի բառով բացատրություն տալ այդ ձգձգման համար:

Ինչպես ժամանակին կարճ հաղորդել էր կինս, ես փետրվարի վերջին մեկնեցի Դարդանել, որտեղ հետագայում կատարվեցին դեպքեր, որոնց վրա ուղղվեց ամբողջ աշխարհի ուշադրությունը և իմ կյանքի ամենամեծ և հրաշալի հիշողությունը կլինի այն, որ ես եղա այդ գործողությունների վկան և նույնիսկ ակտիվ մասնակիցը: Մարտի հիանալի օրերին Չանակ Կալեում նավերի և ափամերձ հրետանու միջև սարսափելի հրետանային հրաձգության ժամանակ ինձ բախտ վիճակվեց գտնվել բերդամասերում, որոնք հրետակոծվում էին և որտեղից կրակ էր բացվում թշնամու վրա և դիտել մարտերը սկզբից մինչև վերջ հենց այն կետից, որտեղ դրանք ավելի հետաքրքիր էին: Դրանից քիչ անց սկսվեցին մարտերը ցամաքի վրա, անընդ-

հատ գրոհները երկնքից:

Վանի նահանգի կենտրոնը ուժերի գերագույն լարումով գրավվեց ռուսներից մի քանի շաբաթ առաջ, հաճույքը, սակայն, տևեց ընդամենը մի քանի օր, հետո ռուսները ետ գրավեցին այն և հավանաբար կպահեն մինչև պատերազմի ավարտը, քանի որ մեր բոլոր ուժերը կենտրոնացած են Դարդանելի ուղղությամբ:

Սակայն այժմ թուրքերն անցել են վրեժխնդրության բոլոր սահմանները: Կատարվեցին այնպիսի դեպքեր, որ խոր ամոթ ես զգում այն բանի համար, որ ստիպված էիր լինել դրանց ականատեսը: Տարբեր նահանգներում սպանված են հազարավոր հայ տղամարդիկ, կանայք, երեխաներ, նրանց մի մասը կացնահարված է, մյուս մասը՝ խողխողված: Հղի կանանց քշում էին տներից և հարվածում էին խզակոթերով այնքան ժամանակ, մինչև նրանք այլևս չէին ցուցաբերում կյանքի նշաններ, երիտասարդ աղջիկներին նվիրում էին պաշտոնյաներին, չէին ամաչում նաև նրանց առաջարկել գերմանացի սպաներին, որոնք բոլորը, փառք Աստծո, այդ առաջարկները ինձ հայտնի բոլոր դեպքերում մինչև այժմ ցասումով մերժում էին: Հազարավոր դիակներ կարելի է տեսնել Եփրատում, անհաշվելի զանգվածներ քշվել են անմարդաբնակ վայրեր, և միշտ տղամարդկանց քշում էին մի ուղղությամբ, կանանց՝ այլ, առանց սննդի՝ քուրդ վայրի ցեղերին ընդառաջ: Երիտասարդ ամուսիններին առանձնացնում էին, կանանց բռնաբարում էին տղամարդկանց աչքերի առաջ: Եվ երբ Թուրքիա ժամանած չեզոք երկրների ներկայացուցիչները տագնապ բարձրացրեցին և ուզում էին ամբողջ աշխարհին տեղեկացնել այդ ամոթալի գործողությունների մասին, թուրքական իշխանությունները սկսեցին տարածել հետևյալ բացատրությունը. «Հայերի բնաջնջումը ռազմական միջոցառում է: Իսկ բանակը գտնվում է գերմանացիների ազդեցության տակ, ուստի դրա համար շնորհակալ եղեք գերմանացիներին»:

Գերմանական դեսպանատան առաջին, բավականին զուսպ բողոքին թուրքական կառավարությունը պատասխանեց, որ դա, իբր թե «Թուրքիայի ներքին գործն է»: Իսկ Էնվերն այդ կապակցությամբ հայտարարեց. «Դա ամենանշանակալից գործողությունն է, որը մինչև այժմ կատարվել է երիտասարդ Թուրքիայի կողմից: Գերմանացիները պետք է շնորհակալ լինեն մեզ, որ մենք վերացնում ենք նրա թշնամիներին»: Նույն ժամանակ որպես միջամտության համար պատիժ Գերմանիայի գործերի ժամանակավոր հավատարմատար իշխան Հոհենլոհին մերժվեց ընդունելության հարցում, որը նշանակ-

ված էր հաջորդ օրը՝ իբր թե սուլթանի հիվանդ լինելու պատճառով: Ավելի ուշ ավելի եռանդուն բողոքներից հետո թուրքերը խոստացան, որ նրանք կխնայեն կաթոլիկ և բողոքական հայերին, ինչպես նաև ռազմաճակատում գտնվող զինվորների ընտանիքներին: Իսկ մյուսներին սպանելու իրավունքը նրանք թողնում էին իրենց հայեցողությանը: Թուրքիան խոստացավ նաև պատժել նրանց, ով կատարել է ծայրահեղ դաժանություններ կամ օժանդակել է դրանց: Սակայն մինչև այժմ պատժվել են միայն վալիները, քանի որ նրանք կառավարության սարսափելի միջոցներն իրագործում էին ոչ բավարար դաժանությամբ: Մնացած ամեն ինչը մնում է հնի նման, և այսպիսով մենք հայերի և հույների աչքերում նույնպես պատասխանատու ենք այն ամենի համար, ինչ այնտեղ կատարվում է, ուստի հետագայում մեր համար չափազանց դժվար կլինի կրկին գրավել ոչ թուրք բնակչության վստահությունը:

Տեղին է մի քանի խոսք ասել Թուրքիայի տնտեսական վիճակի մասին: Այն սերտորեն կապված է քաղաքական դրության, այսինքն հասարակական կյանքում ոչ բավարար ազնվության, կազմակերպչական որևէ ընդունակության բացարձակ բացակայության և օսմանների ամենացայտուն ու ավանդական բնավորության գծի՝ աշխատանքի ցանկացած ձևի նկատմամբ տրամադրված չլինելու հետ:

Թուրքիան այնքան հարուստ է բնական պաշարներով, որ հաճախ զարմանում ես, թե ինչու պատերազմի հետևանքով ներմուծման կրճատումից անմիջապես հետո երկրի բոլոր ծայրերում միանգամից առաջացավ գրեթե ամեն ինչի պակաս: Սակայն դա իսկապես տեղի ունեցավ, այդ իսկ պատճառով այժմ ստանում են միայն այն, ինչ տալիս է հողը, այն ինչ հենց ինքը հողն է դուրս բերում: Ընդերքի հարստությունները՝ հանքերը, ածուխը, նավթը չեն արդյունահանվում, հումքը, որն անասելի էժան է, չի վերամշակվում, երկրում չկան ֆաբրիկաներ, չկա որևէ փոխադրամիջոց: Այդ իսկ պատճառով ամենուրեք հացի պակաս է և խիստ կարիք, այն ժամանակ, երբ հեռավոր շրջաններում մնում են հսկայական պաշարներ, որոնց օգտագործմանը խոչընդոտում են կառավարության որոշ ազդեցիկ մարդիկ, քանի որ իրենք խոշոր եկամուտներ են ունենում թանկությունից: Զոնբուլակում (մայրաքաղաքից մի քանի ժամվա ճանապարհի հեռավորության վրա) կան ածխի հարուստ հանքեր, սակայն այստեղ տիրում է ամենախիստ կարիքը...

Խորին հարգանքով և նվիրվածությամբ
Վիլհելմ Շվենցլեր

Sähsisches Haupitstaatsarchiv Dresden, Außenministerium, Aktennummer, N 1952, B 1. 90 a.
Германские источники о геноциде армян, под редакцией С. Степаняна, Ер. 1991. (Այսուհետև՝ ГИОГА), стр. 220-222.

№ 21

ՀՅՈՒՊԱՏՈՍ ՌՅՈՍԼԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ ՀԱՅԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՔՐԻՍՏՈՆՅԱՆՆԵՐԻ ՋԱՐԴԵՐԻ ՄԱՍԻՆ

Կայսերական գերմանական հյուպատոսություն
K № 90
B № 1950

Հալեպ, 3 սեպտեմբերի 1915

Հայկական հարցի կապակցությամբ իմ վերջին հաշվետվությունը ուղարկելուց հետո ինձ հայտնի է դարձել հետևյալը՝

1) 1909թ. հայերի կոտորածի ժամանակ Անտիոքում սպանվել են բոլոր տղամարդիկ, եղան միայն 6 կամ 10 պատահաբար փրկվածներ: Մոտավորապես օգոստոսի 7-ին կառավարությունը նրանց բանտ նետեց՝ իբր թե աքսորը նախապատրաստելու նպատակով: Այրիները և ծերերը աքսորվածների մեջ բացառություն չկազմեցին և պետք է փոխադրվեին Համու:

Անտիոքից ոչ հեռու կան 6 հայկական գյուղեր, Քեսաբը՝ Մոնս Քասիուսում և հինգը՝ Ջեբել Մուսում, իսկ ավելի ստույգ՝ Բիթիաս, Խաբաբլի, Եղունոլուք, Քիդեր Բեյ, Քաբուսիե: Այդ գյուղերի գյուղացիները, որոնց տեսել են Անտիոքի մոտակայքում, շղթայակապ ուղարկվեցին քաղաք: Դրանից հետո թեև Քեսաբի և Քաբուսիե գյուղերի բնակիչները թուրքերի պահանջով ներկայացան, սակայն մյուս չորս գյուղերի բնակիչները փախան սարերը: Երկու գումարտակ ուղարկվեց նրանց բռնելու, սակայն մինչև այժմ նրանց գործողությունները անարդյունք մնացին: Այդ տեղանքը դժվար մատչելի է և զորքերը դեռևս սովոր չէին դրան: Մեկ օրվա ընթացքում վիրավորվեց 30 զինվոր, որոնցից 8-ը՝ հրաձգության հետևանքով, որը նրանք բացեցին միմյանց վրա անփորձության պատճառով:

2) Սույն ամսի 19-ին Ուրֆայում խաժամուժը կազմակերպեց հայերի և ասորիների իսկական կոտորած: 200 մարդ (այլ տվյալներով նույնիսկ 250-300) սպանվեցին: Հաջորդ առավոտ կառավարությունը կրկին տիրեց դրությանը: Պատիվ ունեմ սույնին կցելու այդ մասին սարկավագ Կյունցլերի նամակի պատճենը: Նամակում նրա

արտահայտած կասկածն այն մասին, որ հարյուրավոր ճանապարհաշինարար բանվոր հայերը ճիշտ նույն ձևով սպանվեցին Խարանի դաշտում, միևնույն ժամանակ փաստացի հաստատվեց Բաղդադի երկաթգծի շահագործման ծառայության կողմից: Բաղդադի երկաթգծի վարչությունն իր հերթին ունի Թել-Աբիադի կայարանի պետի զեկուցագիրը, որին ժանդարմները պատմել են, որ իրենք բարձրաստիճան իշխանությունների (Խորանի կայմակամների) հրամանով գնդակահարել են ճանապարհաշինարար բանվորներին:

3) Արևելյան նահանգներում հայերից բացի աքսորվեցին ոչ միայն նեստորականները, այլև հնադավան ասորիները (հակոբիկյանները), անատոլիական ասորիները և այլ քրիստոնյաներ: Արդեն վաղուց հայտնի է, որ նման քրիստոնյաներին նույնպես սպանում են: Ես խնդրեցի այս երկրում ծնված մի ծանոթ ասորու, որն իր մասնագիտության բնույթով շփումների մեջ էր մտել բնակչության տարբեր դասակարգերի հետ և որը լավ էր հետևում դեպքերին, ինձ գրավոր հայտնել, թե ինչ է իրեն հայտնի դարձել այս մասին և պատիվ ունեմ լրացնել նրա նոթերով իմ գրությունը: Սրան համապատասխան կան մեծ քանակությամբ ոչ հայ կին քրիստոնյաներ, որոնք այստեղ են եկել առանց իրենց ամուսինների: Հազիվ թե հնարավոր է այլ եզրակացություն, քան այն, որ նրանց ամուսինները սպանվել են: Հաստատվող դեպքերից մեկում անհետ կորածները պատկանում էին հույն կաթոլիկական դավանանքին:

4) Մոտավորապես օգոստոսի 20-ին Այնթափում երիտթուրքական կոմիտեն ոչ ճիշտ ասեկոսեի հետևանքով այն մասին, որ հայերի զինված ամբոխը գալիս է քաղաքի վրա, առաջացրեց խուճապ և կոտորած:

Այս լուրը թեկուզև բխում է հայկական աղբյուրից, սակայն վստահելի մարդկանցից է և կարող է համարվել որպես հավաստի:

5) Մոտավորապես օգոստոսի 20-ին Բաբի (Հալեպից արևելք) խաժամուժը կեղծ ասեկոսներով հարձակվեց այնտեղ տեղակայված 30 հայկական ընտանիքների վրանների վրա և վիրավորեց 12 մարդու:

Բաբում զոհված հայերի հուղարկավորությունը հնարավոր է միայն ոստիկանության ուղեկցությամբ:

6) Սույն ամսի 13-ին կառավարությունը հրապարակեց հաղորդագրություն այն մասին, որ այն հայերը, որոնք ցանկանում են մեկնել Թուրքիայից, կարող են դա անել, եթե նրանք չվերադառնալու պարտավորություն կստանձնեն: Բանավոր ընդգծվեց, որ ամեն մեկը առանձին պետք է մեկնելու թույլտվություն ստանա Ջեմալ փաշայից: Չկային նաև նավեր: Հայերը համոզվեցին, որ կառավարության հայ-

տարարությունը լուրջ չէ, և որ նա ով թույլտվություն կխնդրի, դրա պատճառով կենթարկվի ավելի խիստ հետապնդումների: Չնայած այն բանին, որ բոլոր հայերը կգաղթեին, եթե գործնական հնարավորություն տրամադրվեր, ոչ ոք չհամարձակվեց թույլտվություն խնդրել բացառությամբ մեկ ընտանիքի, որի խնդրագիրը ես ներկայացրեցի վալիին՝ մասնավոր երաշխավորությամբ: Դրանից հետո անցել են անպատասխան երեք շաբաթ: Վերջերս հրահանգ է ստացվել այն մասին, որ ոչ ոք իրավունք չունի մեկնելու 4-րդ բանակի տեղակայման գոտուց, առանց Էնվեր փաշայի թույլտվությունը: Այսպիսով, մեկնելու թույլտվությունը փաստացի անիրական է և տրված է միայն ձևի համար:

7) Այստեղից դեպի Համա հայերի տեղահանումը տեղի էր ունենում ինչ-որ ժամանակի ընթացքում: Իմ կողմից Դամասկոսում կայսերական հյուպատոսությանը հղած հարցման պատասխանը, թե ինչ տեղի ունեցավ նրանց հետ հետագայում Համայից հետո, պատիվ ունեմ ներկայացնելու կցվող պատճենում: Այդ ժամանակվանից երկաթգծի վարչությանը հանձնարարվեց տեղահանվողներով լի գնացքները ուղարկել ուղիղ մինչև Ռայակ՝ Դամասկոս փոխադրվելու համար: Հավանաբար, այժմ բնակեցման համար նախատեսված է Դամասկոսի և Քարաքի (Մեռյալ ծովից հարավ-արևելք) միջև եղած շրջանը, ընդ որում հայերը այնտեղ պետք է մնան Հեջասբանից որոշակի հեռավորության (հավանաբար ամենաքիչը 25 կմ) վրա: Ամեն դեպքում երկաթգծի վարչությանը հղած հրամանում Քարաքը նշվել է որպես տեղահանվածների տեղակայման ամենահարավային հանգուցակետը:

8) Մի ծեր, հանգիստ, խորհելով բառերը զգուշորեն արտաբերող հայ, Հալեպի մերձակայքի բողոքական քահանա, որն այստեղ գործում մասնակցություն ունեցավ հալածվածներին օգնություն ցուցաբերելու հարցում, որպես երկար շաբաթների արդյունք, Էրզրումի, Սվազի, Դիարբեքիրի և Խարբերդի վիլայեթներից աքսորվածների միջոցով ներկայացրեց տվյալներ, որոնք պատճենով կցվում են սույնին, համաձայն որոնց այստեղ 35000-40000 տեղահանվածներից տեղ է հասել միայն 13000-ը, մնացածները սպանվել և թալանվել են: Նկած 13000-ի մեջ չկա 11 տարեկանից բարձր արական սեռի ներկայացուցիչ: Փրկվածները ենթարկվել են անմարդկային վերաբերմունքի: Քահանան ձգտում էր առանձին խմբերից բացահայտել ամենազարգացածներին և ամենահիրազեկներին: Արդյոք ճիշտ էին նրա պատմածները վերջնականապես ի հայտ կգա ավելի հանգիստ ժամանակների հաստատվելուց հետո: Իմ կարծիքով, ցավոք, տար-

բեր աղբյուրներից եկող բազմաթիվ հաստատվող լուրերը, որոնք անընդհատ տալիս են նույն պատկերը, դեռևս որևէ հիմք չեն տալիս կարծելու, որ այդ պատմածը ճիշտ չէ:

Այստեղի անմարդկային վերաբերմունքը ցուցադրելու նպատակով պատիվ ունեմ հղելու Բաղդադի երկաթգծի տնօրենի տեղակալի հաղորդումը, որը հիմնվում է Ռաս-ուլ-Այնում աշխատող երկու ինժեներների՝ մեկը՝ հոլանդացի, մյուսը՝ լյուքսեմբուրգցի, պատմածների վրա, որոնք պատմում են, որ այնտեղի երկաթգծային կայարան եկավ մերկ տեսքով կանանց խումբ մոտ 300-400 մարդուց բաղկացած: Այլ խմբերը, համաձայն նույն աղբյուրի, ենթարկվել են թալանի դեռ Ռաս-ուլ-Այնում մոտակայքում ապրող չեչենների և նույնիսկ ոստիկանների կողմից:*

9) Բաղդադի երկաթգծի ընկերության մի գերմանացի ծառայողի՝ Վ. Շպիկերին, որի Եփրատի մյուս ափից կատարած դիտարկումների գրությունները ես պատիվ եմ ունեցել ներկայացնել իմ հուլիսի 27-ի KN 81-N 1645 հաշվետվությունում, առիթ ներկայացավ ճանապարհորդելու դեպի Մարաշ: Նրա նշումներն այն մասին, թե ինչ է նա տեսել և լսել, ես խոնարհաբար ներկայացնում եմ հավելվածում: Այնտեղից բխում է, որ Մարաշի մուրաստերիֆությունում, հատկապես Մարաշ քաղաքից հյուսիս գտնվող վայրերում, հայերի հետ վարվել են ճիշտ այպես, ինչպես 3-րդ բանակի գոտում, թեև Մարաշը գտնվում է Ջեմալ փաշայի բանակի գոտում (4-րդ բանակ):

Նշումներում հիշատակված Գյուրյունը, ճիշտ է, գտնվում է դեռևս Սվազի վիլայեթում, սակայն այնտեղից անցումը դեպի Մարաշ հիմնականում Մարաշի շրջանով է կատարվում:

10) Բաղդադի երկաթգծի մի լեհ ինժեներ, որը օգոստոսի 10-ին լքել էր Մոսուլը, ընդհուպ մինչև Ռաս-ուլ-Այն ընկած ճանապարհի հատվածը բնութագրել է հետևյալ կերպ. լքված գյուղերը, այլ դեպքերում դիակների հոտ և դեռևս ավազով չծածկված արյան հետքեր: Նկատելի է, որ երկրի վրայով մի ինչ-որ արտակարգ բան է անցել:

11) Աքսորվածների տեղափոխման մասին երկաթգծի վարչությանը ներկայացրած հրահանգում ասված է՝ որ ներկայումս ամեն օր անցնում է մեկ գնացք, իսկ ավելի ստույգ շաբաթվա ընթացքում 2 գնացք հյուսիս-արևելքից (Աքչե Գուլունլի երկաթուղային կա-

---

* Մի կին, որին բռնաբարել էին ութ տղամարդ, իրեն նետեց երկաթգծերի վրա կյանքին վերջ տալու նպատակով: Հաջողվեց գնացքը կանգնեցնել, որից հետո գերմանացի ինժեները նրան բերեց Հալեպ (ծանոթագրությունը հեղինակ Ռյոսլերի):

յարան՝ Մարաշի և Այնթափի բնակչության համար), 2-ը՝ հյուսիս-արևմուտքից՝ (Կաթումի երկաթուղային կայարան՝ Ալեքսանդրետի, Բեյլանի և ափամերձ գոտու բնակչության համար): Այս չորս գնացքները անցնում են Հալեպով: Թեև երկաթուղային կայարաններում լինում են երկար կանգառներ, ուղևորներին խստագույնս արգելված է քաղաք դուրս գալ:

Բուն Հալեպից ամեն շաբաթ մեկնում են աքսորվածներով լցված 3 գնացքներ, որոնք գալիս են արևելքից կամ էլ այստեղ կուտակվել են տրանսպորտի անկազմակերպ լինելու պատճառով: Մեկ գնացքը սովորաբար բաղկացած է 30-35 վագոններից և տեղափոխում է 1500-1600 տեղահանվածների՝ մեծամասնությանը բեռնատար վագոններով, ինչպես նաև եթե իհարկե լինում են՝ մարդատար գնացքներով: Այսպիսով, մեկ վագոնում լինում են 50-55 մարդ: Դա աննկարագրելի մի աղետ է:

Համանման զեկույց ես ներկայացնում եմ պարոն ռեյխսկանցլերին:

Նորին պայծառափայլություն կայսերական արտակարգ դեսպան իշխան Հոհենլոե-Լանդենբուրգին Կոստանդնուպոլիս — *Ռյոսլեր*

Konst./Ankara, 170, Ab. 53a.
ABI'AT, էջ 221-225

№ 22

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՒՄ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՀՈՀԵՆԼՈԵ-ԼԱՆԳԵՆԲՈՒՐԳԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԵԹՄԱՆ-ՀՈԼՎԵԳԻՆ

4 սեպտեմբերի, 1915

Սույն ամսի երկուսին Թալեաթ բեյն ինձ հանձնեց հայերի հետապնդումների հետ կապված հեռագիր-հրամանների գերմաներեն թարգմանությունները, որոնք նա ուղարկել էր համապատասխան նահանգային իշխանություններին. այդ հեռագրերի պատճենները կցվում են: Այդպիսով, նա ցանկանում է ներկայացնել այն բանի ապացույցը, որ կենտրոնական կառավարությունը լրջորեն փորձում է վերջ տալ ջարդերին, որոնք կատարվում են հայերի նկատմամբ երկրի տարբեր շրջանում և հասնել այն բանին, որպեսզի տեղահանվողները ճանապարհին սնունդ ստանան: Մի քանի օր առաջ, նկատի ունենալով այդ տեղահանությունը, Թալեաթն ինձ ասաց. «Հայկա-

կան հարցն այլևս գոյություն չունի»[6]:

Առաջին և երրորդ հեռագրերը թվագրված չեն, առաջինը, հավանաբար, ուղարկվել է օգոստոսի 31-ին:

Ինձ իրավունք վերապահելով լրացուցիչ հաղորդումներ ուղարկել այդ թեմայով, ես կցանկանայի նկատել, որ Տրապիզոնի կայսերական հյուպատոսությունից ստացված հեռագրի համաձայն մի քանի հայեր, որոնց սկզբում խնայեցին (դրանց թվում Օսմանյան պետական բանկի աշխատակիցներ և կանայք), օգոստոսի վերջին մի քանի օրերի ընթացքում գիշերը տեղահանվեցին այնտեղից և, ինչպես կարծում են, նրանք սպանվեցին քաղաքի ծայրամասերում: Ականատեսների ասածների համաձայն, տեղի հայ կաթոլիկ պատրիարքարանը նույնպես հաստատեց, որ Անգորայի հայերը (գլխավորապես կաթոլիկներ), այդ թվում կաթոլիկ արքեպիսկոպոսն իր հոգևորականների և միանձնուհիների հետ միասին օգոստոսի 30-ին տեղահանվեցին Անգորայից և բոլորը սպանվեցին ճանապարհին:

Հաշվի առնելով այս վերջին դեպքերը, ես խորհուրդ կտայի այժմ մամուլին չհաղորդել այս հեռագրերի մասին:

•

Հոհենլոե

№ 23

ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱՆՈՒՄ Է ԿՈՏՈՐԱԾԻ ՏԵՍՔ

Աղանայում կայսերական հյուպատոսություն
N 22

Աղանա, 6 սեպտեմբերի 1915

Հեռագիր

Հայերի տեղահանությունը օրեցօր ավելի շատ է ստանում կոտորածի տեսք: Վերջերս Ուլու-Քիշլայի մոտ ոստիկանների կողմից սպանվեցին յոթ հայեր: Ականատեսներն ինձ հայտնում են, որ օգոստոսի 20-ին Քաեսանա բնակավայրից հյուսիս իրենց ընտանիքների աչքի առաջ սպանվեցին 120 տղամարդիկ Չորումից, իսկ 62 երիտասարդ կանանց առևանգեցին: Նողկալի արարքների համար ոստիկանները օգտագործում էին մոտակա գյուղերի բնակչությանը:

---

[6] Այս արտահայտությունը Թալեաթն արտահանեց ֆրանսերեն՝ "La question arménienne n'existe plus":

Այդ իրադարձությունների մանրամասնությունները հասել են հյուպատոսություն: Թուրքական իշխանության մարմինները հարմար առիթը օգտագործում են հարստանալու համար: Իսկ արտասահմանցիները, ընդհակառակը, կրում են զգալի վնասներ, քանի որ հայերի ունեցվածքի սեփականության իրավունքի և այլնի փոխանցումը թույլատրվում է միայն օսմանցիներին, միայն մահմեդականներին:

Կոստանդնուպոլսում գերմանական դեսպանին — *Բյուզե*

Konst./Ankara, 170, Ab. 53a.

ԱԲԳԱՏ, էջ 225-226

№ 24

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՒՄ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԸ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կայսերական գերմանական դեսպանությունը — *Կոստանդնուպոլիս, սեպտեմբեր 1915*

I. Կայսերական դեսպանատան հրահանգները կայսերական հյուպատոսություններին Հայկական հարցի վերաբերյալ:

Մայիսի 31-ին Էրզրումի, Մոսուլի, Արդահանի, Հալեպի և Բաղդադի հյուպատոսությունները տեղեկացվեցին այն մասին, որ ռազմական նախարարությունը հայկական լրտեսությունը կանխելու և հայերի զանգվածային հուզումները կանխարգելելու նպատակով ի թիվս այլ միջոցների (այնպիսիք, ինչպիսիք են հայկական դպրոցների, թերթերի փակումը և այլն) որոշում է ընդունել այն ժամանակ բոլոր խոռվարար կենտրոններից ոչ ամենևին բարեհույս ընտանիքներին տեղափոխել Միջագետք, ընդ որում Էնվեր փաշան հաստատապես խնդրել է մեզ չխանգարել այդ գործին: Այս հաղորդմանը կցվել է ծանոթագրություն այն մասին, որ մենք, հաշվի առնելով Թուրքիայի քաղաքական և ռազմական դրությունը, սկզբունքորեն չխանգարենք կառավարության միջոցառումներին, այլ ընդամենը փորձենք մեղմել դրանք կատարման առումով:

Այս իմաստով դեռ վաղօրոք (մայիսի 19-ին և համապատասխանաբար 21-ին) Էրզրումի և Ադանայի հյուպատոսությունները իրենց հարցումներին հատուկ տեղեկացվեցին: Էրզրումի հյուպատոսությանը, ընդ որում հանձնարարվել էր հայերի համար իր միջնորդությունները ներկայացնել բարեկամական խորհրդի տեսքով այնպես, որպեսզի դա չընդունի պաշտոնական բողոքի բնույթ: Հունիսի

21-ին նույն հյուպատոսությանը հանձնարարվել էր վալիի առջև եռանդուն կերպով արտահայտվել տեղահանվողների կոտորածի դեմ, քանի որ նման միջոցառումները վնաս կհասցնեն թուրքական կառավարության հեղինակությանը չեզոք երկրների և նրա բուն բարեկամների շրջանում և կնվաստացնեն նրա իշխանության մարմինների հեղինակությունը: Այնուհետև այդ հանձնարարության մեջ ասված է. «Բռնությունների միջոցները և վրեժի գործողությունները ռուսների և հայերի կողմից իրենց գրաված շրջաններում անխուսափելի են: Եվ կրկին հող է նախապատրաստվում հայկական գործերում օտար միջամտության համար, ինչպես նաև Թուրքիայի վիճակը էլ ավելի կբարդանա խաղաղության առաջիկա բանակցություններում: Եթե հայերի տեղահանության դեմ մենք ոչինչ չենք կարող առարկել, քանի որ դա արդարացված է ռազմական դրության պատճառով, ապա այդուհանդերձ, մենք սեփական շահերից ելնելով պետք է ավելի եռանդուն կերպով առարկենք, որպեսզի չկատարվի անպաշտպան բնակչության կոտորած, և որ իշխանության տեղական մարմինները պետք է բոլոր միջոցներով կանխարգելեն նման երևույթները, եթե նրանք չեն ցանկանում իրենց վրա վերցնել ծանր պատասխանատվություն»:

Տրապիզոնի հյուպատոսին հունիսի 25-ին և սեպտեմբերի 2-ին հանձնարարվեց վալիին խորհուրդ տալ պաշտպանել տեղահանվողներին:

Նա նույնպես, ինչպես և Հալեպի, Էրզրումի, Մոսուլի, Սամսունի հյուպատոսները, կրկին միջնորդել են վերը նշվածի վերաբերյալ իշխանության նահանգային մարմինների առաջ:

Այն բանից հետո, երբ տարբեր աղբյուրների հաշվետվությունների միջոցով հայտնի դարձավ, որ գերմանական կառավարությունը և նրա ներկայացուցիչները Թուրքիայում հաճախ անվանվում են հայերի հետապնդումների մեղավորներ, այդ նույն հյուպատոսություններին օգոստոսի 11-ին ուղարկվեց հետևյալ գրությունը.

«Հայերի հանդեպ կատարվող սարսափելի գործողությունները վերջին շաբաթների ընթացքում, չնայած մեր բազմաթիվ բողոքներին, ընդունել են այնպիսի չափեր, ինչը մեզ պարտավորեցնում է բավականին վճռականորեն արտահայտել այդ դեպքերի մեր դատապարտումը: Թուրք սպաների, ծառայողների, հոգևորականների և այլ անձանց կողմից երկրի ներսում արտահայտվում էր այն տեսակետը, որ այդ սարսափելի գործողությունների նախաձեռնողները հանդիսանում ենք մենք, հարմար դեպքում հարկավոր է եռանդուն կերպով հանդես գալ մեզ վարկաբեկող նման տեսակետի դեմ»:

II. Մեր դիրքորոշումը Հայկական հարցում այնպիսին էր, որ թուրքական կառավարությունը, ելնելով ռազմական և երկրի ներքին անվտանգության շահերից իրավունք ուներ դիմելու այնպիսի արտակարգ միջոցառումների, որոնք կարող էին բնութագրվել որպես ինքնապաշտպանության գործողություն, մասնավորապես հայ բնակչության բռնի տեղահանությունն այն մարզերից, որոնք գտնվում էին ռուսների գրավման և ֆրանսիական ու անգլիական նավատորմների գործողությունների վտանգի տակ:

Ընդհակառակը, արտաքին գործերի նախարարությունը և կայսերական դեսպանությունը դատապարտել են բոլոր տեսակի անօրինականությունները, որոնք սկսվել էին բռնի միջոցառումների հետեվանքով՝ առանձին անձանց սպանություն, զանգվածային մահապատիժներ, ինչը մասնավորապես տեղի ունեցավ Դիարբեքիրում և Կեսարիայում, աքսորվածների շարասյունների վրա հարձակումները, առանձին բնակավայրերում՝ Մուշ, Էրզրում, Տրապիզոն, Դիարբեքիր, Անգորա, Մալաթիա, սիստեմատիկ կազմակերպված հազարավոր անպաշտպան տղամարդկանց և կանանց ջարդերը, կոտորածների տարածումը այլ դավանանքի քրիստոնյաների վրա, որոնք քաղաքական ընդհանրություն չունեն այսպես կոչված գրիգորյանական հայերի հետ և մասամբ նաև թշնամաբար են վերաբերվում նրանց: Աքսորվածների հետ անողորմ վերաբերմունքը, որոնք առանց այդ էլ դատապարտված էին սովի և աղքատության, նույնպես անարդարացի էր թվում:

Ռազմական տեսանկյունից քիչ է հիմնավորված ռազմական գործողությունների թատերաբեմից հեռու գտնվող շրջաններից հայ բնակչության տեղահանությունը:

Այս միջոցների հասցրած տնտեսական վնասը հավասար չափով վերաբերում է երկրի առևտրին, երկրագործությանը և արդյունաբերությանը. արդեն իսկ շոշափելի ձևով տուժել են նաև Գերմանիայի շահերը:

Կայսերական դեսպանությունը դաշնակիցների ընդհանուր շահերի տեսակետից վերստին Բարձր Դռան ուշադրությունն է հրավիրել հայերի հետապնդումների քաղաքական և առևտրատնտեսական հետեվանքների վրա և պնդել է, որ կանխվեն առավել նողկալի չարաշահումները: Ընդ որում, դեսպանությունը միտումնավոր չի շեշտադրել մարդասիրական տեսակետը և խուսափել է ցույց տալուց, թե իբր ցանկանում է միջամտել ներքին գործերին:

Բազմաթիվ դեպքերում, երբ շոշափվում էին գերմանական շահերը, դեսպանությունը պաշտոնապես և կիսապաշտոնական

ձևով միջնորդել է առանձին հայերի համար: Դեսպանությունը նույնպես բազմաթիվ անգամ հրահանգ է տվել առանձին հյուպատոսներին ընդունելի ձևակերպումներով առաջ քաշել դիմումներ կատարվող ահավոր գործողությունների դեմ և միջնորդել հայերի նկատմամբ մարդասիրական վերաբերմունքի համար: Վերջապես, մեր կողմից Բարձր Դռան ուշադրությունն է հրավիրվել առանձին, չափազանց դաժան անկարգությունների վրա: Կայսերական դեսպանության համար հատկապես տհաճ է երկրի ներսում, հատկապես Անատոլիայում, լայն շրջանների դիրքորոշումը, համաձայն որի Գերմանիայի կառավարությունն է խթանել թուրքական կառավարության գործողությունները հայերի դեմ, իսկ հյուպատոսները շրջաններում պաշտպանել և խրախուսել են իշխանության տեղական մարմիններին հայերի հետապնդումների ժամանակ: Այս տեսակետը տիրապետող է ոչ միայն հայերի, այլև թուրքերի շրջանում, ինչպես ցույց են տալիս թուրք չինովնիկների և բարձր ու ցածր զինվորական աստիճանավորների կողմից ջանասիրաբար տարածվող բազմաթիվ տեղեկությունները: Այս դրսևորումների դեմ գերմանական կողմից պետք է արտահայտվի խիստ վճռական բողոք և կայսերական կառավարությունը իրեն իրավունք է վերապահում իրեն հարմար ժամանակ այդ ամենին ցուցաբերել հրապարակային... եռանդուն հակազդեցություն:

Թուրքիայում կայսերական
գերմանական հյուպատոսություններին *Konst./Ankara, 171, zu Ab. 6381.*
ABГAT, էջ 226-229

№ 25

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՀՈՀԵՆԼՈԵ-ԼԱՆԴԵՆԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

25 սեպտեմբերի 1915թ.

Չնայած կառավարության հերքումներին, ամեն ինչ վկայում է դրված նպատակի՝ հայ ժողովրդի ոչնչացման մասին:

Politishes Archiv des Auswdrtigen Amtes, Ableilung I A, Turkei, 183/39,

Ar 8578. September 25, 1915; "Documentation of the Armenian Genocide in German and Austrian Sources" by Vahakn N.Dadrian, New Brunswick, Transaction Pubrishers, 1994, p.100.
ГАОТОМС, т.1, стр. 262.

№ 26

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՀՈՀԵՆԼՈԵ-ԼԱՆԴԵՆԲՈՒՐԳԻ ԶԵԿՈՒՅԱԳԻՐԸ ՌԵԽՍԿԱՆՅԼԵՐ ԲԵԹՄԱՆ-ՀՈԼՎԵԳԻՆ

25 սեպտեմբերի 1915թ.

Վերջերս ստացվեց հետևյալ հեռագիրը պարոն Ռ.-ից, որը թվագրված է սույն ամսի 18-ով:

«Վերջին մի քանի օրերի ընթացքում այստեղ ոտքով արևելքից եկան հայ կանանց և երեխաների բազմաթիվ շարասյուններ, որոնք գտնվում էին սովամահության եզրին և պետք է ուղարկվեին ավելի հեռու, եթե չմահանային այստեղ այս օրերի ընթացքում: Բարձր Դռան հրամանը ձեռնպահ մնալ նրանց տեղահանությունից, ովքեր դեռևս գտնվում են իրենց տներում, հանդիսանում է բացահայտ կեղծիք, քանի որ նրանցից մի քանիսին այդ իմաստով կարելի է համարել կասկածելի և դա հաճախ օգտագործվում է իբրև պատրվակ (հայերի տեղահանության համար):

Հակառակ այդ հրամանի, զինծառայողների ընտանիքների համար չեն անում բացառություն: Նմանապես դաժանորեն տեղահանում են ծանր հիվանդներին: Տեղահանվածների շարասյունները շարժվում են դեպի Դեյր-էլ-Զոր և Մոսուլ: Չնայած Բարձր Դռան հավաստիացումներին, ամեն ինչ ուղղված է հայ ժողովրդին ոչնչացնելուն:

Հայերը խնդրել են ինձ կրկին այդ ամենի մասին հայտնել Ձերդ գերազանցությանը»:

Թալեաթ բեյը, որին ես նշեցի այս հանգամանքները, պատրաստակամությամբ առաջարկեց իր օգնությունը, սակայն ես հազիվ թե կարող եմ հավատալ, որ կենտրոնական իշխանության հրամանները որևէ էական թեթևացում կբերեն տեղահանված հայերին:

Wolfgang and Sigrid Gust (ed.) in cooperation with Taner Akcam: The Armenian Genocide during the First World War. Documents from German State Archives. A-28578. DE/PA-AA/ R14088. DuA Dok. 175. 1915-09-25-DE-001.
ГАОТОМС, т.1, стр. 262-263.

№ 27

ԱԴԱՆԱՅՈՒՄ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԴԵՄ ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲՌՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ ՆՇՈՒՄՆԵՐ ՈՒ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Կայսերական փոխհյուպատոսություն *Ադանա, 10 հոկտեմբերի 1915*
J N 869
Ktr. N 37
12 հավելվածներով

Պատիվ ունեմ փոխանցել Ձերդ գերազանցությանը հայերի դեմ երիտթուրքական կառավարության բռնի գործողությունների մասին այստեղ կատարված գրառումներն ու նշումները հավելվածների պատճեներով:

Գրառումները, մասամբ իմ, մասամբ էլ իմ դրդումով հյուպատոսության ծառայողների կողմից կատարված, վերաբերում են բացառապես այն դեպքերին, որոնք կամ կատարվել են շրջանի սահմաններում, կամ հյուպատոսության գիտությանն են հասցվել քաղաքով անցնող հայերի միջոցով:

Ինչպես այստեղ պատմում են, երկրի ամենատարբեր տեղերում, հատկապես թուրք-արաբական լեզվային սահմանի գոտիներում հայերը պիտի ենթարկվեն դաժան կոտորածի:

Ամենուրեք և ամեն առանձին դեպքում պատասխանատվությունն ընկնում է թուրքական իշխանության մարմինների վրա: Քանի որ թուրքական կառավարությունը հրահանգել է պաշտոնապես հայտարարել այն մասին, որ ամբողջ հայ բնակչությունը օգտվում է կյանքի և գույքի լիարժեք անվտանգությունից, կարծում եմ, որ իրավունք չունեմ Ձերդ գերազանցությունից թաքցնել այն իրադարձությունները, որոնցով կարելի է պարզել կառավարության գործունեության միջոցները հայերի դեմ:

Նորին գերազանցություն ռայխսկանցլեր *Բյուզե*
պարոն դոկտոր ֆոն Բեթման-Հոլվեգին

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Կայսերական գերմանական փոխհյուպատոսություն

Ինժեներ Պաուլ Քերնը Էրեգլիից, որը ներկայումս գտնվում է

այստեղ, երեկ, երկուշաբթի օրը, սեպտեմբերի 12-ին ինձ հայտնեց, որ իր դիտարկումներով թուրքական իշխանություններն ամեն կերպ թալանում են աքսորված հայերին: Օրինակ Էրեգլի քաղաք մտնելու համար գանձվում է 5 պիաստրների (1/4 մեջիդիե) չափի գումար, փոքր կամրջով անցնելու համար, որը միացնում է տեղահանվածների երկու ճամբարները՝ 2 պիաստր:

Հացը տրվում է միայն վճարի դեպքում, իսկ ջուրը երբեմն ընդհանրապես չի տրվում:

Նույն բանը տեղիե է ունենում մարդկանց ցանկացած նման հավաքատեղերում: Մարդիկ ոչ մի տեղ անվճար սնունդ չեն ստանում, երբեմն նրանք պետք է, ինչպես Օսմանիեում, մեկ հացի համար վճարեն 5-6 պիաստր: Օսմանիեում գտնվում է 20000 մարդ, որոնց գլխերը թալանում են գյուղի բնակիչները:

Աղանա, 13 սեպտեմբերի 1915

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Կայսերական գերմանական հյուպատոսություն

Հասիմ-բեյ անունով մի թուրք սպա, որը ծառայում է Մամուրի ինժեներային զորքերում, Միսակ Սիմիկյան անունով մի հայի սույն թվականի սեպտեմբերի սկզբին ասել է, որ Խարբերդից Մոսուլ աքսորված 60000 հայերից հասել է 15000-ը: Մնացածները ճանապարհին ոչնչացվել են:

Մարդինից երկու քուրդ, որոնք զբաղվում են մթերքի տեղափոխմամբ Կոստանդնուպոլիս, քրդերեն խոսող հայ Մարկոս Ղազարյանի հարցին այն մասին, թե ինչպես են գործերը Փոքր Ասիայի շրջաններում, պատասխանել են, որ Խարբերդի, Դիարբեքիրի, Մարդինի և Վերենշեհիրի բոլոր հայերը կոտորվել են:

Միսակ Սիմիկյանը և Մարկոս Ղազարյանը վերը նշվածի մասին անձամբ հայտնել են ինձ Աղանայում:

ՀԱՎԵԼՎԱԾ 3

Կայսերական գերմանական հյուպատոսություն

Դար-էլ-մուալ-լեմինի թուրքական վարժարանի նախկին երկրորդ տնօրենը և թուրքական որբանոցի ներկայիս տնօրեն Օսման-բեյը քրիստոնյա սաներին հայտարարել են, որ նրանք կամ պետք է ընդունեն մահմեդական կրոնը կամ պետք է լքեն որբանոցը:

Որբանոցի ուսուցչուհի օրիորդ Սրբուհին, որն ինձ այցելեց, հայտնում է, որ իրենց ներկայացրած պահանջների հետևանքով բոլոր աղջիկները (շուրջ 35 մարդ) լքել են որբանոցը և ապաստան են փնտրել տարբեր ընտանիքներում: Նրանց ճակատագիրը ինձ անհայտ է, ես նրանց ուղարկեցի ամերիկյան միսիա:

Որբանոցի մոտ 60 քրիստոնյա տղաներից 14 մնացին այնտեղ, քանի որ չգիտեին ինչ անել: Այդ մնացածների մահմեդականացումը արդեն սկսվել է:

Օսման-բեյը հայտնել է երեխաներին, որ Օսմանյան որբանոցում քրիստոնեական կրոնը չի կարող ընդունվել: Սաները պետք է ձեռնպահ մնային որևէ կրոնական գործողությունից, հատկապես աղոթելուց: (Սրբուհի):

Աղանա, 30 սեպտեմբերի 1915

ՀԱՎԵԼՎԱԾ 4

Կայսերական գերմանական փոխիոպատոսություն

Տեղահանվող հայերի վրա վերջերս, սեպտեմբերի 18-ին մեծ թափով տեղի ունեցավ ավազակային հարձակում Վայսիյե կայարանի մոտ (Բաղդադի երկաթգծի Ջիհան և Թուփրակկալե հատվածի միջև Աղանայի վիլայեթում):

Ոմն Մանուկ Շահբազյանը, Աղանայի խոշոր առևտրականներից, որի ընտանիքին միացան նաև այլ հայեր, որոնցից կազմվեց 33 սայլերից բաղկացած քարավան, երեկոյան ենթարկվեց հարձակման թուրք ավազակների կողմից:

Քանի որ սայլերով մեկնող հայերը առանց որևէ կասկածի համարվում են ունևորներ, ուստի այդ մահմեդական ավազակները առաջին հերթին հարձակվում են նման քարավանների վրա: Իրենց կարծիքով նրանք հազիվ թե անարդարացի են վարվում, երբ հարձակվում են հայերի վրա, իսկ որոշ պարագաներում սպանում նրանց, քանի որ իշխանությունների կողմից նրանց բավականին հստակ հանձնարարված է կոտորել հայերին: (Այս առումով լուրջ ապացույց է ծառայում ի թիվս այլոց Ուլու Քիշլայի մոտ աշխատող երկաթգծային բանվորների պահվածքը, որոնք հայերի սպանության հետ կապված ուղղակի մատնանշում են Ուլու Քիշլայի կայմականին (Մերսինում երկաթգծի պետ Մայերի հաղորդումը):

Հարձակման ենթարկված հայերը արդյունքում ավազակներին վճարեցին 1200 թուրքական լիր և դրանից հետո կարող էին շա-

ռունակել իրենց ճանապարհը: Այդ պատահական ավազակների թիվը ճշտված չէ: Թերևս, բոլոր դեպքերում հազիվ թե նրանք շատ լինեին, հաշվի առնելով յուրաքանչյուրին հասած ավարի մասնաբաժինը:

Շահբազյանի երկար ձգվող սայլերի քարավանից որոշ հեռավորության վրա շարժվում էին Օրման Քաթիբիի և Լևոն էֆենդու սայլերը: Վատ ճանապարհի պատճառով այս սայլերը դժվարությամբ էին առաջ շարժվում: Այստեղ նույնպես հայտնվեցին ավազակները, հավանաբար նրանք, ովքեր թալանել էին Շահբազյանի քարավանը: Այս հարձակման ավազակների թիվը ճշտված է, նրանք ընդամենը երկուսն էին: Այն բանից հետո, երբ մահմեդականները մասամբ բավարարեցին հայկական արյուն թափելու իրենց հագուրդը՝ նրանց կոտորելու և ջարդելու եղանակով, նրանք սպառնալիքով Լևոն էֆենդուց պահանջեցին 35 թուրքական լիրա: Վերջինիս հասցված վնասվածքները չափազանց մեծ էին, ուստի նա ի վիճակի չէր շարունակել ճանապարհը և վերադարձավ Աղանա, որտեղ և գտնվում է ներկայիս դրությամբ:

Աղանայի վալին սույն ամսի 22-ին (չորեքշաբթի) օրվա երկրորդ կեսին մեկնեց Օսմանիե, համապատասխանաբար Ջիհան: Նրա ուղևորությունն ավելի շատ նպատակ ուներ մարդկանցից վերցնել թալանված փողերը (իր համար): Միևնույն ժամանակ հարց է ծագում, հնարավոր է արդյոք դա առանց սեփական անձի վարկաբեկման ավազակների առջև:

Աղանա, 24 սեպտեմբերի 1915

ՀԱՎԵԼՎԱԾ 5

Կայսերական գերմանական փոխհյուպատոսություն

1915թ. սեպտեմբերի 10-ին ես հարցաքննեցի երկու հայերի Թալասից, 38 տարեկան Ստեփան Ղարաբեկյանին և նույն տեղից 43 տարեկան Հակոբ Փափազյանին և պարզեցի հետևյալը.

Սույն թվականի օգոստոսի 28-ին Թալասի (Կեսարիա) հայ բնակիչները լքելով իրենց ունեցվածքը, թողնելով այն տեղական իշխանություններին, պետք է ենթարկվեին աքսորի դեպի Միջագետք:

Օգոստոսի 29-ին չորս ժանդարմներ և երկու ոստիկաններ, որոնք ուղեկցում էին Թալասից տեղահանվողների քարավանները, ճանապարհին, անմարդաբնակ վայրում, երեկոյան աղջամուղջին անցան թալանի: Լիցքավորված հրացաններով, խզակոթերի և մտրա-

կի հարվածներով նրանք ահաբեկեցին աքսորված հայերին և շորթելով խլեցին նրանց փողերը: Ճանապարհին տուժածներից մեկը, Արաբաջի Ալեքսանը, շատ արյուն կորցնելու պատճառով Նիգդեպից (Կոնիա) ոչ հեռու մահացավ:

Ներքոհիշյալները, օրինակ, ժանդարմներին վճարեցին հետեվյալ գումարները՝

Կարապետ Սայաբալյան - 10 թուրքական լիրա

Արքին Քարամյան - 18 թուրքական լիրա

Ստեփան Ղարաբեկյան - 5 թուրքական լիրա

Հակոբ Փափազյան - 5 1/2 թուրքական լիրա

Ժանդարմներին և ոստիկաններին մուծված ընդհանուր գումարը կազմում է 450 թուրքական լիրա:

Այս նույն ժանդարմները գետնին են նետել Ստեփան Ղարաբեկյանի վեցամյա որդուն, ինչը հանդիսացել է նրա մահվան պատճառը: Այդ նույն ժանդարմներն էին, որ մտրակի հարվածներով սպանեցին Փեհլեվանյանի երեխային:

ՀԱՎԵԼՎԱԾ 6

Կայսերական գերմանական փոխհյուպատոսություն

1915թ. սեպտեմբերի 8-ին երեք ներքոհիշյալ հայուհիները՝ Անթառամ Թերզյանը, Մարիամ Էրզերումյանցը, Աղավնի Ղազանչյանը Օրթա-Քոյից (Սվազի վիլայեթ, Ամասիայի շրջան) հաղորդեցին ինձ հետևյալը:

1915թ. օգոստոսի 13-ին թուրքական կառավարությունը Օրթա-Քոյ բնակավայրի տղամարդկանց, իսկ հաջորդ օրը կանանց տեղափոխեց Հաջի-Քոյ, որտեղից բոլոր հայերին, առանց տարիքի և սեռի տարբերության (ընդամենը մոտ 700 մարդ) բռնի ուղարկեցին աքսոր: 1915թ. օգոստոսի 22-ին աքսորվածների քարավանը առանց միջադեպերի հասավ Բողազլայան, Անգորայի վիլայեթ:

Հաջորդ օրը 6 ժանդարմներ հետագա տեղափոխման ժամանակ ստանձնեցի աքսորյալների պաշտպանությունն ու ուղեկցությունը: Բազմաթիվ զինակոչիկներ և քաղաքացիական անձինք, բոլորը մահմեդականներ, միացան քարավանին, որպեսզի մասնակցեն պլանավորված նողկալի գործողությանը: Քարավանի թափե Խան հասնելուն պես ժանդարմները կարգադրեցին առանձնացնել տղամարդկանց կանանցից, տղամարդիկ ներկայվեցին մոտակա իջևա-

նատներից մեկում և խմբերով կապկպված սկսեցին դուրս հանել: Կանխիկ գումարները բոլորից խլվեցին և բոլոր տղամարդիկ հանձնվեցին զինվորներին և մարդասպանների խմբերին: Այսպիսով բոլոր տղամարդիկ և պատանիները, մոտ 250 մարդ, տեղափոխվեցին մոտակա դաշտը և դաժանորեն սպանվեցին: Կանայք ստիպված էին այդ ամենը տեսնել:

Հաջի-Քոյից չորս մարդ ժանդարմների կողմից սպանվեցին կանանց աչքերի առաջ:

Որոշ զոհերի անունները, որոնք կարողացան հիշել վերը նշված կանայք, հետևյալն են՝

Ավետիս Թերզյան, 48 տարեկան, Նիկողոս Էրզերումցյան, 40 տարեկան, Գրիգոր Փալանջյան, 45 տարեկան, Մկրտիչ, 25 տարեկան, Աստուր, 23 տարեկան, Կարապետ Գասլիյան, որոնք Օրթա-Քոյ բնակավայրից էին, ինչպես նաև Ավետիսը, Սարգիսը, երկուսն էլ Հաջի-Քոյ բնակավայրից:

Իրենց ամուսիններին կորցնելուց հետո այրիացած կանայք և որբացած երեխաները հասան Էրքելետ, Կեսարիայից հյուսիս, որտեղ թուրքական բնակչությունը առևանգեց բոլոր երիտասարդ կանանց, աղջիկներին և տղաներին: Մարիամ Էրզրումյանցը հայտնեց ինձ, որ Բակալ Մուստաֆա աղան խլել է իր 14 տարեկան Նշան անունով որդուն և պահել իր մոտ:

Քարավանի մնացորդը անպաշտպան, աղքատ և ողորմելի, կառավարության կողմից առանց որևէ պաշտպանության անցավ Բոզանտի-Տարսուս-Ադանա ճանապարհը: Շարասյունի Ենիջե տեղ հասնելուն պես, Ադանայից ոչ հեռու, ժանդարմները յուրաքանչյուր ընտանիքից պահանջեցին 40 պիաստր: Կանայք հազիվ թե կարող էին կատարել այդ պահանջն այն բանից հետո, երբ ճանապարհին վաճառեցին իրենց ունեցած-չունեցածը և անկողնային իրերը և նրանց մոտ մնացել էր ընդամենը մի քանի պիաստր:

ՀԱՎԵԼՎԱԾ 7

Կայսերական գերմանական փոխհյուպատոսություն

Ցուցմունքներ տված անձինք՝

Հալաջայից (Անգորա) Հովհաննեսի կին Մարիամը, 38 տարեկան, Հալաջայից (Անգորա) Հարությունի կին Սուլթանեն, 28 տարեկան, Յոզղատից Մելիքի կին Գյուստուման, 30 տարեկան, 1915թ. սեպտեմբերի 11-ին ինձ տվեցին հետևյալ ցուցմունքները՝

Յոզղատ-Բողազլյան (Անգորա) աքսորի ճանապարհին մենք ականատես եղանք այն բանին, թե ինչպես օգոստոսի 20-ին հարյուրավոր թուրք զինվորներ Յոզղատից դեպի հարավ 4 ժամվա հեռավորության վրա գտնվող դաշտերից մկում գնդակահարեցին մի քանի հարյուր հայերի Յոզղատից և Սանգուրլուից, բոլորը տղամարդիկ էին, նրանց մեջ կային երկու հոգևորականներ, մարդկանց ծեծում էին հրացանի խզակոթերով և ոչնչացրեցին բոլորին առանց բացառության:

Օգոստոսի 22-ի երեկոյան մեր քարավանը, բաղկացած 700 մարդուց, բոլորը աքսորված էին Օրթա-Քոյից, Հաջի-Քոյից և Հալաջայից, հասան Թեփե Խան (Անգորայի վիլայեթ), որտեղ տղամարդիկ ներկայվեցին իջևանատանը: Հետո ժանդարմները սկսեցին բոլորին թալանել առանձին խմբերով, հիմնականում խլելով նրանցից կանխիկ գումարները և հանձնեցին նրանց մարդասպանների բանդաներին: Սպանություններին մասնակցում էին նաև ժանդարմները, կանանց աչքերի առջև գնդակահարելով 4 տղամարդու Հաջի-Քոյից:

Հարցաքննված կանանց կողմից ճանաչված զոհերի անունները հետևյալն են՝

Մելիքը՝ 35 տարեկան, Կարապետ՝ 23 տարեկան, Հարություն՝ 30 տարեկան, Սարգիս՝ 30 տարեկան, Դոնիք՝ 60 տարեկան, Սարգիս՝ 28 տարեկան, Նշան՝ 50 տարեկան, Նազար՝ 14 տարեկան, Կարապետ՝ 25 տարեկան, Ռուֆան՝ 30 տարեկան, Գևորգ՝ 20 տարեկան, Իսկանդեր՝ 13 տարեկան, Գրիգոր՝ 20 տարեկան:

Վերջին երկուսին ժանդարմները տարել են նրանց մոր մոտ և խոստացել փրկագնի դիմաց ազատել նրանց: Չնայած, որ նրանք ստացան 15 թուրքական լիրա, մոր աչքերի առջև նրանք գնդակահարեցին որդիներին:

Բոլոր ժանդարմները, որոնք ուղեկցում էին գաղթականների շարասյուները Յոզղատից, Բողազլայանից, Էրքելեթից, Ինջո-Սուից, Գարահիսարից և Նիգդեից, աստիճանաբար խլում էին ողջ կանխիկ գումարները, իսկ բոլոր արժեքավոր իրերը տվել են ոչ կանոնավոր զորքերի զինվորներին և ավազակային խմբերին: Հասնելով Նիգդե, վերը նշված կանանցից մեկը՝ Սուլթանեն, 80 պիաստրով վաճառեց իր բեռնակիր անասունին: Սակայն նույնիսկ այդ գումարը և ուսապարկում թաքցրած 200 պիաստրը ուսապարկի հետ միասին այդ կնոջից խլեց ժանդարմներից մեկը:

Հալաջից մի կին սույն թվականի սեպտեմբերի 10-ին Տարսուս-Ադանա ճանապարհին ծննդաբերեց: Ժանդարմները մտրակի և ձողերի հարվածներով մի կողմ էին քշում օգնության հասնող կա-

նանց, այդ թվում հիշատակված Սուլթանեին, իսկ ծննդաբերած կնոջը ցանկանում էին թողնել միայնակ ճանապարհին՝ բաց երկնքի տակ: Մեծ դժվարությամբ կանայք կարողացան իրենց ուղեկցուհուն հասցնել մինչև Ադանա:

Կառավարությունը տեղահանվողներին չէր տալիս ոչ սնունդ, ոչ օթևան, ընդհակառակը, ամենուրեք այրիացած կանանց և որբացած երեխաների հետ ժանդարմները այնքան դաժանորեն էին վերաբերվում, որ նրանք իրավունք չունեին անգամ ծարավը հագեցնել և միայն 10-20 փարային հավասար գումարով նրանք կարող էին ստանալ մեկ բաժակ ջուր: Սուլթանեի երկու տարեկան աղջիկը մահացել է ծարավից, իսկ Մարիամի երկու տարեկան տղան մահացել է ծարավից և քաղցից:

ՀԱՎԵԼՎԱԾ 8

Կայսերական գերմանական փոխհյուպատոսություն

Ցուցմունքներ տված անձինք՝

Սեֆերե Գեշբեկյանը՝ Հալաջայից (Անգորա), Մարտիրոս Պողոսյանը՝ Հալաջայից (Անգորա), սեպտեմբերի 11-ին ինձ տվեցին գրեթե նույն ցուցմունքները, ինչ-որ կանայք՝ Մարիամը, Սուլթանեն, Գ-յուստյուման, և բացի դրանից նրանք լրացրին, որ ճանապարհին ականատես եղան այն բանին, թե ինչպես Թերսիլից ժանդարմները և զինվորները Յոզղատից մի քանի ժամ դեպի հարավ հեռավորության վրա մի դաշտում կոտորեցին և ոչնչացրեցին մի քանի հարյուր մարդ Յոզղատից և շրջակայքից, որոնք բոլորը տղամարդիկ էին:

Ցուցմունքներ տված այս անձինք հայտնեցին ինձ, որ Չատ, Բուրուն-Կիշլա, Չախմախզադե և Քելլեր բնակավայրեր տանող ճանապարհներին նրանք չեն տեսել արական սեռի ոչ մի հայի և ճանապարհին նրանք ամենուրեք իմացել են, որ նրանք բոլորը սպանվել են:

Ասում են, որ բոլոր բնակավայրերում կոտորածի հրահանգը տվել է Բողազլայանի կայմակամը:

ՀԱՎԵԼՎԱԾ 9

Կայսերական գերմանական փոխհյուպատոսություն

1915թ. սեպտեմբերի 6-ի օրվա առաջին կեսին Անգորայի

վիլայեթի Չորում սանջակի Հաջի-Քոյ բնակավայրից տեղահանված հայուհիները՝ Հնազանդ Տինկոյանը, Նոեմիկ Ավետյանը, Մարիամ Յախնյանը, Զարուհի Էքմեքջյանը, Նուրիցա Շիշմանյանը, Արաքսի Սողալյանը տվեցին հետևյալ ցուցմունքները՝

Թուրքական իշխանությունները օգոստոսի 8-ին Հաջի-Քոյի հայ բնակչությունից պահանջեցին 3 օրվա ընթացքում թողնել իրենց բնակավայրերը և աքսորվեն Միջագետք: Կանանց թույլ տվեցին ուղեկցել իրենց ամուսիններին և հասկացնել տվեցին, որ այդ սիրալիրության համար նրանք պետք է շնորհակալ լինեն կառավարությանը:

Օգոստոսի 14-ին կառավարությունը 120 ընտանիքներին տրամադրեց 174 սայլեր, որպեսզի իրենց հետ վերցնեն ամենաանհրաժեշտ իրերը և մթերքները: 12 ժանդարմների ուղեկցությամբ աքսորվածները առանց երկյուղի Յոզղատից մտան Բողազլյան:

Բողազլյան-Էրքելեթ ճանապարհին օգոստոսի 22-ին աքսորյալների քարավանը պաշտպանության նպատակով ուղեկցող 6 ժանդարմները նրանցից գումար պահանջեցին: 120 ընտանիքները արդյունքում հավաքեցին 10 թուրքական լիրա, որպեսզի այդպիսով փրկեն իրենց կյանքը սպառնացող վտանգից: Ժանդարմները, չնչին գումարի պատճառով գազանացած, կանանցից առանձնացրեցին բոլոր տղամարդկանց, մոտ 200 մարդ և ուղարկեցին իջևանատուն: Այնուհետև ժանդարմները կապեցին տղամարդկանց առանձին խմբերով և կապկպված ուղարկեցին մոտակա դաշտերից մեկը: Հետո ժանդարմները հրացանների կրակոցներով ազդանշան տվեցին հարևանությամբ պատրաստ վիճակում գտնվող մարդասպանների խմբերին: Բոլոր տղամարդիկ և 12 տարեկանից բարձր պատանիները ենթարկվեցին հալածանքների՝ փայտերի, քարերի, դաշույնների, սրերի և դանակների հարվածներով և սպանվեցին: Եվ այդ ամենը կատարվում էր կանանց և երեխաների աչքի առաջ, որոնք ստիպված էին նայել մարդասպանների այդ ահասարսուռ գործողությանը: Փոքր տղաների մեծ մասին թուրքերը վերցրեցին իրենց հետ, որպեսզի նրանց դարձնեն մահմեդական կրոնի:

Աքսորվածների մնացած մասը, բոլորը միայն կանայք և երեխաներ, այնուհետև եկավ Էրքելեթ և ենթարկվեց հարձակման թուրքերի կողմից: Թուրքերը իրենց հետ տարան բոլոր հասուն աղջիկներին և երիտասարդ կանանց և պատվազրկեցին նրանց: Երկու աղջիկներ սկսեցին պաշտպանվել և ժանդարմների կողմից ենթարկվեցին այնպիսի կտտանքների, որ մահացան: Այդ երկու աղջիկների անուններն էին Օվսաննա և Թաբիդ Կիրասյաններ: Ռոզա Կիրաս-

յան անունով մի աղջիկ վախից չդիմադրեց ժանդարմներից մեկին: Ժանդարմը հավանաբար խոստացել էր ցավ չպատճառել նրան և կնության առնել իր եղբոր համար: Ընդհանուր առմամբ Էրքելեթի թուրքերը իրենց հետ տարան 50 աղջիկների, ինչպես նաև 12 տղաների:

Մնացած կանայք շարունակեցին իրենց ճանապարհը և հասան Աքսերայ, որտեղ թուրքերը ժանդարմների համաձայնությամբ խլեցին նրանցից կանխիկ գումարների մնացորդները և այդ նպատակով խուզարկում էին անգամ կանանց սպիտակեղենը:

Աքսերայից կանայք, ողորմություն խնդրելով, Բոզանտի-Տարսուսի վրայով հասան մինչև Ադանա քաղաքը, որտեղից շարունակեցին իրենց ճանապարհը:

Սպանվածների թվում են հետևյալ անձինք՝
Թադևոս Զոգալյան, հայր
Հովհաննես Զոգալյան, որդի
Եղիա Թենկոյան
Աբրահամ Գևերչինյան
Գևորգ Գևերչինյան
Վահան Գևերչինյան
Հակոբ Ավետյան, հայր
Ավետիս Ավետյան, որդի
Ստեփան Ավետյան, որդի
Կարապետ Թերզյան
Մովսես Խոմալյան
Սեդրակ Խոմալյան
Բենիամին Էքմեքջյան
Մաքնոս Շիշմանյան
Միհրան Շիշմանյան

Վերը նշված կանանց հարցաքննությունը ես կազմակերպեցի կայսերական հյուպատոսի հանձնարարությամբ:

ՀԱՎԵԼՎԱԾ 10

Կայսերական գերմանական փոխհյուպատոսություն

Վերջին կարգադրությունների հետևանքով հայերի մեծամասնությունը պետք է լքեն Ադանա քաղաքը, այնպես որ, որպես կանխավճար վճարված 1800 թուրքական լիրան, ինչը կազմում էր

վերջին խնայողությունը և աքսորի դատապարտվածների ճանապարհածախսը, հիմնականում կորավ և քաղաքային իշխանությունների կողմից չփոխհատուցվեց:

Քանի որ բարձր աստիճանավորները ցանկանում են այդ ճանապարհով հարստանալ, ուստի կաշառքը և շորթումը համարում են անմեղ բան և թույլատրելի արարք, չեղյալ են համարում օրենքը և պետության արժանապատվությունը: Նրանք, իհարկե, չունեն որևէ բարոյական ուժ և հեղինակություն, որպեսզի իրենցից ստորադաս չինովնիկների, դատավորների, բժիշկների, սպաների և նույնիսկ ժանդարմների և հասարակ զինվորների սանձը քաշած պահեն: Ամեն մի չինովնիկ, բնականաբար, յուրովի իր համար ապրուստի միջոց է փնտրում:

Ուլու-Քիշլայում ժանդարմները իրենց ղեկավարության հետ միասին հանդես են գալիս որպես կազմակերպված հանցախումբ: Աքսորվածների յուրաքանչյուր շարաժուն պարտավոր է վճարել իր տուրքը: Նիգդեից տեղահանվածները հազիվ կարողացան փրկվել իրենց 200 թուրքական լիրայով, իսկ նրանք, ովքեր Իզմիթից էին, մերժման պատճառով պետք է զոհաբերեին վերնախավից յոթ հոգու, որոնց թվում էին կրտսեր երեց Ներսեսը: Դեպքերի մասնակից և ականատես Յոզղատից Արամ Խանջյանի պատմածները ակնհայտորեն վկայում են այն մասին, որ Անգորայի, Սվազի, Կոնիայի և Ադանայի վիլայեթներում տիրում է լրիվ անիշխանություն:

Կան կաշառքի և դրամաշորթության նաև այլ բազմաթիվ օրինակներ: Գնդապետ Սուլեյման բեյը և մութասերիֆ Օսմանիե-Ֆեթիխի-բեյը, որոնք հրահանգ ունեին տեղահանել Դորթյոլի հայերին, միայն երկու շաբաթվա ընթացքում Կարապետ Ջինանյանից ստացան 25 թուրքական լիրա, Մինաս Կարայաղուբյանից՝ 40 թուրքական լիրա և Հակոբ Բոյաջյանից՝ 30 թուրքական լիրա: Բանակցությունների միջնորդ էր հանդիսանում Խաչեր Կարայաղուբյանը:

Վահան Վարդապետյանը և Բոգջյանը, երկուսն էլ Ադանայից առևտրականներ, ինձ հայտնեցին, որ Օհանյանի միջնորդությամբ ոստիկանության ղեկավար Ջեմալ բեյին տվել են յուրաքանչյուրը 20-ական թուրքական լիրա որպես կաշառք, որպեսզի մի քանի շաբաթով օգտվեն նրա ժամանակավոր բարեհաճությունից:

ՀԱՎԵԼՎԱԾ II

Կայսերական գերմանական հյուպատոսություն

Խաչատուր Կրուսյանը և Հակոբ Հաջիկյանը, երկուսն էլ Ա-

դանայում բնակվող, ինձ հայտնեցին հետևյալը, ինչը իմացել էին Իզմիթից տեղահանված հայուհիներից, որոնց ամուսինները զինվորների կողմից գնդակահարվել էին ճանապարհին:

Ուլու-Քիշլա-Պոցանտի ճանապարհի հատվածին Իզմիթից տեղահանվող հայերը հրաժարվել են պայմանավորվածից ավել գումար վճարել: Կառապանները, բոլորը թուրք, հարձակվեցին հայերի վրա և ծեծեցին նրանց: Հայերից երկուսը հակառակորդին վախեցնելու նպատակով զենք վերցրեցին, բնականաբար, չկիրառելով այն:

Ուլու-Քիշլայից կանչված թուրք սպան, կարգադրեց կապել 7 հայերի, որոնց մեջ էր նաև Ներսես անունով կրտսեր երեցը և ժանդարմներին հրամայեց գնդակահարել այդ մարդկանց: Ժանդարմները հրաժարվեցին կատարել հրամանը և հասկացնել տվեցին, որ մարդիկ արժանի չեն նման դաժան հրամանի: Դրանից հետո սպան զինվորներին հրաման տվեց գնդակահարել կապված 7 հայերին իրենց կանանց ու երեխաների աչքի առջև, ինչը ճշտությամբ կատարվեց: Նույն սպան հրամայեց սարեր տանել մյուս հինգ կապված հայերին, որոնց հետքը լրիվ կորավ:

Այդ զոհերից երեք են՝ Կարապետ Միքայելյան, Մելքոն Մոսկոֆյան, կրտսեր երեց Ներսես, բոլորը Իզմիթից:

Ծանր վիրավորված մի հայի հասցրեցին Տարսուս, որտեղ նրան խնամում էին և նա կենդանի մնաց:

Հաջորդ օրը Աքսերաիլից տեղահանված հայերը՝ Միհրան Մութաֆյանը, Միսակ Ղազանչյանը, Էդվարդ Աբաջյանը այնտեղ տեսան ընկած վեց դիակներ: Նրանք ցանկացած ծածկել նրանց, որպեսզի թաքցնեն ճանապարհով անցնողներից, սակայն ժանդարմները կրկին դեն նետեցին ծածկոցները, որպեսզի անցորդներին ի ցույց դնեն մերկ մարմինները:

R 14088, Ab. 30012.
ԱԲԳԱՏ, էջ 234-244

№ 28

ԴՐԵՋԴԵՆԻ ՍԱՔՍՈՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԱՐԽԻՎԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՑ

Պատճեն

ՀԵՌԱԳԻՐ

Կոստանդնուպոլիս, 15 հոկտեմբերի 1915 *5.25 կեսօրից հետո*

Ստացված է՝ 11.44

Կայսերական դեսպանը

Արտաքին գործերի նախարարությանը

N 2359 15.10

Ամերիկյան դեսպանը, որի հետ ես քննարկեցի Անգլիայի լորդերի պալատում և մեր նկատմամբ թշնամաբար տրամադրված երկրներում գերմանական կառավարության և Թուրքիայում գերմանական հյուպատոսության ներկայացուցիչների, հատկապես հյուպատոս Ռյոսլերի դեմ ուղղված մեղադրանքը, որ նրանք խրախուսում են հայերի հետապնդումները, ցանկանում է Հալեպում ամերիկյան հյուպատոսից ստանալ հյուպատոս Ռյոսլերի հայկական հարցում ունեցած դիրքորոշման վերաբերյալ հաղորդագրությունը և իր կառավարության համաձայնությամբ այն մեզ տրամադրել:

Պարոն Մորգենթաուն մեկ անգամ ևս ընդգծեց, որ ինքը հաստատ գիտի, որ գերմանական կողմից արվել է ամեն ինչ, որպեսզի թուրքական կառավարությանը ետ պահի հայերի անմեղ մասի նկատմամբ կիրառվող գործողություններից և կանխի անօրինականությունները: Իր հյուպատոսների հաղորդումներից նրան նաև հայտնի է դարձել, որ գերմանացի հյուպատոսներն ամենուրեք և միշտ հոգ են տանում հայերի մասին:

Վանգենհայմ

Sähsisches Haupitstaatsarchiv Dresden, Außenministerium, Aktennummer, N 2359, B 1.23.
ГИОГА, стр. 222-223.

№ 29

ՍԱԼԻՀ-ԲԵՅ ԳՅՈՒՐՋԻԻ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ ԹԱԼԵԱԹ ԲԵՅԻՆ ՀԱՅԵՐԻ ՀԵՏԱՊՆԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՐՑԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

Արտաքին գործերի նախարարություն
պատճենը
N 906

Բեռն, 19 հոկտեմբերի 1915
(առաքելություն)

1 հավելված
Գաղտնի

Պատիվ ունեմ սույնին կցել մի վստահելի անձի Սալիհ-բեյ Գյուրջիի հետ ունեցած զրույցի գրառումների պատճենը:

Ընդ որում խոսքը հայերի հետապնդումների հարցով զեկույցի մասին է, որը Սալիհ-բեյ Գյուրջին ուղարկել է Թալեաթ բեյին:

Դեսպանի պաշտոնակատար
կոմս Այնզիդել

Նորին գերազանցություն ռայխսկանցլեր Konst./Ankara, 171, zu Ab. 30454[15].
պարոն ֆոն Բեթման-Հոլվեգին

ՀԱՎԵԼՎԱԾ
Ab. 30454[15]-ին կցված պատճեն

Սալիհ-բեյ Գյուրջին ինձ տեղեկացրեց որոշ ժամանակ անց ուղարկած ստույգ տեղեկություններով գրավոր զեկույցի մասին, որը նա մոտավորապես սեպտեմբերի կեսերին ուղարկել է Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթ բեյին: Միևնույն ժամանակ, ինչպես ես կարծում եմ, նա կառավարության ղեկավար Թալեաթից Կոստանդնուպոլսից ստացել է այդ նամակը ստանալու վերաբերյալ բավական շնորհակալ հաստատումը:

Գյուրջին զեկույցի բովանդակությունից ինձ հայտնեց հետևյալը՝ հայերի հետապնդումը Թուրքիայում, ինչը ակնհայտորեն նախատեսում էր հայերի ոչնչացումը, ինչը, ցավոք, պետք է ընդունի իրավիճակն իմացող ցանկացած մարդ, պետք է բացատրել Թուրքիայի ճնշված վիճակով: Եթե Թուրքիան ցանկանում է ոտքի կանգնել ներքին քաղաքականության հիմնախնդիրներից, եթե նա ընդհանրապես ցանկանում է մնալ կենսունակ, ապա պետք է ինչ-որ ձևով վերացնի հայերին: Անմիջապես պետք է լուծվի նաև այսպես կոչված Հայկական հարցը, առանց դրա Թուրքիան չի կարող մտածել իսկական ներքին վերակազմավորման մասին: Սակայն ճանապարհը, որի վրա կառավարությունը, թվում է, կանգնել է և որը, թվում է, թե բնորոշվում է որպես ջարդեր և բռնության գործողություններ, բացարձակապես սխալ է: Նույնիսկ եթե հայերի հանդեպ հնարավոր չէ գտնել գործողությունների այլ ճանապարհներ, ապա արտասահմանի հանդեպ գործունեության ձևերը պետք է այլ լինեն: Հնարավոր չէ այն ամենը, ինչ վերաբերում է Հայաստանին լռության մատնել արտասահմանում, այլ հարկավոր է ընդունելի հաղորդագրությունների միջոցով տեղեկացնել նրան այնպիսի ոգով, որ հայերի հանդեպ կատարված գործողությունները ներկայացվեն միայն մարդասիրական լույսի ներքո: Ռուսաստանից սահմանները պաշտպանելու հարցում

բավականաչափ հիմքեր կան, որպեսզի Բարձր Հայքից հայերի տեղահանությունը բացատրվի միջազգային իրավական տեսակետից ընդունելի եղանակներով:

Սակայն Կոստանդնուպոլսին նախ և առաջ անհրաժեշտ է հիմնավորապես վերլուծել հայերի դեմ գործողությունները այն տեսակետից, որ Գերմանիայի հարաբերությունները Վատիկանի հետ ունեն առանձնահատուկ բնույթ, որ Գերմանիան, հավանաբար, մեծ նշանակություն է տալիս այն բանին, որ այդ հարաբերություններում խուսափի բոլոր հնարավոր հակասություններից: Պապը Գերմանիայի քաղաքական հաշվարկներում հանդիսանում է լուրջ գործոն, ուստի արդեն Գերմանիայի շահերից ելնելով հարկավոր է խուսափել այն ամենից, ինչը կարող է դրդել կամ Գերմանիայի հակառակորդների կողմից ներկայացված տեղեկությունների հիման վրա ստիպել Պապին Հայկական հարցում ընդունել Գերմանիայի համար անբարենպաստ ինչ-որ դիրքորոշում և արտահայտվել ի պաշտպանություն Թուրքիայում ճնշված քրիստոնյաների: Չնայած հայերի դեմ կատարված բոլոր գործողությունների, հարկավոր է հմուտ քարոզչական գործողության միջոցով զրկել նման հնարավորությանը պարարտ հողից և նախ և առաջ նաև ընդգծել պապի հետ թուրքական կողմի լավ հարաբերությունների առկայությունը: Դրա համար բավականին օգտակար է թվում, ինչպես դա արեց Բեթման-Հոլվեգը ռայխստագի վերջին նիստի ժամանակ, Թուրքական խորհրդարանում Պապին շնորհակալության խոսքեր ուղղել նրա բարեգործական գործունեության համար, որը հավասարապես օգուտ է բերում բոլոր մարդկանց:

Բոլոր դեպքերում հարկավոր է խուսափել այն ամենից, ինչը կարող է բարդացնել Գերմանիայի դրությունը Պապի հետ հարաբերություններում Հայկական հարցի առնչությամբ: Անհրաժեշտ է նաև աշխատել արտասահմանում ժամանակին կանխել հայերի կոտորածների վերաբերյալ հետագա սադրանքները, քանի որ նման սարսափելի հարցում Գերմանիան կհայտնվի չափազանց դժվար կացության մեջ, քանի որ նա չի կարող պարզապես հայ քրիստոնյաներին թողնել առանց ուշադրության, և, բացի դրանից, նողկալի գործողությունների կատարման ժամանակ արդեն այսպես թե այնպես պետք է զգույշ լինի:

Այս իմաստն ունեին Գյուրջիի դատողությունները, որը, հավանաբար, տպավորություն է գործել իր զեկույցով Կոստանդնուպոլսում: Բացի այդ, նա ընդգծեց, որ Թուրքիայի կողմից դիվանագիտական ներկայացուցչության հաստատումը Շվեյցարիայում շատ

ցանկալի է և թերևս արդարացվում է մեծ թվով թուրքերի (հայերի, հույների) ներկայությամբ, որոնք գտնվում են Արևմտյան Շվեյցարիայում:

Konst./Ankara, 171, zu Ab. 30454[15].
ԱԲՊԱՏ, էջ 245-247

№ 30

ԴՐԵԶԴԵՆԻ ՍԱՔՍՈՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԱՐԽԻՎԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՑ

Քրիստիանիա, 28 հոկտեմբերի 1915
Դեսպանություն

Օրիորդ Տորա Վեդել-Յարլսբերգը, որը նախկինում զբաղվում էր միսիոներական գործունեությամբ Հայաստանում, իսկ վերջին ժամանակներս աշխատում է Կարմիր խաչի աշխատակազմում, Նորվեգիա վերադառնալուց հետո գտավ ինձ և արտահայտեց իր ափսոսանքը Անգլիայի կողմից մեր հյուպատոսների նկատմամբ առաջադրվող բացարձակապես անհիմն մեղադրանքների կապակցությամբ, ինչը արձագանք է գտել նաև նորվեգական մամուլում: Հայերի հետապնդումները, ասաց նա, արժանի է ափսոսանքի: Սակայն յուրաքանչյուրի համար, ով ծանոթ է այդ իրադարձություններին, զայրացուցիչ է, երբ այդ ամենում ցանկանում են մեղադրել նաև գերմանական հյուպատոսներին: Էրզրումում մեր հյուպատոսության նախկին ղեկավարը իրեն պահեց փայլուն, ինչպես ինքը (օրիորդ Տորան) կարող էր անձամբ համոզվել դրանում: Նույնիսկ մի հայ ասել է նրա մասին՝ «Նա լավ մարդ է»: Նմանապես Հալեպի հյուպատոս Ռյոսլերի մասին նա լսել է միայն լավը: Այնուհետև օրիորդ Վեդել-Յարլսբերգն ավելացրեց, որ ինքը պատրաստ է իր դիտարկումների հիման վրա մամուլում հանդես գալ մեր հյուպատոսների հասցեին տարածվող այդ զրպարտության դեմ:

Ես սրտագին շնորհակալություն հայտնեցի նրան բարեկամական մասնակցության համար, սակայն տեղական մամուլում նրա հանդես գալու առաջարկին հավանություն չտվեցի:

Որքան էլ ցանկալի լինի, որ մեր հյուպատոսներին պաշտպանեն չեզոք երկրի կողմից, ես, այնուամենայնիվ, հարկ չհամարեցի ներկա պահին առիթ տալ տեղական մամուլում Հայկական հարցի հետագա քննարկման համար:

Sähsisches Haupitstaatsarchiv Dresden, Außenministerium,

Aktennummer, N 478, B 1.25.
ГИОГА, стр. 223.

№ 31

ԴՐԵԶԴԵՆԻ ՍԱՔՍՈՆԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԽԻՎԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՑ

Արտաքին գործերի
նախարարություն
N 44
հավելված 1 *Բեռլին, 7 նոյեմբերի 1915*

Պատճենը մեր առաքելություններին Կոստանդնուպոլսում, Վիեննայում, Աթենքում, Բեռնում, Բուխարեստում, Հաագայում, Ստոկհոլմում, Վաշինգտոնում, Սոֆիայում, Լուգանոյում, Մյունխենում, Դրեզդենում, Շտուտգարտում, Կարլսռուեում, Վեյմարում, Համբուրգում, Օլդենբուրգում, Դարմշտատում տեղեկացնում և անձնական անհրաժեշտ օգտագործման համար:

Քրիստիանիայի կայսերական դեսպանորդի նշած նորվեգական մամուլում մեր հյուպատոսների պաշտպանության վերաբերյալ դիրքորոշումն այստեղ ամբողջովին կիսվում էր: Բացի այլ խնդիրներից, հարցի (Հայկական) հասարակական քննարկումը, հաշվի առնելով թուրքական վերնախավի դյուրագրգռությունը, հայերին միայն վնաս կբերի:

Ցիմմերման

№ 32

ՀԱԼԵՊԻ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍ ՌՅՈՍԼԵՐԻ ՋԵԿՈՒՅԱԳԻՐԸ ՌԱՅԽՍԿԱՆՑԼԵՐ ԲԵԹՄԱՆ-ՀՈԼՎԵԳԻՆ

8 նոյեմբերի 1915թ.

Հայերի տեղահանությունը հասավ որոշակի բարձրակետի հոկտեմբերի կեսերին, ինչը թույլ է տալիս ակնառու տեսնել դրա ծավալները և օգտվելով պահից, հակիրճ ներկայացնել եզրակացությունները:

Ռանկեն համաշխահային պատմության մասին իր գրքում սաքսոնների նկատմամբ տարվող Կարոլինգների քաղաքականու-

թյան հետ կապված գրել է. «Անհնար է հերքել, որ օրենքների դաժանությունը պետք է ծնի հակազդեցություն այդ օրենքներին: Նմանատիպ խարդավանքների ժամանակ դա միշտ տեղի է ունենում: Այն գործողությունները, որոնք ձեռնարկվում են ընդդիմության առաջացումը կանխարգելելու նպատակով, նույնպես համարվում են պիտանի ընդդիմության առաջացման համար»:

Այս մեջբերումը կարելի է կիրառել նաև այն քաղաքականության վերաբերյալ, որը թուրքական կառավարությունը վարում է 1895թ. կոտորածից սկսած քայլերի նկատմամբ ավելի կամ պակաս հաճախականությամբ, թույլ տալով միայն որոշ շեղումներ: Դա հատկապես կիրառելի է թվում վերջին իրադարձությունների համար: Կառավարությունը հայերի դեմ ձեռնարկեց այն աստիճան դաժանության կանխարգելիչ միջոցառումներ, որոնք հազվադեպ են հանդիպում պատմության մեջ և այդպիսով առաջացրեց դիմադրություն երեք վայրերում՝ Ֆունդուջակում, Սուդիեում և Ուրֆայում:

Ես նախկինում արդեն հայտնել եմ Ֆունդուջակի իրադրությունների մասին: Մարտերը Սուդիեում (Անտիոքի մոտ չորս գյուղերում) ավարտեցին նրանով, որ դիմադրողները գաղտնի նավահանգստից հակառակորդի ռազմական նավերի կրակի տակ բարձրացան նավի վրա: Ինչպես հայտնում է հայկական կողմը, կանանց ու երեխաների թիվը կազմում է 6000 մարդ ...

Չնայած այդ փաստին և չնայած նրան, որ նրանք կարողացան կապ հաստատել հակառակորդի հածանավի հետ, բացարձակապես չկան որևէ ապացույցներ, որ այս շրջանում նախկինում մտածում էին ապստամբության մասին: Ավելի հավանական է, որ դիմադրության նրանց դրդեր տեղահանության անխուսափելի փորձը:

Ինչ վերաբերվում է Ուրֆայի դիմադրությանը, ապա այնտեղ նույնպես պետք է ենթադրել արտաքին ուժերի ազդեցությունը: Թվում է թե կարելի է ենթադրել, որ Վանից և Դիարբեքիրից եկածները կազմակերպեցին զանգվածային դիմադրությունը և իրենք էլ գլխավորեցին այն: Բավական էր ասել, որ կառավարության կանխարգելիչ միջոցառումները, տեղահանությունը և դրանց հետևանքը՝ իրենց ցեղի անխուսափելի ոչնչացումը և յուրաքանչյուրի սպանվելը իրենց մտքում էր, երբ Ուրֆայի ժողովուրդը որոշեց դիմադրություն ցույց տալ...

Իմիջիայլոց, տեղահանությունները շարունակվում են ամենալճռական ձևով և ամենասարսափելի հետևանքներով: Սովը և համաճարակները պատճառ են հանդիսանում բազմաթիվ մահերի

համար: Հալեպ տեղահանվածների շրջանում մահածության աստիճանը չափազանց բարձր է:

Վերջերս ես պատահաբար կարողացա պատկերացում կազմել այն ճանապարհի մասին, որով անցնում եմ տեղահանվածները: Հոկտեմբերի 21-ին Աֆրինի և Հալեպի միջև ընկած 60 կմ երկարությամբ ճանապարհահատվածի վրա ես տեսա չորս դիակ, որոնք ընկած էին ուղիղ փողոցի վրա, ընդ որում երկու դիակներն արդեն կիսով չափ հոշոտված էին շների և գիշատիչ թռչունների կողմից: Տեսնելով այդ երեք դիակներից առաջինը, ես մոտեցա առաջին իսկ իջևանատանը և նրա տիրոջից պահանջեցի, որ որևէմեկին գումարով ուղարկի թաղելու այդ դիակը: Նա ժպտաց, բայց կատարեց իմ ասածը:

Երբ ես հարցրի, թե ինչու է նա ժպտում, նա պատասխանեց. «Եթե դուք ուզում եք, ես կթաղեմ այդ դիակը, սակայն ինչու եք այդքան նշանակություն տալիս հատկապես այդ դիակին: Եթե միայն իմանայիք, թե որքան են դրանք այստեղ ընկած ամեն մի հովտում, ապա չէիք մտածի սա թաղելու մասին, որը երևում է ճանապարհից»: Եթե դա կարող է կատարվել բավականին աշխույժ ալեքսանդրետյան ճանապարհի վրա և անցնող զինվորներն ու ոստիկանները չեն հայտնում նման դեպքերի մասին, ապա միայն պատկերացնել կարելի է, թե ինչ դրություն է տիրում ներքին շրջանների ավելի պակաս մատչելի ճանապարհների վրա:

The Armenian Genocide during the First World War /W. and S. Gust (ed.) in cooperation with Taner Akcam: Documents from German State Archives. [A-35045. DE/PA-AA/ R14083. DuA Dok. 193. (re.gk).
1915-11-08-DE-001].
ГАОТОМС, стр. 268-269.

№ 33

ԳԵՆԵՐԱԼ ԼԻՄԱՆ ՖՈՆ ՍԱՆԴԵՐՍԻ ԶԵԿՈՒՅԱԳԻՐԸ

Պատճեն
Ռազմական միսիա *Կոստանդնուպոլիս,*
17 նոյեմբերի 1916

Կայսերական դեսպանությանը:

Նոյեմբերի 4-ից 10-ը ես գտնվում էի Զմյուռնիայում՝ նոր ձևավորված 56-րդ և 16-րդ դիվիզիաների զորատեսին, որոնք շուտով

պետք է ուղարկվեին եվրոպական ճակատ:

Երեքշաբթի, նոյեմբերի 9-ին, երեկոյան մոտ, երբ վերադառնում էի ավստրիական հրետանամարտկոցի զորատեսից, Դոկիայի մոտ հյուպատոս կոմս ֆոն Շպեեն ինձ հայտնեց, որ նոյեմբերի 8-ին և անցյալ գիշերը կատարվեցին հայերի բազմաթիվ ձերբակալություններ Զմյուռնիայում և որ այդ հայերը երկաթուղով տեղափոխվել են երկրի խորքերը:

Տարբեր տեղերից ես ստացա ավելի մանրամասն տեղեկություններ: Ինձ հավաստիացրեցին, որ ոստիկանությունը ամենաբիրտ ձևով գիշերը արթնացրել է, մահճակալներից հանել ծեր կանանց և հիվանդ երեխաներին, ձերբակալել է մի քանի հարյուր հայերի և անմիջապես նրանց տեղափոխել երկաթուղային կայարան: Փողոցում տիրում է մեծ հուզում այդ դեպքերի պատճառով:

Նոյեմբերի 10-ի առավոտյան ես հինգերորդ բանակի շտաբի պետ Քյազիմ-բեյին ուղարկեցի վալիի մոտ և խնդրեցի փոխանցել նրան, որ ես թույլ չեմ տա նման զանգվածային ձերբակալություններ և աքսորներ քաղաքում, որին սպառնում է թշնամին, ինչպես նաև ռազմական գործողությունների շրջանում:

Եթե ոստիկանությունն, այնուամենայնիվ, շարունակի նման գործողությունները, ես ստիպված կլինեմ գործի դնել ինձ ենթարկվող զորքերը և զենքի ուժով կարգելեմ նշված միջոցառումները:

Ես վալիին ժամանակ տվեցի մինչև կեսօր, որ նա որոշում կայացնի: Զմյուռնիայի հրամանատար գնդապետ Տրոմմերին, որ արդեն ծանոթ էր իրադարձություններին, ես մայոր Փրիգեի միջոցով տեղյակ պահեցի վերը նշված տեղեկությունների և այն միջոցների մասին, որոնք պետք է ձեռնարկվեն:

Մոտավորապես ժամը 13.30-ին մայոր Քյազիմ-բեյը վերադարձավ վալիի նստավայրից, որը գտնվում էր Բուրնաբադում և զեկուցեց ինձ, որ ձերբակալությունները և տեղահանությունը դադարեցված են և այլևս չեն կրկնվի:

Ճաշից հետո ինձ մոտ եկավ վալիի տեղակալ Կարաբիբերբեյը, և մենք նրա հետ մանրամասն զրույց ունեցանք:

Այդ նույն երեկոյան ինձ մոտ եկան երեք հույներ Ուրլիից, որը Զմյուռնիայի մոտ է (25000 հույն բնակչությամբ), օգնության խնդրանքով, քանի որ Ուրլիի տասը ամենահարգված և հարուստ քաղաքացիներ ձերբակալվել են այնտեղ ուղարկված երեսուն ոստիկանների կողմից և նետվել Զմյուռնիա քաղաքի բանտը:

Նոյեմբերի 11-ին, օրվա առաջին կեսին եղա Ուրլիի զորքերի զորատեսին, որտեղ անձամբ համոզվեցի այդ փաստի ճշմարտացի-

ության մեջ և այնտեղ տեղակայված զորքերի հրամանատարից ստացա մանրամասն զեկուցագիր:

Նոյեմբերի 11-ին, կեսօրից հետո ինձ անձամբ այցելեց վալին: Երկար զրույցի ընթացքում նա ինձ բացատրեց հայերի զանգվածային ձերբակալությունների պատճառները: Ես չէի կարող համաձայնվել այդ պատճառների հետ, որոնք չունեին բավարար հիմնավորումներ և ընդգծեցի, որ ռազմական դրությունը անպայման պահանջում է կատարյալ հանգստություն Զմյուռնիա քաղաքում, որը մեծ մասամբ բնակեցված է հույներով: Ես բացատրեցի վալիին, որ ես, իբրև գլխավոր հրամանատար, չեմ հանդուրժի որևէ գործողություններ իմ շրջանում, որոնք խախտում են հանգստությունը: Այնուհետև ես ասացի, որ ինքը կարող է վստահել ինձ: Նա համաձայնվեց ինձ հետ և խոստացավ գրավոր հայտնել ինձ ամեն ինչի մասին: Ես պահանջեցի նաև անհապաղ հետաքննել անմեղ ձերբակալված Ուրլիի բնակիչների գործերը:

Երեկոյան ես մեկնեցի: Վալին կայարանում էր: Շուտով Պանդերմա իմ վերադառնալուց հետո բարձրագույն հրամանատարությունը ստացավ վալիի զեկուցագիրը, որի մեջ հայտնվում էր, թե որ շրջաններ են տեղահանվել հայերը և որ անմեղներին հնարավորություն կտրվի վերադառնալ Զմյուռնիա:

Նորին թագավորական գերազանցության
հեծելազորի գեներալ Լիման ֆոն Սանդերս

"Allgemeine Missions-Zeitschrift". Monatshefte für geschichtliche und theoretische Missionskunde. Sechsunddreißigster Jahrgang. 1919. Heft 3, März, s. 57-64
ГИОГА, стр. 273-274.

№ 34

ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԴԻԿՀՈՖԻ ԶԵԿՈՒՅԱԳԻՐ

Պատճեն

Բեռլին
19 նոյեմբերի 1918

1915 թ. ուշ ամռանը թուրքական կառավարության հրամանով Բաղդադի հայ բնակչությունը տեղահանվեց Մոսուլ: Ֆելդմարշալ

ֆոն դեր Գոլցի Բաղդադ ժամանելուց անմիջապես հետո (1915թ. դեկտեմբեր) Միջագետքի նախկին գլխավոր հրամանատար Նուրեդդին-բեյը հրաման տվեց այդ հայերի Մոսուլից տեղահանության, ինչպես նաև տեղի հայերին Եփրատից այն կողմ տեղահանելու մասին: Ֆելդմարշալը պատահաբար իմացավ այդ, ռազմական առումով չհիմնավորված, միջոցառման մասին և վճռական բողոք ներկայացրեց նահանգի ղեկավարությանը, ճիշտ է՝ սկզբում առանց որևէ հաջողության: Գործը այդպես շարունակվեց մի ամբողջ ամիս, իսկ ֆելդմարշալը կարողացավ հասնել միայն նրան, որ հայերին թողեցին Մոսուլում՝ սպասելու հետագա հրահանգների: Երբ մինչև 1916թ. հունվարի կեսերը Կոստանդնուպոլսից որևէ հրահանգ այդպես էլ չստացվեց, ֆելդմարշալը օգտվեց գլխավոր հրամանատարի իր լիազորություններից և արգելեց Մոսուլի վալիին տեղահանել հայերին: Վալին այդ մասին հայտնեց Կոնստանդնուպոլիս: Մինչև հունվարի 27-ը ոչ մի պատասխան չկար, միայն եկավ տեղեկություն այն մասին, որ կառավարությունը պնդում է տեղահանության վրա: Ֆելդմարշալը հեռագրով խնդրեց անհապաղ իրեն ազատել պաշտոնից: Միայն այդ ժամանակ Էնվեր փաշան պատասխանեց սիրալիր հեռագրով, հավաստիացնելով, որ հայերը կմնան Մոսուլում, սակայն ֆելդմարշալին մատնանշեց, որ գլխավոր հրամանատարի իրավասությունները նրան իրավունք չեն տալիս միջամտելու թուրքական կայսրության ներքին գործերին:

Ֆելդմարշալն ուզում էր և այս դեպքում պնդել պաշտոնից իր ազատման վրա, սակայն հրաժարվեց այդ մտադրությունից, քանի որ այդ գործում նա, այնուամենայնիվ, հասավ իր ուզածին և, բացի դրանից, նա իրեն պարտավորված էր զգում մնալ իր պաշտոնին, ելնելով Քութ-էլ-Մարում ստեղծված ռազմական ծանր դրությունից:

Դեսպանատան խորհրդական Դիկհոֆ

"Allgemeine Missions-Zeitschrift". Monatshefte für geschichtliche und theoretische Missionskunde. Sechsunddreißigster Jahrgang. 1919. Heft 3, März, s. 57-64
ГИОГА, стр. 274-275.

№ 35

ՔՈՒՅՐ ԱԼՍԱ ՅՈՀԱՆՍՈՆԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1915թ. ԿՈՏՈՐԱԾԻ ՄԱՍԻՆ

Ա.Յոհանսոնը, Մուշի *[20 նոյեմբերի 1915]*

1915թ. կոտորածը Հայաստանում

Անիրազեկ մարդկանցից նա, ով կլսի վերջին ամիսներին հայերի նկատմամբ կատարված ահավոր չարագործությունների մասին, սկզբում կարող է կասկածամտորեն վերաբերվել հաղորդման ճշմարտացիությանը: Սակայն հետո, թերևս, հարց կհետևի, թե ինչպե՞ս բանը հասավ դրան:

Քանի որ մենք եղել ենք բուն երկրում, մենք տեսել ենք թե ինչպես այն աստիճանաբար գնում էր դրան (բնականաբար, ես կարող եմ խոսել միայն երկրի խորքի շրջանների մասին, որտեղ մենք այդ ամենը վերապրեցինք):

Զորահավաքի առաջին իսկ օրերից սկսվեց հայերի թալանը: Նրանցից խլվում էր ոչ միայն այն, ինչը կարող էր պետք լինել ռազմական կարիքների համար, այլև ընդհանրապես այն ամենը, ինչը արժեք ուներ: Ցանկացած թուրք կարող էր մտնել խանութ կամ տուն և վերցնել այն, ինչ ցանկանար:

Ճշմարիտ է, որ հայերի մտածելակերպը հեռու էր գերմանասիրականից և ավելի շատ ռուսասիրական էր: Անգլիացիներից նրանք նույնպես ոչինչ չէին սպասում: Թուրքերը սատանայական խորամանկությամբ հայերի այդ նույն տրամադրությունը առաջացրեցին նաև Գերմանիայի նկատմամբ, բնականաբար, այն նպատակով, որ հետո ներկայացնեն դրա ապացույցները: Այսպես, օրինակ, մեր՝ քույրերի մասին հայերի շրջանում տարածվում էին այնպիսի անհավատալի պատմություններ, որպեսզի մեր հանդեպ առաջանա ատելություն:

Քանի որ պատերազմը սկսվել էր, ապա, անշուշտ, զորակոչային տարիքի բոլոր հայերին տարան զինվորական ծառայության, լինի դա հիվանդ, կույր, թե կաղ, բացառությամբ նրանցից, ովքեր դրա դիմաց փրկագին վճարեցին:

Այնուհետև, սնունդի համար անհրաժեշտ ամեն բան պետք է տարվեր թուրքական սահմանի մոտ: Ո՞վ պետք է դա աներ: Դե իհարկե հայերը: Եվ քանի որ կառավարությունը նրանցից խլել էր բոլոր անասուններին այլ նպատակների համար, ապա հենց նրանք իրենց ուսերին պետք է կրեին այդ բեռները: Այժմ Մուշի և Էրզրումի շրջաններում ձմեռը շատ երկար է ու խիստ, և մարդկանց հաճախ հարկավոր է լինում 2-3 շաբաթ տեղ հասնելու համար: Մարդիկ դրան բացարձակապես պատրաստ չեն, չունեն հագուստ և փող, իսկ ով ինչ-որ բան ուներ իր հետ, վերցրեցին ուղեկցող ժանդարմները:

Երեխաներից, ծերերից և փրկագնվածներից բաղկացած այս բեռնակիրներից շատերը մնացին ճանապարհին ցրտի և զրկանքների հետևանքով: Եթե որևէ մեկը թուլության պատճառով ընկնում էր, ապա ծեծվում էր նրանց ուղեկցող ժանդարմների կողմից այնքան ժամանակ, մինչև փորձում էր շարունակել ճանապարհը կամ մահացած ընկնում էր գետնին: Եվ այդ ժամանակ երկրորդ ցրտահարված ընկերը մահացածից հանում էր սակավ հագուստը, որպեսզի կարողանա փոքր-ինչ իրեն պաշտպանել ցրտից: Լավ էր գոնե, որ ցանկացած խմբից, որը շարժվում էր Մուշից, 1/8 - 1/4-ը վերադառնում էր կենդանի: Թեև քրդերին էլ էին տանում իբրև բեռնակիրներ, սակայն նրանք ամեն անգամ փախչում էին: Եվ այն, որ հայերը քիչ թե շատ փորձում էին փախչել, ով կարող էր, հազիվ թե կարելի է այդքան մեծ մեղք համարել:

Հետո պատմություններ եղան ժանդարմների հետ կապված գյուղերում: Գյուղերում և շրջակայքում ժանդարմներ էին գրանցվում ազատ մարդիկ, որոնք չունեին որևէ զբաղմունք և որոնք այժմ ունեին անսահմանափակ իշխանություն թալանելու համար, քանի որ կառավարությունը հրահանգ է տվել պատժել նրանց, ովքեր ինչ-որ բանում կմերժեն ժանդարմին կամ զինվորին: Այն ամենը, ինչ այստեղ կատարվեց, ճնշումների և անմարդկայնության երկար և մռայլ պատմություն է: Միայն որոշ դեպքերում հայերը դիմադրություն ցույց տվեցին՝ թուրքերի բռնություններից կանանց պաշտպանելու համար: Դա բերում էր նրան, որ գյուղը մասամբ կամ ամբողջությամբ այրվում էր: Քանի որ հայտարարված էր սրբազան պատերազմ, մենք տեսանք, թե ինչին դա հասցրեց: Կրակոտ ճառեր էին արտասանվում այն մասին, որ «քանի որ մենք բոլորս սրբազան պատերազմ ենք մղում քրիստոնյաների դեմ, ապա նախ և առաջ պետք է ոչնչացնենք քրիստոնյաներին երկրի ներսում»: Բոլորը հաշվի էին առնում այն, որ ռուսները առնվազն կհասնեն մինչև Մուշ, ուստի վճռվեց, «եթե նրանք, այդքան հասնելու են, ուրեմն սկզբում մենք կոչնչացնենք հայերին, իսկ դրանից հետո թող նրանք փորձեն գալ»: 1914թ. նոյեմբերին պաշտոնապես ընդունվում էր, որ նրանք միայն առիթ են փնտրում կոտորածի համար, հենց որ այդ առիթը կգտնեն, ոչ մի հայի չեն թողնի կենդանի:

Այսպես անցավ ձմեռը և ամեն օրվա մասին մենք մտածում էինք, որ այժմ ամենաուժեղ կարիքն է եկել: Մարտին մենք լսեցինք հուզումների մասին Վանում, սակայն հույս ունեինք, որ լուրերը չափազանցված են, այնուամենայնիվ, աստիճանաբար սկսեցին հայկական ու թուրքական կողմերից տեղեկություններ ստացվել, որոնք,

որքան էլ տարօրինակ է, համընկնում էին միմյանց հետ, միայն թե թուրքերի տեղեկությունները ավելի հեռու էին գնում: Սպանները և չինովնիկները հպարտությամբ պատմում էին մեզ, որ Վանի հայերը այժմ կոչնչացվեն, «յուրաքանչյուրը կկտրտվի մանր կտորների»:

Ռուսները Վան մտան ընդամենը մի քանի շաբաթվա ուշացումով: Մայիսի սկզբին մենք լսեցինք Բիթլիսի կոտորածի մասին, և Մուշում ամեն ինչ նախապատրաստված էր կոտորածի համար: Այդ պահին ռուսները եկան Լիս (Մուշից 16 ժամվա հեռավորության վրա), այս անգամ դա դարձավ Մուշի փրկությունը, քանի որ հիմա ամբողջ ուշադրությունը կենտրոնացված էր այնտեղ, սակայն ամեն օր երկյուղը մեծանում էր: Ամեն մի հայ, որը ինչ-որ պետական պաշտոն էր զբաղեցնում, ազատվեց պաշտոնից և գաղտնի հեռացվեց: Այս պահից սկսած սպանում էին նույնիսկ բեռնակիրներին, երբ նրանք պարենով հասնում էին ճակատ, սակայն ամեն անգամ մեկին կամ մի քանիսին հաջողվում էր փախչել: Այդ ժամանակ Էրզրումից մինչև Վանա լիճ ճակատից հետ ընկած երկաթգծի մի ամբողջ հատված քանդել էր զինվորների կողմից, այստեղից ու այնտեղից Մուշ էին գալիս գաղթված կանայք երեխաների հետ՝ հնարավոր չէ փոխանցել թե ինչ վիճակով և ինչ էին նրանք պատմում:

Հունիսի կեսերին մութասերիֆ Սիրվեթ բեյը (Էնվեր փաշայի մոտ ընկերը) կարգադրեց զանգել մեզ, երկու քույրերիս, և ասաց, որ մենք պետք է մոտ օրերս մեկնենք Մամուրեթ-ուլ-Ազիզ: Գերմանական և թուրքական կառավարությունները որոշել են, որ բոլոր արտասահմանցիները պետք է մեկնեն այնտեղ: Մենք խնդրեցինք նրան թույլ տալ մեզ մնալ այնտեղ, սակայն նա շատ զայրացած էր, գոռում էր մեր վրա, թե եթե մենք կամավոր չմեկնենք, նա մեզ ուժով կուղարկի: «Ես դրա իրավունքը ունեմ»: Նա նաև ասաց, որ մենք մեզ հետ կարող ենք վերցնել մեր ծառայողներին, սակայն այն հարցին, թե արդյոք վտանգ չկա նրանց համար, նա պատասխանեց. «Ձեզ հետ ոչինչ չի պատահի, սակայն եթե նրանք տեսնեն հայի՝ գլուխը կկտրեն»:

Սակայն մյուս կողմից, մեզ բարեկամաբար ասվեց, որ հարկավոր չէ մեկնել, քանի որ ճանապարհին մեր դեմ ինչ-որ վատ բան է ծրագրավորված: Հունիսին բազմաթիվ զինվորականներ շուկայում գրգռված խոսում էին այն մասին, որ Մուշում դեռ հայեր են ապրում:

Հուլիսի 10-ի երեկոյան սկսվեց ուժեղ հրաձգություն, որը տևեց մի քանի ժամ: Հաջորդ առավոտ ամբողջ քաղաքը զինված էր, բնականաբար, ոչ մի հայ փողոց դուրս չեկավ: Ես այնուհետև գնացի մութասերիֆի մոտ և խնդրեցի նրան, որ նա այդուհանդերձ հոգ տա-

նի մեր տների անվտանգության մասին: Նա շատ զայրացած էր, ասաց, որ այդպես էլ մեզ պետք է՝ ինչո՞ւ մենք չենք հեռացել: Այժմ նա ի վիճակի չէր ինչ-որ բան անել մեր համար: Ամբողջ քաղաքը պաշարված էր շաբաթներով՝ չորս կողմը տեղադրված էին 11 հրանոթներ, 2000 զինվորներ հատուկ եկել էին Մուշ, բացի այնտեղ եղած զինվորների:

Կեսօրին մութասերիֆը հավաքեց բոլոր հարուստ հայերին իր մոտ և ասաց նրանց, որ ամբողջ բնակչությունը երեք օրվա ընթացքում պետք է լքի քաղաքը: Իրենց ընտանիքները նրանք կարող էին թողնել այնտեղ, որտեղ ցանկանան: Նրանց ամբողջ ունեցվածքը պատկանում է կառավարությանը: Հարուստները, որոնք դեռ որոշ գումար ունեին, համաձայնվեցին, նրանք կարծում էին, որ այդպիսով նրանք համենայն դեպս ողջ կմնան: Իսկ մնացած հայերը (իհարկե, ողջ էին մնացել շատ քիչ թվով տղամարդիկ) գտնում էին, որ նման պայմանները նշանակում էին մահ, և ուստի որոշեցին, որ ավելի լավ է նրանք միասին մահանան իրենց տներում, իսկ եթե զինվորները բռնի մուտք կգործեն այնտեղ, ապա նրանք կստիպեն, որ թուրքերը թանկ վճարեն իրենց կյանքի համար: Ինչպես արդեն նշվել է, հատկացված էր ընդամենը երեք օր: Սակայն արդեն մի քանի ժամ անց զինվորները սկսեցին ներխուժել մեզնից ձախ ընկած տները (մեր տնից մենք շատ բան կարող էինք տեսնել և լսել): Շատ կանայք իրենց երեխաների հետ, ինչպես նաև վերջերս ամուսնացած աղջիկները վազեցին դեպի մեր տուն:

Հաջորդ օրը, հուլիսի 12-ին, վաղ առավոտյան մենք լսեցինք հրացանների մի քանի կրակոցներ և անմիջապես սկսվեցին հրանոթների կրակոցները: Դե իսկ քաղաքի ծայրամասերի հրածգությունը, իհարկե, կարիք չկա նկարագրել: Բացի զինվորներից, զինված էին Մուշի բոլոր թուրքերը և նրանք բաշխված էին զինվորների միջև այնպես, որ, անշուշտ, գիտեին, թե որտեղ կարելի է բռնել «որսին»: Այստեղ և այնտեղ տներից բացում էին պատասխան կրակ ի նշան վերջին դիմադրության: Շուտով բոլոր անկյուններում կրակ բռնկվեց: Հաջորդ առավոտ մեր տան մոտով անցավ կանանց և երեխաների առաջին հավաքված մեծ ամբոխը: Ես դեռևս ի վիճակի չեմ նկարագրելու տեսածս՝ կարմրած, լացող...

Արդեն առաջին օրը ջարդվեցին մեր որբանոցի դարպասները, պահանջում էին, որ ես բացեմ, փնտրում էին փախածներին: Մեր գյուղերի բնակիչներից մի քանիսը, որոնք նախորդ օրը եկել էին մեզ մոտ և հանկարծակի կրակոցների պատճառով առավոտյան չէին կարող հեռանալ, հայտնաբերվեցին: Բացի դրանից, մի քանի աղջիկ-

ներ և մի կին, որոնք կանգնած էին իմ կողքին, գնդակահարվեցին: Երրորդ օրը կրկին եկան բազմաթիվ սպաներ և զինվորների ամբոխ մութասերիֆի գրությամբ այն մասին, որ բոլորը, ովքեր գտնվում էին մեր տանը, պետք է հանձնվեն, ամբողջ ժողովուրդը պետք է ուղարկվի Ուրֆա: Միայն երեք աղջիկներ, որպես սպասուհիներ ծառաների հետ միասին պետք է մնային մեր տանը: Այնուհետև ես, չնայած ուժգին հրաձգությանը, բարձրացա վեր՝ դեպի մութասերիֆը, որը իբրև գլխավոր հրամանատար կանգնած էր հրանոթներից մեկի մոտ: Բոլոր իմ խնդրանքները և աղերսանքները չօգնեցին, տները ոչնչացվում էին: Առանձնապես սանձարձակ էր իրեն պահում մի բժիշկ (Ազատ բեյ), ընդ որում, նա ձգտում էր ինձ տուն ուղարկել և շատ անգամ ես ստիպված էի խնդրել կապիտանին հետևել բժշկին, հակառակ դեպքում նա կգնդակահարեր ոմանց արդեն այգում: Եթե ես իմանայի, որ երեխաներին և կանանց տանում են անկասկած մահվան, կարծում եմ, ես գործը կհասցնեի նրան, որ մեզ բոլորիս կսպանեին որբանոցում, սակայն ինձ երդումներով հավաստիացնում էին, որ նրանք անպայման պետք է հասցվեն Ուրֆա:

Նույն օրը երեկոյան մենք ստացանք առաջին ահավոր լուրը: Որոշ հացթուխների, որոնք պահանջվել էին կառավարության կողմից, հաջողվեց ամեն ինչ լսել, քանի որ ամեն ինչի մասին բարձրաձայն խոսվում էր շուկայում: Երբ մեր տներից բոլորը գնացին, մեզ պաշտպանության համար տվեցին երկու ժանդարմների, նրանք նույնպես մեզ պատմում էին այդ ահասարսուռ պատմությունները: Տղամարդիկ, որոնք կենդանի բռնվեցին (նրանք շատ քիչ էին) անմիջապես գնդակահարվեցին քաղաքից դուրս: Կանանց երեխաների հետ տանում էին մոտակա գյուղերը, կապում էին...[7] տները և այրում: Մյուսներին նետում էին գետը: Բարձրաստիճան սպաները անընդհատ գալիս էին և հպարտությամբ լի պատմում էին նույն բանը: Ամեն ինչ համապատասխանում էր ճշմարտությանը, բացառությամբ ... կանանց թվաքանակի, որոնց տարել էին քրդերը կամ թուրքերը, Մուշի ամբողջ շրջանում գրեթե ամեն ինչ, ինչը կոչվում էր հայկական՝ ոչնչացված է, շրջանի սահմաններից դուրս ոչ ոք չի եկել:

Ամբողջ շաբաթ տևեց հրաձգությունը, միայն հրանոթներից կրակում էին երեք օր: Հատկապես երկյուղալի էր գիշերներին: Բոլոր կողմերից հարևանները կարող էին պատուհաններից կրակել մեր տների վրա: Իսկ պատերը այնքան էին ծակծկված գնդակներով, որ հաճախ մենք չգիտեինք, թե որտեղ թաքնվենք:

---

[7] Բառը չի ընթերցվում:

Դիակների, ինչպես նաև տներում բազմաթիվ այրվածների հոտը անտանելի էր: Այստեղ և այնտեղ շները պատառոտում էին դիակները...

Մուշում կար մոտ 25000 հայ, Մուշի մեջ են մտնում 300 գյուղեր, որոնք գերազանցապես հայկական էին: Երբ երեք շաբաթ անց մենք մեկնում էին Մուշից, ամեն ինչ այրված էր: Ճանապարհին ամենուրեք, որտեղ մենք հանդիպում էինք քրդերի, նրանք մեզ պատմում էին նույն պատմությունները: Ճանապարհին բազմաթիվ դիակներ էին, սակայն ընդամենը անհատներ էին, կանանց դիակները բոլորը մերկ էին:

Այնուհետև մենք եկանք Մամուրեթ-ուլ-Ազիզ: Այնտեղ մենք տեսանք լեփ-լեցուն որբանոցներ մի քանի դաստիարակների հետ և դա ամենն էր, ինչ մենք տեսանք: Այնտեղից ես ուզում եմ վերապատմել այն, ինչ մեզ պատմեցին այնտեղի միսիոներները:

«Այնտեղ մայիսի սկզբին սկսվեցին դաժանագույն կոտտանքները: Ձերբակալված մարդկանց կալանակոճղեր էին հագցնում, ձիերի նման ոտքերը պայտում էին մեխերով, քաշում էին մորուքի մազերը, թարթիչները, մատների եղունգները, ատամները, կախում էին գլխիվայր և այլն: Ռնականաբար շատերը մահանում էին դրանից, սակայն ոմանք, այնուամենայնիվ, վերցվեցին բժիշկների, հատկապես միսիոներների խնամքի տակ և այդպիսով մեզ հաջողվեց տեսնել նրանց: Որպեսզի կոտտանքների ժամանակ ձայները չլսվեն, բանտի չորս կողմը այդ նույն ժամանակ թմբուկ և սրինգ էին նվագում: Ոմանք այդ ահավոր ձայների տակ խոստովանում էին իրենց մեղքը ինչ-որ հանցանքների մեջ, միայն խոստովանելու համար, հույս ունենալով, որ դրանից հետո ազատ կարձակվեն: Այնուհետև հունիսի կեսերին պարոն Էթեռը վալիից խնդրեց 3 օր, որպեսզի մարդիկ այդ ընթացքում կարողանան հանձնել իրենց զենքը: Վալին պատասխանեց պարոն Էթեռին, որ նա մարդկանց ուզում է ասել, որ եթե միայն նրանք հանձնեն իրենց զենքը, ինչ էլ որ լինի, ամեն ինչ կներեն: Այսպիսով նա հավաստիացրեց, որ նրանց հետ ոչինչ չի պատահի: Պարոն Էթեռը հավատաց դրան, գնաց գյուղ, սկսեց համոզել ու հավաստիացնել, որ հարկավոր է միայն հանգիստ հանձնել իրենց ունեցած ողջ զենքը: Եվ այնտեղ, որտեղ նրանք այդ արեցին, կառավարությունը սկսեց նրանց խմբերով ձերբակալել, և մարդկանց առաջին խումբը արտաքսվեց հուլիսի 1-ին: Դրանք 2000 զինվորներ էին, որոնց, ինչպես ասում էին, պետք է ուղարկեին Հալեպ՝ ճանապարհներ կառուցելու: Սակայն ժողովուրդը երկյուղած էր, քանզի վատ լուրեր էին շրջում: Այսպիսով, վալին կարգադրեց, որ

կրկին խնդրեն պարոն Էթետին, որ նա մի կերպ հանգստացնի բնակչությանը, վալիին շատ վշտացնում էր այն, որ նրանց մոտ այդքան զզվելի մտավախություններ կան: Սակայն այն 2000-ին դաժանորեն սպանեցին կիրճերում, որոնք Մուշից ճանապարհի մի քանի ժամվա հեռավորության վրա են: Նրանցից մի քանիսին մթության մեջ հաջողվեց փրկվել և փախչել:

Հաջորդ օրը՝ կրկին 2000-ը Դիարբեքիրի ուղղությամբ ուղարկվեց, նրանց մեջ կային կառավարությանը կից հիմնարկներում աշխատող մեր որբ պատանիներից: Այս խմբից նույնպես մի քանիսին հաջողվեց փրկվել: Նրանք, անշուշտ, կապված էին, սակայն հուսալքության մեջ նրանց, այնուամենայնիվ, հաջողվեց դա անել: Քանի որ կառավարությունը տեսնում են, որ ոմանց հաջողվում է փախչել, հետագայում նախապես մարդկանց 3 օր թողնում էին առանց սննդի և ջրի՝ նրանց ուժասպառ անելու համար:

Հուլիսի 3-ին 6000 ընտանիք, բոլորը հարուստ, ինչպես առաքելականներ, այնպես էլ բողոքականներ՝ ընդհուպ մինչև Մալաթիա, որոնցից բոլոր տղամարդիկ անխտիր սպանվեցին, այդ խմբից որոշ կանայք հասան Ուրֆա, սակայն ի՞նչ վիճակով:

Միևնույն ժամանակ տեղ հասան նաև Կեգիից, Էրզրումից, Տրապիզոնից, Սամսունից, Երզնկայից եկող խմբերի մնացորդները: Նրանցից մասնավորապես կրկին ողջ էին մնացել միայն կանայք և երեխաները: Մահվանից առավել վատ էր այն սարսափելի վերաբերմունքը, որին ենթարկվում էին խեղճ կանայք և աղջիկները:

Օգոստոսի վերջին Մամուրեթ-ուլ-Ազիզով կրկին եկավ մի ամբոխ 8000 հոգուց բաղկացած, և, որքան մեզ հայտնի դարձավ թուրքերից, նրանք բոլորը սպանվեցին: Դեռևս մնում էին որոշ տղամարդիկ (բողոքական), սակայն կառավարությունը ամբողջ ուժով ձգտում էր նրանց մահմեդական դարձնել:

Հոկտեմբերի սկզբին ես հեռացա Մուշից: Ճանապարհին դիակների կույտեր են: Հազիվ էի կարողանում տանել այդ տեսարանները: Մեզ նաև պատահում էին կանանց և երեխաների խմբեր, անվախ էր նրանց հայացքը: Նրանց ուղեկցող հեծյալ ժանդարմները անկեղծորեն պատմում էին, թե ինչեր են արել հայերի հետ ճանապարհին: Այն հարցին, թե «Ուր եք տանում նրանց», նրանք պատասխանում էին «Եթե նրանց այլևս ոչ որ չվերցնի, և նրանք չմահանան, մենք ստիպված կլինենք սպանել նրանց»:

Հատկապես Խարբերդում և Մուշում բազմաթիվ կանանց և աղջիկների իրենց մոտ վերցրեցին թուրքերը և քրդերը, այդ կանանցից շատերը ամուսիններ ունեն Ամերիկայում:

//Կարելի է ասել, որ հայերի, որպես ժողովրդի վերջը տրված է: Թերևս մի քանի հազար դեռ գոյություն կունենան: Սակայն նրանք նույնպես պետք է ոչնչացվեն:

Կոստանդնուպոլսում գլխավոր հյուպատոս պարոն Մորգմանին *Արմա Յոհանսոն*

№ 36

ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ՀԱՅԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՍԻՈՆԵՐ ՔՈՒՅՐԵՐ Բ.ՌՈՆԵՐԻ ԵՎ Պ.ՇԵՖԵՐԻ ԶԵԿՈՒՅՑՈՒՄ

(Բ.Ռոներ, Պ.Շիֆեր քույրեր Հալեպում)
Ուղարկված է տնօրեն Վ.Շուխարդի կողմից
Հույժ գաղտնի: Հրապարակման ենթակա չէ:

[Հալեպ], նոյեմբեր-դեկտեմբեր 1915

Քույրեր Բեատրիչե Ռոների և Պաուլա Շեֆերի զեկույցները

1. Քույր Պաուլա Շեֆերի 16.11.1915թ. զեկույցը

Ես հենց նոր եմ վերադարձել Բախչե Օսմանիեի դաշտավայրից, որտեղ առանց ծածկի դաշտերում և ճանապարհներին պառկած են հազարավոր տեղահանվածներ են, որոնք ենթարկվում են ավազակ թափթփուկների կամայականություններին: Երեկ գիշերը, մոտավորապես ժամը 12-ին հարձակում կատարվեց վրանային ճամբարի վրա, հարձակվողները 50-ից 60 հոգի էին: Ես տեսա ծանր վիրավոր տղամարդկանց և կանանց՝ մարմինները պատառոտված, գանգերը ջարդված, և ընդհանրապես դանակի սարսափելի հարվածներ հասցված: Բարեբախտաբար, ես ինձ հետ հագուստ ունեի և կարող էի փոխել նրանց արնաթաթախ շորերը և հասցնել նրանց մոտակա ապաստարան, որտեղ նրանք վերցվեցին խնամքի տակ: Նրանցից ոմանք այնքան էին հյուծվել՝ շատ արյուն կորցնելուց, որ այդ ընթացքում, թերևս, մահացել էին: Մեկ այլ ճամբարում մենք գտանք 30-ից 40 հազար հայ: Ես կարողացա նրանց հաց բաժանել, հուսալքված և կիսաքաղց, նրանք հարձակվեցին հացի վրա, մի քանի անգամ ինձ համարյա ձիու վրայից քաշելով վար էին իջեցնում: Չորս կողմը մի քանի անթաղ դիակներ էին և միայն գումար վճարելով կարելի էր ժանդարմներին համոզել, որ թույլ տան նրանց թաղել: Մեծամասամբ հայերին մերժում են հանգուցյալներին վերջին ծառայու-

թյունները մատուցել: Տիֆի ուժեղ համաճարակ է տարածվել ամենուրեք, գրեթե յուրաքանչյուր երրորդ վրանում հիվանդ կա: Գրեթե բոլորը ճանապարհ են ընկնում ոտքով, կանայք և երեխաներն իրենց ողորմելի ունեցվածքը տանում են ուսերին, ես հաճախ եմ տեսել նրանց բեռի ծանրությունից ուժասպառ վիճակում, սակայն զինվորներն անընդհատ նրանց առաջ էին մղում խզակոթերի և սվիններով հարվածներով: Ես վիրակապեցի արյունաքամ լինող կանանց վերքերը, որոնք հասցվել էին սվիններով հարվածներով: Երեխաներից շատերը կորցրել են իրենց ծնողներին և կանգնած էին այստեղ առանց որևէ պաշտպանության: Օսմանիեից 2 ժամվա ճանապարհի վրա դաշտում ընկած էին լրիվ լքված երկու տղամարդ: Այն բանից հետո, երբ իրենց ուղեկիցները շարժվեցին առաջ, նրանք ամբողջ օրերով պառկած էին առանց սնունդի և որևէ կաթիլ ջրի: Նրանցից մնացել էր մաշկն ու ոսկորները և միայն թույլ շնչառությունն էր հասկացնում, որ նրանց մեջ դեռևս կյանք կա: Գերեզմաններում ընկած էին չթաղված կանայք և երեխաներ: Օսմանիեում թուրք չինովնիկներն ինձ հետ բավականին սիրալիր էին: Նրանք ինձ սայլ տվեցին, որպեսզի հավաքեմ մահացածներին և տեղափոխեմ նրանց քաղաք:

2. Մամուրում վրանային ճամբարի այցելության մասին թույլ Բեատրիչե Ռոնների 26.11.1915 զեկույցը

Հազարավոր փոքր ցածր վրաններ, որոնք կարված են բարակ կտորից, մարդկանց չտեսնված քանակություն, որոնք պատկանում են ամենատարբեր տարիքային և հասարակական խմբերին: Նրանք մեզ նայում են մասամբ զմայլված, մասամբ անտարբեր՝ լի հուսալքությամբ: Աղքատ և քաղցած երեխաների և կանանց խումբը կրկնակոխ հետևում է մեզ: «Խանո՛ւմ, հաց տուր: Խանո՛ւմ, ես քաղցած եմ, մենք երեկ և այսօր ոչինչ չենք կերել»: Բավական է միայն նայել այդ ագահ, գունատ, հյուծված դեմքերին, որ արդարացում գտնես այդ խնդրանքներին: Այստեղ հաջողվեց բերել մոտ 1000 բոքոն հաց, բոլորը ագահորեն հարձակվում են մեր վրա: Հացի բաշխումով զբաղվող հոգևորականները հազիվ կարողանում են պաշտպանել իրենց կյանքը: Հացը բոլորովին չի հերիքում, իսկ հերթական հացը անհնար է ձեռք բերել: Քաղցածների մեծ ամբոխ, ողորմություն խնդրելով կանգնած է մեր առջև, ժանդարմները ուժով պահում են նրանց: Անսպասելի հրահանգ է ստացվում՝ շարժվել առաջ: Նա ով չի հասցնում արագ հավաքել վրանը, նրա վրանը կտրտում են սվիններով: Պատրաստ կանգնած են երեք սայլերը և ուղտերի քարավանը: Մի քանի ունևոր մարդիկ արագ վարձեցին սայլերը, իսկ մյուս-

ները, պակաս ունևորները, իրենց ունեցվածքը բարձեցին ուղտերին: Օդը լցվել էր ծեր, խեղճ և հիվանդ մարդկանց լացուկոծով. «Մենք այլևս չենք կարող, թույլ տվեք մենք այստեղ մեռնենք»: Սակայն նրանք պետք է շարժվեն առաջ: Որոշ մարդկանց համար մենք համենայն դեպս կարող էինք վճարել ինչ-որ անասուն ձեռք բերելու համար, մյուսներին մի քիչ մանրադրամ տալ, որ հաջորդ կանգառին նրանք կարողանային իրենց համար հաց գնել, բաժանվում է նաև հագուստ, որը կարվել է Ադանայի միսիոներական բաժանմունքում: Շուտով անվերջ շարասյունը կշարժվի առաջ: Մնում են միայն ամենաանօգնականները և մի քանի թարմ գերեզմաններ: 200 աղքատներ, ծերեր և հիվանդներ, հավանաբար, մնացել են այնտեղ և նրանց հարկավոր է ևս մեկ անգամ մի քիչ օգնություն հասցնել: Սկսված անձրևներից և ուժեղ ցրտերից հետո աղետալի վիճակը սաստկացավ հարյուրապատիկ անգամ: Ամենուրեք քարավանները իրենցից հետո թողնում են մահացածների, մանուկների, հիվանդների, որոնք, մնալով անօգնական, մահանում են: Չորս կողմը ավելի հաճախ են բռնկվում համաճարակներ:

3. Քույր Պաուլա Շեֆերի 1915թ. դեկտեմբերի 1-ին Իսլահիե վրանային ճամբարի այցելության մասին զեկույցը

Երեք օր ու գիշեր անձրև էր թափվում, արդեն մեր տներում էլ բավականին զգացվում էր խոնավությունը և ցուրտը: Որքան հնարավոր է շտապ ես ճանապարհ ընկա: Մամուրեի մոտ շարունակում էին մնալ մոտ 200 ընտանիք, նրանք չէին կարող առաջ շարժվել, կարիքը և հիվանդությունները դա անհնարին են դարձրել: Անձրևի ժամանակ զինվորները մոտ ևս ցանկություն չունեին նրանց բարձրացնելու և ճանապարհ ընկնելու, այդպես նրանք պառկած էին, ինչպես լճի մեջ: Անկողնային լաթերը ամբողջությամբ թրջվել էին: Շատ կանայք ցրտահարել էին իրենց ոտքերը, որոնք բոլորովին սևացել էին և ենթակա էին անդամահատման, նրանց լացն ու հեծեծումը սարսափելի էին: Մեռնողները վերջին շնչում էին գտնվում, հանգուցյալներն ընկած էին վրանների մոտ: Միայն բախշիշ վճարելով կարելի էր համոզել զինվորներին, որ թույլ տան թաղել: Նրանց փրկություն թվաց, երբ մենք եկանք՝ չոր հագուստ բերելով: Նրանք կարողացան փոխել հագուստը, ստացան մի քիչ հաց և մանրադրամ: Հետո ես սայլով անցա ամբողջ ճանապարհով մինչև Իսլահիե, և, թեև ես շատ դժբախտություն էի տեսել, այստեղ ես ստիպված էի այնպիսի բաներ և տեսա-

բաններ դիտել, որոնք ենթակա չեն նկարագրության: Մի երիտասարդ կին նստել էր ճամփեզրին, տեղաշորը մեջքին, դրա վրա կապել էր ծծկեր երեխային, իսկ ձեռքին՝ երկու տարեկան մահամերձ երեխա՝ հանգած հայացքով: Բեռի ծանրության տակ այս կինը կռացել էր և սրտաճմլիկ լալիս էր: Ես նրան վերցրեցի ինձ հետ մինչև մոտակա վրանային ճամբարը, որտեղ երեխան մահացավ, հետո ես հոգացի, որ նա առաջ շարժվի: Որքան էր նա ինձ երախտապարտ: Ամբողջ սայլը մինչև վերջ բարձված էր հացով, ես կարող էի միայն անընդհատ բաժանել այն, 3-4 անգամ հնարավորություն ընձեռվեց գնելու նոր պաշար: Հազարավոր հացերը մեծ օգնություն հանդիսացան, ես նաև կարողացա անասուններ վարձել, որպեսզի նրանց ուղարկեմ առաջ: Իսլահիեի ճամբարը ամենատխուրն էր իմ տեսածների մեջ: Հենց մուտքի մոտ թափված էր չթաղված դիակների մի ամբողջ կույտ, ես հաշվեցի 35, մյուս տեղում - 22, հենց դիմացը ծանր համաճարակից հիվանդների վրաններն էին: Վրանների ներսի և դրսի անմաքրությունը ենթակա չէ նկարագրության: Օրերից մի օր հուղարկավորման հանձնաժողովը պետք է հուղարկավորեր 580 դիակ: Հացի համար մարդիկ կռվում են սոված գայլերի նման, եղան տհաճ տեսարաններ: Որքան բութ ու ապուշ կտրած էին հաճախ ինձ նայում խեղճերը, զարմանալով, թե որտեղից է իրենց օգնություն եկել: Որոշ ճամբարներ արդեն մի քանի շաբաթ ամեն օր ապահովվում են հացով, բնականաբար, ամեն ինչ կատարվում է որքան հնարավոր է աննկատելիորեն: Որքան ենք մենք շնորհակալ Աստծուն, որ գոնե հնարավորություն ունեցանք այդքանը անել:

Konst./Ankara, 171, zu N 2725..
ԱԲԳԱՏ, էջ 274-277

№ 37

ԻՆՉՊԵՍ ԷՐ ԸՆԹԱՆՈՒՄ ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ռայխսկանցլերին
Հալեպի գերմանական
հյուպատոսից

Հալեպ
30 նոյեմբերի 1915

Ձերդ գերազանցություն, պատիվ ունեմ հավելվածով Ձեզ փոխանցել հայ Սարգիս Մանուկյանի պատմությունն այն մասին, թե ինչ ապրումներ նա ունեցավ Էրզրումից Սուրուջ անցնելու ժամանակ: Մանուկյանը 1905-1908թթ. Բեռլինում և 1908-1910թթ. Լայպցի-

գում ուսումնասիրել է փիլիսոփայություն և վերջին համալսարանում ստացել է փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան: Մի քանի տարի նա եղել է Էրզրումի դպրոցներից մեկի ուսուցիչ, վերջին ժամանակներում գեներալ Պոսելտի, այնուհետև գերմանական հյուպատոս ֆոն Շոյնբերի նախաձեռնությամբ դարձավ գերմաներենի դասընթացների ուսուցիչ: Նրա շարասյունը արժանացավ նույն ճակատագրին, ինչ շատ ուրիշներինը՝ տղամարդկանց առանձնացրեցին կանանցից և սպանեցին: Նրանց, ում համար չգտնվեց գնդակ, մորթում էին կացնով և դանակով, օրեկան երկու հազար մարդ: Ոստիկանները բերում էին զոհերին սպանդի վայրը, իսկ քրդերը պնդում էին, թե կատարում են կառավարության հրամանը: Ադիամանի կայմակամը ուղեկցում էր շարասյունը՝ սպանդից առաջ, և՝ հետո: Բարձված անասուններին, ամբողջ ունեցվածքը, նույնիսկ հագուստը չինովնիկները խլում էին կանանցից և երեխաներից: Վերջին ամիսների ընթացքում ես շատ եմ լսել այդ սպանությունների սարսափելի ձևերի մասին, սակայն լռում էի, քանի որ չէի խոսել ականատեսների հետ: Մանուկյանը, որին կարելի է համարել անկողմնակալ վկա, վերապրել է նման տեսարան: Ինքն անձամբ փրկվել է քրդերենի լավ իմացության շնորհիվ: Ներկայումս ես ձգտում եմ հասնել այն բանին, որ նրան տրամադրվի բնակության վայր, կամ գոնե նրան չաքսորեն Սուրուջից անապատ:

Վերջերս ինձ մոտ էր մի կին Կայծակ անունով, որը մինչև տեղահանությունը Տրապիզոնում բնակվող շատ հարուստ հայ կին էր, որը պատմեց, որ 3000-3500 հայերից, որոնց ստիպեցին հեռանալ Տրապիզոնից, միայն ինքը իր ընտանիքի 5 անդամների հետ հասավ մինչև Հալեպ: Չնայած իր բազում փորձերին, նրան այդպես էլ չհաջողվեց իմանալ, թե որտեղ են գտնվում մյուսները, և նա կարծում է, որ նրանք, բացառությամբ առևանգված կանանց և աղջիկների, մահացել են: Անձամբ նրան հաջողվեց փրկվել, քանի որ ճանապարհին նրան շատ անգամ պատահում էին թուրք պաշտոնյաներ և սպաներ, որոնք նախկինում հաճախ էին եղել նրա հյուրընկալ տանը և այժմ հոգացին նրա մասին:

Օրերս 4-րդ բանակի կողմից համաճարակի դեմ պայքարի հայտարարության հետ կապված ես առիթ ունեցա այդ բանակի գլխավոր շտաբի պետ բարոն ֆոն Կրեսի ուշադրությունը հրավիրել քաղաքում այսպես կոչված «որբանոցի» վրա, որը խնամվում է թուրքերի կողմից և որտեղ ամեն օր լինում են մահվան դեպքեր: Գնդապետ ֆոն Կրեսն այցելեց այն և ասաց ինձ, որ այնտեղի վիճակը նկարագրման ենթակա չէ: Եվ ավելացրեց. «Երբ թուրքերը տեղահա-

նության ժամանակ սպանում են տղամարդկանց, ապա օգտագործում են այն պատրվակը, թե ստիպված են իրենց պաշտպանել ապստամբներից, երբ բռնաբարում են կանանց և առևանգում երեխաներին, օգտագործում են այն պատրվակը, թե դա արվում է նրանց քրդերից ու ոստիկաններից փրկելու նպատակով, երբ նրանք սովամահության են ենթարկում տեղահանվածներին, օգտագործում են այն պատրվակը, թե իբր տեղափոխման ընթացքում սննդի հետ կապված բարդություններն այնքան մեծ են, որ չեն կարողանում դրանք հաղթահարել, սակայն երբ նրանք Հալեպ քաղաքի կենտրոնում երեխաներին պահում են սոված, ցրտի և կեղտի մեջ, ապա դա աններելի է»: Ցմռան ցրտից պաշտպանվելու համար երեխաների համար քարե հատակի վրա փռում էին մի ներքնակ, և շատ հիվանդ ու կիսամերկ երեխաներ ծածկված էին միայն մեկ ներքնակով: Տեղի հայերը գումար հավաքեցին և նրանց համար գնեցին ծածկոցներ: Սակայն երբ նրանք եկան որբանոց և թույլտվություն խնդրեցին փոխանցել դրանք, պաշտոնյաները մերժեցին, բացատրելով նրանով, թե «կառավարությունն ինքը հոգ կտանի երեխաների մասին»:

Մի քանի օր առաջ թուրքերը նորից անցան 50000 հայերի Ռաջուից և Կաթմայից Ռաս-ուլ-Այն տեղափոխելու հրամանի կատարմանը. ամեն օր տեղափոխում են 1000 մարդ: Ծանր հիվանդներին նույնպես բարձում են վագոնները: Մահացածներին պարզապես դուրս էին նետում կայարաններում, նույնիսկ պատահում է, որ դիակները մնում են թափված երկաթգծի վրա՝ կայարանների միջև ընկած տարածքում: Երկաթգծի վարչությունը ձգտում է հաղթահարել այդ իրավիճակը: Այդ կապակցությամբ, ուղևորների երթևեկությունը կարգավորելու նպատակով կառավարությունն օրերս խորհուրդ տվեց իր բժշկի միջոցով ստուգել Հալեպից մեկնող յուրաքանչյուր ուղևորի ջերմությունը և թույլ չտալ մեկնել նրանց, ում ջերմությունը գերազանցում է 38 աստիճանը: Իսկ վարչությունն առարկեց, որ լավ կլիներ, որ կառավարությունը հոգ տաներ այն մասին, որ Կաթմայում և Ռաջուում վագոններ չբարձեին հիվանդ հայերին:

Համանման հաղորդագրություն եմ ուղարկում նաև Կոստանդնուպոլսում կայսերական դեսպանությանը:

Lepsius Johannes "Der Orient". Monatsschsift für die Wiedergeburt der Länder des Ostens. Potsdam, 1920, N 6.
ГИОГА, стр. 303-304.

№ 38

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԿՈՍՍ ՄԵՏԵՐՆԻԽԻ ԶԵԿՈՒՅԱԳԻՐԸ ՌԱՅԽՍԿԱՆՑԼԵՐ ԲԵԹՄԱՆ-ՀՈԼՎԵԳԻՆ

7 դեկտեմբերի 1915թ.

Վերջին շաբաթվա ընթացքում Էնվեր փաշայի և Հալիլ բեյի հետ զրույցների ժամանակ ես լրջորեն քննարկեցի հայերի նկատմամբ կատարված գազանությունները, իսկ այսօր Ջեմալ փաշայի հետ զրուցում ես ընդգծեցի, որ ինչպես դաշնակից արտասահմանյան երկրների, այնպես էլ Գերմանիայի լայն շրջանները խոր դժգոհություն են արտահայտում և եթե այդ գազանությունները չդադարեն, ապա թուրքական կառավարությունը լիովին կզրկվի իր հանդեպ կարեկցական վերաբերմունքից այդ շրջանոներում: Էնվեր փաշան և Հալիլ բեյը հաստատում են, որ չեն ծրագրվում որևէ նոր տեղահանություններ, հատկապես Կոստանդնուպոլսից: Իբրև պատրվակ, նրանք ելնում են պատերազմի պահանջներից, պնդում են, որ հեղափոխականներին հարկավոր է պատժել և համառորեն չեն ուզում անդրադառնալ այն մեղադրանքներին, որ հարյուր հազարավոր կանանց համար ճակատագիր դարձան տառապանքները և վերջին հաշվով մահը: Ջեմալ փաշան ասաց, որ սկզբնական հրամանները իսկապես անհրաժեշտ էին, սակայն դրանց գործնական կիրառումը վատ էր կազմակերպված: Նա չի ժխտում, որ արդյունքում ստեղծվեց ափսոսանքի արժանի դրություն, որը ինքը փորձեց թեթևացնել սննդի և գումարի բաշխման ճանապարհով: Հալեպում նրա ռազմակայանը բռնկված է հիվանդություններով, որոնք առաջացել են գաղթականների սարսափելի վիճակի հետևանքով...

Ջեմալի շտաբի պետ գնդապետ ֆոն Կրեսն ինձ ասաց, որ այդ մարդկանց տառապանքները չեն ենթարկվում որևէ նկարագրության և բանականության մեջ չեն տեղավորվում. միաժամանակ ասեկոսներ են տարածվում, որ գերմանացիներն են փաստորեն ցանկացել այդ կոտորածը:

Ես արտահայտեցի իմ տեսակետը բացարձակապես կտրուկ արտահայտություններով: Բողոքներն անօգուտ են, և թուրքական հավաստիացումները, թե նոր տեղահանություններ չեն ենթադրվում, ոչինչ չարժեն:

Շատ հավաստի աղբյուրից իմացա, որ տեղի ունեցավ

տի ներկայացրած տեղեկության համաձայն, որը ես խնդրում եմ Ձեզ չհրապարակել, վերջին ժամանակներս Կոստանդնուպոլսից Անատոլիա է տեղահանվել ևս մոտավորապես 4000 հայ, Կաստանդնուպոլսում դեռևս ապրող 80000 հայերից աստիճանաբար պետք է ազատվեն, 30000 արդեն տեղահանվել են ամառվա ընթացքում և ևս 3000 անհետացել են: Դրան վերջ դնելու համար կպահանջվեն ավելի խիստ միջոցներ: Այդ իսկ պատճառով ես կառաջարկեի հրապարակել հետևյալ նշումը «Նորդդոյչե ալգեմայնե ցայտունգ» թերթում ուղեկցելով այն ինձ ուղղված հանձնարարականով, որ այս հրապարակումը նախաձեռնվել է Կայսերական կառավարության կողմից:

«Գերմանական ժողովրդի զգալի մասի շրջանում ցուցաբերվում է աճող մտահոգություն, կապված այն բազմաթիվ հաղորդումների հետ, որոնք ստացված են Գերմանիայում մասամբ արտասահմանյան մամուլի միջոցով Թուրքիայի հայերի տխուր ճակատագրի վերաբերյալ, որոնց հանեցին նախկին բնակավայրերից՝ այլ շրջաններում բնակեցնելու նպատակով:

Թեև ցանկացած պետություն հատկապես պատերազմի ժամանակ պետք է ունենա որոշման ազատություն երկրի անհնազանդ տարրերի նկատմամբ ամբողջ խստությամբ գործելու համար, ինչն արդարացվում է ռազմական դրությամբ, դրա հետ մեկտեղ, հրամանների ժամանակ հարկավոր է ձեռնարկել զգուշության միջոցներ, որոնք հարկավոր են պետության անվտանգության ապահովման համար, որպեսզի թույլ չտրվի, որ ամբողջ ժողովուրդը, ներառյալ ծերերը, կանայք և երեխաները չտուժեն մի քանի անձանց մեղքով:

Ելնելով սերտ բարեկամական հարաբերություններից, որոնք գոյություն ունեն Թուրքիայի և Գերմանիայի միջև նրանց դաշինքի արդյունքում, Կայսերական կառավարությունը, հայ ժողովրդի բնակեցման ընթացքում տեղի ունեցած և, կարծես թե, գլխավորապես ենթակա անձանց կողմից թույլ տրված կոպիտ սխալների հետևանքով առաջացած ծայրահեղ ցավալի իրադարձությունների մասին առաջին հաղորդումները ստանալուն պես, իրեն պարտավորված համարեց կայսերական դեսպանության միջոցով անմիջապես կառավարության ուշադրությունը հրավիրել հուզումների և դաժանությունների վրա Կոստանդնուպոլսում և բազմաթիվ անգամ ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր պնդեց, որ դրանք անմիջապես դադարեցվեն: Կայսերական կառավարությունը լուրջ հույսեր ունի, որ ինչպես հենց Թուրքիայի, այնպես էլ հայ ժողովրդի շահերից ելնելով այդ բողոքները կբավարարվեն»:

Բացի դրանից, մեր մամուլում հարկավոր է բացահայտ արտահայտել մեր դժգոհությունը հայերի հետապնդումների կապակցությամբ և դադարեցնել մեր կողմից չափից դուրս թուրքերին փաղաքշելը: Այն ամենը ինչին նրանք հասնում են - դա մեր գործերի արդյունքն է, դա մեր սպաներն են, մեր հրանոթները, մեր փողերը: Առանց մեր օգնության այդ փքված դոդոշը աստիճանաբար կուժասպառվի: Կարիք չկա ցուցաբերել այդ աստիճան վախվորվածություն թուրքերի նկատմամբ: Նրանց համար այդքան էլ հեշտ չէ անցնել մյուս կողմը և խաղաղություն հաստատել: Անգլիական կառավարությունը պատրաստակամություն չի ցուցաբերում խաղաղության պայմանագիր կնքել ներկայիս իշխանավորների հետ, սակայն ավելի հավանական է, որ կնքեն Ջեմալի հետ, եթե նա հեռացնի Էնվերին, ինչը բացառված չէ: Երկար տարիների ընթացքում անգլիական կառավարությունը փորձում է գահընկեց անել Էնվերին: Ծայրահեղ անհավանական է, որ նա կցանկանա սեպարատ խաղաղություն հաստատել ներկայիս իշխանավորների հետ: Սակայն ավելի հավանական է, որ նա կցանկանա օգտագործել Էնվեր փաշային, որպեսզի պարզի խաղաղության հեռանկարներն ընդհանրապես: Անգլիական կառավարությունը իր տրամադրության տակ ունի հարյուրավոր այլ ուղիներ նման ստուգման համար:

Հայկական հարցում, որևէ հաջողության հասնելու համար, մենք պետք է վախ առաջացնենք թուրքական կառավարության շրջանում (իրենց քաղաքականության) հետևանքների հետ կապված: Եթե, ռազմական տեսակետից ելնելով, մենք չենք համարձակվում հակազդել նրան և ավելի կոշտ դիրքորոշում գրավել, ապա այդ դեպքում մենք չենք ունենա որևէ ընտրություն, բացի անօգուտ բողոքի արտահայտումներից, որոնք ավելի շատ վատթարացնում են վիճակը, քան որևէ օգուտ բերում, սպասելով և դիտելով, թե ինչպես է մեր դաշնակիցը շարունակում կոտորածը:

Հայերի տեղահանության գաղափարական ոգեշնչողը Թալեաթ բեյն է:

Մետերնիխ

Զեկուցագրի վրա կան հետևյալ նշումները՝

Դեկտեմբերի 16-ին պետական քարտուղար Ցիմերման՝

«Թվում է մենք պետք է դա անենք: Սակայն Ձերդ գերազանցությունը պետք է թուլացնի այդ հողվածի սրությունը՝ նախքան այն մամուլի տպագրությանը հանձնելը: Ներկայիս ձևով այն չափազանց լավ կծառայի Անտանտի նպատակներին»:

Արտաքին գործերի նախարար Ցագով՝

«Իսկապես հողվածի վերջը պետք է հնչի ավելի բարեկամաբար թուրքական կառավարության նկատմամբ»:
Դեկտեմբերի 17-ին Բեթման-Հոլվեգ՝
«Առաջարկվող հրապարակային նկատողությունը դաշնակցին պատերազմի ընթացքում աննախադեպ գործողություն կլինի պատմության մեջ: Մեր միակ նպատակը Թուրքիային մեր կողմից պատերազմի մեջ պահելն է, անկախ այն բանից դրա արդյունքում հայերը կոչնչանան, թե՝ ոչ: Եթե պատերազմը ավելի երկար շարունակվի, մենք ավելի շատ կզգանք թուրքերի կարիքը: Ես չեմ կարողանում հասկանալ, թե ինչպես Մետերնիխը կարող է նման առաջարկություն անել, եթե ինքը չի բացառում այն հնարավորությունը, որ Ջեմալը կզբաղեցնի Էնվերի տեղը»:

The Armenian Genocide during the First World War /W. and S. Gust (ed.) in cooperation with Taner Akcam: Documents from German State Archives. [A-35184. DE/PA-AA/ R14089. DuA Dok. 209 (gk).
1915-12-07-DE-001].
ГАОТОМС, т.1, стр. 271-273.

№ 39

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԿՈՍՏ ՄԵՏԵՐՆԻԽԻ ՋԵԿՈՒՅԱԳԻՐԸ ՌԱՅԽՍԿԱՆՑԼԵՐ ԲԵԹՄԱՆ-ՀՈԼՎԵԳԻՆ

9 դեկտեմբերի 1915թ.

Այսօր ես Մեծ վեզիրի հետ շատ լուրջ զրույց ունեցա Հայկական հարցի հետ կապված և նրա ուշադրությունը հրավիրեցի այն փաստի վրա, որ թուրքական կառավարությունը հայերի հետապընդման իր քաղաքականությամբ վտանգի տակ է դնում այն օժանդակությունը, որը նա վայելում է բարյացակամ վերաբերմունքով տրամադրված արտասահմանյան երկրների շրջանում: Ավելին, Գերմանիայում ուժեղանում է դժգոհությունը և ռայխսկանցլերը ստանում է բազմաթիվ նամակներ, որոնց հեղինակները խնդրում են, որ նա բարեկամ և դաշնակից թուրքական կառավարության առջև հանդես գա ի պաշտպանություն հայերի: Ես կրկին ընդգծեցի, որ թեև պետության անվտանգությանը սպառնացող դավաղիրները պետք է խստորեն պատժվեն, այդուհանդերձ հարյուր հազարավոր ծերերի, երեխաների և կանանց խայտառակ տեղահանությունը երկար ժամա-

նակով սև բիծ կմնա երիտթուրքերի պատմության վրա:

Այդ կապակցությամբ ես մտածված պաշտոնական բողոք հայտնեցի մեծ վեզիրին, այլ ոչ թե եռապետության անդամին, քանի որ ինձ հայտնի է, որ հավանություն չի տալիս հայերի հետապնդումներին: Չնայած նա օժտված չէ բավարար իշխանությամբ, որպեսզի դադարեցնի այդ հետապնդումները, նրա համար շատ ձեռնտու կլիներ օգտագործել իմ բողոքը իր գործընկերների հետ հարաբերություններում:

Վերջում ես նշեցի կեղծ պնդումների անպատեհության մասին, որոնցում կարելի է մեղադրել ստորադաս թուրք պետական ծառայողներին, որ գերմանացիները հրահրում են թուրքերին և օգնում են նրանց հետապնդել հայերին: Այս զրպարտությունը հատկապես տարածվում է Անատոլիայում, քանի որ ես հաստատ գիտեմ այդ մասին այնտեղից եկածներից և այլ աղբյուրներից: Մենք չենք պատրաստվում կիսել թուրքական կառավարության պատասխանատվությունը հայերի նկատմամբ նրա կողմից իրականացվող քաղաքականության համար: Այդ իսկ պատճառով խնդրեցի, որ նա վճռական գործողություններ ձեռնարկի այդ ասեկոսեների դեմ:

Մեծ վեզիրը տեղյակ չէր այդ ասեկոսեներին: Նա բավականին վճռականորեն խոստացավ հերքել դրանք: Ավելին, նա ինձ հայտնեց, որ հայերը դարձան արտասահմանյան քարոզիչների, հատկապես ռուսների զոհը: Ամբողջ շրջանները իբր թե պատրաստ էին ապստամբության և զենք էին ստացել: Խոսքը ոչ թե առանձին անձանց զինված ապստամբության մասին է, ըստ Մեծ վեզիրի, այլ ամբողջ շրջանների, և դրանով է բացատրում այն, թե ինչու պարզապես հնարավոր չէ առանձնացնել անձանց և առանձին-առանձին պատժել նրանց: Ավելին, նա հայտնեց, որ չի պաշտպանում, այն միջոցառումները, որոնք ձեռնարկվեցին հայ բնակչության նկատմամբ: Ես նշեցի, որ ինչպես ինքը գիտի, պատմության դասերը ցույց են տալիս, որ հեղափոխությունները հանդիսանում են վատ կառավարման արդյունք և որ հետապնդումները և դաժան վերաբերմունքը հարյուր հազարավոր անմեղ մարդկանց նկատմամբ չեն կարող ծառայել իբրև պետության օրինական պաշտպանական միջոց:

The Armenian Genocide during the First World War /W. and S. Gust (ed.) in cooperation with Taner Akcam: Documents from German State Archives. [A-36483. DE/PA-AA/ R14089. DuA Dok. 210. 1915-12-07-DE-003].
ГАОТОМС, т.1, стр. 273-274.

№ 40

ԳԵՐՄԱՆԱՑԻ ԾԱՌԱՅՈՂԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՌԱՍ-ՈՒԼ-ԱՅՆՈՒՄ ԵՎ ԹԵԼ-ԱԲԻԱԴՈՒՄ ՀԱՅԵՐԻ ՏԱՌԱՊԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատճեն *Հալեպ, 18 դեկտեմբերի 1915*

Բաստենդորֆ,
Հալեպում գերմանացի ծառայող

Պարոն հյուպատոս Ռյոսլեր,

Ձեր ցանկությամբ Ձեր ուշադրությանն եմ ներկայացնում հակիրճ ակնարկ այն մասին, ինչ ես տեսել և համապատասխանաբար իմացել եմ վստահելի և անմիջական աղբյուրներից Ռաս-ուլ-Այնում և Թել-Աբիադում հայերի տառապանքների վերաբերյալ:

Իմ դիտարկումները սկսվում են Ռաս-ուլ-Այնում: Հունիսի սկզբում այնտեղ տարածվեցին առաջին լուրերը կոտորածի մասին, որը տեղի էր ունեցել ռուսական և պարսկական սահմանների վրա: Հունիսի 12-ին աշխատավարձ տալու ժամանակ անսպասելի հայտնվեցին 6 ժանդարմներ և մոտ 12 չերքեզներ, որպեսզի բոլոր հայերին տանեն կայմակամի մոտ: Ի պատասխան կայմակամին՝ Ֆեմի բեյից և Դուրրի բեյից իմ բողոքների՝ (երկուսն էլ երկաթգծի աշխատողներ էին), կայմակամը հայտարարեց, որ հայերին ձերբակալելու ոչ մի հրաման չի տվել և կարգադրել է նրանց վերադառնալ աշխատանքի: Սակայն դրանից առաջ նրանք թալանի ենթարկվեցին: Տարեց ժանդարմից ես հետագայում իմացա, որ կայմակամը մասնակցել է թալանածի բաժանման գործին: Քանի որ Ռաս-ուլ-Այնի տարբեր մահմեդականներ ինձ հայտնել են, որ կրկին հետևելու է հայերի ձերբակալություն, քանզի նրանց կայմակամը բաց է թողել վախենալով մեր վճռական բողոքներից, և որ երկրորդ անգամ հայերը մահից չեն խուսափի, ես կարգադրեցի բոլոր քրիստոնյա բանվորներին վերադարձնել Ուրֆա:

Հուլիսի սկզբին այստեղ եկան առաջին հայկական շարասյունները ռուսական և պարսկական սահմանի կողմից: Դրանք կանայք էին և երեխաներ, որոնք ճանապարհին թալանվել էին քրդերի կողմից և ամբողջովին մնացել էին առանց գոյության միջոցների, զրկված օթևանից, նրանց հավաքեցին լճի մոտ մի տեղ: Ամեն օր գալիս էին նոր շարասյուններ, այնպես որ Ռաս-ուլ-Այնում գաղթականների թիվը կարճ ժամանակում գերազանցեց 10000-ը: Դրա հետ մեկ-

տեղ սկսվեց տեղափոխումը Դեր-Զորի ուղղությամբ: Ամենագեղեցիկ աղջիկներին Ռաս-ուլ-Այնի չերքեզները և արաբները տարան իրենց տները: Շատերին դեռ ճանապարհին իրենց մոտ թողեցին քրդերը: Ժանդարմները աղջիկների աշխույժ առևտուր էին անում՝ մի քանի մեջիդիե վճարելով յուրաքանչյուրը կարող էր կարճ ժամանակով կամ մեկընդմիշտ տանել աղջիկներին կամ կանանց իրենց ճաշակով:

Ռաս-ուլ-Այնում հայերի վերակացու ոմն Նուրի Շաուխը մեր բժիշկ Ֆարահի ներկայությամբ ասել է, թե ինքը զվարճացել է՝ 12 տարեկանից փոքր հայ աղջիկներին կուսությունից զրկելով:

Ես պետք է հիշատակեմ այն տեսարանը, որը ես տեսել եմ Ռաս-ուլ-Այնի կայարանում: Եկավ գնացքը զինվորներով հանդերձ: Մոտ 10 մարդ շատ թույլ և հիվանդ էին: Հայ բժիշկը, որը նրանց բուժում էր, խոստովանեց, որ այդ մարդիկ գերհոգնած են և որ ճիշտ կլիներ մեկ շաբաթով այդ հիվանդներին ուղարկել Հալեպ: Հետո եկավ թուրք բժիշկը, որը հայհոյում էր, թե հիվանդները ծույլեր են, իսկ այդ հայը ուզում է քանդել թուրքական պետությունը: Զինվորական հրամանատարը հետո մտրակով ծեծի ենթարկեց հայ բժշկին և կարգադրեց կապել և հետ ուղարկել նրան Հալեպ:

Սեպտեմբերին ես հասա Թել-Աբիադ: Այնտեղ երկաթգծի պահպանության զինվորները սպանել և թալանել էին բոլոր հայերին, որոնք բնակվել էին երկաթգծի մոտ: Իմ գալուց առաջ կայմակամը կայարանի մոտ գտնվող իջևանատանը տեղավորել էր Ամասիայից եկած մոտ 3000 կանանց և երեխաների: 4-5 ամիս ճանապարհին եղած այդ մարդիկ հիվանդ էին քաղցից, դիզենտերիայով և տիֆով: Կայմակամը չհատկացրեց ո՛չ հաց, ո՛չ էլ այլ սնունդ: Նա, ում բախտ էր վիճակվել մի քիչ փող թաքցնել, այնպես, որ ճանապարհին դրանք չհափշտակեին, հնարավորություն ուներ փռից հաց գնել, իսկ նա, ումից ամբողջ կանխիկ գումարը խլել էին՝ դատապարտված էր սովամահության: Մոտ 1000 մարդ մահացավ մեկ ամսվա ընթացքում: Այդ իջևանատունը աչքի էր ընկնում չափազանց ողբերգական պատկերով՝ չորս կողմը քաղցած, մահամերձ էակներ. գետնի վրա շատ կար մարդկանց աղտեղություն: Մի անգամ կայմակամը արտահայտվել է՝ «Ես այնքան զգայուն մարդ չեմ, ինչպես եվրոպացիները, ես կարող եմ անտարբեր նայել այդ մարդկանց մեռնելուն»:

Բնականաբար տիֆը անցավ նաև երկաթգծի ծառայողների շարքերը և երկաթգծի տնօրինության բողոքների հետևանքով իջևանատունը ազատվեց, իսկ հայերը տեղափոխվեցին Այն-էլ-Արուս, որը գտնվում էր 5 կմ հեռավորության վրա: Ավելի քան 1000 մարդ այն-

քան թույլ էին, որ հարկ եղավ նրանց տեղափոխման համար բերել սայլեր և ավանակներ: Հետո Այն-էլ-Արուսում մահացան նաև այս ողջ մնացածները:

Նոյեմբերին եկան կանանց շարասյունները Ուրֆայից: Ինձ ճանաչող կանանցից մեկը խնդրեց փրկել իր երեխաներին: Վերակացուն հետ քշեց նրան և գոռաց. «Ոչ ոք չի փրկվի, դու կգնաս այնքան ժամանակ, մինչև սատկես: Իսկ այնտեղ, որտեղ կմնաս ընկած, քեզ կխժռեն շները»: Խամայից եկած զինվորները, որոնք ուղեկցում էին այս խմբին, վերակացուից պահանջեցին հաց հայթայթել, քանի որ կանայք արդեն երկու օր էր ճանապարհ էին եկել: Նա պատասխանեց. «Թող սատկեն, ուտելու բան չկա»:

Թել-Աբիադում և Աին-էլ-Արուսում երկար մնալուց հետո այս խումբը ուղարկվեց Ռաքքա: Ռաքքայից նրանք ուղարկվեցին ետ՝ Թել-Աբիադ, քանի որ նրանք իբր թե պետք է շարժվեն առաջ դեպի Մոսուլ: Այդ նույն ժամանակ գիշերը սկսվեցին խիստ սառնամանիքները և բոլոր դեպքերում նպաստեցին այն բանին, որ ես մեկ անգամ նրանց չուղարկեցին այնտեղ և ետ:

Նոյեմբերի և դեկտեմբերի սկզբին Ուրֆայից Թել-Աբիադ եկան մոտ 10000 գաղթականներ: Երթուղու պարետ Ջեմիլ բեյի և տեսուչ Մահմուդ բեյի հետ զրույցներից մեկում մեր բժիշկ Ֆարահը հարցրել է, թե ուր են ուղարկում այդ բոլոր հայերին: Ջեմիլ բեյը պատասխանել է. «Ռաքքա»: Հայերի հանդեպ ձեռնարկված բոլոր միջոցառումները՝ այն, ինչ ես տեսա և կարող էի տեսնել, հանգում են այն բանին, ինչ ինձ ասաց գաղթականների հարցերով տնօրեն Շուքրի բեյը. «Վերջնական արդյունքը պետք է լինի հայկական ցեղի բնաջնջումը: Սա անընդհատ պայքար է մահմեդականների և հայերի միջև, որը մոտենում է իր վերջնական ավարտին: Ավելի թույլը պետք է վերանա»:

Բաստենդորֆ

Հալեպում կայսերական գերմանական հյուպատոսին

R 14090, Ab. 2888[16].
ԱԲՊԱՏ, էջ 277-279

№ 41

ՌՅՈՍԼԵՐԻ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՏԵՂՅԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ «ՖՐԱՆԿՖՈՒՐՏԵՐ ՑԱՅՏՈՒՆԳ» ԹԵՐԹԻ ԵՐԿՈՒ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

Կայսերական գերմանական հյուպատոսություն
N 116

Հալեպ, 20 դեկտեմբերի 1915

Խոնարհաբար այստեղ բերվող «Ֆրանկֆուրտեր ցայտունգ» թերթի հոկտեմբերի 12-ի համարի (շաբաթաթերթ) Հայկական հարցի վերաբերյալ երկու հոդվածները ինձ առիթ են տալիս հետևյալ նկատառումների համար:

Գերմանիայի հասարակայնությունը, հավանաբար, չգիտի, թե ինչպիսին է Հայկական հարցի վիճակը, հակառակ դեպքում թերթը չէր կարող գրել, որ իրադարձությունների մասին դեռևս բացարձակապես չկան որևէ հավաստի տեղեկություններ: Նա հայտարարում է. «Անհրաժեշտ է կանխել միայն հուզումների կոպիտ էքսցեսները»: «Ժողովրդական գրգռված զանգվածների միջոցով Լիճի դատաստանի ցանկացած տեսակից հարկավոր է խուսափել ցանկացած պարագաներում»: Այն (թերթը) այդպիսով խեղդում է էությունը և պայքարում է կողմնակի երևույթների դեմ, այդպիսով առաջացնելով ոչ ճիշտ պատկերացումներ: Իրականում խոսքը վերաբերում է լրիվ այլ բանի: Թուրքիայի ներքին գործերի նախարարության տեղահանության կոմիսարն այստեղ (Հալեպում) բացահայտ հայտարարեց. «Մեզ հարկավոր է Հայաստանն առանց հայերի»: Սա այն սկզբունքն է, որով կառավարությունը ղեկավարվել է և շարունակում է ղեկավարվել, և հնարավոր է այն իրականացնելու նպատակով ողջ հայ ժողովրդի 4/5-ը, ներառյալ կանանց և երեխաներին, Փոքր Ասիայի իր բնակավայրերից տեղահանվեց և ուղարկվեց երկար ճանապարհ՝ դեպի Միջագետք և Սիրիա (գերազանցապես ոտքով):

Տարագրյալների մեծ մասը պետք է վերանար քաղցից, ուժասպառությունից և հիվանդություններից և դեռևս ամեն օր մահանում է դրանցից, չխոսելով արդեն կառավարական մարմինների և այլ տեղերից նրանց միջոցով հրահրվող և ոգևորվող բնակչության հայերի կանխամտածված ոչնչացման մասին: Նայած բնակավայրի, որտեղից որ գալիս են գաղթականները, մարդկային զոհերը լի-

նում են շատ կամ քիչ՝ Փոքր Ասիայի արևելյան մասում ընդհանուր առմամբ ավելի շատ են զոհերը, քան արևմտյան մասում: Արևելքում բազմաթիվ շարասյունները կազմող մարդկանց 75 %-ը, հավանաբար, մահացել է, եթե կանանց և աղջիկներին չեն տարել մահմեդական հարեմներ կամ ավելի բարենպաստ դեպքերում, նրանք պաշտպանություն չեն գտել մահմեդական ընտանիքներում: Ողջ մնացած մարդիկ, որոնք հասել են Միջագետք (օրինակ Ռաս-ուլ-Այն կամ Թել-Աբիադ), այնքան էին հյուծված, որ նրանց մեծ մասը նույնպես մահացավ:

Այս պարագաներում, թվում է, թե անիմաստ է վիճարկել անգլիական կողմից հրապարակված սպանված հայերի թիվը, որը հավասարեցրել են 800000-ի: «Ֆրանկֆուրտեր ցայտունգը» գրում է. «Ցանկացած մարդ, որը տեղյակ է Թուրքիայի իրավիճակին, չի հավատա այդ թվին: Այս թիվը կնշանակեր, որ Թուրքիայում ապրող հայերի ավելի քան 30 %-ը սպանվել է, ներառյալ կանանց և երեխաներին: Դա կատարելապես բացառված է»:

Ցավոք, դա բացառված չէ: Սարսափելի բնույթի դեպքերի ու պարագաների մասին, որոնք իրենց հետ բերեցին կամ էլ ուղեկցվեցին հայերի կոտորածներով, ես վերջին ամիսներին բազմիցս զեկուցել եմ: Ընդունվում է այն եզրակացությունը, որ նման դեպքերից հետո զոհվածների թիվը պետք է չափազանց բարձր լինի: Այն, ամենից լավ տեղեկացված հայերի կողմից, որոնք երկարատև շփման մեջ են գտնվում գաղթականների հետ, որոնք այստեղ են եկել երկրի տարբեր մասերից, գնահատվում է բավականին խոշոր թվերով՝ Թուրքիայում հայերի ընդհանուր թիվը կազմում է 2,5 մլն, որոնցից 6 վիլայեթներում՝ Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի, Սվազի վիլայեթներում՝ 1200000: Վանի նահանգը, որտեղ կար, հավանաբար, 150000-300000 հայ և որն ունի հատուկ պայմաններ, քանզի այն հանդիսանում էր ռազմական գործողությունների թատերաբեմ, նկատի չի առնվում: Մահացությունը Սիրիա և Միջագետք եկածների շրջանում շարունակվում է բարձր մնալ որպես տեղահանության անմիջական հետևանք, որի ավարտը բնավ դեռ չի մոտեցել: Այս պարագաներում, ինչպես պարզվում է, մահացածների ընդհանուր թիվը, որը հասցվում է 800000-ի, այդ հարցին լուրջ վերաբերող շրջաններում, որոնք ավելի լավ են տեղեկացված, քան մյուսները, դիտարկվում է որպես հավանական և նույնիսկ հնարավոր է համարվում այն, որ այդ թիվը ավելի մեծ է: Տարբերությունը առկա է այնքանով, որքանով տղամարդիկ, համենայն դեպս արևելյան նահանգնե-

ռում, կյանքից զրկվել են բռնի մահով, այն դեպքում, երբ կանանց և երեխաների մահը գալիս էր ներգործության ավելի երկարատև մեթոդների ազդեցության հետևանքով, այնպես, որ թուրքերը կարող են ասել. «Նրանք մահացել են իրենց մահով»:

Տեղահանության հետևանքները պետք է որ հայտնի լինեին կառավարությանը: Արդեն հունիսին նշվում էր դա, սակայն նա շարունակում էր տեղահանության կուրսը: Սակայն հազարավոր մարդիկ դեռ հիմա էլ կարող էին փրկվել ավելի գործուն (գերմանական) միջամտության դեպքում:

Մեր հակառակորդների պաշտոնական ռազմական զեկուցագրերի մեկնաբանության մասին գերմանական մամուլում գրաքննության գերագույն մարմինը զինվորական գրաքննության մարմիններին ուղարկել է բաց նամակ, որը ավարտվում է հետևյալ նախադասությամբ.

«Այն մտավախությունը, թե հակառակորդի տարածած պաշտոնական տեղեկությունները երբեմն կարող են անհանգստություն պատճառել, հարկավոր է հակադրել այն միտքը, որ իրականում փաստերը երբեք հնարավոր չէ թաքցնել երկար ժամանակ, իսկ կեղծիքը վերջ ի վերջո կճանաչվի որպես այդպիսին»:

Խոնարհաբար Ձերդ պայծառության ազնվագույն հայեցողությանն եմ թողնում այն, թե արդյո՞ք ավելի մեծ չի լինի այն համատեղ պատասխանատվությունը, որը լռության և իրականությունը գունազարդելու հետևանքով գերմանական կողմը վերցնում է իր վրա ինչպես գերմանական ժողովրդի, այնպես էլ ողջ աշխարհի առջև, և արդյո՞ք ավելի մեծ չի լինի հետագայում հայտնաբերված (հնարավոր է, մեզ համար ոչ բարենպաստ ժամանակ) ճշմարտության քաղաքական վնասը, քան այն, որը կարող է առաջանալ ներկայումս մեր հասարակությանը լուսավորելու հետևանքով:

Նմանատիպ զեկուցագիր եմ ուղարկում նաև կայսերական դեսպանին:

Նորին գերազանցություն պարոն
դոկտոր ֆոն Բեթման-Հոլվեգին

Ռյոսլեր
R 14089, Ab. 468.
տե՛ս Frankfurter Zeitung 12.10. 1915.
ԱԲԳԱՏ, էջ 280-282

№ 42

ՎԱՇԻՆԳՏՈՆՈՒՄ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԵՍՊԱՆ ԲԵՌՆՍԴՈՐՖԻ ՆԱՄԱԿԸ ԱՄՆ-Ի ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ՝ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳՐԻ ՏԵՔՍՏԻ ՀԱՎԵԼՎԱԾՈՎ

8 ապրիլի 1916թ.

Հարգելի պարոն պետքարտուղար, պատիվ ունեմ Ձեզ անձնական ծանոթացման համար ներկայացնել այն հուշագրի պատճեն, որը օգոստոսի 9-ին Օսմանյան կայսերական կառավարությանն է հանձնվել Կոստանդնուպոլսում կայսերական դեսպանի պաշտոնակատարի կողմից հայերի տեղահանության հետ կապված:

Օսմանյան կայսերական կառավարությունը տեղեկացրել է գերմանական կառավարությանը, որ կձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները, որ կանխի հուզումների կրկնությունը:

Բերնսդորֆ

Թուրքիայում գերմանական դեսպանությունը
Թուրքական արտաքին գործերի նախարարությանը

ՀՈՒՇԱԳԻՐ

Հուլիսի 4-ի իր հուշագրում գերմանական դեսպանությունը պատիվ ունի հայտնելու Բարձր Դռանը, թե ինչ տեսակետ է պաշտպանում կայսերական Գերմանիայի կառավարությունը անատոլիական նահանգներից հայ բնակչության տեղահանության հարցում և հրավիրելու նրա ուշադրությունն այն փաստի վրա, որ այդ միջոցառումները մի շարք տեղերում ուղեկցվում են բռնության գործողություններով, ինչպիսիք են կոտորածը և թալանը, որոնք չեն կարող արդարացվել այն քաղաքականությամբ, որը վարում է Օսմանյան կայսրության կառավարությունը:

Գերմանական դեսպանությունն ափսոսանքով արձանագրում է, որ համաձայն անկողմնակալ և անկասկած հուսալի աղբյուրներից ստացված տեղեկության, նման բնույթի միջադեպերը չեն կանխվում տեղական իշխանությունների կողմից, այլ հայերի տեղահանությունը կանոնավոր կերպով իրականացնում են այնպես, որ նրանցից մեծամասնությունը մահանում է նախքան նշանակակետին հասնելը: Այդ տեղեկությունները գլխավորապես ստացվում են Տրապիզոնի, Դիարբեքիրի և Էրզրումի վիլայեթներից: Որոշ տեղերում,

ինչպիսին է օրինակ Մարդինը, բոլոր քրիստոնյաներն, անկախ իրենց ազգությունից կամ դավանանքից, արժանացան նման ճակատագրի:

Այդ նույն ժամանակ Օսմանյան կայսրության կառավարությունը անհրաժեշտ համարեց տեղահանության այդ միջոցները տարածել նաև Փոքր Ասիայի այլ շրջանների վրա և բոլորովին վերջերս Զմյուռնիայի շրջանում հայկական գյուղերի բնակիչները տեղահանվեցին նույն հանգամանքներում:

Ելնելով այդ իրադարձություններից, գերմանական դեսպանությունն իր կառավարության ցուցումով իրեն պարտավոր է համարում կրկին զգուշացնել բռնության այդ գործողությունների համար և իր վրայից հանել ցանկացած պատասխանատվություն այն հետևանքների համար, որոնք կարող են առաջանալ այդ գործողությունների արդյունքում: Դեսպանությունը պարտադիր է համարում առավել քան երբևէ Օսմանյան կառավարության ուշադրությունը հրավիրել այդ հարցի վրա, քանի որ հասարակական կարծիքը հակված է այն մտքին, թե Գերմանիան, իբրև Թուրքիայի բարեկամ և դաշնակից տերություն, արդարացնում է այդ գործողությունները կամ նույնիսկ հրահրում է դրանք:

Papers Relating to the Foreign Relations of the United States, File N867. 4016/173. 1915, Supplement. The World War. Washington, 1928. p. 989-990. ГАОТОМС, т.1, стр. 279.

№ 43

ԳԵՐՄԱՆԱՑԻ ԿԱՊԻ ՍՊԱՅԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԸ ԳԱՐԱՀԻՍԱՐԻ ԵՎ ԿԵՐԱՍՈՒՆԻ ՄԱՍԻՆ

Պատճեն

Կովկասի տարածքի
կապի սպա *Կերասուն, 28 ապրիլի 1916թ.*

Սույն ամսի 17-ին մեկնեցի Երզնկայից և Գարահիսարով սույն ամսի 23-ին երեկոյան հասա Կերասուն: Երզնկայից ճանապարհի առաջին երկու օրը գնում էինք անտառներից զուրկ տիպիկ անատոլիական լեռնային արահետով, որն անցնում էր Չարդախլիի լեռներով, որտեղ մեզ անակնկալի բերեց ձյունամրրիկը, երրորդ օրը մենք անցնում էինք երկայնքով ձգված Ավշար փոքր բերրի դաշտավայրով: Այստեղ ցրված են բազմաթիվ գյուղեր, որոնք շրջապատ-

ված են գեղեցիկ մրգատու այգիներով, որտեղ գերազանցապես աճում են ծիրանի ծառեր, որոնց պտուղները չորացվում են: Բազմաթիվ եկեղեցիները վկայում են այն մասին, որ այս տարածքը, թերևս, խիտ բնակեցված է եղել հայերով:

Գարահիսարը ծովի մակերեսից 1500մ բարձրության վրա գտնվող շատ գեղեցիկ քաղաք է, որը գտնվում է երկու դբլոմիտյան ուղղաբերձ գագաթների թամբի վրա, որոնցից մեկի վրա գտնվում է հին ամրոցը: Մինչև պատերազմն այս քաղաքը աշխույժ և կարևոր առևտրական կենտրոն էր: Անցյալ ամռանը հայերի ինքնապաշտպանական մարտերի օրերին այն գրեթե անբողջությամբ այրվեց, 5000 տներից հազիվ պահպանված լինեն 100-ը: 4000 հայ տղամարդիկ, կանայք և երեխաներ այն ժամանակ պաշարման մեջ էին հին ամրոցում և այնտեղից գնդակոծում էին քաղաքը: Պահանջվեցին 20 օրվա մարտեր. 9-սանտիմետրանոց տրամաչափի դաշտային թնդանոթների կիրառմամբ և 2500-ից բաղկացած հետևակի գործողության արդյունքում վերջապես հաջողվեց գրավել ամրոցը: Այնուհետև վերևում բոլորը սպանվեցին: Միայն երիտասարդ աղջիկներին, ինչպես միշտ խնայեցին, այժմ նրանց կարելի է գտնել այստեղի հարեմներում, որտեղ նրանց պահում են իբրև աղախիներ: Քանի որ ժայռի գագաթին հնարավոր չէր թաղել սպանվածներին, այդ քարե պատնեշները շուռ են տվել մահացածների վրա: Ամենուրեք երևում են տարբեր կողմերում սփռված հագուստի կտորներ, գանգեր և այլ մարդկային դիակներ, դրանց միջև կանանց երկար խճճված մազեր են: Տեսարանն այնքան սարսափելի էր, որ մահմեդական իմ ծառան խնդրեց ինձ հեռանալ ամրոցից, քանի որ այլևս ի վիճակի չէր այնտեղ մնալ: Ամրոցի վերևում դիակների թիվը հասնում է մի քանի հարյուրի, բնավ ոչ մի քանի հազարը: Այսպիսով, պաշարվածների առավել մեծամասնությունը, հավանաբար, ողջ են մնացել:

Կերասունը ոչ մեծ, բայց աշխույժ առևտրական քաղաք է՝ հիմնականում հույներով բնակեցված...

Հույներն այստեղ, առափնյա շրջանում, չափազանց ռուսամետ են տրամադրված: Կերասունում նրանք հազիվ են զսպում իրենց չարախնդությունը Տրապիզոնի անկման առթիվ: Տրապիզոնում նրանք, հավանաբար, հիացմունքով էին ողջունում ռուսներին: Սակայն, ասում են, որ ռուսներն այնտեղ հաստատեցին այնպիսի խիստ իշխանություն, որ առաջացավ դառը հիասթափություն: Վերջին ժամանակներս Տրապիզոնից ստացված նամակները նկարագրում են նոր իրադրությունն առանց նկատելի հիացմունքի (...)

Կերասունում դեռ ապրում են որոշ հայեր, որոնք մեծ մասամբ այստեղ են վերադարձել առանց թույլտվության: Վալին այժմ հանձնարարական է տվել նրանց ձերբակալելու և Էգին տեղահանելու մասին: Իմ նախաձեռնությամբ վալին փոխեց հրամանը այն իմաստով, որ մարդկանց պետք է ուղարկեին Սամսուն: Նավով այնտեղ ուղևորվելը դժվարություն չի ներկայացնում, և հայերը ավելի արագ այնտեղ օգնություն և անհրաժեշտության դեպքում օժանդակություն կգտնեն: Եթե ես հասնեի այն բանին, որ նրանք մնային այնտեղ, ինչպես ցանկանում էին մարդիկ, ապա, ամենայն հավանականությանբ, հայերի չափազանց անբարենպաստ տեղահանությունը դեպի հարավ տեղի կունենար իմ հեռանալուց հետո:

Կապիտան Շուլենբուրգ

Գլխավոր շտաբի պետի տեղակալին
Քաղաքական բաժին
Բեռլին

Politarchiv, R 21019, Zu Ab. 13891[16]
ԱՐԳԱՏ, էջ 332-334

№ 44

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ ԳԵՐՄԱՆՈ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Հեռագիր

Կայսերական գերմանական դեսպանություն
N 706

Կոստանդնուպոլիս
25 մայիսի, 1916թ.

Վերծանում
Պատասխան N 650 հեռագրին

Կոմս ֆոն Բերնսդորֆի կողմից հայերին և ասորիներին Ամերիկյան օգնության կոմիտեի ընդունելությունը բոլոր դեպքերում ինձ անցանկալի է թվում: Եթե կոմիտեի գրությանը պատասխանեն ներկայացված իմաստով, ապա մեր հակառակորդները մեզ համար աննպաստ դիրքերից օգուտներ կքաղեին: Մյուս կողմից, թուրքական կառավարությունը, որը մշտապես բացասաբար է վերաբերվել գերմանո-ամերիկյան համագործակցությանը Հայկական հարցում և կտրականապես մերժել է այն օգնության գործում, կհամաձայնվի դրա հետ, եթե որևէ պատասխան չհրապարակվի: Այդ իսկ պատճառով ես կառաջարկեի, որ կոմս Բերնսդորֆը խնդրեր պարոն Մորգենթաուին, հաշվի առնելով վերջինիս հայտնի բարդ փոխհարաբերու-

թյունները Հայկական հարցի քննարկման ժամանակ, հետ պահել կոմիտեին իր ծրագրից, քանի որ ընդունելություն, կամ էլ խնդրագրին գրավոր պատասխանելու միջոցով որևէ կերպով չի իրագործվի նշված նպատակը, ավելի շուտ առկա է վտանգը, որ նաև գերմանացիների ուղղված ջանքերը հայ բնակչության կարիքների մեղմացմանը կտապալվեն:

Դեսպան Մետերնիխ

Արտաքին գործերի նախարարություն

Politarchiv, R14091, Ab. 13881
ԱԲՐԱՏ, էջ 339-340

№ 45

ՌԱՅԽՍԿԱՆՑԼԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԽՆԴՐԱԳԻՐԸ

Գերմանական ավետարանական առաքելության կոմիտե, Բեռլին

Բեռլին, 1916թ.,մայիս

Արտակարգ խնդրագիր աննկարագրելի աղքատության մեջ գտնվողներին միանվագ օգնության մասին

Առաջին համաշխարային պատերազմի դժբախտագույն զոհերին են պատկանում այն ժողովուրդները, որոնք, բաժանված լինելով տարբեր հակամարտող հարևան պետությունների միջև, ուժասպառվում են այդ պետությունների հակամարտության մեջ: Մենք կոչ ենք անում գերմանացի քրիստոնյաների կարեկցությանը հայերի ողբերգական դրության պատճառով:

Թուրքիայում ապրող հայերին, որպես մահմեդական գերիշխանության տակ եղած քրիստոնյա ժողավրդի, եվրոպական քրիստոնյա ժողովուրդների կողմից վաղ ժամանակներից ցուցաբերվել է հովանավորություն և օգնություն, որոնք, ցավոք, ինքնազոհության և քրիստոնեական մարդասիրության անվան տակ հաճախ չարաշահում էին այդ ազդեցությունը հանուն սեփական տնտեսական և քաղաքական նպատակների և էլ ավելի էին սաստկացնում անվստահությունն ու հակակրանքը քրիստոնյա ժողովուրդների, որոնց ցուցաբերվում էր օգնությունը, և թուրքական իշխանությունների միջև: Մեր իրավասության մեջ չէ այսօր որոշել առանձին փոխգործակցող գործոններին վերագրվող մեղքի չափը աղաղակող աղքատության

հարցում: Մենք մեր ձայն բարձրացնում ենք ոչ որևէ կողմին մեղադրանք ներկայացնելու նպատակով: Մենք ցնցված կանգնած ենք ամենասարսափելի արհավիրքներից մեկի առաջ, որը երբևէ չի տեսել է պատմությունը և որպես քրիստոնյաներ ձգտում ենք օգնել մեռնող քրիստոնյա ժողովրդին:

Մարտական գործողությունների ընթացքում հայ բնակչությունը, այսինքն՝ ավելի քան մեկ միլիոն մարդ, բռնի տեղահանվել է Արևելյան և Արևմտյան Անատոլիայի Կիլիկիայի և Միջագետքի նահանգներից: Ինչպես շարադրված է բազմաթիվ անվիճարկելի և բովանդակությամբ մեկը մյուսին համապատասխանող ականատեսների հաշվետվություններում, այդ տեղահանության ժամանակ զոհվել են հարյուր հազարավոր մարդիկ և մինչև օրս կարիքը կյանքից հեռացնում է մարդկանց անթիվ բազմություն, հատկապես կանանց և երեխաների: Հնագույն քրիստոնյա եկեղեցիներից մեկին և ժողովրդին, որին վաղուց կարեկցանքով են վերաբերվում գերմանացի քրիստոնյաները, մահն է սպառնում:

Մենք չէինք համարձակվի այս պահին, երբ հայրենիքում և օտարության մեջ մեր գերմանացի եղբայրների սեփական կարիքը շատ հոգսեր է պատճառում մեր ժողովրդին, դիմել գերմանացի քրիստոնյաներին օտարի դժբախտության պատճառով, եթե մեզ դրան չդրդեր այստեղ տիրող չտեսնված աղքատությունը: Սեփական ժողովրդի հանդեպ սիրո և մեր դաշնակիցների հանդեպ հավատարմության հետ մեկտեղ չի կարելի արհամարհել քրիստոնյաների համար ընդհանուր զգացումը, եղբայրական սիրո զգացումը նրանց հանդեպ, ովքեր քեզ հետ մեկ հավատք ունեն: Հենց մենք, գերմանացի քրիստոնյաներս, հանդիսանալով Թուրքիայի դաշնակիցը չենք կարողանա ժամանակին հանգիստ խղճով ետ նայել պատերազմին, եթե չարտահայտեինք մեր հավատակիցներին, որոնք օսմանյան կայսրությունում գտնվում են ծայրահեղ ողբերգության մեջ, մեր օգնելու պատրաստակամությունը: Այդ դժբախտության մասին մանրամասնություններ հաղորդելը թույլ չի տալիս ներկայիս իրադրությունը: Համարձակվում ենք հուսալ, որ մեզ կհավատան առանց մանրամասն նկարագրության և որ մեր խնդրանքը կհամարվի անհետաձգելի և բավարար հիմնավոր, և մենք կաշխատենք ուղիներ գտնել նրանց արագ և արդյունավետ օգնություն ցուցաբերելու համար:

Միանվագ առատաձեռն նվիրատվությունը, որի համար, սակայն հարկավոր չէ նվազացնել մյուս քրիստոնեական բարեգործությունների և առաքելությունների օժանդակությունը, խնդրում ենք օգնությունն ուղարկել «Օգնություն հայերին» նշումով մեզ հետ ստո-

բագրած տնօրեն Ա. Վ. Շրայբերին, Շտեգլից, Հումբոլշտրասսե 14: «Օգնի'ր նրան, ով մահվան եզրին է»:

1916 թ. մայիս

Միսիայի տնօրեն - աստվածաբանության դոկտոր Կարլ Ակսենֆելդ - Բեռլին,

աստվածաբանության դոկտոր, պրոֆեսոր Գ.Հաուսլայտե - Հալլե,

Միսիայի տեսուչ – Հելդ - Վիսբադեն:

Միսիայի տնօրեն - եպիսկոպոս Հեննից - Գերնհուտ,

աստվածաբանության դոկտոր, պրոֆեսոր Յուլիուս Ռիտեր – Շտեգլից,

քահանա Ռեբբելեն - Գերնմանսբուրգ:

Միսիայի պաշտոնաթող տնօրեն - Ավգուստ Վիլհելմ Շրայբեր – Շտեգլից,

քահանա Գոտֆրիդ Սիմոն - Բարմեն,

քահանա Էվալդ Շտիր – Մարբուրգ:

Նորին գերազանցություն
պարոն Ռայխսկանցլերին

Բեռլինի միսիայի արխիվ,
Լեփսիուսի Արևելյան
միսիայի արխիվ, 1916թ., N 127
ԱԲՂԱՏ, էջ 340-341

№ 46

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀԱՆՋԸ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ԹՈՒՐՔԱՀՊԱՏԱԿ ՀԱՅԵՐԻՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ ԹՈՒՐՔԻԱ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գերմանա-հայկական
ընկերություն

Պոտսդամ, 7 հուլիսի 1916թ.

Ներքոստորագրող վարչությունը պատիվ ունի ներկայացնելու Ձերդ գերազանցությանը հետևյալ խնդրագիրը:

Գերմանական կայսրությունում դեռևս ապրում են մեծ թվով զորակոչային տարիքի թուրքահայեր, որոնց մեծ մասը (իրենց աղքատանալու գնով) վճարել է բանակից ազատվելու հարկը: Տարբեր կողմերից լսվում են ձայներ, որ այժմ թուրքական հյուպատոսությունները այդ երիտասարդ հայերից պահանջում են, որ նրանք ներկայանան Կոստանդնուպոլիս: Հայերը գիտեն, թե ինչ ճակատագիր է իրենց սպասում, ուստի և շարունակելու են խուսափել զորակոչի հրամանի կատարումից: Սակայն առկա է այն վտանգը, որ եթե թուր-

քական հյուպատոսությունները դիմեն կայսերական կառավարությանը (ինչը դեռևս տեղի չի ունեցել), ապա կարող է հետևել նրանց հանձնումը [թուրքերին]: Քանի որ կասկածից վեր է, որ փաստորեն հայերը Թուրքիայում պետք է վերցվեն ոչ թե բանակում ծառայության, այլ ընդամենը ուղարկվելու են երկրի խորքերը՝ ճանապահաշինական աշխատանքներում նրանց օգտագործելու պատրվակով, որտեղ նրանց նախկին փորձի համաձայն գրեթե բոլորին առանց բացառության սպանելու են, ուստի մենք խնդրում ենք կայսերական կառավարությանը համաձայնություն չտալ հայերին թուրքերին հանձնելու հարցին, եթե նման պահանջ ներկայացվի:

Նորին գերազանցություն
պետական քարտուղար
ֆոն Յագովին
Բեռլին, Արտաքին գործերի
նախարարություն

Գերմանո-հայկական ընկերության,
վարչություն
նախագահներ՝ դոկտոր Յոհաննես
Լեփսիուս, դոկտոր Պաուլ Ռորբախ

Politarchiv, R14092, Ab. 18623
ԱԲԳԱՏ, էջ 355-356

№ 47

ՀԱՅԵՐԻ ՀԵՏԱՊՆԴՈՒՄՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

Կայսերական գերմանական
դեսպանություն
N 368
բազավ. սուրհանդակի միջոցով

Տերապիա, 10 հուլիսի 1916թ.

Հայերի հետապնդումները արևելյան նահանգներում թևակոխել են իրենց վերջնական փուլը:

Թուրքական կառավարությունը թույլ չտվեց իրեն խանգարել Հայկական հարցի լուծումը հայ ցեղի ոչնչացման ճանապարհով իր ծրագրի կատարմանը ո՛չ մեր միջնորդությունների, ո՛չ ամերիկյան դեսպանի և պապական լեգատի, ինչպես նաև Անտանտի կողմից սպառնալիքների, առավել ևս Արևմուտքի հասարակական կարծիքը հաշվի առնելու միջոցով: Այժմ նա պատրաստվում է ձուլել և ցրել առաջին տեղահանությունը վերապրած հայերի վերջին մնացորդները: Ընդ որում, խոսքը վերաբերվում է հյուսիսային Սիրիայում (Մարաշ, Հալեպ, Ռաս-ուլ-Այն), ինչպես նաև Փոքր Ասիայի որոշ խոշոր

բնակավայրերում (Անգորա, Կոնիա) մնացածներին, հատկապես նրանց, ովքեր այնտեղ են հայտնվել տեղահանության հետևանքով, կամ էլ ավելի շուտ այնտեղ տեղափոխվածներին: Սակայն հնաբնակների շրջանում, ինչպես նաև, կաթոլիկ և բողոքական հայերի շրջանում այժմ կատարվում են «զտումներ», թեև Բարձր դուռը կրկին խոստացել է խնայել այս վերջիններին:

Այս մնացածները մասամբ տեղահանվում են ավելի հեռու Միջագետք, իսկ մասամբ էլ ենթարկվում են մահմեդականացման:

Ռաս-ուլ-Այնի համակենտրոնացման ճամբարը, որը դեռ ապրիլի վերջերին հաշվում էր 2000 բանտարկյալներ, ամբողջությամբ «զտվել է», Դեր-Զոր անցնելու ճանապարհին առաջին շարասյունը ենթարկվեց հարձակման և ոչնչացման: Ենթադրվում է, որ մյուսների հետ վարվել են նույն ձևով:

Մարաշում և Հալեպում տեղահանությունը ընթանում է մեծ թափով: Մարաշում, չխնայվեցին նույնիսկ այն ընտանիքները, որոնք ունեին ներքին գործերի նախարարի բնակվելու հատուկ թույլտվությունը: Դիարբեքիրում իր գործունությամբ հայտնի Վալի Ռեշիդ-բեյը Անգորայում զբաղված է նրանով, որ փնտրում է վերջին հայերին (ներառյալ կաթոլիկներին) և տեղահանում նրանց: Նույն ձևով վարվում էին Էսքիշեհիրում և Իզմիթի շրջակայքում դեռ մնացած բողոքական և կաթոլիկ հայերի հետ: Չնայած պաշտոնական անձանց բոլոր ժխտումներին, հայերի հետապնդման այս վերջին փուլում մեծ դեր է խաղում մահմեդականացումը:

Արդեն ապրիլի կեսերին քահանա Քրիստոֆելը, Սվազից հայտնում է, որ Էրեգլիում ինքը տեսել է վերջին հայ քրիստոնյաներին, այնտեղից մինչև Սվազ յուրաքանչյուր բնակավայր հիմնավորապես «զտված է» կամ աքսորված, կամ կրոնափոխ արված, կամ ոչնչացված է: Այլևս ոչ մի տեղ չէր լսվում որևէ հայկական հնչյուն: Շապին-Գարահիսարում, հավանաբար, դեռ մնացել են քրիստոնյա հայերի որոշ խմբեր: Ասում են, թե նրանք վերջերս տեղի հույների հետ միասին ստեղծել են կոմիտե, զինվորների շրջանում խռովություն առաջացնելու նպատակով: Ի պատասխան դրա, բոլոր հայերին ձերբակալեցին՝ աքսորելու մտադրությամբ, այդ ժամանակ նրանք նախընտրեցին մահմեդականության ընդունումը: Հունիսի 30-ին Դամասկոսից հյուպատոս Լոյտվեդը հայտնում է. «Բոլոր հայերին ստիպում են դառնալ մահմեդական, Դերատում 149 ընտանիքներ ընդունեցին մահմեդականություն, միայն մեկ ընտանիք հավատարիմ մնաց քրիստոնյա հավատքին»:

Վերջապես հարկավոր է հիշատակել Բարձր Դռան գործողությունները այնպիսի հաստատությունների նկատմամբ, ինչպիսիք են որբանոցները, հիվանդանոցները, դպրոցները և այլն, որոնք մինչ այժմ այդ տեղերում պահպանվում էին հայ բնակչության համար գերմանական և ամերիկյան միությունների կողմից: Այն քիչ թվով հաստատություններին, որոնք դեռ չեն փակվել, օր օրի սպառնում են հայ անձնակազմի, աշակերտների և որբերի տեղահանությամբ, ինչպես նաև այլ միջոցառումներով: Առանձին զիջումները, որոնք կառավարությունը կատարել է դեռ անցած տարի, չեղյալ են համարվել և աննշան հույս կա, որ այդ հաստատությունները պատերազմից հետո կարող են վերսկսել իրենց գործունեությունը նախկին ծավալով: Թուրքական կառավարությունը ճիշտ է գիտակցել, որ դպրոցները և որբանոցները, որոնք ղեկավարվում են արտասահմանցիների կողմից, մեծ ազդեցություն են ունեցել հայերի ազգային զգացմունքների զարթոնքի և զարգացման վրա, նրա տեսակետից ավելի հետևողական կլինի, եթե նա դրանք ենթարկի խիստ վերահսկողության կամ հրահանգ տա ամբողջովին վերացնել դրանք:

Նույն ձևով հայերի ստիպողական մահմեդականացման մեջ ի սկզբանե չի կարելի տեսնել կրոնական մոլեռանդությամբ պայմանավորված ոչ մի միջոցառում: Թերևս երիտթուրքական տիրակալներին խորթ են նման զգացմունքները: Մյուս կողմից, ճշմարիտ է այն, որ հոգով լավ օսմանացի հայրենասեր լինելու համար, նախևառաջ հարկավոր է հռչակվել մահմեդականության ջատագով: Թուրքական կայսրության պատմությունն իր ակունքներից մինչ վերջին ժամանակները գոյություն ունի նրա համար, որ ապացուցի այն դրույթի ճշմարտությունը, թե Արևելքում դավանանքը և ազգությունը նույն բանն են և ամեն մի օսման հոգու խորքում համոզված է դրանում: Հակառակ իմաստով պաշտոնական և ոչ պաշտոնական հավաստիացումները անկեղծ չեն և դուրանից բերված ուղեկցվող մեջբերումների և ավանդույթների հետ միասին վերաբերում են համընդհանուր ընդունված ձևակերպումներին, որոնք օգտագործվում են բարենորոգումների մասին ֆերմանների դարաշրջանից սկսած եվրոպացիների հանդեպ նրա համար, որ ապացուցվի մահմեդականության և օսմանականության հանդուրժողականությունը մեկը մյուսի հանդեպ: Այսպիսով, նաև այն հերքումները, որոնք նախարարները հակադրում են հավատքի համար հետապնդումների մասին հաղորդումներին, նախևառաջ համապատասխանում են լավ վարքի պահանջներին: Սակայն դրանք համապատասխանում են ճշմարտությանն այն իմաստով, որ դրդապատճառը հանդիսանում է ոչ թե կրոնական մո-

լեռանդությունը, ինչպես, օրինակ, 15 և 16-րդ դարերում Իսպանիայում հրեաներին և մավրներին ստիպողաբար դավանափոխության ժամանակներում էր, այլ հայերին կայսրության մահմեդական բնակչության հետ միասնություն դարձնելու ձգտումը:

Եվ (տարբեր պատճառներով) ինչպես էլ չամբաստանեն, որ մեզ չհաջողվեց հայերի նկատմամբ Բարձր Դռան քաղաքականությունն ուղղել այլ հունով, մյուս կողմից, ո՛չ մեր թշնամիները, ո՛չ էլ այսպես կոչված չեզոքները որևէ իրավունք չունեն մեզ մեղադրելու կամ միայն պահանջելու, որ մենք պաշտոնապես արտահայտենք մեր դատապարտումը: Մենք ամբողջ ուժերով ջանում էինք թեթևացնել Թուրքիայում դժբախտ հայ ցեղի վիճակը ինչպես կառավարության վրա ներազդելու, այնպես էլ շռայլ նվերների միջոցով:

Իսկ բոլոր տեսակի աննկարագրելի չարագործությունները, որոնք համաշխարհային պատերազմի տարիներին գերմանացի քաղաքացիների և ռազմագերիների նկատմամբ կատարվել են անգլիացիների, ֆրանսիացիների և ռուսների կողմից, երեք ազգեր, որոնք իրենց ներկայացնում են բողոքական, կաթոլիկ և ուղափառ հավատքների ջատագովներ, ոչ մի անգամ չի դարձել բողոքների առարկա Անտանտի դաշնակից պետությունների որևէ մեկի կողմից մյուսների նկատմամբ: Նմանապես երբևիցե հայտնի չէ, որ հակառակորդի մամուլը ձայն բարձրացնի ի պաշտպանություն մարդու ոտնահարված իրավունքների: Սակայն, թերևս, արժանահավատորեն հաղորդվել է, որ Քենտերբերիի արքեպիսկոպոսը չերկնչեց իր քարոզներում ներկայացնել Բարալոնգի և Քինգ Ստեֆանի կայազորների հայտնի գործողությունները որպես աստվածահաճո գործեր:

Իրերի այս դրությունը հայտնի է նաև Բարձր Դռանը, և նա քանիցս հակադրվել է մեր պաշտոնական բողոքներին Հայկական հարցի հետ կապված, նշելով այդ ամենը: Մենք չէ, որ թուրքերին ցույց ենք տվել այդ ճանապարհը, ինչպես այդքան հաճախ նշվում է, այլ մեր թշնամիներն են դա արել, թե ինչպես, չնայած մարդասիրության քարոզներին կարելի է վերացնել բնակչության կասկածելի տարրերը:

Մետերնիխ

Նորին գերազանցության ռայխսկանցլեր
պարոն ֆոն Բեթման-Հոլվեգին

Politarchiv, R14092, Ab. 18548
ԱԲԳԱՏ, էջ 358-361

№ 48

ՀԱՅԵՐԻ ՄԱՀԱՊԱՏԻԺՆԵՐԸ ՍՎԱԶՈՒՄ

Հեռագիր

Սվազում կայսերական հյուպատոսություն
N 93

Սվազ, 22 հուլիսի, 1916թ.

Մեկ շաբաթ առաջ կախաղան բարձրացվեցին երկու հայ, իսկ այսօր առավոտյան կառավարության շենքի առաջ՝ կրկին չորս տղամարդ: Թոքատում, որը մտնում է Սվազի վիլայեթի մեջ, նման մահապատիժները վերջին ժամանակներս կատարվում են հաճախ:

Վերտ

Կոստանդնուպոլսում
Գերմանիայի դեսպանությանը

Politarchiv, R14092, Ab.19989
ԱԲԳԱՏ, էջ 362

№ 49

ԴՈԿՏՈՐ ՖՈՐԵԼԻ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

Կայսերական Գերմանական առաքելություն
N 1780, 1 հավելված

Բեռն, 12 օգոստոսի 1916թ.

Այսօրվա «Բերներ Թագվախտ» (12.08.16 N 188) թերթում «Հայաստան» խորագրի տակ պրոֆեսոր, դոկտոր Ֆորելի գրչին պատկանող հոդվածն է, որը պարունակում է արտաքին գործերի նախարարությանն ուղղված մեղադրանք հայերի դեմ կատարված չարագործություններ հարցում վերջինիս բռնած դիրքորոշման պատճառով:

Նորին գերազանցություն ռայխսկանցլեր
պարոն Բեթման-Հոլվեգին

Յակոբի

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆ

Պարոն պրոֆեսոր, դոկտոր Ֆորելը գրում է մեզ.

Պարոն դոկտոր Էդուարդ Գրետերը՝ շվեցարացի, Հալեպի (թուրքական Փոքր Ասիա) նախկին ուսուցիչ, օրերս այցելեց ինձ և հանձնեց հետևյալ տողերը համապատասխան հրապարակման նպատակով ազատ օգտագործելու համար: Նրա հետ միասին ստորագրած դոկտորՆիպագեն գերմանացի է: Երկուսն էլ, այնտեղ ստեղծված պարագաների հետևանքով հրաժարվեցին Հալեպում հայ երեխաների ուսուցիչ լինելուց: Երկու այլ անձանց, որոնք նրանց հետ միասին ստորագրել են այս փաստաթուղթը ես չեմ վկայակոչում, սակայն վերը նշված անձանց կողմից լիազորված եմ դա անելու:

Այն բանից հետո, երբ Գերմանիայի արտաքին գործերի նախարարությունը դեռ 1915թ. հոկտեմբերին ստացավ այս նյութը և այնուամենայնիվ լռեց դրա մասին, այն դեպքում, երբ ներքոստորագրողները համարձակություն ունեն պատասխանելու նրա փոխարեն, ես իմ կողմից լռությունը համարեցի փոքրոգություն: Դոկտոր Էդուարդ Գրետերին ես գիտեմ արդեն մի քանի տարի որպես հիանալի մարդու, որը ձգտում է բարձր գաղափարների և ընդունակ է ամբողջովին զոհաբերել իրեն հանուն այդ գաղափարների: Ուստի որևէ թշնամական կանխակալության մասին Գերմանիայի և գերմանացիների նկատմամբ, որևէ չափազանցության և թաքնված մտադրությունների մասին խոսք անգամ լինել չի կարող:

Ցանկացած լրացում միայն վնաս կհասցնի Գերմանիայի արտաքին գործերի նախարարությանը հասցեագրված հակիրճ հաղորդագրությանը: Սարսափից քարացած կանգնած ես փաստերի առաջ: Արդյո՞ք Գերմանիայի և Թուրքիայի ռազմական համագործակցությունը այնքան հեռու է գնացել, որ այդ դեպքում գերադասվում է բացարձակ լռությունը: Գերմանիայի ռազմավարության համար գուցե և այո, կարելի է հասկանալ նրա ներկայիս դժվարին կացությունը, սակայն մենք, չեզոք երկրներս, ամբողջ ուժով պետք է բողոքենք մի ամբողջ ժողովրդի այդքան հրեշավոր ոչնչացման դեմ, որն իր դաժանությամբ գերազանցել է գիշատիչ գազանների վայրագությունները: Ենթադրենք, որոշ հայ վաճառականներ իրենց ժողովրդին վատ համբավ են բերել, սակայն դա չի վերաբերվում որքան գործունյա, նույնքան էլ աշխատասեր հայ գյուղացիներին և նրանց գործունյա հայրենակիցներից շատ շատերին:

Անկեղծ ասած, ես այսօր էլ, ինչպես երբևէ, նկատի ունենա-

լով համաշխարհային պատերազմը, չեմ հասկանում, թե ինչու կարգին մարդը չի դառնում սոցիալիստ և եռանդուն ջանքեր չի գործադրում երկրագնդի վրա ժողովուրդների միջև խաղաղության հաստատման համար:

Իվորն, 10 օգոստոսի 1916թ. *Դոկտոր Ա.Ֆորել*
նախկինում պրոֆեսոր Ցյուրիխում

Politarchiv, R14093, Ab. 21766
ԱԲԳԱՏ, էջ 375-377

№ 50

ՈՒՂԱՐԿՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐ ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԿԱՅՍՐԻՆ ԵՎ ՊՐՈՒՍԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐԻՆ ՀԱՅԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ ՉԱՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նորին մեծություն Գերմանիայի
կայսեր և Պրուսիայի թագավորի
ոչ պաշտոնական կառավարություն

10 սեպտեմբերի 1916թ., գլխավոր հրամանատարության ռազմական:

Խոնարհաբար նորին գերազանցություն պարոն ռայխսկանցլեր դոկտոր ֆոն Բեթման-Հոլվեգին փոխանցում եմ, բնագիրը հավելվածներով հանդերձ, պայմանով, որ ներկայացվող ձեռագրերը, որպես արտաքին քաղաքականության առանձին հարց իմ կողմից չներկայացվեն նորին մեծություն կայսրին և թագավորին և այդ մասին ես հայտնել եմ պարոն ֆոն Կլոդիուսին:

Վալենտին

Նորին գերազանցություն
պարոն ռայխսկանցլեր ֆոն
Բեթման-Հոլվեգին

ՀԱՎԵԼՎԱԾ 1

1. ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՔՈՒՅՐԵՐ ՏՈՐԱ ՖՈՆ ՎԵԴԵԼԻ ԵՎ ԷԼՎԵՐՍԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ

(1915թ. նոյեմբեր)

Մենք, ստորև ստորագրողներս, գերմանական ռազմական առաքելության միջնորդությամբ ուղարկվեցինք Էրզրում, որտեղ

1914թ. հոկտեմբերից մինչ 1915թ. ապրիլի վերջը հոգ էինք տանում թուրք զինվորների համար: Սույն թվականի մարտին հետագայում տիֆից մահացած բժիշկ Տաշջյանը, մարդ, որը միաժամանակ վայելում էր թե թուրքերի և թե հայերի հարգանքը, մեզ հաղորդեց, որ իր ժողովրդի նկատմամբ ծրագրվում է կտորած և խնդրեց այդ մասին տեղեկացնել Էրզրումի ամրոցի այն ժամանակվա պարետ գեներալ Պոսսելտին, ինչը մենք անմիջապես արեցինք: Հետագայում հայտնվեց, որ այդ հիանալի սպան կանխարգելեց հանցագործությունը, ինչի համար էլ հեռացվեց:

Էրզրումում գերմանական հյուպատոս, պարոն Շոյբներ-Ռիխտերի միջոցով մենք գերմանական Կարմիր Խաչի կողմից հրավիրվեցինք աշխատանքի Երզնկա և այնտեղ աշխատում էինք արդեն յոթ շաբաթ:

Հունիսի սկզբում Կարմիր Խաչի առաքելության ղեկավար շտաբային բժիշկ պարոն Կոլլեյը մեզ հայտնեց, որ հայ բնակչությունը պետք է Երզնկայի շրջաններից տեղափոխվի Միջագետք, որտեղ նա այլևս չի կազմի մեծամասնություն: Սակայն որևէ կոտորած չպետք է թույլ տրվի: Տեղահանվողների սննդի և գիշերելու մասին պետք է հոգ տարվի և նրանց անվտանգությունը պետք է ապահովվի բավարար քանակով պահակազորի միջոցով:

Կարմիր Խաչի անձնակազմին արգելվում էր տեղահանվածների հետ որևէ շփումը, արգելված էին նաև հեռավոր զբոսանքները և հեծյալ ուղևորությունները: Երզնկայի հայերին տրվեց քիչ ժամանակ, որպեսզի նրանք կարողանան վաճառել իրենց իրերը, որոնք, իհարկե գնվեցին չնչին գումարներով: Հունիսի 7-ին հեռացավ տեղահանվողների առաջին շարասյունը: Նրանք առավել ունևորներն էին, որոնք կարող էին տեղափոխվել սայլերով: Ասում են, նրանք ժամանեցին Խարբերդ, համենայն դեպս մեզ ցույց տրվեց այնտեղից ստացված հեռագիրը դրա վերաբերյալ: Հաջորդ երեք օրերի ընթացքում ևս կատարվում էին տեղահանություններ: Շատ երեխաների վերցրեցին մահմեդական ընտանիքները: Ասում են, հետագայում արտաքսվեցին նաև նրանք: Պետք է հեռանային նաև հայ ընտանիքները, որոնք հերթապահում էին մեր տանը, և նույնիսկ տիֆով հիվանդ մի կին: Չօգնեցին նաև նրան բուժող բժիշկ դոկտոր Նոյկիրխի բողոքները, կամ օգնեցին միայն այն չափով, որ նրան թույլ տվեցին սպասել երկու օր: Մեզ մոտ ծառայող զինվորներից մեկը քույր Եվային ասաց. «Ես հիմա 46 տարեկան եմ, սակայն ինձ միևնույն է զորակոչեցին զինվորական ծառայության, չնայած որ ամեն տարի ինձ համար վճարվել է ծառայությունից ազատվելու հարկ... Ես երբեք

կառավարության դեմ ուղղված ոչինչ չեմ կատարել, սակայն այժմ ինձնից խլում են ողջ ընտանիքս, իմ յոթանասունամյա, վշտից կռացած մորը, կնոջս և հինգ երեխաներիս: Եվ ես չգիտեմ, թե ուր են նրանք գնալու»: Առավել շատ նա մորմոքվում էր իր մեկ ու կես տարեկան դստեր համար: «Այդպիսի գեղեցիկ երեխա դու երբեք չես տեսել, նրա աչքերը խոշոր էին, եթե ես միայն կարողանայի, ապա օձի պես կսողայի նրա ետևից»: Նա լացում էր երեխայի նման: Հաջորդ օրն այդ նույն մարդը եկավ, բացարձակապես հանգիստ և ասաց. «Այժմ ես գիտեմ, որ նրանք բոլորը սպանված են»: Եվ դա զուտ ճշմարտություն էր:

Քարավանները, որոնք հունիսի 8-ին, 9-ին և 10-ին հեռացան Երզնկայից թվացյալ հերթականությամբ (երեխաները հաճախ տեղավորվում էին եզներով լծված սայլերի վրա), ուղեկցվում էին զինվորականների կողմից: Չնայած դրան, նրանց միայն մի մասը հասավ հաջորդ նշանակակետին: Այդ քաղաքից արևելք դեպի Խարբերդ տանող ճանապարհն է, որը Երզնկայի դաշտավայրից տանում է Եփրատի հովիտ, որն այստեղ կտրում անցնում է Տավրոսի լեռնաշղթան: Ճանապարհը Եփրատ գետի շրջապտույտներով անցնում է անմատչելի լեռների միջով: Տարածությունը մինչև Կամախ, որն ուղիղ գծով կազմում է ընդամենը 16 կմ, երկարացվում է 55 կիլոմետրով ոլորապտույտների պատճառով: Ճանապարհի նեղ հատվածներում կատարվում էին հարձակումներ գրեթե միայն կանանցից և երեխաներից բաղկացած անպաշտպան ամբոխների վրա, որոնք հայտնվեցին զորքերի և այստեղ կանչված քրդերի միջև ճզմված վիճակում: Սկզբում նրանց ամբողջովին թալանեցին, իսկ հետո հրեշավոր ձևով մորթեցին և դիակները նետեցին գետի մեջ: Կամախի դաշտավայրում, որը գտնվում էր Երզնկայի քաղաքային կայազորից ընդամենը տասներկու ժամվա ճանապարհի հեռավորության վրա, որտեղ գտնվում էին մութասերիֆի (շրջանային կառավարիչի) և բանակի չորրորդ կորպուսի հրամանատարության նստավայրերը, այդ կոտորածի ժամանակ զոհերը հաշվվում էին հազարներով: Այն ինչ այստեղ պատահեց հունիսի 10-ից 14-ը, կատարվեց իշխանությունների իմացությամբ և համաձայնությամբ:

Սկզբում այդ խոսակցությունների իսկությունը հաստատեց մեր թուրք խոհարարուհին: Այդ կինը արցունքներն աչքերին պատմում էր, որ քրդերը բռնաբարեցին և սպանեցին կանանց, իսկ երեխաներին նետեցին Եփրատը: Խարբերդի ամերիկյան քոլեջում կրթություն ստացած երկու երիտասարդ ուսուցչուհիները հետևում էին Կամախի կիրճով (Քեմախ-բողազի) անցնող տեղահանվածների շա-

բասյունին, երբ հունիսի 10-ին այն ընկավ խաչաձև կրակի տակ: Առջևում ճանապարհը փակել էին քրդերը, հետևում՝ ոչ անհայտ Թալեաթի ոստիկանության ջոկատներն էին: Սարսափած՝ նրանք ընկան գետնին: Երբ հրաձգությունը դադարեց, նրանց և նրանցից մեկի փեսացուն, որը կանացի հագուստ էր հագել, հաջողվեց զարտուղի ճանապարհներով վերադառնալ Երզնկա: Նրանց օգնեց երիտասարդ տղայի թուրք դասընկերը: Պատահած քրդերին նրանք կաշառք էին տալիս: Երբ նրանք հասան քաղաք, ոստիկաններից մեկը ցանկացավ նրանցից մեկին, որը տղայի հարսնացու էր, իր տուն տանել: Երբ փեսացուն սկսեց առարկել դրա դեմ, նա գնդակահարվեց ոստիկանների կողմից: Դրանից հետո երկու երիտասարդ աղջիկներին փեսացուի թուրք ընկերը հասցրեց մահմեդական ազնվական տներ, որտեղ նրանց սիրալիր ընդունեցին, սակայն անմիջապես պահանջեցին ընդունել մահմեդականություն: Աղջիկները բժիշկ Քաֆֆյանի միջոցով աղերսում էին գերմանացի բուժքույրերին իրենց տանել Խարբերդ: Նրանցից մեկը գրում էր, որ եթե ինքը թույն ունենար, ապա կընդուներ այն:

Հաջորդ օրը, հունիսի 11-ին, 86-րդ հեծելազորային բրիգադի կանոնավոր զորքերը իրենց սպաների գլխավորությամբ ուղարկվեցին Կամախի կիրճ, որպեսզի, ինչպես ասվում էր, պատժեն քրդերին: Գերմանացի բուժքույրերը թուրք զինվորներից, որոնք անձամբ ներկա էին եղել այդ գործին, լսեցին, որ այդ թուրքական զորքերը ոչնչացրեցին բոլորին, ովքեր դեռ ողջ էին մնացել: Գրեթե բոլոր կանանց և երեխաներին: Թուրք զինվորները պատմում էին այն մասին, թե ինչպես կանայք ծնկաչոք հայցում էին գթություն, իսկ երբ արդեն որևէ օգնության հույս չկար, հենց իրենք էլ իրենց երեխաներին նետում էին գետը: Երիտասարդ թուրք զինվորը ասում էր. «Դա դժբախտություն էր: Ես չէի կարող կրակել: Ես միայն ձևացնում էի, որ այդպես եմ վարվում»: Մյուսները պարծենում էին իրեց նողկալի արարքներով գերմանացի դեղագործ, պարոն Հելգենի առաջ: Չորս ժամ շարունակվեց այդ սպանդը: Բռնագրավվեցին եզներով լծված սայլերը, որպեսզի դիակները տեղափոխեն գետի մոտ և թաքցվեն կատարվածի հետքերը: Հունիսի 11-ի երեկոյան զինվորները ավարով բեռնված վերադարձան: Կոտորածից հետո Երզնկայի շուրջ, ցորենի դաշտերում մի քանի օր որս էին կատարում մարդկանց վրա, որպեսզի գնդակահարեն այնտեղ թաքնված շատ փախստականներին:

Հաջորդ օրերին Բայբուրդից տեղահանվածների առաջին քարավաններն անցնում էին Երզնկայի միջով:

Հունիսի 18-ի երեկոյան մենք մեր բարեկամ դեղագործ Հելզենի հետ քայլում էինք մեր տան առաջ: Մեզ հանդիպեց մի ոստիկան, որը մեզ պատմեց, որ հոսպիտալից հազիվ 10 րոպեի ճանապարհի հեռավորությամբ գիշերում է Բարբուրդից եկած կանանց և երեխաների մի խումբ: Նա ինքը օգնել էր քշել նրանց և հուզված պատմում էր այն մասին, թե ինչ են կրել տեղահանվածներն ամբողջ ճանապարհին:

«Kessé, kessé sürüjorlar!» («Սատկացրու, սատկացրու անասունի պես»): Ամեն օր, - պատմում էր նա, - ինքը սպանում էր տասից-տասներկու տղամարդու և նրանց նետում էր կիրճը: Եթե երեխաները լաց էին լինում և չէին կարող գնալ բոլորի հետ, ապա ջարդում էին նրանց գանգը: Կանանցից խլում էին ամեն ինչ և ամեն մի նոր գյուղում նրանց բռնաբարում էին: «Ես ինքս հանձնարարեցի թաղել երեք մերկ կանանց դիակներ: Թող, որ Աստծո կողմից դա գրանցվի իմ հաշվին, - ավարտեց նա իր պատմությունը»: Հաջորդ օրը առավոտյան, մենք լսեցինք, թե ինչպես են անցնում մահվան դատապարտված մարդիկ: Մենք պարոն Հելզենի հետ միացանք նրանց և ուղեկցում էինք մեկ ժամ շարունակ՝ ընդհուպ մինչև քաղաք: Նրանց ողբն աննկարագրելի էր: Դա մարդկանց մի մեծ ամբոխ էր: Միայն երկու-երեք տղամարդ, մնացած բոլորը կանայք էին և երեխաներ: Կանանցից ոմանք խելագարվել էին: Շատերը գոռում էին՝ «Փրկեք մեզ, մենք կդառնանք մահմեդական, կամ գերմանացի, կամ ինչ որ ուզում եք, միայն թե փրկեք մեզ: Հիմա նրանք մեզ տանելու են Կամախ և կտրելու են մեր կոկորդները»: Այդ խոսքերին միաժամանակ նրանք կատարում էին համապատասխան ժեստ: Ոմանք անցնում էին ապուշ կտրած և անտարբեր՝ իրենց աղքատ ունեցվածքն ուսերին և երեխաները գրկներին: Մյուսները կրկին աղաչում էին մեզ փրկել իրենց երեխաներին: Երբ մենք մոտեցանք քաղաքին, այնտեղ ժամանեցին հեծյալ թուրքեր, որոնք վերցնում էին երեխաներին և դեռահաս աղջիկներին: Քաղաքի մուտքի մոտ, որտեղ տներ ունեն նաև գերմանացի բժիշկները, ամբոխը մի պահ կանգ առավ՝ նախքան Կամախ գնալը: Սա իսկական ստրկավաճառության շուկա էր, միայն թե այստեղ ոչ ոք չէր վճարում: Թվում էր, թե մայրերը կամավոր տալիս էին իրենց երեխաներին, մյուս կողմից էլ, դիմադրությունն իմաստ չուներ:

Երբ հունիսի 21-ին մենք հեռանում էինք Երզնկայից, ապա ճանապարհին ականատես եղանք այն ճակատագրին, որը վիճակվել էր տեղահանվածներին:

Ճանապարհին մենք հանդիպեցինք աքսորյալների մի քարա-

վանի, որոնք վերջերս էին լքել իրենց բնակավայրերը և դեռևս ունեին լավ տեսք: Մենք ստիպված էինք երկար սպասել, որպեսզի թույլ տանք նրանց անցնել մեզնից առաջ, և մենք երբեք չենք մոռանա այդ տեսարանը: Մի քանի տղամարդ, իսկ հիմնականում կանայք և բազմաթիվ երեխաներ: Նրանցից շատերը՝ շիկահեր և կապույտ մեծ աչքերով, մեզ էին նայում այնպիսի լրջությամբ և անգիտակից վեհությամբ, կարծես թե նրանք արդեն Աստծո դատաստանի հրեշտակներ էին: Քար լռությամբ նրանք շարժվում էին առաջ, փոքր ու մեծ, ընդհուպ մինչև այն ծեր կինը, որին մեծ դժվարությամբ էին պահում ավանակի վրա, գնում էին բոլորը, որպեսզի մեկը մյուսին կապված բարձր ժայռերից նետվեն Եփրատի ալիքների մեջ՝ Կեմախ-Բողազի անեծքի այդ դաշտում: Մի հույն կառապան մեզ պատմեց, թե ինչպես էր դա արվում: Սիրտ էր սահմռկվում դրանից: Մեզ ուղեկցող ոստիկանն ասաց, որ ինքը քիչ առաջ ուղեկցել է 3000 կանանցից ու երեխաներից բաղկացած մի քարավան Սամախաթունից (Էրզրումի և Երզնկայի միջև ընկած Դերջան բնակավայրից) Կեմախ: «Hep gitdi bitdi! (Բոլորը ոչնչացան) », - ասաց նա: Մենք հարցրինք նրան. «Եթե դուք ուզում եք սպանել նրանց, ապա ինչու՞ չեք դա անում իրեց գյուղերում: Ինչու՞ եք նրանց հասցնում այդպիսի ողորմելի վիճակի»: «Իսկ դիակների հետ ինչ անենք, չէ որ գարշահոտություն է տարածվելու», - պատասխան ստացանք մենք:

Գիշերը մենք անցկացրեցինք Էնդերեսում, հայկական տներից մեկում: Տղամարդկանց արդեն տարել էին, կանայք դեռևս թաքնվել էին ներքևում: Մեզ ասացին, որ նրանց, հավանաբար, կտանեն հաջորդ օրը: Իրենք այդ մասին, սակայն չգիտեին և այդ պատճառով կարող էին ուրախանալ, երբ մենք երեխաներին քաղցրավենիք էինք տալիս: Մեր սենյակի պատի վրա թուրքերեն գրված էր՝

«Մեր տունը՝ սարի գագաթն է,
Տուն այլևս պետք չէ մեզ:
Խմեցինք մահվան դառը գավաթը,
Դատավոր այլևս պետք չէ մեզ»:

Լուսավոր լուսնյակ գիշեր էր: Քնելուց առաջ ես լսեցի հրացանի կրակոցներ՝ դրանց նախորդող հրամանից հետո: Ես հասկացա, թե ինչ կատարվեց և հանգիստ քնեցի, ուրախ այն բանի համար, որ այդ զոհերը համենայն դեպս արագ մահացան և այժմ ներկայացել են Աստծուն: Առավոտյան բնակչությանը կոչ արեցին փախածների որս սկսել: Բոլոր ուղղություններով սլացան զինված մարդիկ: Ստվերոտ ծառի տակ նստած էին երկու տղամարդ և բաժանում էին իրենց ավարը, նրանցից մեկն իր գլխավերևում պահում էր

կապույտ տաբատը: Բոլոր դիակները մերկացվել էին, իսկ նրանցից մեկը, ինչպես մենք տեսանք, գլխատված էր: Մոտակա հունական բնակավայրում մենք հանդիպեցինք վայրենու նման մի տղամարդու, որը մեզ պատմեց, որ ինքը նշանակված է այստեղի պահակակետում, որպեսզի պահպանի ճանապարհի ընկած մարդկանց (այսինքն՝ սպանի հայերին): Նրա խոսքերից պարզ դարձավ, որ նա արդեն շատերին է սպանել: Նա կատակով ասաց, որ «նրանցից մեկին թաղդրել է»: «Մեր կառապանը բացատրեց, որ դրանք 250 ճանապարհաշինարար հայեր էին (Inscha'at - Taburi, հայ զինվորներ), որոնք օգտագործվում էին ճանապարհների շինարարության ժամանակ, որոնց մահապատժի վայրը մենք արդեն տեսել էինք ճանապարհին»: Այնտեղ դեռ երևում էր չորացած արյան մեծ հետքը, սակայն դիակներն արդեն տարվել էին:

Կեսօրից հետո մենք հասանք մի հովտի, որտեղ երեք խմբերով նստած էին մահմեդական, հույն և հայ բանվորները: Վերջին խմբի մոտ կանգնած էին մի քանի սպաներ: Մենք շարժվեցինք առաջ, բարձրանալով բլուրներից մեկի վրա: Այստեղից կառապանը ցույց տվեց հովիտը, որտեղ մոտ 100 մարդ հեռացել էին ճամփուղուց և շարք էին կանգնեցվել լանջին: Այժմ մենք գիտեինք, թե ինչ է կատարվելու: Մեկ այլ վայրում կրկնվեց այդ նույն տեսարանը: Սվազի միսիոներական հիվանդանոցում մենք տեսանք մի մարդու, որը փրկվել էր այդպիսի սպանդից: Նրան կանգնեցրին մի շարքի մեջ 95 այլ բանվոր հայերի հետ (որոնք զորակոչվել էին զինվորական ծառայության): Դրանից հետո իրենց կցված 10 ոստիկաններ գնդակահարեցին այնքան մարդ, որքան կարողացան: Մնացածներին դանակներով և քարերով սպանեցին մյուս մահմեդականները: Տասը մարդ փրկվեց՝ փախուստի դիմելով: Այդ նույն տղամարդն ուներ սարսափելի վերք ծոծրակին: Նա կորցրեց գիտակցությունը: Այն բանից հետո, երբ ուշքի եկավ, նրան հաջողվեց հաղթահարել երկու ժամվա ճանապարհը մինչև Սվազ: Թող որ նա հանդիսանա իր ժողովրդի անձնավորումը, որպեսզի նա կարողանա ապաքինվել իրեն հասցված մահացու վերքերից:

Մի գիշեր անցկացրեցինք Զարայի շրջանային վարչության շենքում: Այնտեղ դռան մոտ նստած մի ոստիկան անդադար երգում էր՝ «Ermenileri hep kesdiler» (բոլոր հայերին մորթեցինք): Ինչ-որ մեկը հարևան սենյակում հեռախոսով խոսում էր այն մարդկանց մասին, որոնց դեռ պետք է բռնեին: Մի անգամ գիշերեցինք այն տանը, որտեղ կանայք ստացել էին իրեց ամուսինների մահվան լուրը և ամբողջ գիշեր ողբում էին նրանց համար: Ոստիկանն ասաց. «Նրանց

բղավոցները կանհանգստացնեն ձեզ: Ես կգնամ և կարգելեմ դա»: Բարեբախտաբար, մենք կարողացանք արգելել նրան այդ անել: Մենք փորձեցինք խոսել խեղճերի հետ, սակայն նրանք չափազանց հուզվում էին: «Էլ ի՞նչ թագավոր, որ թույլ է տալիս այս ամենը: Ձեր կայսրը պետք է օգնի: Ինչու՞ նա ոչինչ չի անում», - ասում էին նրանք: Մյուսներն ահաբեկված էին մահվան սպառնալիքով՝ «Թող նրանք վերցնեն ամեն ինչ, ընդհուպ մինչև շապիկը, միայն թե խնայեն մեր կյանքը»: Մենք անընդհատ ստիպված էինք լսել այս ամենը և ոչինչ չէինք կարող անել, բան մահը հաղթահարած այն մարդուն օրինակ բերելը:

Հունիսի 28-ին մենք հասանք Սվազ, որտեղ մեզ թույլ տվեցին ապրել ամերիկացիների մոտ և այնտեղ մնացինք երկու օր: Այնտեղ բանտում էին գտնվում 1200 տղամարդ: Ավելի ուշ մենք իմացանք, որ ողջ հայ բնակչությունը կամ տեղահանվել, կամ էլ ոչնչացվել է: Կեսարիայում մեզ ուզում էին ներկալել, սակայն ամերիկյան միսիոներներին հաջողվեց մեզ ազատել, այնպես որ մենք կարող էինք ապրել նրանց մոտ: Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպանության միջնորդության շնորհիվ մենք ճանապարհը շարունակելու թույլտվություն ստացանք: Այնտեղ և Սվազում տիրող իրավիճակի մասին, իհարկե, ամերիկյան կողմից զեկուցվել է, սակայն մենք այնուամենայնիվ ցանկանում ենք պատմել նաև Գեմերեկ գյուղի մի աղջկա մասին: Երբ բոլոր տղամարդկանց տարան, տարեց կանանց թույլ տվեցին հեռանալ, ուր որ կկամենան: Իսկ 30 ամենագեղեցիկ աղջիկներին և կանաց հավաքեցին և ասացին. «Կամ կդառնաք մահմեդականներ, կամ՝ կմեռնեք»: «Այդ դեպքում մենք կմեռնենք»,- հետևեց համարձակ պատասխանը: Դրանից հետո հեռագիր ուղարկվեց Սվազի վալիին, որը հրաման տվեց համարձակ աղջիկներին, որոնցից շատերը դաստիարակվել էին ամերիկյան դպրոցներում, բաժանել մահմեդականների մեջ:

Ռուսական սահմաններից մինչև Սվազից արևմուտք ընկած տարածքը երկիրն ամբողջությամբ «զտված» է հայերից և տխուր սփոփանք է միայն այն, որ Թուրքիան, սպանելով իր լավագույն բնակիչներին, քայքայեց ինքն իրեն: Իրենք՝ թուրքերն, ուրախությամբ սպասում էին այն գալիք օրվան, երբ մի որևէ օտար տերություն իր ձեռքը կվերցնի կառավարման ղեկը և կհաստատի արդարադատություն, իսկ կատարված չարագործությունները բոլորովին հավանության չարժանացան ամբողջ թուրք ժողովրդի կողմից, որպես այդպիսին, այլ, թերևս, միայն այսպես կոչված կրթված մարդկանց կողմից:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ԲԱՂԴԱԴԻ ԵՐԿԱԹԳԾԻ ԳԵՐՄԱՆԱՑԻ ԾԱՌԱՅՈՂԻ ՀԱՅՏՆԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆԸ*

1915թ.

Երբ տեղահանվում էին կիլիկյան գյուղերի բնակիչները, նրանցից շատերը իրենց հետ դեռ ունեին ավանակներ, որոնց օգտագործում էին հեծնելու և բեռներ կրելու համար: Սակայն շարասյուններն ուղեկցող զինվորները իշապաններին էին թույլ տալիս դրանցով առաջ շարժվել, քանի որ հրաման էր տրվել, որով բոլոր տեղահանվողներին, լիներ դա տղամարդ, կամ կին, տեղափոխվել հեծյալ: Հաճնից տեղահանվելու ժամանակ իշապանները բեռնակիր կենդանիներին ուղիղ քշում էին գյուղերը, որոնց բեռներում ենթադրում էին, որ կա փող և թանկարժեք իրեր: Մնացած անասուններին, որոնց մարդիկ տանում էին իրեց հետ, ճանապարհին բռնի կերպով խլում էին կամ գնում շատ ծիծաղելի գումարով, գրեթե անվճար: Մի կին, որի ընտանիքը ես գիտեմ, 100 պիաստրով վաճառեց 90 գլուխ ոչխար, որոնք այլ ժամանակներում արժեին 60-70 թուրքական ֆունտ (մոտ 1300 մարկ), այսինքն 90 գլուխ անասունի համար նա ստացավ մեկ անասունի արժեքը: Հեքպունարի մոտ նրանք ստիպված էին շեղվել հիմնական ճանապարհից և գնալ ավելի կարճ ուղիով՝ սարերով: Նրանք ստիպված էին քարշ գալ այդ ճանապարհով առանց սննդի և ունեցվածքի: Ուղեկցող զինվորները պարզ ասում էին, որ ունեն այդպիսի հրաման:

Մարաշի և Այնթափի միջև ընկած թուրքական գյուղերից մեկի բնակչությունը ցանկացավ հաց և ջուր տալ 100 ընտանիքներից բաղկացած շարասյանը: Զինվորները դա թույլ չտվեցին: Ամերիկյան միսիային և Այնթափի հայերին, որոնք հետագայում նույնպես տեղահանվեցին, հաջողվում էր շարասյունների համար, որոնք անցնում էին Այնթափի մոտով (հաշվվում էր մոտ 20000 մարդ, հիմնականում կանայք և երեխաներ), գիշերը բերել հաց և դրամ: Դրանք Մարաշի սանջակի գյուղերի բնակիչներն էին: Շարասյուններն իրավունք չունեին մտնել Այնթափ, այլ տեղակայվում էին ճամբարով՝ բաց դաշտում: Մինչև Նասիբ (Այնթափից դեպի հարավ արևելք, 9 ժամվա ճանապարհի վրա), Եփրատի մոտ ամերիկացիները կարող էին ձեռնարկել պարենի գիշերային մատակարարումը:

Տեղահանության ժամանակ աքսորյալներից սկզբում խլում

---

* Երկրորդ հաղորդում արխիվում չկա:

էին կանխիկ գումարը, իսկ հետո նաև ամբողջ ունեցվածքը: Մի տեղահանված բողոքական հոգևորական տեսել է, թե ինչպես մի ընտանիքից խլեցին 43, իսկ մյուսից՝ 28 ֆունտ: Ինքը՝ հոգևորականը վերջերս ամուսնացել էր և ստիպված հաճնում էր թողնել իր երիտասարդ կնոջը, որը սպասում էր իր անդրանիկին: Այնուհանդերձ տեղահանվողների չորս հինգերորդը կանայք և երեխաներ էին, որոնցից երեք հինգերորդը ոտաբոբիկ է: Հաճնում մի տղամարդուց, որին ես անձամբ գիտեմ, որը ամենաքիչը ունի 15000 ֆունտին (մոտ 270000 մարկ) հասնող կարողություն, ինչպես և ուրիշներից ճանապարհին խլեցին նրա հագուստը, այնպես, որ հարկ եղավ նրա համար այստեղ հագուստ խնդրել: Տեղահանվողների համար առանձնապես մեծ վիշտ էր այն, որ նրանք չէին կարող անգամ թաղել իրենց հանգուցյալներին: Նրանք մնում են ճանապարհին ընկած: Հաճախ կանայք օրերով իրենց ուսերին տանում են իրենց մահացած երեխաներին: Հալեպից տասը ժամվա ճանապարհի հեռավորության վրա, Քաբում, մի քանի շաբաթով ժամանակավորապես տեղակայված էին այստեղով անցնող աքսորյալները, սակայն նրանց թույլ չտվեցին վերադառնալ և թաղել ճանապարհին մահացածներին:

Ամենածանր վիճակում են գտնվում այն կանայք, որոնք ծննդաբերուն են ճանապարհին: Նրանց հազիվ ժամանակ են տալիս երեխային լույս աշխարհ բերելու համար: Մի կին, գիշերը ծննդաբերեց երկվորյակների: Առավոտյան նա պետք է երկու երեխաները մեջքին, ոտքով շարունակեր ճանապարհը: Երկու ժամվա ճանապարհից հետո նա վայր ընկավ: Նա ստիպված թողեց երեխաներին թփի տակ, իսկ ինքը զինվորների կողմից պարտադրված շարունակեց ճանապարհը մյուսների հետ: Մեկ այլ կին, որը ծննդաբերեց ճանապարհին, ստիպված էր շարունակել ճանապարհը, տապալվեց գետնին և մահացավ: Մի կին էլ, որը ծննդաբերեց Այնթափից ոչ հեռու, շրջապատվեց ամերիկյան միսիոներներով, որոնց հաջողվեց հասնել այն բանին, որ նրան թույլ տվեցին ուղևորվել ավանակով՝ փալասներով փաթաթված երեխայի հետ միասին: Այս օրինակները նկատվել են դեռ միայն Մարաշից Այնթափ տանող ճանապարհի հատվածում: Այստեղ, իջևանատան մաքրման ժամանակ, որը դրանից մեկ ժամ առաջ լքեց շարասյուններից մեկը, գտան նորածին երեխա: Մարաշում թաշխանեում[8] գոմաղբի մեջ գտան երեք նորածին երեխա:

Երեխաների բազմաթիվ անթաղ դիակներ են հայտնաբեր-

---

[8] Քարակերտ իջևանատուն:

վում ճանապարհներին: Մի թուրք սպա, որը երեք օր առաջ ինձ հետ վերադարձավ, ասաց, որ բազմաթիվ երեխաներ մայրերը թողեցին ճանապարհներին, քանի որ այլևս չէին կարող նրանց կերակրել: Ավելի չափահաս երեխաներին մայրերից խլում էին թուրքերը: Մայրը, այնպես ինչպես իր եղբայրները, իրենց հետ ունեին մեկական երեխա, որոնց ուզում էր մահմեդական դաստիարակել: Երեխաներից մեկը խոսում է գերմաներեն: Հնարավոր է, որ նա որևէ գերմանական որբանոցի սաներից է: Այստեղով անցնող շարասյուներից ճանապարհին ծնունդաբերած կանանց թիվը հասնում է 300-ի:

Գտնվելով սոսկալի կարիքի և հուսահատության մեջ, ընտանիքներից մեկն այստեղ մի թուրքի 6 լիրով (մոտ 110 մարկ) վաճառեց իր 18 ամյա աղջկան: Կանանց ամուսինների մեծ մասը զորակոչվել էին բանակ: Նրանց, ովքեր չենթարկվեցին զորակոչի հրամանին կախեցին կամ գնդակահարեցին, ինչպես վերջերս յոթ հոգու՝ Մարաշում: Սակայն զինապարտները մեծամասամբ ներգրավվում են միայն ճանապարհների շինարարությանը և զենք կրելու իրավունք չունեն: Վերադարձողները իրենց տունը տեսնում էին դատարկ: Երկու օր առաջ Ջերաբուլուսում ես հանդիպեցի մի հայ զինվորի, որը Երուսաղեմից արձակուրդ էր գալիս իր հայրենի Գեբեն գյուղը (Զեյթունի և Սսի միջև ընկած): Այդ մարդուն ես գիտեմ մի քանի տարի: Այստեղ նա իմացավ, որ իր կինը, մայրը և երեք երեխաները աքսորվել են անապատ: Նրա բոլոր փորձերը, իմանալ իր հարազատների գտնվելու վայրը, մնացին անարդյունք:

Արդեն 28 օր անընդմեջ Եփրատում կարելի է տեսնել դիակներ, որոնց հոսանքով ջուրը քշում է ցած՝ երկուական՝ կապված մեջք մեջքի, կամ հնգյակով, ընդհուպ մինչև 8 հոգի՝ ձեռքերից կապված: Թուրք գնդապետին, որը գտնվում է Ջերաբուլուսում, հարց տրվեց, թե ինչու չի հրամայում թաղել դիակները, ինչին նա պասասխանեց, որ ինքը չունի նման հանձնարարություն և բացի այդ հնարավոր չէ պարզել մահմեդականներ են նրանք թե քրիստոնյաներ, քանի որ կտրված էին դիակների սեռական օրգանները: (Մահմեդականներին նրանք կթաղեին, իսկ քրիստոնյաներին՝ ոչ): Ալիքներով ափ բերված դիակները հոշոտվել էին շների կողմից: Մյուս դիակների վրա, որոնք մնացել էին առափնյա ծանծաղուտներում, իջնում էին ուրուրները: Մի գերմանացի ձիով շրջելու ժամանակ, տեսել էր վեց զույգ դիակ, որոնք հոսանքով քշվել էին ցած: Գերմանացի ռոտմիստրը պատմում էր, որ Դիարբեքիրից Ուրֆա ձիով ճանապարհորդելու ժամանակ տեսել է ճանապարհի երկու կողմն ընկած բազմաթիվ անթաղ դիակներ՝ բացառապես երիտասարդ տղամարդիկ՝ կտրված կոկորդ-

ներով: (Դրանք բանակ զորակոչված ճանապարհաշինարարներն էին): Մի թուրք փաշա արտահայտվել է մի հեղինակավոր հայի առջև. «Ուրախ եղեք, եթե անապատում գտնեք որևէ տեղ ձեր գերեզմանի համար, ձեզնից շատերը այդ էլ չունեն»:

Կենդանի է մնում միայն տեղահանվողների կեսը: Երեկ չէ առաջի օրը մահացավ մի կին, երեկ՝ 14 մարդ, իսկ այսօր առավոտյան ևս 10-ը: Մի բողոքական հոգևորական Օսմանիեում ասաց թուրքերից մեկին. «Այս տեղահանվածներից նույնիսկ կեսը կենդանի կմնա»: Թուրքը պատասխանեց. «Մենք էլ դրան ենք ձգտում»:

Չի կարելի մոռանալ, որ կան մահմեդականներ, որոնք դատապարտում են հայերի դեմ կատարվող հանցագործությունները: Մի մահմեդական շեյխ, Հալեպում շատ հեղինակավոր մի անձնավորություն, իմ ներկայությամբ այսպես արտահայտվեց. «Երբ խոսում են հայերի նկատմամբ վերաբերմունքի մասին, ես ամաչում եմ, որ թուրք եմ»:

Նա, ով ուզում է ողջ մնալ, ստիպված է ընդունել մահմեդականություն: Դրան նպաստելու համար այստեղ և այնտեղ առանձին ընտանիքների ուղարկում են զուտ մահմեդական բնակավայրեր: Այնքափով անցած տեղահանվածների թիվը մինչև այսօր կազմում է 50000: Դրանցից ինը տասներորդն այսօր երեկոյան մեկնելուց առաջ հրաման ստացան այն մասին, որ պետք է ճանապարհ ընկնեն: Շարասյունների մեծ մասը անցնում է Ուրֆայով, ավելի քիչ մասը՝ Հալեպով: Առաջինները Մոսուլի աղողությամբ, վերջինները՝ Դեր-էս-Զորի ուղղությամբ: Իշխանություններն ասում են, որ նրանք պետք է բնակվեն այնտեղ, սակայն նա ով կփրկվի սրից, կդատապարտվի սովամահության: Եփրատով Դեր-էս-Զոր շարասյուններով եկան մոտ 10000 մարդ: Մնացածների մասին դեռևս որևէ տեղեկություն չկա: Մոսուլ ուղարկվածների մասին ասում են, որ նրանք պետք է բնակվեն երկաթգծից 25 կմ հեռավորության վրա, թերևս, դա նշանակում է, որ նրանց ուզում են քշել անապատ, որտեղ նրանց ոչնչացումը կկատարվի առանց վկաների:

Այն, ինչի մասին ես գրում են միայն չնչին մասն է այն բոլոր գազանությունների, որոնք այստեղ կատարվում են արդեն երկու ամիս և որոնք ավելանում են օրեցօր: Սա միայն մի մասն է այն ամենի, ինչ ես ինքս եմ տեսել և իմացել ականատես հանդիսացող ծանոթներից և ընկերներից: Իմ հայտնածի վերաբերյալ ցանկացած պահի կարող եմ բերել տարեթվերը և ականատես եղած անձանց:

ՀԱՎԵԼՎԱԾ 3

ԲԱՅԲՈՒՐՏԻ ՀԱՐԳԱՐԺԱՆ ՀԱՅԵՐԻՑ ՄԵԿԻ ԱՅՐԻՒ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆԸ

(1915թ. վերջ)

Ամուսինս մահացել է ութ տարի առաջ ինձ, մորս և ութամյա աղջկաս թողնելով մեծ ունեցվածք, որով մենք կարող էինք հանգիստ ապրել: Զորակոչի սկզբից իմ տանը առանց վարձատրության բնակվում էր պարետը: Նա ասաց, որ լավ կլինի ես հեռանամ, սակայն ես որոշեցի, որ պարտավոր եմ բաժանել իմ ժողովրդի ճակատագիրը: Ես ինձ հետ վերցրեցի երեք ձի, որոնց բարձեցի պաշարով: Աղջկաս պարանոցին զարդի տեսքով կային մի քանի ոսկեդրամներ, և ես էլ ինձ հետ ունեի մոտ 20 ֆունտ և երկու ադամանդ: Մնացած ամեն ինչը մենք ստիպված էինք թողնել: Մեր խումբը ճանապարհ ընկավ հունիսի 14-ին: Խմբի մեջ հաշվվում էր 400-ից 500 մարդ, մեզ ուղեկցում էին 15 ոստիկաններ: Մութասերիֆը (շրջանային կառավարիչը) մեզ «բարի ճանապարհ» մաղթեց: Հազիվ էինք մենք քաղաքից հեռացել երկու ժամվա ճանապարհի հեռավորությամբ, երբ ճանապարհին մեզ շրջապատեցին շրջակա գյուղերի բնակիչներից կազմված խմբերը, և բազմաթիվ ավազակներ, զինված հրացաններով, կացիններով և այլն, խլեցին այն ամենը, ինչ մենք ունեինք մեզ հետ: Հենց ոստիկանները վերցրեցին իմ ձիերը և վաճառեցին թուրք մուհաջիրներին: Գումարը դրանց դիմաց դրեցին իրեց գրպանները: Հետո նրանք վերցրեցին իմ փողերը և այն, ինչ աղջիկս կրում էր պարանոցին, բացի դրանից նաև ողջ մեր պարենը: Այդ ամենից հետո նրանք մեզանից առանձնացրեցին տղամարդկանց: Յոթից ութ օրվա ընթացքում նրանք մեկը մյուսի հետևից սպանեցին բոլորին: Արական սեռի ներկայացուցիչներից 15 տարեկանից մեծ ոչ ոք կենդանի չմնաց: Բավական էր երկու հարված խզակոթով, որ վերջ տրվեր որևէ մեկին: Իմ կողքին սպանեցին երկու քահանաների՝ Տեր-Վահանին՝ ծնունդով Դերջանից և Տեր-Միքայելին, որը 90 տարին անց էր: Ավազակները բռնում էին բոլոր գեղեցկատես կանանց և աղջիկներին և տանում էին իրենց ձիերով: Շատ կանանց և աղջիկների այդպիսով տարան սարեր, որոնց թվում նաև քրոջս, որի մեկ տարեկան երեխային նրանք մի կողմ նետեցին: Մի թուրք վերցրեց երեխային, իսկ թե ուր տարավ՝ չգիտեմ: Մայրս վազում էր այնքան ժամանակ, մինչև ուժասպառվեց: Ճանապարհի եզրին, բարձունքի վրա նա վայր ընկավ: Ճանապարհին մենք գտնում էինք նրանց, ում Բայբուրթից տարել էին նախորդ խմբերի հետ: Սպանվածների մեջ ընկած էին մի քանի

կանայք՝ իրենց ամուսինների և որդիների հետ: Մեզ պատահում էին և՛ ծեր մարդիկ և՛ մանուկներ, դեռ ողջ, սակայն սոսկալի վիճակում: Երկար լացից նրանք կորցրել էին իրենց ձայնը:

Գիշերները մենք իրավունք չունեինք քնել գյուղերում և ստիպված էինք պառկել գետնին, գյուղի սահմաններից դուրս: Ես տեսնում էի, թե ինչպես էին մարդիկ խոտ ուտում՝ քաղցը հագեցնելու համար: Գիշերը ոստիկանները, ավազակները և գյուղերի բնակիչները չլսված չարագործություններ էին կատարում: Մեր ընկերներից շատերը մահացան սովից և կաթվածահարությունից: Մյուսները մնում էին ճամփեզրին, չափազանց ուժասպառ, որ ի վիճակի լինեին շարունակելու ճանապարհը:

Մի օր առավոտյան մենք տեսանք 50-60 սայլեր՝ 30 թուրք այրիներով, որոնք Էրզրումից գնում էին Կոստանդնապոլիս, նրանց ամուսինները զոհվել էին պատերազմում: Այդ կանանցից մեկը նշան արեց ոստիկանին, ցույց տալով այն հային, որին ուզում էր, որ սպանեին: Ոստիկանը հարցրեց, թե արդյոք ինքը չէր ցանկանա դա անել, ինչին նա պատասխանեց.«Իսկ ինչու՞ ոչ»: Նա գրպանից հանեց ատրճանակը և գնդակահարեց նրան: Այդ թրքուհիներից յուրաքանչյուրն իր հետ տանում էր 10 տարեկան և ավելի փոքր հինգից վեց հայ աղջիկ: Տղաներին թուրքերը չէին ցանկանում վերցնել, նրանք սպանում էին բոլորին, ընդ որում՝ ցանկացած տարիքի: Այդ կանայք ուզում էին վերցնել իմ աղջկան: Սակայն նա չէր ուզում ինձնից հեռանալ: Վերջապես մեզ երկուսիս նստեցրին սայլին, երբ մենք խոստացանք դառնալ մահմեդական: Հենց որ մենք բարձրացանք սայլին, նրանք սկսեցին մեզ սովորեցնել, թե ինչ պետք է մենք անենք որպես մահմեդականներ և փոխեցին մեր քրիստոնեական անունները մահմեդականի:

Ամենաչտեսնված և սարսափելի գազանությունները մեզ սպասում էին, երբ մենք հասանք Երզնկայի հարթավայր՝ Եփրատի ափերի մոտ: Կանանց, աղջիկների և մանուկների այլանդակված դիակները սարսուռ էին առաջացնում ցանկացած մարդու մոտ: Նույնիսկ մեզ հետ եղած կանանց և երեխաներին, ավազակները շատ սարսափներ պատճառեցին: Նրանց ձայները հասնում էին երկինք: Եփրատի ափին ոստիկանները բոլոր կենդանի մնացած 15 տարեկանից ցածր երեխաներին գցում էին գետը: Նրանք, ովքեր կարող էին լողալ և փորձում էին լողալով անցնել այն՝ գնդակահարվեցին: Երբ Սվազի ճանապարհով մենք հասանք մինչև Էնդերես, լանջերը և դաշտերը լցված էին ուռած և սևացած դիակներով, որոնք օդը լցնում էին գարշահոտությամբ, թունավորելով այն:

Յոթ օր անց մենք հասանք Սվազ: Այնտեղ այլևս չկար ոչ մի ողջ մնացած հայ: Թրքուհիները ինձ և աղջկաս տարան բաղնիք և ցույց տվեցին բազմաթիվ այլ կանանց և աղջիկների, որոնք պետք է մահմեդականություն ընդունեին: Յոզղատի ճանապարհին մենք հանդիպեցինք չադրաներով վեց կանանց, իրենց երեխաները ձեռքերին: Երբ ոստիկանները բարձրացրեցին չադրաները, հայտնաբերեցին, որ դրանք կանացի հագուստ հագած տղամարդիկ էին և տեղում գնդակահարեցին նրանց: Երկար ճանապարհից հետո, որը տևեց 32 օր, մենք հասանք Կոստանդնուպոլիս:

ՀԱՎԵԼՎԱԾ 4

ՔԱՂՎԱԾՔ ՀՈՍԵՅՆԻԿԻՑ (ԽԱՐԲԵՐԴԻՑ ԿԵՍ ԺԱՄՎԱ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎՐԱ) ՀԱՅՈՒՀԻ ՄԱՐԻՑԱ ՔԵՉԵՋՅԱՆԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆԻՑ, ՈՐԸ ՏԵՂԱՓՈԽՎԵՑ ՀԱԼԵՊ ԵՎ ՔԱՆԻ ՈՐ ԸՆԴՈՒՆԵԼ ԷՐ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՊԱՏԱԿՈՒԹՅՈՒՆ, ԱՆՁՆԱԳԻՐ ՍՏԱՑԱՎ ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ ՄԵԿՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Զատիկից հետո Խարբերդում, Մեսերում և շրջակա գյուղերում կատարվեցին բազմաթիվ կալանավորումներ: Կալանավորները բանտերում ենթարկվում էին խոշտանգումների: Նրանց ծեծում էին, քաշում էին մազերը և եղունգները, տանջում էին շիկացած երկաթով, նախապես նրանց կապկպելով պարաններով: Զինվորներից մեկը նստել էր հղի կնոջ փորի վրա, իսկ մյուսները ծեծում էին նրան, որպեսզի նա ցուցմունք տա իր ամուսնու գտնվելու մասին:

Հուլիսի 4-ին մենք սկզբում տեղահանվեցինք Դիարբեքիրի ուղղությամբ: Մենք մոտավորապես 100 ընտանիքներ էինք և մեզ հետ ունեինք բեռնակիր անասուններ: Հաջորդ օրը մենք անցում էինք տղամարդկանց բազմաթիվ դիակների մոտով, հավանաբար դրանք այն երկու հարյուր մարդիկ էին, որոնք Սահակ վարդապետի հետ միասին աքսորվեցին մեզնից 10 օր առաջ: Ամբողջ օրվա ընթացքում մենք խմում էինք ցեխաջուր: Երրորդ օրը Արղանայի ճանապարհին մենք անցանք դիակների կույտի մոտով: Այստեղ գլխավորապես սպանվել էին տղամարդիկ և կանայք:

Վեցերորդ օրը մենք հասանք քրդական գյուղերից մեկը: Ոստիկանները այստեղ մեզնից պահանջեցին մեր փողերը և բոլոր զարդերը, որոնք դեռ մեր մոտ կային, սպառնալով պատվազրկել մեզ: Իններորդ օրը նրանք խլեցին մեր ողջ սպիտակեղենը: Երբ մենք հասանք Դիարբեքիր, ոստիկանները տարան մեր բոլոր բեռնակիր

անասուններին և տարան մի կնոջ և երկու երիտասարդ աղջկա: Ամբողջ օրը մենք նստած էինք արևի տակ, Դիարբեքիր քաղաքի պատերի մոտ: Քաղաքից եկան թուրքերը և տարան մեր երեխաներին: Երեկոյան մենք արդեն պատրաստվում էինք ճանապարհ ընկնել, երբ ենթարկվեցինք քաղաքից եկած թուրքերի հարձակմանը: Մենք թողեցինք ամեն ինչ, ինչ որ ունեինք մեր բեռներում և փախանք, ով ուր պատահի, որպեսզի փրկենք մեր կյանքն ու պատիվը: Գիշերը մեր վրա ևս երեք անգամ հարձակվեցին թուրքերը և իրենց հետ տարան աղջիկներին և երիտասարդ կանանց:

Հաջորդ օրը մեզ զրկելով ջրից, երկար ժամանակ քշում էին հարավ: Մեզնից շատերը ընկնում էին գետին քաղցից և ծարավից: Ամեն օր մեր վրա հարձակվում էին և ենթարկում ծաղրուծանակի: Մեզնից ոմանց տարան իրենց հետ: Մի կնոջ, որը դիմադրություն ցուցաբերեց, երբ ուզում էին տանել նրա աղջկան, կամրջից վայր գցեցին այնպես, որ նա կոտրեց իր ձեռքը: Հետո նրան ցած նետեցին ժայռից իր աղջիկներից մեկի հետ: Տեսնելով դա, մյուս դուստրը նետվեց նրանց հետևից, որպեսզի մեռնի մոր և քրոջ հետ միասին:

Երբ մենք հասանք Մարդինի մոտ, մեզ ամբողջ ութ օր պահում էին դաշտում, բաց երկնքի՝ կիզիչ արևի տակ: Մոտակայքում գտնվում էր ջրամբարը: Գիշերը թուրքերը ջուրը թողում էին դեպի դաշտ, որտեղ գտնվում էր մեր ճամբարը: Հետո նրանք կրակում էին մեր վրա և առևանգում էին կանանց և երեխաներին: Մի անգամ երեկոյան հրաման տվեցին ճանապարհ ընկնել: Ամեն օր կատարվում էին միևնույն նողկալի արարքներն ու պատվազրկումներն ու մեր քարավանն ավելի շատ էր հալվում: Միայն Մարդինից մի ոստիկան (ենթադրաբար արաբ) էր մեզ հետ կարգին վարվում:

Մենք եկանք Վերանշեհիր, իսկ հետո Ռաս-ուլ-Այն: Ռաս-ուլ-Այն հասնելուց առաջ հանդիպեցինք ամբողջովին դիակներով լցված երեք ցիստեռների:

Ռաս-ուլ-Այնում մենք հանդիպեցինք նաև այն կանանց, որոնք տեղահանվել էին Էրզրումից, Էգինից, Կեխիից և այլ վայրերից և նույնպես ճանապարհ էին ընկել դեպի Դեր-Էս-Զոր: Հաճախ մեզ առաջարկում էին կամ ուզում էին պարտադրել ընդունել մահմեդական հավատքը: Մենք պատասխանում էինք, որ ավելի լավ է ջուրն ընկնենք կամ մեռնենք, քան մահմեդականություն ընդունենք: Հոգևոր առաջնորդները, շատ էին զարմացած նման պատասխանով և ասում էին. «Մենք երբեք չենք տեսել մարդկանց, որոնք բոլորն անխտիր այդպիսի ձգտումով պաշտպանեին իրենց պատիվն ու կրոնը»:

Ռաս-ուլ-Այնում մենք տեսանք Առաքել աղային, որը եկել էր

Հալեպից, որպեսզի փորձեր որևէ մեկին փրկել: Նրան հաջողվեց իր հետ Հալեպ տանել մեզնից մի քանիսին: Հալեպի հայերը մեզ ուտելու բան տվեցին: Մինչ այդ մի ամբողջ օր ոչինչ չէինք կերել: Հալեպում գտնվում էին մարդիկ, որոնք տեղահանվել էին Հայաստանի տարբեր բնակավայրերից, որոնք ճանապարհին էին գտնվել չորս ամիս: Նրանք այնքան էին հյուծված, որ ամեն օր մահանում էր մոտ 40 մարդ: Տղամարդիկ կացնահարվել և սրահարվել էին Շեյթան Դերեսի դաշտավայրում: Դրանից առաջ նրանց պարտադրում էին գերեզմաններ փորել, իսկ հետո կազմակերպեցին կոտորածը: Մի հայ զինվոր ինձ պատմեց, թե ինչպես էին թուրքերը հայերին նետում Եփրատը: Նրան, հինգ ընկերների հետ հաջողվեց փրկվել, լողանցնելով գետը: Նրանք երեք օր ճանապարհին էին և ամենուրեք տեսնում էին ճանապարհին ընկած դիակներ:

Ամբողջ ճանապարհի ընթացքում մենք թուրքական իշխանություններից որևէ սնունդ չստացանք: Մեր հագուստը փթել էր, իսկ մենք գրեթե բոլորս խելագարվել էինք մեր տառապանքներից: Շատերը, երբ նրանց տվեցին նոր հագուստ, արդեն չգիտեին, թե ինչպես հագնեն այն: Երբ նրանք այդքան ժամանակ անց, առաջին անգամ լողացան և մաքրվեցին այդ ամբողջ կեղտից, հանկարծ շատերը նկատեցին, որ զրկվել են իրենց մազերից:

ՀԱՎԵԼՎԱԾ 5

ՄԱՐԶՎԱՆԻՑ ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐԻ ՃԱԿԱՏԱԳՐԻ ՄԱՍԻՆ ՄԻ ՄԻՍԻՈՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ

(1915թ.)

Խավարի մեջ են կատարվում չարագործությունները: Կեսգիշերից հետո ոստիկանները դուրս բերեցին մոտ 300 բանտարկյալների, կապեցին նրանց ձեռքերը, արգելելով իրենց հետ որևէ պաշար, հագուստ և անկողին վերցնել: Իբր թե նրանք պետք է գնային Ամասիա, սակայն երեք քառորդ ժամ ճանապարհ անցնելով Ցիլեի (Ցելա) ուղղությամբ՝ հայտնի վայր, որտեղից Հուլիոս Կեսարը Հռոմ ուղարկեց իր "veni, vidi, vici"-ի գրությունը, նրանք բոլորը կացնահարվեցին: Օրեցօր այսպես էին նրանց «աքսորում»: Չինովնիկների վրկայությամբ, այսպիսով սպանվեց 1215 մարդ: Թուրք ականատեսների վկայությամբ մահապատժի վայրում տեղադրվել էր մեծ վրան, որտեղ զոհերին մանրամասն հարցաքննում և մանրակրկիտ խուզարկում էին: Նրանց տրվող հարցերը վերաբերվում էին հիմնականում զենքին, մտացածին հեղափոխական ծրագրերին և տարբեր

անձանց անուններին: Այնուհետև խլում էին նրանց ունեցած արժեքավոր իրերը:

Վրանից մի քիչ հեռու փորված էր մի մեծ փոս: Դրան մոտեցնում էին մոտավորապես հինգ գերիների, միայն ներքնահագուստով, ձեռքերը մեջքի ետևում, հետո ծնկի էին իջեցնում նրանց և կացնի կամ դաշույնի հարվածով ուղարկում էին այն աշխարհ: Դա հաստատվում է ականատեսների, ինչպես նաև այդ արյունոտ գործին մասնակցություն ունեցած ոստիկանների կողմից:

Այն բանից հետո, երբ այդ ձևով ազատվում էին տղամարդկանցից, ծերերին և 18 տարեկանից ցածր տղաներին բաց թողեցին հետևյալ խոսքերով. «Նորին մեծություն սուլթանը ձեզ ազատություն է տվել, գնացեք և աղոթեք նրա համար»:

Անհնար է նկարագրել, թե այդ ազատ արձակվածները ինչպես էին իրենց պահում, երբ կրկին հասան իրենց տները: Նրանք թռչկոտում էին ուրախությունից, քանի որ կարծում էին, որ ամեն ինչ արդեն անցյալում է և կենդանի մնացածների համար արդեն կգան լավ օրեր: Ցավոք, այդ ուրախությունը տևեց ընդամենը մեկ օր: Հաջորդ օրը քաղաքային մունետիկը քաղաքի փողոցներում հայտարարում էր այն մասին, որ բոլոր հայերը՝ կանայք, երեխաները և ծերերը պետք է ուղևորվեն Մոսուլ: Միայն հիմա խեղճերը հասկացան սոսկալի ճշմարտությունը: Իսկ մինչ այդ պահը նրանք դեռ ապրում էին պատրանքներով, որ ինչ-որ փոփոխությունների հետեվանքով պետք է բացվի և կբացվի ազատության ճանապարհը: Հույսը, որ ամենասարսափելի դեպքերը կշրջանցեն, իրենց չէր լքում մինչև վերջին պահը: Իմ զրույցներից հետո շատ թուրքերի՝ պաշտոնատար և այլ անձանց հետ, ես եկա այդ համոզմունքին, որ բոլոր տղամարդկանց, որոնց տանում են, նույնպես սպանում են:

ՀԱՎԵԼՎԱԾ 6

ՀԱԼԵՊՈՒՄ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍ ՊԱՐՈՆ ՋԵՔՍՈՆԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆԸ

Հալեպ, 3 օգոստոսի 1915թ..

Անմիջապես հարձակումների և կոտորածի մեթոդը, որը սովորական էր նախկին ժամանակներում, այսօր փոքր-ինչ փոխվել է այն իմաստով, որ մեծ թվով տղամարդիկ և տղաներ տեղահանվում են հարազատ բնակավայրերից և անհետանում են ճանապարհին այն նպատակով, որ հետագայում նրանց ետևից գնան նաև կա-

նայք և երեխաները: Ուղևորություններ կատարած անձինք, որոնք գալիս էին երկրի խորքերից, որոշ ժամանակ գերազանցապես տալիս էին այնպիսի տեղեկություններ, որ տղամարկանց սպանում են, որ մեծ թվով դիակներ են ընկած ճանապարհներին և լողում են Եփրատի ջրերում, որ երիտասարդ կանանց, աղջիկներին և երեխաներին նրանց ուղեկցող ոստիկանները տալիս էին քրդերին և որ այդ նույն ոստիկանների և քրդերի կողմից կատարվում էին չտեսնված հանցագործություններ: Սկզբում այդ տեղեկություններին այնքան էլ չէին հավատում: Բայց քանի որ Հալեպ են գալիս բազմաթիվ փախստականներ, այդ փաստերի ճշմարտացիությունը այլևս կասկած չի հարուցում: Օգոստոսի 2-ին մոտ 800 միջին հասակի կին, ինչպես նաև տարեց կանայք և 10 տարեկանից փոքր երեխաները ամենաողբալի վիճակում, որքանով որ դա կարելի է պատկերացնել, Դիարբեքիրից ոտքով 45 օրվա ճանապարհից հետո հասան այստեղ: Նրանք պատմում էին, որ բոլոր երիտասարդ աղջիկներին և կանանց տարան քրդերը, որ նույնիսկ վերջին մանրադրանները և իրենց հետ ունեցածը խլվում էր, պատմում էին սովի, ամեն տեսակ զրկանքների մասին: Նրանց ողորմելի վիճակը լրիվ հաստատում է իրենց պատմածի հավաստիությունը:

Ես իմացա, որ 4500 մարդ Սողեթից աքսորվել է Ռաս-ուլ-Այն, ավելի քան 2000 մարդ՝ Մեզերից Դիարբեքիր և որ ամենուրեք, բոլոր քաղաքներից՝ Բիթլիսից, Մարդինից, Մոսուլից, Սևերեկից, Մալաթիայից, Բեզնից և այլն, հայերը տեղահանվել են, որ տղամարդիկ, տղաները և կանանցից շատերը սպանվել են, իսկ մնացածները ցրվեցին ամբողջ երկրով: Եթե դա ճիշտ է, ինչում հազիվ թե կարելի է կասկած ունենալ, վերջիններս, հավանաբար, նույնպես կմեռնեն քաղցից, հիվանդություններից և գերհոգնածությունից: Դեր-էս-Զորի նահագապետը, որն այժմ գտնվում է Հալեպում, ասում է, որ Դեր-էս-Զորում ներկայումս գտնվում են 15000 հայ փախստականներ: Երեխաներին հիմա վաճառում են, որպեսզի նրանց փրկեն սովամահությունից, քանի որ կառավարությունը որևէ օգնություն չի ցուցաբերում: Միայն Հալեպով ընդհուպ մինչև հուլիսի 30-ը ընդհանուր առմամբ անցել է 15255 մարդ:

Հալեպ, 15 օգոստոսի

Ասում են, որ այժմ տեղահանվել են Այնթափի, Անտիոքի, Ալեքսանդրետի, Քեսաբի և Հալեպի շրջանի բոլոր փոքր քաղաքների մոտ 60000 անձինք: Բնական է ենթադրել, որ նրանք կունենան այն դառը և դաժան ճակատագիրը, ինչ որ իրենց նախորդները:

Ամերիկյան միսիոներական կարևոր հաստատությունները, այս տեղանքում կորցնում են իրենց պրոֆեսորներին, ուսուցիչներին, օգնականներին և ուսանողներին և նույնիսկ որբանոցներից տարվում են հարյուրավոր երեխաներ և այդպիսով ոչնչացվում են այս բնագավառում կատարված հիսունամյա անընդհատ ջանքերի պտուղները: Կառավարական չինովնիկները հեգնանքով հարցնում են, թե ինչ են անելու ամերիկացիները այդ հաստատությունների հետ, երբ հայերի վերջը կտրվի:

Իրադրությունը օրեցօր ավելի ճգնաժամային է դառնում, դրա վերջը չի երևում:

Քանի որ ներքին առևտրի 90%-ը, գտնվում է հայերի ձեռքում, այս ամենի արդյունքն այն է, որ երկիրը կանգնած է կործանման եզրին: Հաշվի առնելով այն, որ գործերի գերակշիռ մեծամասնությունը կատարվում է ապառիկով, հարյուրավոր հեղինակավոր ոչ հայ առևտրականներ կանգնած են սնանկացման եզրին: Տեղահանված վայրերում չնչին բացառություններով չի մնացել ոչ մի դարբին, որմնադիր, ատաղձագործ, բրուտ, դերձակ, ծածկասայլ սարքող, դեղագործ, բժիշկ, փաստաբան, ոսկերիչ, կոշկակար, ջուլհակ կամ որևէ ծառայող ու առևտրական. փաստորեն երկիրը գտնվում է անօգնական վիճակում:

ՀԱՎԵԼՎԱԾ 7

ՏՐԱՊԻԶՈՆՈՒՄ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍ ՕՍԿԱՐ ՀԱՅՁԵՐԻ ՀԱՁՈՐԴՈՒՄԸ

Տրապիզոն, 28 հուլիսի 1915թ.

Շաբաթ օրը, հուլիսի 26-ին, փողոցներում կախված էր հայերի տեղահանման մասին հրամանը: Չորեքշաբթի օրը, հուլիսի 1-ին բոլոր փողոցները սվիններով պահպանվում էին ոստիկանների կողմից, և հայերի իրենց տներից վտարման գործընթացը սկսվեց: Տղամարդկանց, կանանց և երեխաների խմբերը՝ ուսերին բեռներով և կապոցներով, հավաքվեցին ոչ մեծ նրբանցքում, հյուպատոսության մոտ և հենց որ հավաքվեց մոտ 100 մարդ, ոստիկանները նրանց քշեցին հյուպատոսության առջևով, տապին և փոշոտ ճանապարհներով՝ դեպի Էրզրում: Քաղաքից դուրս հրամայեցին սպասել այնքան ժամանակ, մինչև չհավաքվեց 2000 մարդ, հետո նրանց ուղարկեցին առաջ: Այդպիսի երեք խմբեր, այսինքն մոտ 6000 մարդ, տեղահանվեցին այստեղից առաջին երեք օրերի ընթացքում, իսկ Տրա-

պիզոնից և շրջակայքից ոչ մեծ խմբերի տեղահանությունը ավելի ուշ կազմեց մոտ 4000 մարդ: Կանանց և երեխաների ողբն ու հեծեծանքները հոգեցուցց էին: Այդ խեղճերից ոմանք հարուստ և ազնվական շրջաններից էին: Նրանք սովոր էին լիության և ունևոր կյանքի: Այստեղ կային հոգևորականներ, առևտրականներ, բանկիրներ, իրավաբաններ, մեխանիկներ, արհեստավորներ, մարդիկ կյանքի բոլոր բնագավառներից: Գեներալ նահանգապետն ինձ ասաց, որ նրանց թույլ էր տրվել տեղափոխվել սայլերով, սակայն նրանցից ոչ ոք, թվում է, չի պատրաստել նման բան: Եվ այնուամենայնիվ ես գիտեմ մի վաճառականի, որը վճարեց 15 թուրքական ֆունտ (270 մարկ) սայլի համար, որը պետք է նրան և նրա կնոջը հասցներ Էրզրում: Սակայն երբ նրանք հասան հավաքատեղի, որը գտնվում էր քաղաքից տաս րոպեի ճանապարհի հեռավորության վրա, ոստիկանը հրամայեց նրան թողնել սայլը, որը հետ ուղարկեցին քաղաք: Ամբողջ մահմեդական բնակչությունը ամենասկզբից գիտեր, որ այդ մարդիկ իրենց որսն են դառնալու և նրանց հետ վարվելու էին ինչպես հանցագործների հետ: Տրապիզոնում հրամանի հրապարակման օրվանից, հունիսի 25-ից, ոչ մի հայի չէր թույլատրվում որևէ բան վաճառել որևէ մեկին, տուգանքի սպառնալիքով արգելվում էր նրանցից բան գնել: Ինչպե՞ս պետք է նրանք միջոցներ հայթայթեին տեղափոխման համար այդ դեպքում: Վեց կամ ութ ամիս Տրապիզոնում ոչ մի առևտրական գործ չէր կատարվում, և մարդիկ սպառեցին իրենց ունեցած դրամագլուխը: Ինչու՞ էին նրանց խանգարում վաճառել գորգերը և այլ իրերը՝ ճանապարհածախս հայթայթելու համար: Շատ մարդիկ, որոնք ունեին անշարժ գույք, որը կարող էին վաճառել, եթե նրանց թույլ տրվեր, ստիպված էին ոտքով գնալ, առանց միջոցների, իրենց հետ ունենալով միայն այն, ինչ կարող էին արագ հավաքել իրենց տանը և կրել իրենց ուսերին: Եթե հոգնածության պատճառով նրանք հետ էին մնում, նրանց սվինահարում էին և գցում էին գետը: Նրանց դիակները Տրապիզոնի մոտով գետը քշում էր դեպի ծով, կամ էլ փոքր գետերի հոսանքներով դրանք կախվում-մնում էին ժայռերին, որտեղ մնում էին տաս-տասներկու օր և սկսում էին նեխել, առաջացնելով այդ ճանապարհով անցնողների սարսափը: Ես խոսեցի ականատեսների հետ, որոնք հաստատեցին, որ մարդիկ տեսել են շատ մերկ դիակներ, ծառերի կոճղերին՝ գետի մեջ, կոտորածից տասնհինգ օր անց և որ հոտը սարսափելի էր:

Հուլիսի 17-ին գերմանական հյուպատոսի հետ միասին ձիով զբոսանք կատարեցինք, հանդիպեցինք երեք թուրքի, որոնք ավազի մեջ մերկ դիակի համար գերեզման էին փորում, որը մենք տեսանք

գետի մոտ: Դիակը այնպիսի տեսք ուներ, կարծես 10 օր կամ ավելի մնացել էր գետի մեջ: Թուրքերն ասացին, որ հենց նոր հոսանքով դեպի վեր իրենք արդեն թաղել են չորս դիակներ: Մյուս թուրքն ասաց, որ մի դիակ մեր հայտնվելուց անմիջապես առաջ հոսանքը քշեց ցած, դեպի ծով:

Հինգշաբթի օրվանից, հուլիսի 6-ից, Տրապիզոնի բոլոր հայկական տները, մոտ 1000, դատարկվեցին, իսկ բնակիչները տեղահանվեցին: Ընդ որում, չպարզվեց արդյո՞ք նրանցից մեկը եղել է մեղավոր կառավարության դեմ ուղղված որևէ շարժման մասնակցելու մեջ: Եթե որևէ մեկը հայ էր, ապա դա արդեն բավարար էր, որ նրա հետ վարվեին որպես հանցագործի և ենթարկեին տեղահանության: Սկզբում ասվում էր, որ պետք է հեռանան բոլորը, բացի հիվանդներից, վերջիններից ոմանց տեղավորեցին քաղաքային հիվանդանոցում այնքան ժամանակով, մինչև բավականաչափ չառողջացան: Հետագայում բացառվեցին նաև տարեց տղամարդիկ և կանայք, հղի կանայք, երեխաները, որոնք աշխատում էին հօգուտ կառավարության և հայ կաթոլիկները: Վերջապես որոշվեց, որ պետք է հեռանան նաև տարեց տղամարդիկ և կանայք, և կաթոլիկները և նրանք բոլորը ուղարկվեցին վերջին շարասյան հետևից: Մի քանի թեթև նավեր մեկը մյուսի հետևից բարձվեցին մարդկանցով և ուղարկվեցին Սամսուն: Բոլորի կարծիքով նրանց ծովն էին գցել: Համընդհանուր տեղահանության առաջին օրերին մի մեծ թիանավ բարձեցին այն տղամարդկանց, որոնց համարում էին Հայկական կոմիտեի անդամներ և ուղարկեցին Սամսուն: Երկու օր անց մի հայտնի ռուսահպատակ Վարդան անունով, որը տեղափոխվում էր այդ նույն նավով, ցամաքով վերադարձավ Տրապիզոն, գլխի վրա մեծ վերքով և այնքան իրեն կորցրած, որ չէր կարողանում բացատրվել: Այն ամենը, ինչ նա կարողանում էր ասել, հետևյալն էր. «Բում, բում»: Նա իշխանությունների կողմից տեղափոխվեց հիվանդանոց, որտեղ հաջորդ օրը մահացավ: Մի թուրք հայտնեց, որ այդ նավը Տրապիզոնից ոչ հեռու հանդիպել է մեկ այլ նավի՝ ոստիկաններով լցված, որոնք սկսեցին սպանել բոլոր տղամարդկանց և նետել ծովը: Նրանք կարծում էին, որ բոլորին սպանել էին, սակայն այդ ռուսահպատակը, որը ամրակազմ և ուժեղ էր, ընդամենը վիրավորվել էր և աննկատ լողացել դեպի ցամաք: Մի քանի այդպիսի թիանավեր հեռացան Տրապիզոնից: Մեծամասամբ դրանք մի քանի ժամ անց վերադառնում էին դատարկ:

Տոզ գյուղը, որը գտնվում էր Տրապիզոնից հազիվ երկու ժամվա ճանապարհի հեռավորության վրա, բնակեցված է առաքելական և կաթոլիկ հայերով ու թուրքերով: Մի հարուստ և ազդեցիկ հայ՝ Պո-

ղոս Միրիմյանը, ինչպես հայտնում է հավաստի ականատեսը, սպանվեց իր երկու որդիների հետ միասին: Նրանց կանգնեցրին մեկը մյուսի հետևում և գնդակահարեցին: 75 տղամարդկանց և կանանց տարան գյուղից ոչ հեռու գտնվող հովիտը: Կանանց սկզբում բռնաբարեցին ոստիկանության սպաները, իսկ հետո հանձնեցին ոստիկաններին: Ինչպես հայտնում է այդ ականատեսը, մի երեխայի սպանեցին ժայռին հարվածելով, գանգը ջարդելով:

Ստիպված էինք հրաժարվել նաև երեխաներին փրկելու ծրագրից: Նրանք տեղավորված էին Տրապիզոնի դպրոցներում և մանկատներում, հույն արքեպիսկոպոսի կողմից ստեղծված և օժանդակվող կոմիտեի հսկողության տակ, որի նախագահը հանդիսանում է վալին, իսկ փոխնախագահը՝ արքեպիսկոպոսը, իսկ անդամներ են երեք քրիստոնյա և երեք մահմեդական: Այժմ աղջիկներին տալիս են բացառապես մահմեդական ընտանիքների և այդպիսով բաժանում են իրարից: Մանկատների վերացումը և երեխաների բաշխումը առաջացրեց հույն արքեպիսկոպոսի մեծ հիասթափությունը, որն այդքան ջանասիրաբար աշխատում էր այդ ծրագրի իրագործման վրա և ստացել էր վալիի աջակցությունը: Սակայն «Միություն և առաջադիմություն» կոմիտեի ղեկավարին (նրա անունը Նաիլ-բեյ էր), որը հավանություն չէր տվել այս ծրագրին, հաջողվեց բավականին արագ ոչնչացնել այն: Շատ տղաների այստեղից ուղարկեցին, կարծես թե, ֆերմերների միջև բաշխելու նպատակով: Իբրև որբանոցը սպասարկող անձնակազմ մնացած մեծահասակ աղջիկներից ամենագեղեցիկներին տարան զվարճանքների համար նախատեսված տներ՝ հանցախմբի անդամների համար, որոնք, կարծես թե այստեղ դրության տերն են: Հավաստի աղբյուրից ես լսեցի, որ «Միություն և առաջադիմություն» կոմիտեի անդամներից մեկը քաղաքի կենտրոնի տներից մեկում պահում է տաս ամենագեղեցիկ աղջիկներին իր և իր ընկերների համար: Մի քանի փոքր աղջիկների տեղավորվել են մահմեդական ընտանիքներում: Ամերիկյան միսիոներական կազմակերպությունների նախկին աշակերտուհիներից մի քանիսը գտնվում են այդ կազմակերպությանը մոտ գտնվող մահմեդական ընտանիքներում, սակայն մեծամասնությանը, բնականաբար, նման բախտ չվիճակվեց:

Հազարավոր հայկական տներ մեկը մյուսի հետևից ավերվում են ոստիկանության կողմից: Կահույքը, անկողինը և արժեքավոր ամեն ինչ պահվում է քաղաքի մեծ շենքերում: Որևէ փորձ չի արվում այդ իրերը կարգավորելու ուղղությամբ, իսկ այդ ունեցվածքը այդպես կուտակված՝ «կառավարության պաշտպանության տակ,

պահելու գաղափարը տերերի վերադարձի ժամանակ նրանց վերադարձնելու նպատակով», պարզապես ծիծաղելի է: Տարբեր ապրանքներ դարսվում են մեկը մյուսի վրա, առանց դրանք գրանցելու կամ գույքի կուտակման համար որևէ համակարգ մտցնելու: Թուրք կանանց և երեխաների ամբոխը քայլ առ քայլ հետևում է ոստիկանության ծառայողին և ուրուրների նման վերցնում է այն ամենը, ինչին կարող է տիրանալ: Եթե ինչ-որ տնից ոստիկանությունը դուրս է բերում արժեքավոր իրերը, ապա այդ ռհմակը ներխուժում է տուն և վերցնում է այն ամենը, ինչ դեռ այնտեղ մնացել է: Այս ամենը ես տեսնում եմ ամեն օր սեփական աչքերով: Կարծում եմ մի քանի շաբաթ կտևի բոլոր տների դատարկումը, իսկ հետո կդատարկվեն հայկական կրպակներն ու առևտրական տները: Այդ գործերով զբաղվող հանձնաժողովն այժմ խոսում է այն մասին, որ հարկավոր է վաճառել կուտակված տնային կահ-կարասու և այլ ունեցվածքի բազմաթիվ առարկաներ այն նպատակով, որ վճարեն «հայերի պարտքերը»: Գերմանացի հյուպատոսն ինձ ասաց, որ ինքը չի հավատում, որ հայերին թույլ կտրվի վերադառնալ Տրապիզոն, նույնիսկ պատերազմի ավարտից հետո:

Ես հենց նոր խոսում էի մի երիտասարդի հետ, որը զինվորական ծառայության մեջ է գտնվում "Inscha'at at-Taburi" (հայկական զորամասերում) և աշխատում է Գյումուշխանեի ուղղությամբ ճանապարհների շինարարության վրա: Նա ինձ պատմեց, որ 14 օր առաջ բոլոր հայերը, մոտ 180 մարդ, առանձնացվեցին մյուս բանվորներից: Նա լսել է հրացանների կրակոցներ և դրանից հետո այն մարդկանց թվում էր, ում ուղարկեցին դիակները թաղելու: Նա փաստեց, որ նրանք բոլորը մերկ էին, նրանցից խլել էին հագուստը: Կանանց և երեխաների մի քանի դիակներ ալիքները նետել էին ավազոտ ափը՝ Տրապիզոնում գտնվող իտալացիների վանքի պատերի տակ: Նրանց թաղեցին տեղի հույն կանայք այնտեղ, որտեղ նրանց գտել էին:

ՀԱՎԵԼՎԱԾ 8

ԽԱՐԲԵՐԴՈՒՄ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏԵՍ ՊԱՐՈՆ ԼԵՍԼԻ Ա. ԴԵՅՎԻՍԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ

Խարբերդ, 11 հուլիսի 1915թ.

Եթե գործը պարզապես վերաբերվեր միայն մի տեղից մյուսը տեղափոխությանը, ապա դրան կարելի էր դիմանալ, սակայն յուրա-

քանչյուրը գիտի, որ ներկայիս իրադարձություններում խոսքը անկասկած մահվան մասին է: Եթե դրանում կա որևէ կասկած, ապա այն միանգամից անհետանում է Էրզրումից և Երզնկայից եկած շարասյունները տեսնելուն պես, որոնք հաշվվում են մի քանի հազար մարդ: Տարբեր ժամանակներում ես այցելում էի նրանց ճամբարը և զրուցում որոշ մարդկանց հետ: Ավելի տխուր տեսարան պարզապես անհնար է պատկերացնել: Նրանք բոլորն անխտիր մաշված հագուստով էին՝ քաղցած, կեղտոտ և հիվանդ: Այս փաստի լույսի ներքո զարմանալի չէ, որ գրեթե երկու ամիս գտնվելով ճանապարհին, նրանք ոչ մի անգամ չէին փոխել հագուստը, հնարավորություն չեն ունեցել լվանալ այն, չեն ունեցել ապաստան և ունեցել են սննդի սակավ քանակություն: Կառավարությունը մի երկու անգամ նրանց տվել է աղքատ օրապարենների: Մի անգամ ես դիտում էի, երբ նրանց համար սնունդ բերեցին: Վայրի կենդանիները նրանցից ավելի ագահ չէին կարող լինել: Նրանք հարձակվեցին պահակախմբի վրա, որը նրանց համար սնունդ էր բերել, իսկ պահակները ետ մղեցին նրանց մտրակներով: Ոմանք այդ հարվածներից հետո մահացած ընկնում էին հատակին: Երբ տեսնում էին նրանց, դժվար էր հավատալ, որ դրանք մարդկային էակներ էին:

Երբ անցնում ես ճանբարի միջով, մայրերն առաջարկում են իրենց երեխաներին և աղաչում են վերցնել նրանց ձեզ հետ: Գեղեցիկ երեխաներին և աղջիկներին թուրքերն արդեն ընտրել են իրենց համար: Նրանք պետք է համարվեն ստրուկներ, եթե իհարկե նրանց չօգտագործեն ավելի վատ բաների համար: Այդ նպատակով նրանց տնօրինության ներքո կային բժիշկներ, որպեսզի հետազոտեն նրանց դուր եկած աղջիկներին և ընտրեն իրենց համար լավագույններին:

Տղամարդիկ նրանց մեջ արդեն շատ քիչ էին, մեծամասնությունը սպանվել էր ճանապարհին: Բոլորը պատմում էին միևնույն պատմությունը, որ իրենք ենթարկվել են հարձակման և թալանի ըրդերի կողմից: Նրանցից շատերը արդեն որերորդ անգամ ենթարկվել են հարձակման և շատերին, հատկապես տղամարդկանց, այդ ժամանակ սպանում էին: Նրանց հետ միասին սպանում էին կանանց և երեխաներին: Շատերն, անշուշտ, մահանում էին ճանապարհին հիվանդություններից և ուժասպառությունից: Այստեղ եկան բոլորովին տարբեր շարասյուներ, իսկ մեկ կամ երկու օր անց ուղարկվեցին, հավանաբար, առանց որոշակի նպատակի, ավելի հեռու: Այստեղ եկածները իրենց հայրենիքից ճանապարհ ուղարկվածների միայն մի մասն են կազմում: Եթե նրանց հետ շարունակեն վերաբերվել այս ձևով, ապա հնարավոր է, որ նրանցից կազատվեն համեմատաբար

կարճ ժամանակում:

Նրանց թվում, ում հետ ես հնարավորություն ունեցա զրուցելու երեք քույրեր կային: Նրանք դաստիարակվել էին ամերիկյան քոլեջներից մեկում և փայլուն խոսում էին անգլերեն: Նրանք պատմեցին, որ իրենց ընտանիքը ամենահարուստն էր Էրզրումում և մեկնելու պահին հաշվվում էր 25 մարդ: Այժմ դեռ ողջ է մնացել 14-ը: 11 այլ անձանց՝ որոնց թվում և քույրերից մեկի ամուսնուն, իրենց աչքի առաջ սպանել են քրդերը: Արական սեռի ողջ մնացած ամենամեծ երեխան ութ տարեկան էր: Երբ նրանք ուղևորվում էին Էրզրումից, նրանք ունեին փող, ձիեր, անձնական ունեցվածք: Սակայն նրանցից ամեն ինչ հափշտակեցին, խլեցին նույնիսկ հագուստը: Նրանցից ոմանք, քույրերի խոսքերով, մնացին բոլորովին մերկ, մյուսներին թողնում էին հագուստի միայն մի մասը: Երբ նրանք հասան մի ինչ-որ գյուղ, ոստիկաններ նրանցից ոմանց համար հագուստ ստացան մոտակա գյուղի որոշ կանանցից:

Մյուս աղջիկը, որի հետ ես զրուցեցի, Էրզրումում բողոքական հոգևորականի դուստր էր: Նա պատմեց, որ առանձին-առանձին սպանել են իր ընտանիքի բոլոր անդամներին, որոնց հետ ինքը տեղահանվում էր: Միայն ինքն է ողջ մնացել: Սրանք են տեղահանվածների մեջ բարձր դասին պատկանող այն քիչ թվով մարդիկ, որոնք ողջ են մնացել: Նրանց հենց այստեղ տեղավորել են քաղաքից դուրս, դպրոցի հին շենքում, որտեղ ոչ ոք մտնելու իրավունք չուներ: Նրանք ասում էին, որ ըստ էության իրենք բանտարկության մեջ են, նրանք միայն իրավունք ունեին օգտվել շենքի մոտ գտնվող ջրհորից, որտեղ էլ ես նրանց պատահաբար տեսա: Մնացածները ճամբարով տեղակայվել են մեծ բաց դաշտում և ոչնչով արևից պաշտպանված չեն:

Այդ մարդկանց վիճակը պարզ ցույց է տալիս նրանց ճակատագիրը, ովքեր այստեղից արդեն մեկնել են կամ դեռ մեկնելու են: Մինչ այժմ նրանց մասին այլևս ոչ մի բան չի լսվել, և ես կարծում եմ, որ նրանց մասին առհասարակ էլ ոչինչ չեն լսի: Համակարգը, որով այս գործում առաջնորդվում են, հետևյալն է՝ ճանապարհին քրդերին հնարավորություն են տալիս դարանակալել նրանց, որպեսզի առաջին հերթին սպանեն տղամարդկանց, դրանց հետ միասին նաև կանանց և երեխաներին: Այս ամբողջ միջոցառումը թվում է գերազանց կազմակերպված և ամենահաջողված կոտորածն է, որը երբևիցե տեսել են այս երկրում:

Խարբերդ, 11 հուլիսի 1915թ.

Առաջին շարասյունն անցավ հունիսի 23-ին: Նրանց մեջ կային ամերիկյան քոլեջի մի քանի պրոֆեսորներ և այլ հարգարժան հայեր, ինչպես նաև հայ առաքելական եկեղեցու առաջնորդը: Լուրեր էին պտտվում այն մասին, որ բոլորին սպանել են և, ցավոք, հազիվ թե կարելի է կասկածել, որ դա այդպես է: Բոլոր հայ զինվորները նույնպես աքսորվեցին նմանատիպ ձևով: Այն բանից հետո, երբ նրանց բանտարկեցին, նրանց պահում էին քաղաքի շենքերից մեկում: Տարբերություն չէր դրվում՝ ով է վճարել իր օրինական հարկը զինվորական ծառայությունից ազատվելու համար, իսկ ով՝ ոչ: Վերջիններից վերցրեցին գումարը և հետո բանտարկեցին այնպես, ինչպես մյուսներին և ուղարկեցին բոլորի հետ միասին: Ասում էին, որ նրանց պետք է տանեին ինչ-որ տեղ, որ նրանք աշխատեն ճանապարհներին, սակայն ոչ ոք այլևս նրանց մասին ոչինչ չի լսել, և նրանց աշխատանքը, անկասկած, միայն պատրվակ էր:

Ինչպես կարելի է եզրակացնել հավաստի տեղեկություններից, նմանատիպ դեպքի մասին, որը տեղի ունեցավ չորեքշաբթի, հուլիսի 7-ին, նրանց ճակատագիրն արդեն նախապես վճռված էր: Երկուշաբթի, հուլիսի 5-ին, շատ տղամարդիկ բանտարկվել էին և նետվել բանտ, ինչպես Խարբերդում, այնպես էլ Մեսերում: Հինգշաբթի առավոտյան նրանց դուրս բերեցին և հրամայեցին քայլել դեպի համարյա չբնակեցված սարերից մեկը: Բոլորը միասին 800 մարդ՝ կապկպված խմբերով, յուրաքանչյուրում 14 հոգի: Այդ վաղ երեկոյան նրանք հասան մի քրդական ինչ-որ գյուղ, որտեղ գիշերեցին մզկիթում և այլ շենքերում: Այդ ամբողջ ժամանակ նրանք չուներին ջուր և սնունդ: Փողը և նրանց հագուստի մեծ մասը նրանցից խլել էին: Չորեքշաբթի առավոտյան նրանց բերեցին մի քանի բոպե ճանապարհի հեռավորությամբ գտնվող մի դաշտ: Այնտեղ հրամայեցին նստել: Դրանից հետո ոստիկանները սկսեցին կրակել նրանց վրա այնքան ժամանակ, մինչև չսպանեցին բոլորին: Մի քանիսին, որոնց չդիպան գնդակները, սպանեցին դանակներով և սվիններով: Ոմանց հաջողվեց կտրել պարանը, որով նրանք կապված էին դժբախտակից ընկերների հետ և փախչել: Սակայն դրանց մեծամասնությունը սպանվեց հետապնդման ժամանակ: Նրանց թիվը, ում այնուամենայնիվ, հաջողվեց փրկվել, հավանաբար, երկուս-երեքից ոչ ավել լինի: Սպանվածների մեջ էր ամերիկյան քոլեջի գանձապետը:

Սպանվածների թվում էին նաև բազմաթիվ հարգարժան մարդիկ: Այդ մարդկանց դեմ որևէ մեղադրանքներ երբևիցէ չեն ներկայացվել: Նրանք բանտարկվեցին և սպանվեցին միայն այն պատճառով, որ գոյություն ունի հայ ցեղի ոչնչացման համընդհանուր

ծրագիրը:

Երեկ երեկոյան, հերթական մի քանի հարյուր տղամարդիկ, ինչպես նրանք, ովքեր քաղաքացիական իշխանության մարմինների կողմից, կալանավորվել էին, այնպես էլ նրանք, ովքեր զորակոչվել էին իբրև զինվորներ, քշվեցին մեկ այլ ուղղությամբ և նույնությամբ գազանաբար սպանվեցին: Դա, հավանաբար, տեղի է ունեցել այստեղից ոչ ավելի, քան երկու ժամվա ճանապարհի հեռավորությամբ գտնվող մի վայրում: Երբ մի փոքր կհանդարտվի, ես կփորձեմ գնալ այնտեղ և ինքս կպարզեմ որքանով է դա ճիշտ:

Նմանատիպ գործեր կատարվում էին մեր գյուղերում պարբերաբար: Երկու շաբաթ առաջ Ինշնե և Դոբուգի երկու գյուղերում, որոնք գտնվում են այստեղից չորս-հինգ ժամվա ճանապարհի հեռավորության վրա, հավաքվեցին 300 տղամարդ, հետո քշվեցին սարերը և կոտորվեցին: Դա լիովին հավաստի է թվում: Այդ ժամանակվանից այդ գյուղերից բազմաթիվ կանայք եղան այստեղ և հայտնեցին այդ մասին: Լուրեր են պտտվում, որ նույն դեպքերը կատարվել են նաև մյուս վայրերում: Թվում է, որ գոյություն ունի բոլոր հայ տղամարդկանց ոչնչացնելու վերջնական ծրագիր: Սակայն առաջին մի քանի օրերի ընթացքում ընտանիքների հեռանալուց հետո, որոնց վրա տարածվում էր հարկադիր հրամանը, հայտարարվեց, որ ընտանիքում տղամարդ չունեցող կանայք և երեխաները ժամանակավոր կարող են մնալ այստեղ: Շատերն այն ժամանակ հուսով էին, որ ամենասարսափելին արդեն ետևում է: Ամերիկյան միսիոներները սկսեցին գոյության միջոցներից զրկված կանանց և երեխաներին օգնելու ծրագրեր մշակել: Մտածում էին այն մասին, որ ստեղծեն մանկատուն որոշ երեխաների մասին հոգ տանելու համար, հատկապես նրանց, ով ծնվել է Ամերիկայում և հետո բերվել այստեղ ծնողների կողմից, ինչպես նաև նրանց ում ծնողները այս կամ այն չափով կապված էին ամերիկյան միսիայի հետ: Եվ սա բավականին հարմար վիճակ էր անգամ միջոցների բացակայության պայմաններում, հոգ տանելու համար նաև այն երեխաների մասին, որոնք այստեղով անցնում էին մյուս տեղահանվողների հետ միասին և որոնց ծնողները մահացել էին ճանապարհին:

Երեկ ես գնացի վալիի մոտ, որպեսզի զրուցեմ նրա հետ այս մասին, սակայն ստացա նրանից կտրուկ մերժում: Նա ասաց. «մենք կարող էինք օգնել այդ մարդկանց, եթե կամենայինք: Սակայն այդ մանկատների ստեղծումը կառավարության գործն է և մենք չենք կարող այդպիսի գործը վերցնել մեր ձեռքը»:

Մեկ ժամ անց, երբ վերադարձա վալիի մոտից, հայտարար-

վեց, որ այստեղ դեռ մնացած հայերը, ներառյալ կանայք և երեխաները, հուլիսի 13-ին պետք է հեռանան այստեղից: Հյուպատոսն իր հաղորդումն ավարտում է այն նշումով, որ օգնությունը, հավանաբար, այլևս պետք չգա, քանի որ բոլոր ողջ մնացած տղամարդկանց սպանում են, իսկ ողջ մնացած կանանց և երեխաներին պարտադրում են մահմեդականություն ընդունել:

Politarchiv, R14093, Ab. 24663
ԱՐԳԱՏ, էջ 377-400

№ 51

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ԳՈՏԼԻԲ ՖՈՆ ՅԱԳՈՎԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԻՆ ՀԱՅԵՐԻ ՈՉՆՉԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

12 սեպտեմբերի 1916թ.

Հայերի նկատմամբ սարսափելի վերաբերմունքը անհրաժեշտություն է առաջացնում բողոք արտահայտելու թուրքական կառավարությանը, որի ղեկավարները պետք է հաշիվ տան իրենց այն ողբերգական հետևանքների համար, որոնք բաժին կհասնեն թուրքական կայսրությանը, ոչնչացման նման քաղաքականության արդյունքում:

Politishes Archiv des Auswertigen Amtes, Ableilung IA, K171, N855. September 12, 1916; "Documentation of the Armenian Genocide in German and Austrian Sources" by Vahakn N. Dadrian, New Brunswick, Transaction Publishers, 1994, p. 97.
ГАОТОМС, т.1, стр. 287.

№ 52

ԳԵՐՄԱՆԱՅԻ ԱԳՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՅԻՄՄԵՐՄԱՆԻ ՀՈՒՇԱԳԻՐԸ

25 հոկտեմբերի 1916թ.

Այսօր Հալիլ բեյի հետ մանրամասն ես քննարկում էի Կոստանդնուպոլսից N 566 համարի տակ ստացված զեկուցագիրը և վրճ-

ռականապես նշեցի նրան, որ եթե սկզբնական փուլում հայերի տեղահանությունը դեռևս կարելի էր դժվարությամբ հիմնավորել հաշվի առնելով այն ժամանակվա ռազմական դրությունը, որպես թելադրված գործողություն ելնելով ազգային անվտանգությունից, ապա այժմ ծրագրվող միջոցառումները ողջ մնացած ոչ մեծ թվով դժբախտ հայերի՝ կանանց և երեխաների դեմ որևէ ձևով չեն կարող հիմնավորվել և հետևաբար նաև չեն կարող արդարացվել: Թուրքական կառավարության գործողությունները կառաջացնեն դժգոհության մեծ ալիք ողջ քաղաքակիրթ աշխարհում, որն արագ չի հանդարտվի նույնիսկ պատերազմի ավարտից հետո: Որբանոցների ծրագրվող փակումը և, մասնավորապես, հայերի զանգվածային մահմեդականացումը արդարացիորեն կառաջացնեն բողոքներ ոչ միայն Գերմանիայում, այլ նաև բոլոր քրիստոնյա ժողովուրդների շրջանում:

The Armenian Genocide during the First World War /W. and S. Gust (ed.) in cooperation with Taner Akcam: Documents from German State Archives. [A-26071. DE/PA-AA/ R14093. DuA Dok. 299. 1916-09-25-DE-001].
ГАОТОМС, т.1, стр. 287.

№ 53

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՕՍՄԱՆՅԱՆ III ԲԱՆԱԿԻ 9-ՐԴ ԲԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՐՊՈՒՍԻ 29-ՐԴ ԴԻՎԻԶԻԱՅԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ԳԵՐՄԱՆԱՑԻ ԳԵՆԵՐԱԼ ՀԱՆՍ ԳՈՒՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

1916թ.

Անկախ այն բանից, թե դուք ինչպես եք վերաբերվում Հայկական հարցին, այն լուծումը, որին ձգտում է Թուրքիան, անպատվաբեր է թվում բոլոր պարագաներում: Դիմելով հայերի ոչնչացման բռնի միջոցներին, Թուրքիան վարկաբեկել է իր լավ հեղինակությունը և այսպիսով լուրջ վնաս է հասցրել ինքն իրեն:

Guhr H.Als Turkisher Divisionskommender in Kleinasien und Palestina (As a Turkish Divisional Commander in Asia Minor and Palestine). Berlin, Mars, 1917, p. 138.
ГАОТОМС, т.1, стр. 292.

№ 54

ՀԱՅԵՐԻ ԱՐՏԱՔՍՈՒՄԸ ԶՄՅՈՒՌՆԻԱՅԻՑ

Կայսերական գերմանական
դեսպանություն
N 703

Կոստանդնուպոլիս, 1916թ. նոյեմբերի 13

Ինչպես հայտնում է Զմյուռնիայում կայսերական հյուպատոսն, այնտեղի իշխանությունները սկսել են հայ բնակչության արտաքսումը: Առիթ ծառայեց այն հանգամանքը, որ մի քանի շաբաթ առաջ կաթոլիկական գերեզմանոցում իբր թե հայտնաբերվել են հին ռումբեր և այդ կարգի նյութեր, որոնք, ասում են, այնտեղ թաքցրել էին հայերը: Դրանից հետո վալին հայ եպիսկոպոսից, և համապատասխանաբար, համայնքից պահանջեց հայտնել այդ կասկածելի անձանց անունները և հանձնել դեռևս պահպանվող զենքը, սակայն եպիսկոպոսը հայտարարեց, որ իրեն նման անձինք հայտնի չեն և ոչ մի զենք չի թաքցվում:

Դրա հետևանքով սույն ամսի 8-ին ձեռնարկվեցին մի շարք ձերբակալություններ և հաջորդ օրը 300 հայեր առանց սեռի և տարիքի տարբերության աքսորվեցին երկաթուղով. պետք է հետևեն աքսորյալների հերթական շարասյունները: Տեղահանության գործը ղեկավարում է Զմյուռնիայի ոստիկանապետը, որին վալին գործողությունների ազատություն է տվել:

Ներկայումս Զմյուռիայում գտնվող Լիման ֆոն Սանդերսը վալիի ուշադրությունը հրավիրեց այն բանի վրա, որ զանգվածային տեղահանությունը վնաս է հասցնում ռազմական շահերին և որ այդ պատճառով ինքը չի հանդուրժի նոր ձերբակալություններ և աքսորներ:

Վալին, արդարանալով, բացատրեց, որ Զմյուռնիայի երիտթուրքական կոմիտեն միշտ դժգոհ էր նրանից, որ ինքը խնայում է հայերին և այդ պատճառով խաթարվել են նրա դիրքերը Կոնստանդնուպոլսում, որ հայերի տեղահանությունը պահանջվել է Կոնստանդնուպոլսից:

Այս իմաստով ես ինձ թույլ եմ տալիս հղում կատարել ավելի վաղ ներկայացված Թեսմիրի Էֆքտարի սույն թվականի հոկտեմբերի 6-ին առաջնորդող հոդվածի վրա, որտեղ հայերի տեղահանության պահանջ էր ներկայացվում այն քաղաքներից և շրջաններից, որտեղ տակավին նրանց մինչև հիմա հանդուրժել են:

Ես անհնար եմ համարում այն, որ Բարձր Դռանը դիմելու ճանապարհով դեռևս կարելի է հասնել այդ միջոցառումներից հրա-

ժարվելուն և մտավախություն ունեմ, որ մոտ ժամանակներում կսկսվի տեղի հայերի արտաքսումը:

Հետագայում ես ստացա մարշալ Լիման ֆոն Սանդերսի սույն ամսի 12-ի նամակը, որին կցված էր կոմս Շպեեի սույն ամսի 11-ին կատարած նշումը:

Մարշալը գրում էր հետևյալը. «Քանի որ այդ կարգի զանգվածային տեղահանությունները վերաբերում են ռազմական ոլորտին (զինապարտներ, երկաթգծերի օգտագործում, սանիտարական միջոցառումներ, թշնամուն մոտ գտնվող քաղաքի բնակչության հուզումներ), ապա ես հայտնեցի վալլին այն մասին, որ այսուհետև առանց իմ թույլտվության նման զանգվածային ձերբակալություններ և տեղահանություն չպետք է տեղի ունենան: Ես տեղեկացրեցի վալլին, որ դրանց կրկնության դեպքում ես կհրամայեմ զենքի ուժով արգելել դա:

Ի պատասխան վալլին գնաց զիջման և խոստացավ ինձ, որ դրանք այլևս չեն կրկնվի:

Բայց քանի որ նա ասում է, որ իրեն դրան դրդում է Կոստանդնուպոլիսը (Թալեաթ-բեյը), ես համոզված չեմ, որ դրա համար այլ ճանապարհներ չեն ընտրվի:

Որքան ես կարողացա իմանալ, Զմյուռիսյում բնակվող հայերի թիվը կազմում է 6-7 հազար, որոնց թվում են քաղաքի ամենահարուստ մարդիկ:

Կոմս Շպեեի նոթագրությունից կավելացնեմ հետևյալը. «Այս ամբողջ գործը հղի է լուրջ հետևանքներով, էլ չենք խոսում իրավական բռնության և զոհերի, Գերմանիայի շահերի և համապատասխանաբար Գերմանիայի հեղինակության համար չնախատեսված հետևանքների մասին:

Կառավարության միջոցառումները հետևեցին այն ժամանակ, երբ բացի գերմանական կորպուսի հրամանատարից Զմյուռնիայում էր գտնվում նաև գերագույն գլխավոր հրամանատար մարշալ Լիման ֆոն Սանդերսը: Քաղաքում լուրեր են տարածվել, որ այդ ծրագրված գործողությունները կազմակերպվել են գերմանացիների կողմից այն նպատակով, որ կարողանան այդ ճանապարհով ազատվել առևտրում իրենց խանգարող հայ մրցակիցներից:

Նյութական առումով առաջանում է ուղղակի վնաս, քանի որ հայ վաճառականները փաստորեն մեծ քանակությամբ գերմանական ապրանքներ են վերցրել, որոնց համար մասամբ դեռևս չեն վճարել: Հայերի մոտ դեռևս մնացած ապրանքները լքված գույքի մասին նոր օրենքի կիրառման դեպքում առիթ կտան թուրք անառողջ

տարրերին առանց որևէ դժվարության տեր դառնալ այդ ապրանքներին՝ հայերի նշանակալից ունեցվածքին տիրանալուն զուգահեռ: Եվ այդ ամենն այն էժանագին պատրվակի տակ, թե դա արել են գերմանացիները:

Քրիստոնյա բնակչությունը, որը մեծամասամբ մեծացել է ֆրանսիական և անգլիական ազդեցության պայմաններում, այս տեղեկությունները ընդունում է որպես այդպիսին, էլ չենք խոսում ոչ բարեկամ պետությունների քաղաքացիների մասին, որոնք մոտ են ամերիկյան հյուպատոսին, որի հաշվետվությունը կտա իր համապատասխան արդյունքները:

Ռադովից

Նորին մեծություն ռայխսկանցլեր
պարոն ֆոն Բեթման-Հոլվեգին

Politarchiv, R14096, Ab. 31127,
ԱԲԳԱՏ, էջ 408-409

№ 55

ԴԻՄՈՒՄ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ՝ ՀԱՅԵՐԻՆ ՈՉՆՉԱՑՈՒՄԻՑ ԵՎ ՄԱՀՄԵԴԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ՓՐԿԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՄԻՋՈՑՆԵՐ ՁԵՌՆԱՐԿԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ

Բեռլինի միսիոներական
ընկերության տնօրեն
դոկտոր Կառլ Աքսենֆելդ

Բեռլին, 16 նոյեմբերի 1916թ.

Գերմանական ավետարանական միսիոներական կոմիտեին կից Արևելա-մահմեդական հանձնաժողովի ներքոստորագրող նախագահը խոնանարհաբար խնդրում է Ձերդ գերազանցության թույլտվությունը արտահայտվելու այն մասին, թե որքան ուժեղ են խանգարում սարսափելի երևույթների անընդհատ դրսևորումները դժբախտ հայ ժողովրդին ցուցաբերվող մեր միսիոներական և բարեգործական գործողություններին և դրանց հետևում կանգնած մեր ժողովրդի լայն շրջանների աջակցությանը, ինչի հետևանքով այս հնագույն քրիստոնյա ժողովուրդը կանգնած է ոչնչացման եզրին: Վերջին ամիսներին հանգամանքները, ավելի շուտ, առավել վատթարացան, քան լավացան: Նախևառաջ ցանկացած տեսակի օժանդակության ցուցաբերման բացակայության պատճառով, ինչպես նաև հաճախ դաժան բռնության հետևանքով, դեռևս ցավալիորեն շարունակվում է հազարավոր անպաշտպան և, անկասկած անմեղ մարդկանց, հատկապես՝ կանանց և երեխաների ոչնչացումը, և, ընդ որում այնպիսի

տեղերում և այնպիսի դեպքերում, որ ամբողջությամբ բացառված է այդ միջոցառումների անպաշտպան զոհերի կողմից հնարավոր սպառնալիքը հասարակական շահերին: Սրա հետ մեկտեղ շատ են մահմեդականացման դեպքերը, ինչը պարտադրվում է բռնության և սպառնալիքների միջոցով, թեև այդ դեպքերը մյուսների համար քողարկված են կամավորության որոշակի պատրանքով: Պաշտոնական տեղեկատվության միջոցով Ձերդ գերազանցությանը հայտնի այս փաստերը ամբողջությամբ հաստատվում են մեր աշխատակիցների տեղեկություններով:

Նկատի ունենալով Գերմանիայի դաշնակցային հարաբերությունները Թուրքիայի հետ և հաշվի առնելով այն հանրահայտ փաստը, որ Անտանտի տերությունները քրիստոնեական հոգատարության անվան տակ չարաշահում են Հայաստանում կատարված դեպքերը Գերմանիայի դեմ բողոքին լարելու նպատակով, մեծ դժվարությամբ մեզ հաջողվում է հետ պահել մեր ազդեցության տակ եղած շրջաններին իրենց ցավի և դժգոհության հրապարակային արտահայտումից և մեր քրիստոնեական մամուլում չափազանց մեծ զգուշությամբ ենք շոշափում Հայկական հարցը՝ առանց այդ փաստերի բացահայտման, միայն խնդրում ենք հանգանակություն, որպեսզի որոշ չափով նրանց օգնություն ցուցաբերենք՝ սարսափելի դժբախտությանը դիմակայելու նպատակով: Սակայն նման ինքնասահմանափակումը ուժեղ ճնշում է մեր խիղճը, երբ ամենօրյա մամուլում այն ժամանակ, երբ մենք ստիպված ենք լռել, անարգել ձևով կարող են հայտնվել միակողմանի և ճշմարտությանը հակառակ հաղորդումներ, որոնք դեպքերի ողջ մեղքը բարդում են հայ ժողովրդի վրա և փորձում են արդարացնել խելացնոր չարագործությունները որպես ռազմական և քաղաքական տեսակետից անհրաժեշտ միջոցներ: Այդպիսի հրապարակումները, առավել ևս, եթե դրանք «Նորդդոյչե Ալգեմայնե Ցայտունգ»-ում սեպտեմբերի 8-ին և 9-ին հրապարակմամբ տպագրվել են Վոլֆի բյուրոյի կողմից, կարող են միայն խրախուսել թուրքական կառավարությանը իր կործանարար քաղաքականության գործում և թշնամական ու չեզոք երկրների համար կծառայի իբրև մեղադրանք Գերմանիային, որ նա «անդրդվելիորեն և հավատարիմ», նույնիսկ «հնարավոր է բարյացակամորեն» հետևում է «քրիստոնյա ժողովրդի դեմ» բռնության և կոտորածի այդ կազմակերպված արշավին: Այդ կեղծ պատկերի կործանարար ազդեցությունը չեզոք երկրների, հատկապես Ամերիկայի դատողությունների վրա, թերևս, հազիվ թե կարելի է գերագնահատել: Այս ամե-

նը ցույց է տալիս, որ Հայկական հարցը չի հանդիսանում բացառապես Թուրքիայի ներքին հարց, այլ շոշափում է նաև Գերմանիայի կենսական շահերը: Սակայն Գերմանիայում նման հրապարակումները նվազեցնում են շատերի, ովքեր ծանոթ չեն իրական դեպքերին, կարեկցանքի զգացումը հայ ժողովրդի հանդեպ և նրան օգնելու պատրաստակամությունը, ինչպես նաև վստահությունը մեր աշխատանքի նկատմամբ, այն ժամանակ, երբ նրանք, ովքեր տեղյակ են իրադրությանը, չեն կարող այն ներկայացնել, և իրենց հայտնված են զգում լուրջ հակամարտության մեջ իրենց խղճի հետ:

Ձերդ գերազանցությունը բարեհաճեց 1915թ. նոյեմբերի 12-ին պատասխանել մեր շրջաններից 1915թ. հոկտեմբերի 15-ին Ձեզ ուղարկած նամակին, որտեղ ասված է, որ «կայսերական կառավարությունը, ինչպես նախկինում, այնպես էլ այսուհետ, միշտ իր առաջնահերթ խնդիրներից է համարելու իր ազդեցության օգտագործումն այն իմաստով, որ քրիստոնեական ժողովուրդները չենթարկվեն հետապնդումների իրենց հավատքի պատճառով, իսկ Գերմանիայի քրիստոնյաները կարողանային վստահ լինել, որ Ձերդ գերազանցությունը, ղեկավարվելով այդ սկզբունքով, կանի ամեն ինչ, ինչն իր ուժերի սահմաններում է, որպեսզի ուշադրություն դարձնի մեր արտահայտած անհանգստությանը և ցանկությանը»:

Ուստի թույլ տվեք մեզ, Ձերդ գերազանցություն, երախտագիտությամբ հիշեցնելով այդ պարտավորությունը, թախանձագին կրկնել մեր հարգալից խնդրանքն այն մասին, որ՝

ա) այնքան ժամանակ, որքան մեզնից հայրենիքի շահերից ելնելով պահանջվում է համընդհանուր զսպվածություն հրապարակային ելույթներում մեր գործունեության բնագավառի մասին, թույլ չտրվեր նաև մամուլում հայատյաց տեղեկությունների հրապարակումը;

բ) հնարավորինս ավելի վճռականորեն օգտագործվի Գերմանիայի քաղաքական ազդեցությունը, որ վերջապես դադարեցվի Թուրքիայի կողմից մինչ այժմ այդքան սիրված վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ, քանի որ, այն միայն վնաս է հասցնում Թուրքիայի ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական շահերին, Անտանտի երկրներին, ինչպես դա կրկին վկայում է վարչապետ Ասկվիտի ճառը, ցանկալի և միայն չափազանց ներգործուն առիթ է տալիս, որ չեզոք երկրներում հրահրեն վատ տրամադրվածություն կենտրոնական տերությունների, և հատկապես Գերմանիայի դեմ, ինչը չափից դուրս պահանջներ է ներկայացնում գերմանական ժողովրդի քրիստոնեական խղճին;

գ) մենք համոզվենք, որ պատերազմի ժամանակ ստիպողաբար և սպառնալիքով մահմեդական հավատքն ընդունած քրիստոնյաներին պատերազմից հետո կտրվի քրիստոնեական հավատքին վերադառնալու իրական, այլ ոչ թե ձևական հնարավորություն:

Նորին գերազանցություն Գերմանիայի ռայխսկանցլեր, պարոն դոկտոր ֆոն Բեթման-Հոլվեգին Բեռլին

Ձերդ գերազանցությանը մեծապես խոնարհ միսիայի տնօրեն Կառլ Աբսենֆելդ

Politarchiv, R14094, Ab. 31694,
ԱՎԳԱՏ, էջ 410-412

№ 56

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԵՐԻՆ ԹՈՒՐՔԻԱՅԻՑ ԳԵՐՄԱՆԻԱ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կայսերական գերմանական դեսպանություն
N 1209
A. 30700[11]

Կոստանդնուպոլիս, 17 նոյեմբերի 1916թ.

Հեռագիր

Վերծանում

Պատասխան N130 հեռագրին

Զմյուռնիայում տիրող իրավիճակը մանրամասն քննարկելով և այդ հարցը համաձայնեցնելով մարշալ Լիման ֆոն Սանդերսի հետ, ես եկա այն համոզման, որ հայերին Գերմանիա տեղափոխելու առաջարկությունը կառաջացնի թուրքերի անվստահությունը և այդ իսկ պատճառով քաղաքական առումով վնաս կհասցնի մեզ: Հայերի տեղահանությունը մարշալի միջամտությամբ դադարեցրեցին: Հայտարարությունը հետևում է:

Դեսպան Կյուլման

Արտաքին գործերի նախարարություն

Politarchiv, R14094, Ab. 31174
ԱՎԳԱՏ, էջ 412

№ 57

Յ. ԼԵՓՍԻՈՒՍԻ ԴԻՄՈՒՄԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՈՐԲԵՐԻՆ ԵՎ ԱՅՐԻՆԵՐԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՅՈՒՅԱԲԵՐԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ, ՆՐԱՆՑ ԾԱՆՐ ԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հաղորդագրության հավելված,
Հաագա, A 1800

Պատճեն

Գերմանահայկական ընկերության
նախագահ դոկտոր Յ.Լեփսիուս

Պոտսդամ, 28 նոյեմբերի 1916թ.

Ձերդ գերազանցություն, պատիվ ունեմ անցած ուրբաթ օրվա բանավոր հաղորդմանը պատասխանել հավելվածով, որը խնդրում եմ հասցնել արտաքին գործերի նախարարի գիտությանը:

Միաժամանակ համարձակվում եմ Ձերդ գերազանցությանն ուղարկել «Պանտերայի» 1916թ. ապրիլան համարը: Ձեզ հասած խեղաթյուրված տեղեկությունների հետևանքով կասկածելի լույսի ներքո ներկայացված իմ դատողությունը անգլիական քաղաքականության մասին..., ինչն իրականում համապատասխանում է իմ այն հայացքներին, որոնք ես արտահայտել եմ «Ջոն Բուլում»:

Խորին հարգանքով Ձերդ
գերազանցությանը հավատարիմ
ստորագրություն՝ դոկտոր
Յոհաննես Լեփսիուս

Նորին գերազանցություն դոկտոր Ռոզենին,
գերմանական միսիա, Հաագա

Politarchiv, R14094, Ab. 31174[16]
ԱԲՊԱՏ, էջ 416

Վերը նշված նամակին կից հավելվածի պատճենը

Ձերդ գերազանցություն, պատիվ ունեմ անցած ուրբաթ օրվա բանավոր հաղորդմանը առարկել հետևյալով: Ես չեմ կարող հայտարարել, որ կդադարեցնեմ տեղահանված հայ ժողովրդի որբերին և այրիներին օգնության ցուցաբերումն ու դրա համար անհրաժեշտ միջոցների հայթայթումը: Դա կնշանակեր, որ հարյուրավոր որբ երեխաներ, սընունդից զրկված կանայք և հիվանդները, որոնք փրկվեցին մահվան ճանկերից, կդատապարտվեն մահվան:

_Ժամանակին իմ նախաձեռնությամբ հիսուն գերմանացի աստվածաբանների և միսիոներների ներկայացուցիչների կողմից պարոն ռայխսկանցլերին ուղղված դիմումին վերջինս պատասխանել է, որ օգնության ցուցաբերման գործունեությանը ոչ մի արգելք չի հարուցվի:

Այն փաստը, որ գերմանական քրիստոնեությունը աչքերը չփակեց Թուրքիայում քրիստոնյա ժողովուրդներից մեկի դժբախտության վրա և կատարեց իր մարդասիրական պարտականությունը, որքանով որ դա իր հնարավորությունների սահմանում էր, ես համարում եմ, որ դա կգրանցվի մեր ազգային արժանապատվության բարոյական ակտիվում, ինչն իրենից ներկայացնում է քաղաքական արժեք ինչպես խաղաղության հաստատման համար, այնպես էլ դրա հաստատումից հետո: Այդ իսկ պատճառով ես օգտագործեցի իմ կապերը արտասահմանյան հայ բարեկամների հետ այն բանի համար, որ հերքեմ ու ժխտեմ այն մեղադրանքները, որոնք առաջ են քաշվում Անտանտի երկրների և թշնամաբար տրամադրված պետական գործիչների կողմից, գերմանական կայսրության կառավարության դեմ:

Թուրքիայի հետ մեր քաղաքական հարաբերություններին սպառնացող վտանգը կանխարգելելու նպատակով ես միջոցների հայթայթման ժամանակ չեմ անի որևէ հայտարարություն, որը կարող է գրգռել թուրքական կառավարության զգայնությունը, ինչպես նաև կհետաձգեմ մեղավորության հարցի քննարկումը մինչև պատերազմի ավարտը:

Կարծում եմ, որ սրանով իսկ կայսերական կառավարության ցանկությունները բավարարող բավականին շատ չափով բան արած կլինեմ:

Եթե կայսերական կառավարությունը, ինչը թվում է, որ չի բացառում Ձերդ գերազանցությունը, միտումնավոր ձևով, քաղաքական շահերից ելնելով, կճնշի մահվան դատապարտված հայ ժողովրդի որբերին և այրիներին օգնություն ցուցաբերելու գործունեությունը, ապա ես խնդրում եմ Ձեզ, որ արտաքին գործերի նախարարության կողմից հանձնվի դրա գրավոր արգելքը, որպեսզի պատերազմից հետո ես կարողանամ արդարացնել դրանով պայմանավորված իմ անգործությունը: Քանի որ ես արդեն քսան տարի է արտասահմանում հայտնի եմ որպես հայ ժողովրդի դատապաշտպան, ապա իմ դիրքորոշումը պետք է գնահատվի ոչ միայն որպես մի ինչ-որ պատահական մասնավոր անձի, այլ որպես գերմանական քրիստոնեության և գերմանական մարդասիրության արտահայտողի դիրքորոշում:

//

// Խնդրում եմ Ձերդ գերազանցությանը իմ այս արտահայտությունները հասցնել արտաքին գործերի նախարարության գիտությանը:

Ձերդ գերազանցությանը մեծապես նվիրված
դոկտոր Յոհաննես Լեփսիուս

Politarchiv, R14096, Ab. 34247[16]
ԱՐԳԱՏ, էջ 416-417

№ 58

ԷՐԶՐՈՒՄՈՒՄ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍ ՇՈՅԲՆԵՐ-ՌԻԽՏԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Շոյբներ-Ռիխտեր
(Մյունխեն)
Tgb. z243

Մյունխեն, 4 դեկտեմբերի, 1916թ.

Ձերդ գերազանցություն:

Հավատարմորեն հղում կատարելով 1915թ. օգոստոսի 5-ի Էրզրումից իմ հաղորդմանը և դրան հետևած Հայկական հարցում իմ դիրքորոշումը գովաբանող Ձերդ գերազանցության հրամանագրին, որի բովանդակությունը 1915թ. հոկտեմբերի 15-ին ինձ Մոսուլ փոխանցվեց Կոստանդնուպոլսում կայսերական դեսպանության միջոցով, խոնարհաբար ինձ թույլ եմ տալիս զեկուցել հետևյալը:

Անգամ վերջին պահին ձգտելով հասնել Modus vivendi[9] -ի հաստատմանը այդ հարցով զբաղվող թուրքական կոմիտեի և հայերի միջև, ես ելնում էի այն մտայնությունից, որ կունենամ ինձ հետ միասին Աղրբեջան և Արևելյան Կովկաս ուղևորվող «Միություն և առաջադիմություն» կոմիտեի գեներալ-տեսուչ Օմեր Նաջիի օժանդակությունը, որին ես անձամբ լավ գիտեմ, քանի որ ինձ հայտնի էր, որ նա չէր պաշտպանում Կոմիտեի մյուս անդամների դաժան միջոցները:

Ես հույս ունեի նրան էլ ավելի համոզել հայերի դեմ կատարվող միջոցառումների անիմաստության մեջ մեր համատեղ ուղևորության ժամանակ: Բացի դրանից, ես հույս ունեի, որ իմ ներկայությունը առնվազն կկանխարգելի այն, որ Օմեր Նաջիի տրամադրության

[9] Նախնական համաձայնության:

տակ եղած ջոկատները ընկնեն մեզ ուղեկցող Կոմիտեի անդամներից ոմանց ազդեցության տակ, որոնց թվում էր ինձ որպես Տրապիզոնի վիլայեթի հայերի կոտորածի նախաձեռնող, հայտնի դոկտոր Ֆուադը, Հալիլսի ջոկատների նման չհրահրեն Հյուսիսային Պարսկաստանի հայերին կոտորելու գործին: Իմ այդ ենթադրությունները, կարող եմ գոհունակությամբ հայտնել՝ հաստատվեցին:

Օմեր Նաջին հենց ինքն ուրախ էր ի դեմս ինձ, որպես գերմանացի սպայի, աջակցություն գտնել որպես համախոհի՝ Կոմիտեի այլ անդամների համեմատ իր ավելի զուսպ դիրքորոշման հարցում:

Մինչև Բիթլիս մեր անցած ճանապարհի երկայնքով դատարկված շրջանների գյուղերում սպանված հայերի սարսափելի տեսարաններն անմիջապես ազդեցություն գործեցին նաև այլ պարոնների վրա: Նրանք ակնհայտորեն վատ էին զգում, որ ես և իմ գերմանացի ուղեկիցները դարձանք ականատեսն այն բանի, թե ինչ են արել իրենց համախոհները, և նրանք կրկին փորձում էին բացատրությունների միջոցով, ողջ մեղքը բրդերին վերագրել՝ թուլացնելով մեր մոտ առաջացած վատ տպավորությունը:

Ճանապարհին իմ տեսածի մասին, որքանով որ դա անհրաժեշտ եմ համարել, ես տեղեկացրել եմ Մոսուլում կայսերական հյուպատոսության միջոցով: Առանձին դեպքերում, ինչպես օրինակ Բիթլիսում, դեռևս պահպանվել էին հայ կանայք և երեխաներ, որոնց իրենց մոտ էին ընդունել ամերիկյան միսիոներուհիները, ես կարող էի մի քիչ թեթևացնել նրանց վիճակը և օգնություն ցուցաբերել նրանց:

Չեմ կարող չհիշատակել հետևյալ հատկանշական միջադեպը:

Մոսուլի ճանապարհին, որը մեզ տանում էր 6-րդ բանակի ենթակայության տակ գտնվող նոր կազմավորված շրջան, Օմեր Նաջիի ջոկատները, ինչպես նաև իմ ջոկատները հրաման ստացան գրոհով վերցնել Խեսակի մոտ գտնվող հայկական գյուղը և պատժի ենթարկել նրա բնակչությանը, որտեղ ինչպես ասում էին, թաքնվել էին հայ ապստամբներ: Ես ճիշտ ժամանակին իմացա, որ դրանք թվացյալ «ապստամբներ» էին, որոնք թաքնվել էին, վախենալով կոտորածից, և պատրաստ էին հանձնել իրենց զենքը, եթե միայն նրանց խոստանային կյանք: Մոսուլում գերմանական հյուպատոսության ներկայացուցչի և իմ կողմից առաջարկված միջնորդության փորձը մերժվեց 6-րդ բանակի գլխավոր հրամանատարության կողմից, որին ես դրանից առաջ հաղորդել էի գործի հանգամանքները:

Ես կարողացա խուսափել ինձ սպառնացող հակամարտությունից, շնորհիվ այն բանի, որ իմ ենթակայության տակ գտնվող

գերմանացիներին՝ սպաներին և շարքայիններին, կանչեցի Մոսուլ. իսկ իմ ենթակայության տակ եղած թուրքական զորքերի հրամանատարությունը փոխանցեցի իմ թուրք սպաներից մեկին, այն պատճառաբանությամբ, որ խոսքը «ներթուրքական» գործի մասին է, և այդ իսկ պատճառով ես հարկ չեմ համարում, որ այդ դեպքում թուրքական զորքերին, որոնք կատարելու էին «ոստիկանական» պարտականություններ, ղեկավարեն գերմանացիները:

Իմ վարվելակերպը հետագայում արժանացավ գեներալ-ֆելդմարշալ ֆոն դեր Գոլցի հավանությանը: Եվ թուրքական կողմից այդ որոշումը ճանաչվեց «հնարամիտ»: Իսկ դրա հետևանքով առաջացած հիասթափությունը կասկած է առաջացնում, որ երբ ինձ հրաման էին տալիս, ապա բանն այն է, որ Հալիլ-բեյը փորձում էր ինձ և ինձ ուղեկցող գերմանացիներին այդպիսով ներքաշել մեզ վարկաբեկող հարցի մեջ, որը կապված է հայերի հետ:

Դրան հաջորդած իմ ջոկատի փոխանցումը նոր ստեղծված Մոսուլ խմբավորմանը և դրանով պայմանավորված իմ ռազմական ենթակայությունը քաղաքի վալիին՝ Հեյդար-բեյին, բնականաբար, ինձ ստիպեց ցուցաբերել էլ ավելի մեծ զգայվածություն հայկական հիմնահարցին միջամտելու հետ կապված:

Չնայած իմ վիճակի բարդությանը, ես կարողացա, այնուամենայնիվ, այստեղ նույնպես հասնել այն բանին, որ Հյուսիսային Պարսկաստանում գործող թուրքական զորքերում իմ գտնվելու ողջ ժամանակաշրջանում տեղի չունենան տեղի արևելահայերի ջարդերի և չափից դուրս ճնշումների դեպքեր:

Ռուսների կազմում կռվող հայ հրամանատարների հետ բանակցությունների մեջ մտնելու փորձերը, որոնց հետ ես հույս ունեի կապվել Սիրիայի քրիստոնյաների միջոցով, ընդհատվեցին՝ ռուսների հարձակման հետ կապված մարտական գործողությունների հետևանքով:

Ռուսական զորքերի սույն թվականի մայիսի առաջխաղացումը, ինչի հետևանքով թուլացած թուրքական ուժերը ստիպված էին նահանջել, ինչպես նաև այլ ռազմական նպատակներով օգտագործելու հանգամանքը, ժամանակավորապես ընդհատեցին իմ ջանքերն այդ ուղղությամբ:

Խոնարհաբար խնդրում եմ թույլ տալ այս ամենից հետո նշել հետևյալը: Երզրումի իմ հաղորդման մեջ արտահայտած մտավախությունն այն մասին, որ հայերի տեղահանությունը հավասարազոր է նրանց ոչնչացմանը, կամ, հավանաբար, ուներ նման նպատակ, ցավոք, հաստատվեց:

Այդ ցեղի բռնությամբ տեղահանված մարդկանց մնացորդները, որոնք դեռ ապրում են Միջագետքում, գտնվում են անմխիթար վիճակում: Չափազանցություն չէ, երբ ասում են, որ թուրքահայերը, բացառությամբ Կոստանդնուպոլսում և այլ մեծ քաղաքներում ապրող մի քանի հարյուր հազարի, ոչնչացված են:

Եթե ես ցանկանայի կանգ առնել հայերի ոչնչացման այդ միջոցառման պատճառների, ինչպես նաև քաղաքական և տնտեսական հետևանքների վրա Թուրքիայի համար, ապա հարկ կլիներ չափազանց հեռու գնացող դատողություններ անել:

Առաջին տեսանկյունից, ցավոք, այդ թեման ավարտված է, և մեր խնդիրը, ինչպես նաև մեզ համար հետաքրքրությունը պետք է ներկայացնի միայն Միջագետքում դեռևս կենդանի մնացած ապրողների վիճակի թեթևացումը:

Մյուս կողմից, ես, այնուհանդերձ, պարտավոր եմ համարում Ձերդ գերազանցության ուշադրությունը հրավիրել նաև ներքոհիշյալի վրա. հեղինակավոր թուրք անհատների հետ իմ ունեցած մի շարք զրուցներն ինձ վրա թողել են հետևյալ տպավորությունը:

Երիտթուրքական կոմիտեի մեծ մասն այն տեսակետին է, որ Թուրքական կայսրությունը պետք է կառուցվի միայն զուտ մահմեդական, պանթյուրքիզմի հիման վրա ոչ մահմեդական և ոչ թուրքական բնակիչները պետք է մահմեդականացվեն և թուրքացվեն, իսկ այնտեղ, որտեղ դա հնարավոր չէ՝ ոչնչացվեն:

Այդ ծրագրի իրագործման համար ներկայիս ժամանակը այդ պարոնները համարում են ամենաբարենպաստը:

Նրանց ծրագրի առաջին կետը հայերի ոչնչացումն է: Թուրքիայի հետ դաշնակից տերություններին որպես արդարացում բերվում է Դաշնակցություն կուսակցության իբր թե նախապատրաստվող հեղափոխությունը: Բացի դրանից, իբրև պատրվակ, լուրեր էին տարածվել հայերի ինքնապաշտպանության ձգտման և տեղական անկարգությունների մասին, որպեսզի հիմնավորվի հայերի տեղահանությունը սպառնալիքի տակ գտնվող սահմանամերձ շրջաններից: Ճանապարհին Կոմիտեի հրահրումով հայերին սպանում էին քրդական և թուրքական բանդաները, իսկ երբեմն էլ՝ ոստիկանները:

2. Մոտավորապես այդ նույն ժամանակ արևելյան Քրդստանում Մոսուլի վալի Հեդար-բեյի կողմից, համարձակ դիմադրությունից հետո, իրենց բնակավայրերից տեղահանվեցին և մասամբ ոչնչացվեցին նեստորականները: Նրանց հանդերն ու բնակավայրերը ոչնչացվեցին: Ողջ մնացածները փախան ռուսների մոտ և այժմ նրանց շարքերում մարտնչում են թուրքերի դեմ:

3. Հալիլ-բեյի դեպի Հյուսիսային Պարսկաստան արշավանքի հետևանքն եղավ հաշվեհարդարը հայկական և ասորական գումարտակների հետ, Հյուսիսային Պարսկաստանից հայ, ասորի և պարսիկ բնակչության վտարումը և իրենից հետո ուժեղ թշնամանք թողեց թուրքերի նկատմամբ:

4. Մտադրվում են նաև արաբների հետ հաշվեհարդար տեսնել, սակայն ներկայիս անբարենպաստ ռազմական դրությունը դեռևս թույլ չի տալիս համարել, որ եկել է դրա ժամանակը: Միևնույն ժամանակ արաբներին ինտենսիվ ձևով հավաքագրելով և արաբական զորքերին չափազանց անբավարար հանդերձանքով անբարենպաստ կլիմայական պայմաններով վայրեր (1914թ. Էրզրումի ձմեռային արշավանք, 1915թ. Հյուսիսային Պարսկաստան) ուղարկելու ճանապարհով փորձում էին դրան գտնել հարմար փոխարինող:

5. Ծիծաղելի ձևով թուրք գործիչները գերագնահատում են պանթյուրքական գաղափարների հզորությունն ու հեռանկարները և թերագնահատելով կովկասահայերի ազդեցությունը, կարծում են, որ կարող են Կովկասի մահմեդականներին համոզել միանալ Թուրքիային և ապստամբություն բարձրացնել Ռուսաստանի դեմ, և շատ դանդաղ է գալիս այն գիտակցումը, որ հայերի նկատմամբ կատարված գործողությունների և թուրք-քրդական պարտիզանների գործունեության հետևանքով սահմանամերձ կովկասյան շրջաններում ծրագիրն էականորեն զրկվեց հավանականությունից: Գերմանական քարոզչական աշխատանքը Կովկասի բնակչության շրջանում ընդունվում է անբարյացակամորեն և հաճախ արգելքներ են դրվում նրա առաջ:

Ամփոփելով իմ տպավորությունները, կապված թուրքերի վերաբերմունքի հիմնահարցի և այստեղ բնակվող այլ ազգերի հետ (տվյալները ստացվել են մինչև 1916թ. օգոստոսի վերջը), կարող եմ ապագայի հետ կապված եզրակացնել հետևյալը:

Ես բացառված չեմ համարում, որ 6-րդ բանակի շրջանում թուրքերի կողմից կռվող քրդերի տրամադրությունը բարձրացնելու նպատակով փորձ կկատարվի կրկին գրգռելու նրանց մոլեռանդությունը և գործողությունների ազատություն տալ նրանց տեղի քրիստոնյա բնակչության դեմ:

Նմանապես սյունի քրդերի ճակատ ճակատի բախումը շիա պարսիկների հետ որոշակի պայմաններում կարող է տեղի ունենալ Հյուսիսային և Կենտրոնական Պարսկաստանում և, չնայած տնտեսական հետևանքներին, այդ պատճառով առաջացնել դրան մասնակցող կողմերի միջև երկարատև հակամարտություն, որը ամենալուրջ ձևով կվնասի մեր շահերին:

Վերջապես ես այն տպավորությունը ստացա, որ Հայկական հարցում մեր զսպվածությունը նկատելիորեն վնասեց մեր հեղինակությանը Թուրքիայում և Պարսկաստանում, քանի որ շատերի կողմից այն որակվեց իբրև թուլություն: Երիտթուրքական կոմիտեի դաժան նկրտումների դեմ ավելի կտրուկ հանդես գալը կարող էր օգտակար լինել մեր հեղինակության համար, և մեզ կարժանացներ ոչ միայն ոչ մահմեդականների և արաբների, այլև հնադավան թուրքերի և երիտթուրքերի ներկայիս փոքրամասնության համակրանքին:

Թուրքիայի քաղաքական իրադրության անկայունության-պայմաններում ես տեղին եմ համարում հաշվի նստել նաև այն շրջանների տրամադրությունների հետ, որոնք ազդեցություն ունեն նահանգներում: «Եթե մենք, թուրքերս, արյունաքամ լինենք Օսմանյան կայսրության գոյության համար մղվող պայքարում, ապա նրա մեջ այլևս չպետք է լինեն այլ ազգություններ»: Երիտթուրք գործիչներից մեկի այս արտահայտությունը առավել լավ է բնորոշում երիտթուրքական կոմիտեի շրջանների դիրքորոշումը: Եվ իսկական թշնամության (անատոլիականության) թուլացումը, որն ավելի շատ կատարվում է կազմակերպվածության և կանխատեսման բացակայության պատճառով տրամաբանական հաջորդականությամբ իր հետ բերում է նաև Թուրքիայում ապրող մյուս ազգերի բռնի ոչնչացմանը:

Այդ ոչնչացման գործընթացին մեր ուշադրություն դարձնելը և, այնտեղ, որտեղ դա հնարավոր է, դրան հակազդելը, իմ կարծիքով, համապատասխանում է մեր քաղաքական և տնտեսական շահերին:

Շոյբներ-Ռիխտեր
(ստորագրություն)

Նոին գերազանցություն ռայխսկանցլեր
պարոն ֆոն Բեթման-Հոլվեգին

Politarchiv, R14094, Ab. 33457
ԱԲԳԱՏ, էջ 418-422

№ 59

ԵՐԵՔ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ՀԱՅԿԱԿԱՆ ՍԱՐՍԱՓՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կայսերական գերմանական առաքելություն
Ա 436
Հավելված

Հաագա, 7 փետրվարի 1917

Պատիվ ունեմ խոնարհաբար Ձերդ գերազանցությանը ներկայացնելու սույն թռուցիկին «Հայկական սարսափներ: Երեք փաս-

տաքուղթ» հավելվածը, որն անստորագիր ուղարկվել է Հաագայից Կայսերական առաքելությանը:

Համարձակվում եմ խնդրել Ձերդ գերազանցությանը տեղեկացնել հայտնի է արդյոք որևէ բան այն մասին, թե ով է այս թռուցիկի հեղինակը և տարածողը:

Ռոզեն

Նորին գերազանցություն ռայխսկանցլեր
պարոն ֆոն Բեթման – Հոլվեգին

Politarchiv, R14095,Ab. 4543
АВГАТ, стр.426

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍԱՐՍԱՓՆԵՐ ԵՐԵՔ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

I

Հալեպում (Թուրքական Փոքր Ասիա) գերմանական ուսումնական խորհրդի հաղորդումը Բեռլինում արտաքին գործերի նախարարությանը

Հալեպ, 3 հոկտեմբերի 1915

Խոնարհաբար արտաքին գործերի նախարարությանը հայտնում ենք հետևյալը:

Մեր պարտքն ենք համարում արտաքին գործերի նախարարության ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, որ մեր դպրոցական գործունեությունը այսուհետև կզրկվի բարոյական հիմքից և հեղինակությունից տեղի բնակիչների շրջանում, եթե գերմանական կառավարությունը իսկապես ի վիճակի չլինի մեղմելու այն դաժանությունը, որով այստեղ վերաբերվում են սպանված հայերի, տեղահանված կանանց և երեխաների հետ:

Հաշվի առնելով այն ահավոր տեսարանները, որոնք ամեն օր կատարվում են մեր աչքերի առաջ մեր դպրոցի շենքի առաջ, մեր դպրոցական գործունեությունը դարձել է ծաղր մարդկային զգացմունքների նկատմամբ: Կարող ենք արդյոք մենք, ուսուցիչներս, մեր հայ երեխաների հետ կարդալ, հոլովել և խոնարհել, երբ մեր բակում, դպրոցի շենքի հենց դիմացը և նրա շրջակայքում մահը տանում է մեր աշակերտների սովահար եղած ազգակիցներին՝ աղջիկներին, տղաներին, գրեթե մերկ գետնին ընկած նրանց, ում, վերջին շունչն էր փչում տառապյալների և արդեն պատրաստված դագաղների միջև:

Միայն 40-50 կմախք է մնացել 2000-3000 առողջ գեղջկուհիներից, երբ նրանց քշում բերում էին այստեղ Բարձր Հայաստանից: Գեղեցիկները տառապում են իրենց հսկիչների հեշտասիրական կրքերից: Տգեղները դառնում են փայտի հարվածների, սովի, ծարավի զոհը, քանի որ ջրամբարների ափերին տեղակայված ծարավ մարդկանց թույլ չէին տալիս ջուր խմել: Ամեն օր Հալեպից դուրս են բերում ավելի քան 100 սովամահ եղած մարդկանց դիակներ:

Այս ամենը կատարվում է բարձրաստիճան թուրք չինովնիկների աչքերի առաջ: Կմախքներ դարձած 40-50 մարդ, մեկը մյուսին կպած, ընկած են մեր դպրոցի շրջակայքում: Նրանք կարծես ցնորված լինեն: Նրանք մոռացել են, թե ինչ բան է ուտելիքը: Երբ նրանց հաց են տալիս, նրանք անտարբեր այն մի կողմ էին դնում: Նրանք լուռ տնքում են և սպասում իրենց մահվան:

Ta-a`-lim el aleman («Սա գերմանացիների հորդորն է») պընդում են տեղաբնիկները: Այստեղ ահավոր ձևով վարկաբեկված կլինի Գերմանիայի հեղինակությունը արևելյան ժողովուրդների պատմական հիշողության մեջ: Հալեպի ավելի զարգացած բնակիչներն ասում են, որ գերմանացիները, թերևս, չեն ցանկանում նման չարագործություններ: Հնարավոր է, որ Գերմանիայի ժողովուրդը իսկապես չգիտի այս մասին: Հակառակ դեպքում արդյոք հնարավո՞ր է, որ ճշմարտասեր գերմանացիների մամուլում այնպիսի հոդվածների հրապարակումը, որտեղ հաղորդվում է հայ դավաճանների հանդեպ մարդասիրական վերաբերմունքի մասին: Սակայն հնարավո՞ր է, որ գերմանական կառավարության ձեռքերը կապված են իրավասությունների մասին հայտնի պայմանագրերի պատճառով: Ոչ, երբ խոսքը հազարավոր անօգնական կանանց և երեխաներին սովամահ անելու մասին է, այստեղ այնպիսի բառեր, ինչպիսիք են «ժամանակին» և «իրավասության մասին պայմանագիրը» այլևս չունեն ոչ մի նշանակություն: Այստեղ իրավասու է ամեն մի կուլտուրական մարդ և նրա սուրբ պարտքը պետք է լինի միջամտելը: Մեր հեղինակությունը Մերձավոր Արևելքում դրված է բախտախաղի վրա: Ցավով գլուխ են օրորում նաև առավել զգայուն թուրքերն ու արաբները, երբ քաղաքով աքսորյալներին տեղափոխելու ժամանակ զինվորները մահակներով ծեծում էին հղի կանանց, որոնք այլևս չեն կարող առաջ շարժվել: Դեռևս սպասվում են մարդկային ահավոր հեկատոմբներ[10], այդ մասին է վկայում հավելվածում բերված Ջեմալ փա-

[10] Մարդկանց զանգվածային կոտորած:

շայի հրահանգը («Բաղդադի երկաթգծի ինժեներներին արգելված է լուսանկարել հայկական շարասյունները: Բոլոր արդեն նկարված նեգատիվները պետք է հանձնվեն մեկ օրվա ընթացքում: Հակառակ դեպքում մեղավորները կպատժվեն ռազմական դատարանի կողմից»), որպես ապացույց այն բանի, որ ղեկավար մարմիններում, թերևս վախենում են հրապարակայնությունից, սակայն դեռևս մտադիր չեն վերջ տալ մարդկային արժանապատվությունը վիրավորող այս տեսարաններին:

Մեզ հայտնի է, որ արտաքին գործերի նախարարությունն արդեն այլ վայրերից ստացել է այստեղի իրավիճակի մանրամասն նկարագրությունը: Սակայն քանի որ տեղահանության ձևի մեջ մինչև այժմ չի կատարվել որևէ փոփոխություն, մենք կրկնակի մեզ պարտավորված ենք զգում այս հաղորդումն անելու, առավել ևս, որ մենք արտասահմանում գիտակցում ենք այն չափազանց մեծ վտանգը, որն այստեղ սպառնում է Գերմանիայի վարկին:

Ստորագրություն՝ տնօրեն Հուբեր,
դոկտոր Նիսյագն,
դոկտոր Գրետեր,
պարոն Շպիկեր

II

«Ալգեմայնե Միսսիոնս Ցայտշրիֆտ» (Միսիոներության տեսության և պատմության) ամսագրում, որը հրապարակվում է դոկտոր, պրոֆեսոր Յուլիուս Ռիխտերի (Բեռլին – Շտեգլից) և հոգևորական, դոկտոր Յոհ. Վարնիկի (Բեթել՝ Բիլեֆելդի մոտ) կողմից, «Մարտին Վարնիկ» հրատարակչությունը, Բեռլին, Շեյլինգշտրասե, 5, 1915 թ. նոյեմբերյան համարում (N 11, էջ 506 և հաջորդ էջերը) հայտնվեց Հայաստանի ջարդերի հետևյալ նկարագրությունը: Ռազմական գրաքննության Բեռլինի գերատեսչության 1915թ. նոյեմբերի 10-ի հրահանգով այդ հոդվածի արտատպագրությունը և տարածումը արգելվեց:

«Մենք չենք կարող ձեռնպահ մնալ նրանից, որ մեր ընթերցողի գիտությանը չհասցնենք այն բազմաթիվ իրական հաղորդումների, համենայն դեպս, մի քանի ոչ մեծ պատառիկներ հայերի ահավոր դժբախտության մասին: Դրանք մեզ տանում են տեղահանության սկզբնական կետը, այնուհետև տարանցիկ քաղաք, որի միջով անցել են աքսորված մարդկանց բազմությունները և վերջապես անապատ՝ ուր որ նրանց աքսորում էին: Հուլիսի 7-ին Երզնկայից

շարժվեց աքսորյալների առաջին շարասյունը: Այն կազմված էր գերազանցապես ունևոր մարդկանցից, որոնք կարող էին իրենց համար սայլ վարձել: Եվ, ասում են, նրանք իսկապես հասան մինչև մոտակա նշանակված կետը՝ Խարբերդ: Հուլիսի 8-ին, 9-ին և 18-ին մարդկանց նոր զանգվածներ թողեցին քաղաքը, ընդհանուր առմամբ՝ 20000-ից 25000 մարդ ... Շուտով մեզ լուրեր հասան այն մասին, որ քրդերը հարձակվել են մարդկանց անպաշտպան բազմության վրա և ամբողջովին թալանել են նրանց: Այդ լուրերի ճշմարտացիությունը հաստատվեց մեր թուրք խոհարարուհու կողմից: Նա արցունքներն աչքերին պատմեց, որ քրդերը պատվազուրկ են արել կանանց և հետո սպանել, իսկ երեխաներին գցել են Եփրատը ... Եվ ահա հուլիսի 11-ին ուղարկվեցին կանոնավոր զորքեր, որպեսզի «պատժեն քրդերին»: Դրա փոխարեն այդ զորքերը կոտորեցին ողջ անպաշտպան մարդկանց բազմությունը, որը մեծամասամբ բաղկացած էր կանանցից և երեխաներից: Թուրք զինվորների շուրթերից, որոնք մասնակցում էին դրան, մենք կարողացանք իմանալ, թե ինչպես են կանայք ծնկաչոք աղերսել խնայել իրենց և ինչպես նրանցից ոմանք իրենք են իրենց երեխաներին գցել գետը: Մենք սարսափահար հարցրեցինք՝ «Եվ դուք կրակու՞մ էիք կանանց և երեխաների վրա»: Հետևեց պատասխանը. «Իսկ ինչ մենք կարող էինք անել: Դա հրաման էր»: Նրանցից մեկն ավելացրեց. «Ցավալի էր տեսնել այդ ամենը: Եվ ես չէի կրակում...»: Կոտորածից հետո մի քանի օր Երզնկայի շուրջ գտնվող ցորենի դաշտերում, որտեղ հնարավոր էր, որ թաքնված լինեին ոմանք, կատարվում էր մարդկանց որս...

18-ի երեկոյան մենք մեր ընկեր պարոն Գ-ի հետ մեր տան առջև հետ ու առաջ էինք անում: Մենք հանդիպեցինք ոստիկանի, որը պատմեց, որ հոսպիտալից հազիվ 10 որպեի ճանապարհի վրա գիշերում էր կանանց և երեխաների մի բազմություն Բայբուրթից: Նա ինքը օգնել էր նրանց այնտեղ քշել և այժմ հուզված պատմում էր թե ինչ տառապանքների էին նրանք ենթարկվել երկար տեղափոխության ժամանակ: «Անասունի պես ծեծելով, նրանց քշում էին այնտեղից: Ամեն օր սպանում և անդունդն էին գցում 10-12 տղամարդ: Ջարդում էին այն երեխաների գանգերը, որոնք չէին կարողանում շարունակել ճանապարհը: Կանանց թալանում և անարգում էին: Ես ինքս կարգադրեցի թաղել երեք մերկ կանանց դիակներ: Թող որ Աստված դա հաշվի առնի»: Այսպես նա ավարտեց իր սարսափելի պատմությունը... Հաջորդ առավոտյան մենք լսեցինք, թե ինչպես էին մահվան դատապարտված մարդիկ անցնում մեր կողքով: Մենք միացանք նրանց և գնացինք նրանց հետ քաղաք: Նրանց ողբն ան-

նկարագրելի էր: Մնացել էին ընդամենը երկու տղամարդ: Կանանցից ոմանք խելագարվեցին: Նրանցից մեկը բղավում էր. «Մենք ուզում ենք դառնալ մահմեդականներ, մենք ուզում ենք դառնալ գերմանացիներ, ինչ որ ուզում եք կդառնանք, միայն թե փրկեցեք մեզ: Հիմա նրանք մեզ կտանեն Քեմախ և կկտրեն մեր կոկորդը....»: Ճանապարհին հանդիպեցի տեղահանվածների մեծ շարասյանը, նրանք բոլորովին վերջերս էին հեռացել իրենց գյուղերից և դեռևս լավ վիճակում էին գտնվում: Մենք ստպիված էինք երկար կանգնել, որպեսզի նրանք անցնեն մեր առջևով և երբեք չենք մոռանա այդ տեսարանը. միայն մի քանի տղամարդ, մնացածը կանայք էին և բազմաթիվ երեխաներ: Նրանցից շատերը շիկահեր էին՝ մեծ կապույտ աչքերով, որոնք մեզ էին նայում այնպիսի խոր լքջությամբ և այնքան անգիտակից վեհ հայացքով, կարծես նրանք արդեն երկնային հրեշտակներ լինեին: Անխոս նրանք դանդաղ շարժվում էին առաջ, մեծ ու փոքր, նույնիսկ ծեր կանայք, որոնց մեծ դժվարությամբ էր հնարավոր պահել ավանակների վրա, բոլորը գնում էին առաջ, բոլորը՝ մեկը մյուսի հետ կապված, որպեսզի բարձր ժայռերից նետվեն Եփրատի ալիքների մեջ: «Այդպես են հիմա անում»,- պատմում էր մեզ հույն կառապանը, և դիակները, որոնք լողում էին գետի հոսանքով ցած, իհարկե երևում էին: Սիրտ էր քարանում դրանից: Մեր ոստիկանն ասաց, որ ինքը քիչ առաջ այդպիսի շարասյուն է տեղափոխել՝ բաղկացած 3000 կանանցից և երեխաներից Մամախաթունից, որը գտնվում է Էրզրումից Քեմախ տանող երկու օրվա ճանապարհի հեռավորության վրա: «Բոլորը ոչնչացան»,- ասաց նա:

Մենք հարցրեցինք. «Եթե դուք ուզում եք սպանել նրանց, ապա ինչու՞ չեք դա անում նրանց գյուղերում: Ինչու՞ է հարկավոր նրանց հասցնել այդպիսի աննկարագրելի ստորության աստիճանի...» Նա պատասխանեց. «Այդպես ճիշտ է, նրանք պետք է դառնան ոչընչություն: Եվ բացի այդ, ինչպե՞ս վարվենք դիակների հետ: Չէ որ նրանք կնեխեին»:

Մայիսի 10-ից 30-ը առանց կրոնական խտրականության ձերբակալվեցին հերթական 1200 ամենանշանավոր հայերը և այլ քրիստոնյաները Դիարբեքիրի և Մամուրեթ-ուլ-Ազիզ վիլայեթներում: Նրանցից 674-ը մայիսի 30-ին բարձվեցին Տիգրիսով լողացող նավակներին այն պատրվակով, թե իբր նրանց ուզում են հասցնել Մոսուլ: Շարասյունն ուղեկցում էր վալիի համահարզը, մոտավորապես 50 ոստիկանների հետ: Նրանցից կեսը տեղավորվել էր նավակների մեջ, այն դեպքում, երբ մյուս մասը հեծյալ ուղեկցում էր ափով: Շարժվելուց անմիջապես հետո մարդկանցից խլեցին բոլոր փողերը (մոտ

6000 լիր) և հագուստը, իսկ հետո նետեցին գետը: Ափին գտնվող ռուսական ոստիկանների խնդիրն էր թույլ չտալ, որ նրանցից մեկը փրկվի: Այդ մարդկանց հագուստը վաճառվեց Դ.-ի շուկայում:

Հալեպի վիլայեթում Հաճնի, Շիրայի, Ալբիստանի, Հեքսունի, Թաշոլուկի, Զեյթունի, Ալաբաշի անխտիր բոլոր գյուղերի, Գեբենի, Շիվիլգիի, Ֆուռնուսի և հարակից գյուղերի, Ֆունդուչակի, Հասանբելի, Խարնի, Լափաշլիի, Դորթյոլի և մյուս բնակավայրերի բնակիչները տեղահանվեցին և շարասյուններով աքսորվեցին անապատ այն պատրվակով, թե նրանց պետք է բնակեցնեին այնտեղ: Թել- Արմեն (Բաղդադի երկաթգծի մոտ, Մոսուլից ոչ հեռու) գյուղի բնակիչները, հարևան գյուղերի բնակիչների հետ միասին մոտ 5000 մարդ, մորթվեցին՝ ընդհուպ մինչև վերջին կանայք և երեխաները: Մարդկանց կենդանի նետում էին ջրհորները կամ այրում էին: Ասում էին, թե հայերը պետք է բնակեցնեն Բաղդադի երկաթգծից 25-30 կմ հեռավորության վրա գտնվող հողերը: Սակայն քանի որ տեղահանվում են միայն կանայք և երեխաները, քանզի բոլոր տղամարդիկ, բացառությամբ ծերունիների, պատերազմում են, ապա դա հավասարազոր է այդ ընտանիքների ոչնչացմանը, որովհետև չկան ոչ աշխատող ձեռքեր, ոչ էլ գումար՝ հողը մշակելու համար: Մի գերմանացի հանդիպեց ծանոթ զինվորի, որը արձակուրդ էր գնում Երուսաղեմից: Այդ տղամարդը թափառում էր Եփրատի ափով իր կնոջը և երեխաներին գտնելու հույսով, որոնք իբր աքսորվել էին այնտեղ: Նման դժբախտների հաճախ կարելի է հանդիպել նաև Հալեպում, քանի որ նրանք կարծում էին, թե կկարողանան այստեղ մանրամասնություններ իմանալ իրենց հարազատների գտնվելու վայրի մասին: Հաճախ պատահում էր այնպես, որ երբ ընտանիքի անդամներից մեկը բացակայում էր, այդ անձը վերադառնալու ժամանակ արդեն չէր գտնում իր հարազատներից ոչ մեկին, քանի որ բոլորը տեղահանված էին լինում, բոլորը: Մի անբողջ ամսվա ընթացքում գրեթե ամեն օր նկատվում էին Եփրատով ցած քշվող դիակներ, հաճախ երկու կամ վեց դիակներ իրար կապված: Տղամարդկանց դիակները մասամբ այլանդակված են (կտրված են սեռական օրգանները և այլն), կանանց դիակները՝ պատռված որովայններով: Ջերաբուլուսում թուրքական զինվորական կայմակամն այդ պատճառով հրաժարվում էր թույլ տալ թաղել Եփրատի դիակներին, քանզի հնարավոր չէր պարզել այդ մարդիկ քրիստոնյա են, թե մահմեդական, ասենք, այդ գործը նրան չի էլ հանձնարարված: Ալիքներով ափ բերված դիակները հոշոտում են շները և ուրուրները: Կան բազմաթիվ վկաներ (գերմանացի) այդ ամենին: Բաղդադի երկաթգծի պաշտոնյան պատմեց, որ Դիրեջի-

կում օրեցօր բանտերը լցվում են մարդկանցով, իսկ գիշերները դատարկվում են (Եփրատ): Մի գերմանացի ռոտմիստր Դիարբեքիրի և Ուրֆայի միջև ընկած տարածքներում տեսել է ճանապարհին ընկած բազմաթիվ չթաղված դիակներ:

III

ՀԱԼԵՊՈՒՄ (ԹՈՒՐՔԱԿԱՆ ՓՈՔՐ ԱՍԻԱ) ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՌԵԱԼԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՑԻՉ ՊԱՐՈՆ ԴՈԿՏՈՐ ԳՐԵՏԵՐԻ 1916թ. ՀՈՒԼԻՍԻ 7-Ի ՆԱՄԱԿԻՑ ՄԻ ՀԱՏՎԱԾ

Իսկ այժմ տիկին Ա-ի հատուկ ցանկությամբ թույլ տվեք Ձեզ պատմել էլի ինչ-որ բան հայերի պատմություններից ընդհանրապես: Այս անգամ խոսքը ավանդական ջարդերից մեկի մասին չէ, այլ ոչ ավելի և ոչ պակաս, քան Թուրքիայում հայ ժողովրդի ոչնչացման մասին է, ինչպես դա մեծագույն ցինիզմով խոստովանում են թուրք պաշտոնյաները, սկսած Թալեաթ-բեյից մինչև վերջին ոստիկանը և (փոքր-ինչ շվարած) գերմանացի հյուպատոսները: Սկզբում նշում էին, որ ուզում էին միայն մաքրել մարտական գործողությունների գոտին և վերաբնակիչներին հատկացնել բնակության նոր վայրեր և այդ գործը սկսեցին ռազմաշունչ լեռնական բնակիչներից, որոնց ժայռերի մեջ գտնվող տներից դուրս էին հանում թուրքական կառավարության, իրենց իսկ եկեղեցու առաջնորդների, ամերիկյան միսիոներների և գերմանական հյուպատոսների մեկի խոստումների միջոցով: Այնուհետև հետևեցին տեղահանություններն ամենուրեք, նույնիսկ այն բնակավայրերում, որոնց պատերազմը երբեք չէր հասնի և այն մասին, թե ինչպես էր դա կատարվում, վկայում է այն փաստը, որ Խարբերդից և Սվազից 18000 տեղահանվածներից Հալեպ հասավ միայն 350 մարդ, Էրզրումից տեղահանված 1900-ից՝ 11 մարդ: Ասենք, Հալեպում բոլորովին էլ չավարտվեցին այդ խեղճերի տառապանքները: Նրանց, ով չմահացավ այստեղ, (գերեզմանոցները լցված են) այնուհետև քշում էին ավելի հեռու, սիրիական տափաստանը՝ Եփրատի վրա գտնվող Դեր Զորի ուղղությամբ, որտեղ նրանց չնչին տոկոսը քարշ է տալիս իր ողորմելի գոյությունը, պայքարում է քաղցից մեռնելու դեմ:

Ես այս ամենը հաղորդում եմ՝ ելնելով սեփական դիտարկումներից: Անցյալ տարվա հոկտեմբերին ես եղել եմ այնտեղ և տեսել եմ հայերի շատ դիակներ, որոնք լողում էին Եփրատով, կամ ընկած էին տափաստանում: Գերմանացիներն այս ամենին, որոշ անձանց հա-

ճելի բացառությամբ, վերաբերվում են պասիվ, հետևյալ հիմնավորմամբ. «Մեզ հարկավոր են միայն թուրքերը»: Ինձ նաև հայտնի է, որ գերմանական բամբակագործական միության մի ծառայողի և Բաղդադի երկաթգծի մեկ այլ ծառայողի տնօրինության կողմից արգելվել էր օգնել հայերին, որ գերմանացի սպաները գանգատվում էին գերմանացի հյուպատոսից՝ հայերի հետ ունեցած բարեկամական հարաբերությունների համար, որ գերմանացի ուսուցիչը, որը դասավանդում է գերմանա-թուրքական միություններին կից գործող դպրոցներից մեկում, չնայած իր ջանասիրությանը չկարողացավ հիմնավորվել, որովհետև նրա կինը հայուհի էր: Վախենում են, որ այս ամենը կարող է գրգռել թուրքերին: Թուրքերն իրենք, անշուշտ, այդքան էլ նրբանկատ չեն: «Խոսքը Թուրքիայի ներքին գործերի մասին է, մենք չենք կարող միջամտել»: Սա ես լսում անընդհատ: Սակայն, երբ խոսքն այն մասին էր, որ հայերին համոզեն, որ նրանք լինեն զիջողական, ապա այս հարցում անմիջապես միջամտեցին: Եվ երբ Ուրֆայի հայերը, այն բանից հետո, երբ տեսան, թե ինչ կատարվեց իրենց ազգակիցների հետ այլ վայրերում, հրաժարվեցին լքել իրենց քաղաքը և դիմադրություն ցույց տվեցին, ոչ այլ որ, քան կոմս Վոլֆ ֆոն Վոլֆսբկելը հրամայեց ռմբակոծել քաղաքը և այն բանից հետո երբ 1000 հայեր (տղամարդիկ) հանձնվեցին, նա չկարողացավ կանխել նրանց ոչնչացումը:

Ցավոք դրությունն այնպիսին չէ, որ հնարավոր լիներ հույս դնել հայ ժողովրդի դրության բարելավման վրա: Համընդհանուր թանկացումը, անընդհատ մեծացող դժգոհությունը, ռուսների մոտեցումը՝ այս ամենը ոչ մի լավ բան չի խոստանում: Միայն գերմանացիները կարող էին ինչ- որ բան անել այժմ, երբ նրանք այսքան զորք ունեն Թուրքիայում: Շատ հայեր դեռ ողջ են: Դեռևս կան մի քանի որբանոցներ, որոնք թուրքերը դեռ չեն թալանել, Բաղդադի երկաթգծի շինարարության վրա դեռ աշխատում են մի քանի հազար տղամարդ, կանայք և երեխաներ, որոնք թուրքական իշխանությունների աչքի փուշն են: Եվ նրանց վիճակված է մեռնել կամ մահմեդականություն ընդունել: Սա սարսափելի հարց է, որ ինքն իրեն տալիս է ամեն որ, ով իրեն գիտակցում է մարդասեր մարդ և քրիստոնյա Թուրքիայում:

Politarchiv, R14095,Ab. 4543,
АВГАТ,стр.*426-432*

№ 60

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԿՅՈՒԼՄԱՆԻ ԶԵԿՈՒՅԱԳԻՐԸ ՌԱՅԽՍԿԱՆՑԼԵՐ ԲԵԹՄԱՆ-ՀՈԼՎԵԳԻՆ

16 փետրվարի 1917թ.

Ես կարծում եմ, որ վերջին հաշվով հայերի ոչնչացման քաղաքականությունը վնաս է հասցնում թուրքական պետությանը: Գազանությունները, որոնցով ուղեկցվում է հայերի դեմ արշավը, ծանր բեռի նման կմնան թուրքերի հեղինակության վրա երկար ժամանակ, և բավականին երկար ժամանակահատվածում այդ գազանությունները կծառայեն իբրև թունավորած զենք նրանց ձեռքում, ովքեր հրաժարվում են Թուրքիային ճանաչել իբրև քաղաքակիրթ պետություն և պահանջում են թուրքերին դուրս մղել Եվրոպայից:

The Armenian Genocide during the First World War /W. and S. Gust (ed.) in cooperation with Taner Akcam: Documents from German State Archives. [DE/PA-AA/ R14095. DuA Dok. 317 (re). 1917-02-16-DE-003].
ГАОТОМС, т.1, стр. 292.

№ 61

ՀԱՅԵՐԻ ՆՈՐ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գերմանական օգնության միություն
հանուն քրիստոնեական բարեգործության
Մերձավոր Արևելքում (գրանցված միություն)

Մայնի Ֆրանկֆուրտ,
21ապրիլի 1917

Մեծարգո պարոն գաղտնի խորհրդական

Բաղդադի երկաթգծի կայարաններից մեկում աշխատող մի կին մարտի 18-ին գրում է հետևյալը.

«Այստեղ մեզ մոտ գտնվում են շատ հայեր Մարաշից, ինչպես նաև նախկին որբեր գերմանական որբանոցներից: Վերջերս կրկին տեղի ունեցան զանգվածային տեղահանություններ և երկու օր առաջ ինձ վիճակվեց տեսնել այդ մեծ դժբախտությունը: Այսօր ստացվեց հաղորդագրություն, որ այստեղից բոլորը պետք է հեռանան և այնուամենայնիվ միշտ հաջողվում է նրանց մի մասին պահել

այստեղ»:

Այս հաղորդումն, անշուշտ, մի տեսակ տարօրինակ է բնութագրում Թալեաթ փաշայի փոփոխված դիրքորոշումը հայերի նկատմամբ:

Մշտապես երախտապարտ,
Ձեզ նվիրված Ֆ. Շուխարտ

Դեսպանատան գաղտնի խորհրդական
պարոն ֆոն Ռոզենբերգին

Politarchiv, R14090.Ab. 13142,
ԱԲԳԱՏ, էջ.433

№ 62

ՀԱՅԵՐԻ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՌԱՔՔԱՅՈՒՄ

Կայսերական գերմանական
հյուպատոսություն
K`N 46
N 804

Հալեպ, 2 մայիսի 1917

Սույն թվականի փետրվարի 14-ին K` N 21, N 299 հաշվետվության մեջ մտահոգություն էր արտահայտված, որ Ռաքքա տեղահանված 6600 հայեր այնտեղ մեծամասամբ դատապարտված են սովամահության: Սույն պատճենում խոնարհաբար վերարտադրում եմ քահանա Կյունցլերի ապրիլի 28-ի հաղորդումը, որը վերաբերում է այնտեղի ուղևորությունից և հաստատում է այդ մտավախությունները: Ցավոք, դեռևս չեն գտնվել այն միջոցները, որոնք պահանջվում են ողբերգությունը կանխարգելելու համար: Օգնության կազմակերպությունների ղեկավարներին ավելի ճիշտ է թվում առաջին հերթին եղած միջոցներն օգտագործել այն բանի համար, որ օգնություն ցուցաբերվի հայերին այն շրջաններում, որտեղ ավելի արագ է հնարավոր իսկապես իրականացնել այն, քան այնտեղ, որտեղ հնարավոր է հասնել միայն նրանց տառապանքների երկարաձգման մի քանի օրով, լավագույն դեպքում շաբաթով:

Նմանատիպ հաշվետվություն եմ ուղարկում նաև կայսերական դեսպանությանը:

Ռյոսլեր

Նորին գերազանցություն ռեյխսկանցլեր,
պարոն դոկտոր ֆոն Բեթման-Հոլվեգին

Politarchiv, R14096,Ab.16719,
ԱԲԳԱՏ, էջ.433-434

//

ՀԱՅԵՐԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՊԱԳԱՆ ՓՈՔՐ ԱՍԻԱՅՈՒՄ

Գերմանական ավետարանական միսիոներական օգնություն

Բեռլին-Շտեգլից, 14 հուլիսի 1917
Հումբոլդշտրասսե, 14,
N 2423

Որպես Մերձավոր Արևելքում կույրերի գերմանական առաքելության վարչության անդամ, ես Մալաթիայում մեր կույրերի տան ղեկավար Էրնստ Ի. Քրիստոֆֆելից սույն թվական մարտի 26-ին ստացա նամակ, որը պարունակում է պարոն Քրիստոֆֆելի հայացքները հայերի վիճակի և նրանց ապագայի նկատմամբ Փոքր Ասիայում: Ինձ թույլ եմ տալիս ներկայացնել այն պատճենով՝ որևէ դիրքորոշում չցուցաբերելով տվյալ հաղորդման նկատմամբ:

Շրայբեր
Գերմանական ավետարանական
միսիոներական օգնության տնօրեն

Արտաքին գործերի նախարարություն
Բեռլին

ՀԱՎԵԼՎԱԾ

Պատճեն

ՄԱԼԱԹԻԱՅԻ ԿՈՒՅՐԵՐԻ ՏԱՆ ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ ԷՐՆՍՏ Ի. ՔՐԻՍՏՈՖԵԼԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ԲԵՌԼԻՆԻ ՔԱՀԱՆԱ Գ. ՇՏՈՅՎԵՋԱՆՏԻՆ ՀԱՅԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Մալաթիա, 26 մարտի 1917

Օգտվում եմ բարենպաստ հնարավորությունից, որպեսզի հաճելի այցելության միջոցով փոխանցեմ գրաքննությանը չենթարկված տեղեկատվություն՝ հիմնականում այն մասին, ինչ վերաբերում է մերձավորարևելյան քրիստոնյաների վիճակին, այն դեպքում, երբ անմիջապես հիմնարկության մասին ես ուզում եմ գրել տիկին դոկտոր Շտ. և խնդրում եմ Ձեզ երկուսիդ փոխանակվել նամակներով:

Հայ ժողովրդի կորուստները, սկսած 1915թ. տեղահանությունից մինչև այսօր, գերազանցում են երկու միլիոնը: Դրա մի մասը սպանվեց բանտերում՝ սարսափելի տանջալից կտտանքներից հետո:

Կանանց և երեխաների մեծ մասը մահացել է սովից, համաճարակներից, ինչպես նաև սպանվել է աքսորի ճանապարհներին: Մանրամասնությունների մեջ մտնել չեմ կարող: Եթե իմ թանկագին ընկեր Անդրեաս Կրյուգերը հնարավորություն ունենա Ձեզ տեսնել, ապա նա կարող է շատ թե քիչ ավելի ամբողջական նկարագրել իմ այս արտահայտությունները:

Տեղահանվածների ողորմելի մնացորդները խղճուկ գոյություն են քարշ տալիս Սիրիայի և Հյուսիսային Միջագետքի հարթավայրերում և ամեն օր նրանց թիվը կրճատվում է համաճարակների և հարկադիր մահմեդականացման հետևանքով: Տղամարդիկ միայն եզակի դեպքերում են կենդանի մնացել: Անատոլիայի քաղաքներում դեռևս գտնվում են մի քանի փրկվածներ, փախածներ, որոնք, սակայն, մեծամասամբ մահմեդականացվել են: Բոնի մահմեդականացման հետ մեկտեղ, որն ընթանում էր զանգվածային կարգով, մեկ այլ բնորոշ նախանշան էր հայ երեխաների զանգվածային որդեգրումը: Խոսքն այստեղ բազում հազարների մասին է: Նրանց արհեստական ձևով դարձնում են մոլի մահմեդականներ: Սպանությունները պակասեցին, սակայն ոչնչացման գործընթացը չի դադարել, այլ միայն ընդունել է այլ ձևեր:

Մարդկանց ամեն ինչը հափշտակված է: Սեփականությունը, ընտանիքը, պատիվը, կրոնը, կյանքը: 1915թ. աշնանը բողոքական և կաթոլիկ հայերի համար, հավանաբար գերմանական և ավստրիական դեսպանությունների դրդմամբ, հրապարակվեց ներման հրաման, որը նրանց պետք է պաշտպաներ տեղահանություններից և ճանաչեր նրանց իրենց ունեցվածքի տերը: Դա նման էր միայն անգընդակ կրակոցի: Դեպքերի մեծ մասի համար այն անտեսվում էր այնքան ժամանակ, մինչև որ չսպանվեին տղամարդ բողոքականները, իսկ կանանց և երեխաների համար այն հազիվ թե ուներ գործնական նշանակություն:

Սև ծովից ընդհուպ մինչև Սիրիան, Աստծո խոսքի քարոզը լսեցված է, բողոքական համայնքները, բացառությամբ նրանցից, ովքեր գերմանական հաստատություններում են գտնվում, ոչնչացված են: Նրանց քարոզիչները, առանձին բացառություններով (հնարավոր է չորս-հինգ հոգու), բոլորը սպանվեցին: Նրանց զանգակատները և դպրոցները ոչնչացվեցին, պղծվեցին կամ ավիրվեցին: Նույնը վերաբերում է կաթոլիկ և հնադավան հայկական համայնքներին:

Անիմաստ է պատասխանատվությունը գցել հայկական հեղափոխական շրջանների վրա: Թուրքական տեսակետից նրանք շատ մեղքեր գործեցին, իսկ հայկականից՝ ամենևին ոչ: Ազգը որպես

այդպիսին մեղավոր չէր: Թուրքական կառավարությունը նույնքան լավ գիտի այդ մասին, ինչպես և ցանկացած մարդ այս երկրում: Մեզ՝ գերմանացի միսիոներներիս համար, անասելի ծանր է այն, որ քրիստոնյաները և մահմեդականները Գերմանիային դիտում են որպես կոտորածի նախաձեռնողի: Այս տեսակետը քաջալերվում և խրախուսվում է Թուրքիայի կողմից: Եթե այս մեղադրանքը հաստատվի Գերմանիայի վրա, ապա դա տասնամյակներ շարունակ կլինի մեծագույն արգելք ինչպես քրիստոնյաների, այնպես էլ մահմեդականների նկատմամբ գերմանական առաքելության իրագործման համար: Տեղեկությունները, որոնք ստացվում են թուրքական կամ թուրքամետ շրջաններից, հարկավոր է կամ ամբողջությամբ մերժել, կամ էլ դիտարկել մեծագույն կասկածանքով: Եթե երբևէ հնարավոր լիներ ուսումնասիրել այս քաղաքականության իրականացումը, ապա գերմանական կողմը այդ դեպքում պետք է պնդի այն բանի վրա, որ դրա հետ մեկտեղ՝

1. անկողմնակալ, անկախ մարդկանց հանձնարարվի հարցի կրոնական կողմը հասկանալու բացահայտումը;
2. հայերին, որոնք բռնությամբ մահմեդականացվել էին հնարավորություն տրվի կատարել վերստին կրոնափոխություն և այնպես, որ նրանք մտավախություն չունենան իրենց կյանքի համար;
3. այն երեխաների հարազատներին, որոնք գտնվում են մահմեդական ընտանիքներում, իրավունք տրվի ետ պահանջել նրանց;
4. պետք է վերադարձվեն եկեղեցական և դպրոցական շենքերը;
5. պետք է վերադարձվի անշարժ գույքը կամ վճարվի դրա արժեքը;
6. պետք է թույլատրվի հայերի ներգաղթը;
7. չպետք է խոչընդոտվի քրիստոնեական ժամասացությունը:

Մենք, գերմանացի միսիոներներս, այստեղ, երկրի ներսում կարող ենք անել ոչ ավելին, քան քիչ թե շատ պասիվ ձևով Մերձավոր Արևելքի քրիստոնյաների հետ աննկարագրելի տառապանքների բեռը կրելն է: Ակտիվությունը, սակայն, հանդիսանում է այնպիսի հատկություն, որը բնորոշ է գերմանական ավետարանական քրիստոնեությանը և գերմանական ավետարանական միսիոներական շրջաններին:

Ես համոզված եմ, որ եթե մարդիկ իմանային ճշմարտությունը, ապա մեր ժողովուրդը կբարձրացներ բացառապես ցասումի ձայն դրա դեմ: Որևէ կասկած չկա այն հարցում, որ այն, ինչ հասցվել է հայ ժողովրդին և այն ինչ դեռ պետք է հասցվի նրան, հանդիսանում է մեծագույն հանցագործություն համաշխարհային պատմության

մեջ: Կհաշտվի՞ արդյոք մի ժողովուրդ, որը ծնեց Ռեֆորմացիան, անլիարժեք և թերզարգացած ռասայի կողմից քրիստոնյա ազգերից մեկի ամբողջական ոչնչացման, որպես կատարված փաստի հետ: Արդյո՞ք գերմանական ավետարանական եկեղեցին, որն այս տարի պատրաստվում է նշել իր Ռեֆորմացիայի դարավոր հոբելյանը չի արտահայտի բողոք այն բանի դեմ, որ այստեղ սաղիստ ազգայնամոլների կողմից ավերվում է եղբայրական եկեղեցին: Դա կլիներ ոչ հարիր գերմանացիներին, քրիստոնյաներին:

Խնդրում եմ օգտագործեք իմ նամակն այնտեղ, որտեղ կարող եք: Հավանաբար, Դուք թույլ կտաք դրա հետ ծանոթանալ նաև նորին գերազանցություն Դրիանդերին:

Եվ թող որ Ձեզ առաջնորդի ամեն ինչում եկեղեցու տիրակալ Աստվածը:

Եվ ահա թե ինչ. մեզ հարկավոր է նյութական օգնություն, կրկին օգնություն և ևս մեկ անգամ օգնություն: Խաղաքարտի վրա են դրված բարձրագույն արժեքի միսիոներական բարիքները:

Փոխանցեք, խնդրում եմ, իմ խորին հարգանքը Ձեր տիկնոջը:

Աստված Ձեզ հետ, Ձեր հավատարիմ
ստորագրություն Էրնստ Ի. Քրիստոֆել.

Politarchiv, R14097. Ab . 23271,
ԱԲԳԱՏ, էջ. 439-441

№ 64
Յ. ԼԵՓՍԻՈՒՍԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾԻ ԶՈՀԵՐԻ ՕԳՏԻՆ ԳՈՒՄԱՐՆԵՐ ՀԱՎԱՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

[Արտաքին գործերի նախարարություն, պետական քարտուղարի օգնական]

Բեռլին, 20 օգոստոսի, 1917

Դաղտնի

Ինչպես հայտնի է Ձերդ գերազանցությանը, Գերմանական մերձավորարևելյան առաքելության տնօրեն դոկտոր Յոհաննես Լեփսիուսը Պոտսդամում սույն թվականի մարտի 28-ին դիմեց ներքին գործերի նախարարությանը՝ խնդրանքով, որ թույլ տրվի շարունակել 1916թ. հուլիսից իր կողմից տարվող միջոցների հավաքումը հայ որբերի օգտին և ստացավ բացասական պատասխան: Ի պատասխան դրան պարոն Լեփսիուսը սույն թվականի մայիսի 18-ին

հայտարարությամբ դիմեց պարոն ռայխսկանցլերին և մեջբերելով այն տպավորությունը, որը կարող է չեզոք և թշնամաբար տրամադրված արտասահմանյան երկրների մոտ թողնել օգնության ակցիայի մերժումը, խնդրում էր պաշտպանել իր հայտարարությունը: Անկասկած չեզոք արտասահմանում, եթե անգամ նա, որպես կանոն, սովորաբար, գրավում է բարենպաստ դիրք մեր նկատմամբ, չափից դուրս տարածված է այն տեսակետը, որ գերմանական կառավարությունը ծայրահեղ դեպքում բարոյապես պատասխանատու է պատերազմի ժամանակ Թուրքիայում քրիստոնյա հայերի դեմ կատարված չարագործությունների համար, քանզի նա չի կանխարգելել թուրքական կառավարության կողմից վարվող բնաջնջման քաղաքականությունը, որն ուղղված է հայկական տարրի դեմ: Առկա է այն բանի վտանգը, որ նման տեսակետը, անգամ եթե տարածվի Գերմանիայի առանձին քրիստոնեական շրջաններում, նոր թափ կստանա և առիթ կտա չեզոք և թշնամական մամուլին նոր հարձակումների համար, եթե հայտնի դառնա, որ Գերմանիայում արգելված է միջոցներ հավաքել հայկական կոտորածի զոհերի օգտին: Քաղաքական տեսակետից, ուստի, չափազանց ցանկալի կլիներ խուսափել այդ միջոցների հավաքման արգելքի վատ համբավից և հնարավորություն տալ դոկտոր Լեփսիուսին շարունակել իր օգնության ակցիան: Ելնելով այն բանից, որ խոսք անգամ լինել չի կարող հասարակության շրջանում քարոզչական գործունեության մասին մամուլում հրապարակային կոչերի միջոցով և այլն, վկայակոչելով մեր թուրք դաշնակիցների զգայնությունը, դոկտոր Լեփսիուսը իմ նախաձեռնությամբ պատճենով կից ներկայացրեց հանգանակողներին ուղղված քարոզչական նամակի նախագիծը, որի բովանդակությունը քաղաքական առումով կասկած չի առաջացնում: Խոնարհաբար համարձակվում եմ խնդրել Ձերդ գերազանցությանը տալ դոկտոր Լեփսիուսին նրա կողմից միջոցների հավաքման խնդրվող թույլտվություն այն վերապահումով, որ քարոզչական գործունեությունը բացառապես կսահմանափակվի բաց ծրարով այդ քարոզչական նամակի ուղարկումով:

Ինձ պարտավորված կզգայի շուտափույթ դրական պատասխանի համար:

Պետական քարտուղարի օգնական

Ներքին գործերի նախարարության
ռազմական բարեգործական օգնության
հարցերով պարոն կոմիսարին

Politarchiv, R 14097. zu Ab. 25334,
ԱԲԳԱՏ, էջ. 442-443

№ 65

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՈՒՇ ՔԱՂԱՔԻ ԵՎ ՆՐԱ ՀԱՅ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՈՉՆՉԱՑՈՒՄԸ (ՔՈՒՅՐ ԱԼՄԱ ՅՈՀԱՆՍԵՆԻ ՆԱՄԱԿԸ)

Փոստային հսկողության
ռազմական կետ

Դրեզդեն, 9 հոկտեմբերի 1917
Գաղտնի:

1 հավելված

Հակահետախուզության սեկցիա,
բաժանմունք III,
Բանակի գլխավոր շտաբի պետի
տեղակալ
Բեռլին C. 3.40

Սույնին կից 1 նամակ

Ուղարկող՝ Ա. Յոհանսեն, Ստոկհոլմ, Բրունսգատան, 2.
Հասցեատեր՝ բահանա Արսեն Ջենդոյան, Վիեննա, VII/ 2,
Մխիթարիսթենշտրասսե, 4

Բովանդակությունը՝ հայկական կոտորածի մանրամասն նկարագրություն

Ստորագրություն՝ լեյտենանտ Տեպել *ստորագրություն՝ Շմիդ*
պահեստի գեներալ-մայոր
Բեռլին,13.10.17

Բանակի գլխավոր շտաբի պետի տեղակալ
ՐՍՁ,N 10182 գաղտնի

V 19

Ենթակա է վերադարձման արտաքին գործերի նախարարության
տեղեկատվության բաժին
Ի գիտություն՝ նամակը ենթակա չէ ուղարկման
Հանձնարարությամբ
ստորագրություն՝ ֆոն Ռեդեր *Ստոկհոլմ*

ՀԱՎԵԼՎԱԾ

Ա.34435-ի
Բառացի պատճեն *Ստոկհոլմ 1.10.1917*

Մեծարգո պարոն Ջենդոյան:

Ես ստացա Ձեր նամակը և ախ, որքան ցավալի է, որ չպետք է պատասխանեմ դրան: Լավ տեղեկություններ հաղորդելն ինքնըստինքյան ուրախություն է, սակայն, ախ, որքան դժվար է, երբ ստիպված ես խոսել միայն արյան և արցունքների մասին:

Դուք ճիշտ եք ենթադրել, որ յոթանասուն աղջիկների և մի ուսուցչի հետ ես մի տան մեջ ապրեցի մի քանի տարի, մինչև ամեն ինչ չավարտվեց: Ձեր աներորդին սպանվեց կոտորածից երկու շաբաթ առաջ: Նրանք ապրում էին կաթոլիկական եկեղեցու մոտ գտնվող փոքր տնակում: Որքան ինձ հայտնի է, ոչ ոք ողջ չի մնացել: Ձեր քրոջը ես տեսել եմ երեկոյան, նախքան քաղաքի հրետակոծման սկսվելը: Հայկական թաղամասերը մինչև վերջ այրված են, իսկ բնակիչները՝ բոլորը գնդակահարվել են, բացառությամբ մի քանի հարյուր կանանց և երեխաների, որոնք հայտնաբերվեցին կենդանի, իսկ հետո սպանվեցին, բոլոր հայերը սպանվեցին իրենց տներում: Կարող եք հասկանալ, թե որքան ծանր է տեսնել այդ ամենը և չկարողանալ անել ոչինչ և, համենայն դեպս, ողջ մնալ, կարող եք արդյոք հասկանալ, որ իմ հոգին այնքան է վիրավորված, որ այն երբեք չի կարող բուժվել երկնային այս տանջավայրում:

Իսկ այգում, տան առաջ ես թաղեցի իմ երեխաներից առաջին երեք տառապյալներին, իսկ հետո կառավարության կողմից եկան պարետը և շտաբային սպան՝ բազմաթիվ զինվորների հետ և տարան բոլոր երեխաներին, ընդ որում, ազնիվ խոսք տալով, որ նրանց հետ ոչինչ չի պատահի, սակայն նրանք, ովքեր դեռ ողջ էին, պետք է աքսորվեին Միջագետք: Իմ բոլոր խնդրանքներն ու միջնորդություններն անտեղի անցան: Միայն մեծ աղջիկներից երեքին ես իրավունք ստացա թողնել իբրև սպասուհիներ, հետագայում ինձ զարմանալի կերպով հաջողվեց հետ ստանալ երեք ուսուցչուհիների, և ես նրանց ինձ հետ վերցրեցի Մամուրիեթ-ուլ-Ազիզ, քանի որ, վերջապես, հնարավոր դարձավ ուղևորություններ կատարել: Մյուսներն, այնպես ինչպես որբանոցի երեխաները և մեր ծառայողները սպանվեցին՝ առավելապես տներում կենդանի այրվելով: Կային, անշուշտ, հայեր, որոնց հաջողվեց մինչև կոտորածի սկսելը հեռանալ Մուշից, ոմանց հաջողվեց փախչել ռուսական կողմը: Թիֆլիսի միսիոներները գտան նրանց այստեղ: Ինչպես Ձեզ հայտնի է, Արիուշը կաթոլիկական գյուղ էր, գյուղի որոշ բնակիչների հաջողվեց թաքնվել և հետագայում նրանք դուրս եկան: Քանի որ կառավարությունը կարծում էր, որ արդեն ողջ մնացած ոչ մի կաթոլիկ և բողոքական չի մնացել, նա հրապարակեց հրաման, որով թույլ էր տրվում նրանց ապրել: Այսպի-

սով, Մուշը վերածվել է սոսկ ավերակների: Ողջ է արդյոք կաթոլիկ եպիսկոպոսը, ես չգիտեմ, Սուրբ Կարապետի ավագը Վարդան Վարդապետյանը, որը փոխարինում էր առաքելականների եպիսկոպոսին, նենգորեն խաբվեց, իսկ հետո գնդակահարվեց անձամբ բժիշկ Բալաղիի կողմից, այս նույն մարդու կողմից մի ինչ որ հայ բժշկի սպանելու նպատակով սպանվեց նաև դեղագործ Մկրտիչը, որին Դուք նույնպես, հավանաբար, գիտեք:

Չէ որ, մեկ անգամվա համար այսքան արյունը և արցունքները բավական չեն: Իսկ ես անկեղծորեն արտահայտվեցի այնպես, ինչպես մտածում եմ: Դուք արդեն այնքան շատ բան եք լսել, որ արդեն պատրաստ էիք այս սարսափելի լուրին: Խնդրում եմ ինձ իմաց տվեք, հասել է Ձեզ արդյոք իմ նամակը: Եթե այդտեղ գտնվում են հայեր, ապա ողջույններ փոխանցեք նրանց մի կնոջից, որը հնուց ի վեր մեծ վշտի մեջ դարձել է Ձեր ժողովրդի մասնիկը, իսկ Ձեր ժողովուրդը՝ նրա մի մասը: Իմ սրտի արմատներն այստեղ են, Հայաստանում, արդյո՞ք ինձ բախտ կվիճակվի կրկին տեսնել այն:

Թող որ Աստված լիովին սփոփի Ձեր սիրտը, վստահեք նրան և նրա ողորմությանը:

Սրտագին ողջույններով, Ձեզ
հավատարիմ Ալմա Յոհանսեն

Քահանա Արսեն Ջենդյանին, VII/2, Մխիթարիսթենշտրասսե,4
Վիեննա

Politarchiv, R14097. Ab. 34435,
ԱԲԳԱՏ, էջ. 447-449

№ 66

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ա.Վ. Շրայբեր,
Գերմանական ավետարանական
միսիոներական օգնության տնօրեն

Բեռլին- Շտեգլից 28 նոյեմբերի 1917

Մեծարգո պարոն բարոն,

Սույնին կից Ձեզ եմ ուղարկում խնդրանքով հանդերձ ... անձամբ ծանոթանալու և վերադարձնելու՝

1. Քահանա Շտիրի կողմից գրված նամակը հայերի տեղահանության մասին;

2. Թուրքիա տեղափոխված հայերի երկու նամակ, որոնք կրկին ցույց են տալիս, թե որքան օգտակար է այդ մարդկանց ներգրավել այստեղ ռազմական արդյունաբերության մեջ:[11]

Բարեկամական ողջույններով,
երախտագիտությամբ Ձեզ
հավատարիմ Ա.Վ. Շրայբեր

Արտաքին գործերի նախարարություն

Politarchiv, R14098. Ab. 39028,
ԱՎԳԱՏ, էջ. 453

ՀԱՎԵԼՎԱԾ

1917թ. օգոստոս
Գաղտնի: Հրապարակման ենթակա չէ:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Թուրքիայի պատերազմի մեջ մտնելու ժամանակ հայ ազգը Թուրքական կայսրության տարածքում ղեկավարվում էր եկեղեցական պատրիարքարանի և «Դաշնակցություն» կուսակցության կողմից: Վերջինս ամենասկզբում հեղափոխական կուսակցություն էր: Այն հիմնվեց Աբդուլ Համիդի ժամանակ քրդերի կողմից կատարվող հետապնդումների դեմ ժողովրդի պայքարը կազմակերպելու նպատակով: Սահմանադրական իշխանության հաստատումից հետո նա ցրեց իր կողմից ստեղծված ոչ մեծ խմբերը (ֆիդայիների), «Միություն և առաջադիմություն» կոմիտեի հեղափոխական կուսակցությանը ճանաչելով որպես իրեն համախոհ: «Դաշնակցությունը» դարձավ խորհրդարանական կուսակցություն և մինչև վերջերս շարժվում էր կառավարության հետ միասին: Նրա հետ մեկտեղ գոյություն ուներ նաև «Հնչակ» հին կուսակցությունը, որը սակայն չունի ոչ մի կազմակերպություն և օգտվում է ժողովրդի չնչին աջակցությունից և անցավ ընդդիմության կողմը: Զորահավաքը տարածվեց նաև հայերի վրա, որոնք սկզբում զենքը ձեռքին կռվում էին ռուսների դեմ: Էնվեր փաշան դեռ 1915թ. սկզբին Կոնիայի եպիսկոպոսին ուղղած նամակում հայտարարում էր, որ «օսմանյան բանակի հայ զինվորները բարեխղճորեն կատարում են իրենց պարտականությունները ռազմական գործողությունների թատերաբեմում, ինչը ես կարող եմ

[11] Այս փաստաթղթին կից առկա է միայն քահանա Շտիրի նամակը: Տնօրեն Շրայբերը հրաժարվեց վերադարձնել հավելվածները:

վկայել իմ սեփական դիտարկումներից» («Օսմանյան Լլոյդ», 26 փետրվարի): Պատրիարքարանը հայկական եկեղեցիներում կոչ էր անում աղոթել հանուն թուրքական զենքի հաղթանակի, հայերը խոշոր դրամական զոհաբերություններ էին անում հանուն Կարմիր կիսալուսնի:

1915թ. սկզբին կովկասյան սահմանից թուրքական զորքերի նահանջից հետո հայկական վիլայեթներից սկսեցին տարածվել բողոքներ, որ քրդական ոչ կանոնավոր զորքերն ուղարկվում էին հայկական գյուղեր և այնտեղ իրենց թույլ էին տալիս անարգանքներ կանանց նկատմամբ և թալան: Եթե հայերը և նրանց կանայք պաշտպանվում էին, ապա գործը հասնում էր հարձակումների՝ զանգվածային սպանություններով և ամբողջ գյուղերի ոչնչացման: Հայ առաջնորդների բողոքներն իրենց երիտթուրք բարեկամներին ոչ մի անգամ չեն բերել դրական արդյունքի: Առանձին հայեր, որոնք այլ քրիստոնյաների նման շնչահարկի վճարումով ընդհանրապես ազատվեցին զինվորական ծառայությունից, զորահավաքին չմիացան: Այդ դասալիքների փնտրման ժամանակ գործը հասավ ջարդերի և մահացու առանձին դեպքերի: 1915թ. գարնանն այդ պատճառով Զեյթունում, Կիլիկիայում, որը վաղուց քրդական ցեղերի նման ուներ որոշակի անկախություն Թուրքական կայսրության ներսում, տեղի ունեցան մարտեր ոստիկանների և դասալիքների միջև, ընդ որում, ոստիկանները սպանվեցին: Մոտ 20 հայեր, որոնց թվում դասալիքներ, ամրացան վանքերից մեկում: Մարտի սկզբին թուրքական ուժեղ զինվորական ստորաբաժանումն անցավ հարձակման և շրջապատեց Զեյթունը, քաղաքը հանձնվեց, դասալիքները ոչ երկարատև մարտից հետո փախան: Որպես պատիժ ամբողջ քաղաքը դատապարտվեց տեղահանության՝ մասամբ Կոնիայի ճահճոտ տեղանքները, մասամբ էլ Եփրատի մոտի միջագետքյան տափաստաններ: Դրանից հետո կարգադրված էր նույնությամբ աքսորել Կիլիկիայի ամբողջ հայ բնակչությանը (ավելի քան 200000 մարդ): Հալեպի վալի Ջելալ-բեյն այս միջոցների դեմ բողոք հայտնեց, հարյուր հազարավոր անմեղները ստիպված էին հատուցել մի քանի մարդու մեղքի համար: Նա տեղափոխվեց Կոնիա այլ նոր պաշտոնի: Տեղահանության հրամանն այստեղ, ինչպես նաև բոլոր վայրերում, տրվում էր Կոնստանդնուպոլսի կենտրոնական կառավարության կողմից: Մեկ անգամ չէ, որ Թուրքական գավառական իշխանության մարմինները խնդրում էին չեղյալ համարել հրամանը կամ ձգձգում էին դրա կատարումը, այդ դեպքում նրանց փոխարինում էին ավելի եռանդուն ծառայողներով:

Տեղահանության հրամանի իրագործման համար երկրում ամենուրեք հոգ էին տանում «Միություն և առաջադիմություն» կառավարող կուսակցության գործող ակումբները: Կիլիկիայից տեղահանության կազմակերպումը հանձնարարված էր Սիրիայի պարետ Ջեմալ փաշային: Հայերին տրվեց 10 օր ժամանակ, որպեսզի վաճառեն այն ունեցվածքը, ինչը չէին կարող վերցնել իրենց հետ: Չհաշված մահապատժի, սպանությունների մի քանի դեպքերը և անկարգությունների այլ դրսևորումները, ընդհանուր առմամբ տեղահանությունն անցավ հանգիստ: Հայերին երկար ժամանակ ետ ու առաջ էին տանում, հաճախ ոչ բավարար սննդի պայմաններում, շատերը մահանում էին: Այնուհետև նրանք բնակեցվեցին Մաուրանում, և Եփրատի ափերին, մի քանի ամսվա ընթացքում նրանք մասամբ կարողացան իրենց համար կառուցել խրճիթներ և գտնել զբաղմունք: Սակայն մեծ կարիքի մեջ և անօգնական գտնվողների թիվը, որոնք դատապարտված էին սովամահության, գերմանական հյուպատոսների տվյալներով դեռևս շատ մեծ է:

Ապրիլին անկարգություններ առաջացան Վանում: Ապրիլի 15-ին այնտեղ ուղևորության ժամանակ սպանվեցին երկու հայ առաջնորդներ, որը նրանք ձեռնարկել էին վալիի կարգադրությամբ՝ թուրք ոստիկանների ուղեկցությամբ: Երրորդ առաջնորդը՝ Արամը, վախենալով զանգվածային կոտորածից, հայկական թաղամասը բերեց պաշտպանական վիճակի, նրան անձամբ հաջողվեց դիմակայել թուրքական զորքերին 30 օր, մինչև որ մայիսի 18-ին Վանը գրավվեց ռուսների կողմից:

Մայիսի 20-ին հրաման տրվեց տեղահանել յոթ արևելա-անատոլիական վիլայեթների ամբողջ հայ բնակչությանը՝ ավելի քան մեկ միլիոն մարդ: Դրա իրագործումը շուտով սկսվեց և տևեց ընդհուպ մինչև օգոստոս: Հրամանը հիմնավորվում էր ռազմական անհրաժեշտությամբ: Այստեղ տեղահանությունը մեծամասամբ կատարվում էր չափազանց դաժան ձևով: Հայերին աքսորին պատրաստվելու համար տրվում էր երեք, իսկ երբեմն էլ մեկ օր: Նրանց ունեցվածքը հաճախ բռնագրավվում էր, թույլ էր տրվում խաժամուժին մասամբ թալանել նրանց, իսկ այն, ինչ նրանք վերցնում էին իրենց հետ, հաճախ շուտով խլվում էր բնակավայրերի սահմաններից դուրս: Տղամարդկանց սպանում էին, տեղահանվողների քարավանների վրա հարձակվում էին քրդական հրոսակախմբերը, գազանություններ էին կատարում կանանց նկատմամբ, երիտասարդ կանանց և աղջիկներին առևանգում էին և տանում հարեմներ կամ վաճառում էին ամենաբարձր գներով:

Անձինք, ովքեր ուղևորություններ էին կատարում, որոնց երթուղիները խաչվում էին տեղահանվողների քարավանների հետ, հաղորդում են չորսբոլորը թափված հաճախ ահավոր այլանդակված զանգվածային քանակությամբ, դիակների մասին: Բոլոր տեղերում սնունդը բացարձակապես անբավարար էր, հաճախ այն բնակավայրերի բնակիչներին, որտեղով որ նրանք պետք է անցնեին արգելվում էր նրանց սննդամթերք տալ: Տեղահանվողների նպատակակետը, որին, սակայն, նրանք հասնում էին միայն ամիսներ անց, Բաղդադի երկաթգծի երկայնքով ընկած տարածքներն էին, որտեղ նրանք այժմ գտնվում են տեղահանության ճամբարներում: Նշված վայրը հասնում էին գրեթե միայն կանայք և երեխաներ, սակայն նրանցից էլ հարյուր հազարավորները մահացան ճանապարհին: Այս ճամբարներին ևս դրսից օգնություն չհասավ: Մեծ քանակությամբ փախստականներ մահանում են բծավոր տիֆից և սովից:

Դեռևս մինչև հայ ժողովրդի այս հիմնական մասի տեղահանությունը զինաթափվեցին բոլոր հայ զինվորները, ավելի ուշ նրանց օգտագործեցին իբրև ճանապարհաշինարարների: Զինաթափման ենթարկվեց ողջ ժողովուրդը և դա կատարվում էր առանց հասարակական կարգի խախտման: Բոլոր հայ պաշտոնյաները ազատվեցին պաշտոններից: Ապրիլ 24-25-ին Կոստանդնուպոլսում բանտարկվեցին 235 հայեր, հասարակության դասակարգային լավագույն խավերի ղեկավար գործիչները, դրանից 3 օր առաջ սկսվեց մտավորականության ձերբակալումն ամբողջ Անատոլիայով մեկ: Որևէ դատական գործընթաց բանտարկվածներից որևէ մեկի նկատմամբ չհարուցվեց, նրանցից մեծ մասը մահապատժի ենթարկվեց առանց դատարանի վճռի:

Օգոստոսի սկզբին սկսվեց նաև Արևմտյան Անատոլիայի հայ բնակչության տեղահանությունը բացառությամբ Զմյուռնիայի վիլայեթի: Այստեղ ապրում էին ավելի քան 300000 հայեր: Դրա իրագործումը ձգվեց ընդհուպ մինչև հոկտեմբեր: Այժմ դեռևս մեծ քանակությամբ հայեր կան Կոստանդնուպոլսում և Զմյուռնիայում, առանձին հայեր, որոնք կարողացան թաքնվել կամ գումարով փրկագնեցին իրենց ազատությունը կամ թողնվեցին որպես անփոխարեելիներ (շատ արհեստներով զբաղվում էին միայն հայերը), դեռևս ցրված են ամբողջ երկրով մեկ: Ընդհանուր առմամբ հայ բնակչությունը կրճատվել է, համենայն դեպս, իր թվաքանակի կիսով չափ՝ սպանությունների, սովի և համաճարակների հետևանքով: Մնացած թվաքանակը՝ 130-200 հազար՝ Եփրատի ափերին, 150 հազարը՝ Բաղդադի երկաթգծին, 45 հազարը՝ Հալեպի մոտ, 30 հազարը՝ Դամասկոսի մոտ, ավելի քան

200 հազար մարդ փրկվեցին Ռուսաստանում, շնորհիվ նրա կողմից ձեռնարկած ռազմական գործողությունների:

Գերմանական մամուլի կողմից առաջ քաշած պնդումը հայերի համընդհանուր դավադրության մասին, ինչը մասամբ հիմնվում է իրադարձություններից բացարձակապես անտեղյակության վրա, հերքվում է հետևյալ փաստերով՝ 1915թ. հունիսի 4-ին թուրքական պաշտոնական հաղորդագրությունը «Հավաս» գործակալության մայիսի 24-ի մեղադրանքների վերաբերյալ այսպես կոչված զանգվածային սպանությունների պատճառով Հայաստանում արձանագրում է, որ «"Հավասի" հաղորդագրության մեջ բերված վայրերում հայերը որևէ այնպիսի գործողություններ չեն կատարել, որոնք կարող էին խախտել հասարակական կարգն ու կանոնը և անդորրը»: Դեռևս օգոստոսի 22-ին Ժնևում թուրքական գլխավոր հյուպատոսը, թեպետ գրեթե արդեն ողջ ժողովուրդը տեղահանվել էր, մամուլին տրված հաղորդագրություններից մեկում պնդում էր. «Ողջ հայ բնակչությունը, գտնվելով լիարժեք անվտանգության մեջ, գտնվում է իշխանության պաշտպանության տակ, եղել են միայն մի քանի մեղավորներ, դատապարտված են քաղաքացիական դատարանների կողմից: 1915թ. հինգ հաղորդագրություններում մատնանշվում են միայն մի հայ պատգամավոր, որը (պատերազմը սկսելուց առաջ) փախել է Ռուսաստան և այնտեղ կազմակերպել պարտիզանական խմբեր Թուրքիայի դեմ պայքարելու համար, երկու հայեր, որոնք կազմակերպել են գնացքների դուրս գալը ռելսերից, մեկ հայ, որը խուսափել է ճանապարհային աշխատանքներից և սպանել է ոստիկանին»: Բացի Զեյթունում և Վանում արդեն նկարագրված իրադարձություններից, հաղորդվում է նաև տեղահանության դեմ Շապին Գարահիսարում հայերի զինված դիմադրության մասին, այնուհետև դա տեղի ունեցավ Ուրֆայում, Մուշում, Սասունում և Մուսա լեռան վրա՝ Կիլիկիայում, այնտեղ փախած հայերն ի պատասխան իրենց օգնության կոչերի ընդունվեցին ֆրանսիական նավի վրա: Հետո, հավանաբար, հետևում է թուրքական հաղորդագրության հիշեցումն այն մասին, որ հակառակորդի նավերի հրամանատարները կապ են հաստատել ափամերձ բնակավայրերի հայերի հետ:

Չկան նաև որևէ փաստեր որպես հիմք և պնդելու համար այն, որ հայկական դավադրությունը հրահրվել է Անգլիայի կողմից: Երիտասարդ եգիպտացի Ռիֆաթի պնդումները, որոնք անցան գերմանական մամուլով, շփոթում են դեռևս պատերազմից առաջ թուրքական ընդդիմադիր կուսակցության բացահայտված դավադրության հետ, որին մասնակցել են նաև հայկական «Հնչակ» կուսակցության

որոշ անդամներ:

Միայն 1916թ. Բեռլինում թուրքական դեսպանության կողմից Վոլֆի բյուրոյի միջոցով տարածվեց հայերի կողմից մեծ զինված ապստամբությունների և չարագործությունների մասին տեղեկատվությունը: Սակայն ինչպես այստեղ, այնպես էլ 1915թ. հաղորդագրության մեջ տարբերություն չէր դրվում այն հայերի, որոնք իբրև ռուսահպատակներ պարտավոր էին ծառայել ռուսական բանակում (Ռուսաստանում բնակվում է ավելի քան մեկ միլիոն հայ), պարտիզանական ջոկատների, որոնք ձևավորվել են Ռուսաստանում և թուրքահայերի միջև: Նմանապես թաքցվում են փաստերը նաև թուրքական կառավարության հավաքած լուսանկարների հավաքածուում, որը վերնագրվել է «Հայ հեղափոխականների շարժումը և ձգտումները»՝ թուրքերեն, անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն տեքստերով: Հենց այս բրոշյուրից իրազեկ անձանց համար բավականին ակնհայտորեն երևում է, թե որքան աղքատ փաստական նյութ կարող են բերել թուրքերը հայերի հեղափոխական շարժման վերաբերյալ: Լուսանկարների կեսի վրա պատկերված չէ հայերից խլված զենքը, այն դեպքում, երբ հայտնի է, որ Արևելքում ցանկացած ժողովուրդ զինված է: Մնացած լուսանկարները վերաբերում են, եթե խոսքը ռուսահայերի մասին չէ, մինչ սահմանադրական ժամանակաշրջանին, երբ երիտթուրքերը ևս հանդիսանում էին հեղափոխական կուսակցություն և, բացի այդ, դեպքերի մեծամասնությամբ դրանք վերաբերվում են ինքնըստինքյան ենթադրվող ազգային գիտակցության արտահայտմանը:

Հայ ժողովրդի տեղահանության իսկական պատճառները, որոնք, ինչպես ցույց տրվեց առանձին անձանց մեղադրանքների մեջ չունեն որևէ բավարար հիմք, ենթադրաբար հետևյալն են՝

1. Թուրքիան դեռ Ռուսաստանին պատերազմ հայտարարելուց առաջ փորձում էր հեղափոխականացնել ռուսահայերին: Այդ նպատակին պետք է ծառայեր կառավարության կողմից արտոնված բոլոր դաշնակցականների (Թուրքիայից և Ռուսաստանից) կուսակցական ժողովը, որը տեղի ունեցավ Էրզրումում 1914թ. օգոստոսի առաջին օրերին՝ երիտթուրք առաջնորդների մասնակցությամբ: Այնտեղ, սակայն, ներկա գտնվող ռուսահայերը հայտարարեցին, որ ի վիճակի չեն նման ձևով գործելու, սակայն նրանք խոստացան Թուրքիայի իրենց կուսակից եղբայրներին հնարավորինս հեռու մնալ այդ գործից: Թուրքիայի դժգոհությունը իր ծրագրի նման ձախողումից, որի մեղքը գցեցին թուրքահայերի վրա, էլ ավելի ուժեղացրեց հակակրանքը նրանց նկատմամբ:

2. Հիմնական պատճառը հանդիսանում է հայերի փորձերը արևելաանատոլիական վիլայեթներում բարեռորոգումների իրագործման ուղղությամբ, որոնք խոստացվել էին Բեռլինի կոնգրեսի արձանագրության 61-րդ հոդվածով և ամեն տարի քննարկվում էին թուրքական խորհրդարանում և իրենց ավարտն ունեցան Գերմանիայի նշանակալից օժանդակության հետևանքով 1914թ-ին ընդունված վիլայեթների մասին օրենքում: Այդ օրենքով նախատեսվում էր, որ բնակչության թվի համամասնությամբ հայեր պետք է մասնակցեին վիլայեթների խորհուրդների աշխատանքներին և պաշտոններ զբաղեցնեին, իսկ 6 արևելաանատոլիական վիլայեթները՝ պետք է ենթարկվեին չեզոք երկրներից երկու գլխավոր տեսուչներին: Այս ձգտումները կեղծ ձևով թուրքական կառավարության կողմից բնորոշվեցին որպես հայերի ձգտում ինքնավարության, ինչը վտանգ է ներկայացնում պետության շահերի համար, այն դեպքում, երբ նրանք գործում էին բացարձակապես օրենքի շրջանակներում և խոսքը պետության ներսում կարգուկանոնի մասին էր՝ հայերի կյանքի և ունեցվածքի պաշտպանության համար, որոնք հնուց ի վեր վտանգի էին ենթարկվում քրդերի կողմից, և գլխավոր տեսուչները նույնպես պետք է լինեին թուրք պաշտոնյաներ[12]:

3. Ներկայիս երիտթուրքական կառավարությունը ներկայացնում է կենտրոնացման գաղափարներ ի հակադրություն ընդդիմադիր կուսակցության ապակենտրոնացման գաղափարի: Նա ձգտում է կառուցել ուժեղ թուրքական կայսրություն միայն թուրքական ցեղի հիմքի վրա, որը չի կազմում նույնիսկ կայսրության բնակչության ընդհանուր թվի կեսը և այդ իսկ պատճառով բացահայտորեն հետին պլան է մղում նույնիսկ արաբներին: Իսկ հայերը բոլորից շատ էին խանգարում նրան այդ նպատակն իրագործելու համար, քանի որ նրանք ամենաշխատասեր, իսկ մտավոր կամ ինտելեկտուալ առումով՝ բոլորից բարձր կանգնած ժողովուրդն են Թուրքիայում:

4. Թուրքիան հիմա էլ դեռ պետություն է համարվում, որը պաշտոնապես հիմնվում է հոգևոր իրավունքի վրա: Կայսրության միասնության համար նրան արգելք են ծառայում բոլոր քրիստոնյաները: Այն մասին, թե որքան ուժեղ դեր խաղաց այս հանգամանքը, բնորոշում է այն փաստը, որ մահմեդական կրոնին անցած հայերին խնայում են: Սրբազան պատերազմի հայտարարումը ոչ պակաս չափով նպաստեց նրան, որ գրգռեց ժողովրդի կրքերը քրիստոնյաների, տվյալ

---

[12] Հեղինակը իրավացի չէ, գլխավոր տեսուչները նշանակվում էին երկու չեզոք պետությունների ներկայացուցիչներից:

դեպքում՝ հայերի դեմ: Այսպիսով տեղահանությունը կարող է հայտնի իմաստով ընկալվել որպես քրիստոնյաների հետապնդում:

Գերմանիայի կառավարությունն իր հյուպատոսների հաշվետվությունների հիման վրա հայերի հետապնդումները սկսելու մասին Կոստանդնուպոլսում իր դեսպանության միջոցով հայտարարեց բողոք, ցավոք՝ անարդյունք, այն միջոցների դեմ, որոնք ինչպես ակնհայտ հակասում էին արդարությանն ու մարդասիրությանը, այնպես էլ ծայրաստիճան վնասակար էին հենց թուրքական պետության համար: Հայերի ոչնչացման հետևանքով, որոնց ձեռքով անցնում էր արտաքին առևտրի 90%, կորցվեցին գերմանական խոշոր կապիտալներ:

Միաժամանակ Թուրքիայի տնտեսական զարգացումը դրված է հարցականի տակ, քանի որ բոլոր գիտելիք պահանջող մասնագիտություններում ներկայացված էին բացառապես հայերը և, օրինակ, երկաթգծի կառույցների շինարարության ժամանակ որպես բանվորների նախնառաջ փնտրում էին նրանց: Բացի դրանից, նրանք կազմում էին թուրք պաշտոնյաների գերակշիռ մասը և դեռ հայտնի չէ, արդյոք կգտնվի աշխատունակությամբ նրանց հավասարազոր փոխարինում:

Քահանա Շտիր

Politarchiv, R14098. Ab. 39028,
ԱԲԳԱՏ, էջ. 453-459

№ 67

ՌԱՅԽՍՏԱԳԻ ԱՆԴԱՄԸ ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾԻ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

[Դ. Մումմ, ռայխստագի անդամ] *Բեռլին, 3 դեկտեմբերի 1917*

Վկայակոչելով դեսպանորդ պարոն ֆոն Ռոզենբերգի հետ նախկին բանակցությունները, ինձ թույլ եմ տալիս արտաքին գործերի նախարարության ուշադրությունը հրավիրել, հավանաբար, շուտով սպասվող Ռուսաստանի կողմից գրավված տարածքների ազատագրման վրա: Եթե թուրքերը կրկին գրավեն այդ տարածքը, կպահպանվի լուրջ վտանգ, որ կկրկնվի հյուպատոսական հաղորդումներից և այլ աղբյուրներից արդեն հավաստիորեն հայտնի հայկական կոտորածը: Էնվեր փաշան վարում է առավել միատարր Թուրքիա-

ստեղծելու քաղաքականություն: Հայերի դեմ ուղղված նոր չարագործությունները կարող էին ոչ միայն նպաստել այն բանին, որ կրկին խթանեն ռազմաշունչ տրամադրություններն Անգլիայում և Ամերիկայում, այլև հայրենիքում[13] կարող են առաջանալ լուրջ բարդություններ, քանզի որոշ քրիստոնեական շրջաններում լրջորեն մտահոգված են թուրքերի կողմից սպանված հարյուր հազարավոր քրիստոնյաներով, առաջանում են լուրջ բարդություններ: Եթե «ազգերի ինքնորոշման իրավունքից» բխող Հայաստանի, որն այժմ բաժանված է Ռուսաստանի, Պարսկաստանի և Թուրքիայի միջև, անջատումը կամ ինտերնացիոնալիզացումը հնարավոր չեն, ապա խոսքը այն մասին կլինի, թե կարող են արդյոք վերադարձող թուրքերի հետ միասին գերմանական սպաները և հյուպատոսական պաշտոնյաները մտնել այնտեղ[14], որոնք, անշուշտ, արդեն իրենց ներկայության փաստով աննկատ ձևով կկանխեն որոշ վայրագություններ:

Ամբողջովին գիտակցելով Հայկական հարցի լրջությունն ու բարդությունը, կցանկանայի իրավասու մարմինների առջև սահմանափակվել լոկ այս քայլով:

Արտաքին գործերի նախարարություն *Խորին հարգանքով Դ. Մումմ*
Ռայխստագի անդամ

Politarchiv, R14098. Ab. 39028,
ԱՐԳԱՏ, էջ. 459-460

№ 68

ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԿՑՈՐԴ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ ՕՏՏՈ ԼՈՍՍՈՎԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

15 մայիսի 1918թ.

Թուրքերն անցան նաև Անդրկովկասի հայերի լիակատար ոչնչացմանը:

Politishes Archiv des Auswdrtigen Amtes, Ableilung I A, Turkei, 183/51, Ar0698. 1918.
ГАОТОМС, т.1, стр. 312.

---

[13] Գերմանիայում:
[14] Վերագրված տարածքներ:

№ 69

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԵՍՊԱՆ ԲԵՌՆՍՏՈՐՖԻ ՀԵՌԱԳՐԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

23 մայիսի 1918թ.

Ինչպես ես անընդհատ հաղորդում եմ, թուրքական քաղաքականության նպատակն է հայկական շրջանների անընդհատ օկուպացիան և հայերի ոչնչացումը: Հակառակ իմաստով Թալեաթի և Էնվերի բոլոր հավաստիացումները՝ կեղծիք են: Կոստանդնուպոլսում հաղթանակ է տարել ծայրահեղ հակահայկական կուրսը: Այսօր թուրքական ծրագիրն ակնհայտ է, նրանք կարծում են, որ ստանում են մահմեդական Ախալցխայի մահմեդական շրջանը, քողարկելով փաստերը, նրանք փորձում են ներկայացնել, որ ամբողջովին բնակեցված Ախալքալակի շրջանը մտնում է Ախալցխայի շրջանի մեջ: Նրանք գրավել են Ալեքսանդրապոլ քաղաքը: Նրանք ցանկանում են գրավել Ջուլֆայի երկաթուղային գիծը, այդ թվում նաև երկաթգծից արևելք ընկնող 25 կմ երկարությամբ տարածքի շերտը և այլևս չվերադարձնեն այն:

Թուրքերի կողմից Ելիզավետպոլի և Բաքվի նահանգների բռնակցումը ամբողջ բնակչության համաձայնությամբ արդեն կատարվել է, միաժամանակ թուրքերը շարժվում են Բաքվի ուղղությամբ, որպեսզի դուրս մղեն այնտեղից բոլշևիկներին և դիրքեր են գրավել այնտեղ: Թուրքական զորքերը գտնվում են Ախալքալակից հարավ ընկած ռազմաճակատում, շարժվելով Թիֆլիսի և Երևանի ուղղությամբ: Քուրդ և թաթար կամավորներն ուղեկցում են թուրքական բանակին, թալան և սպանություններ կատարելով հայկական քաղաքներում: Բոլոր տղամարդկանց տանում են: Բախումներից խուսափելու համար հայկական զորքերը քաշվում են արևելք: Հայկական բնակչությունը արագ հեռանում է դեպի արևելք և շուտով կընբախվի թաթարների հետ, ինչը կհանգեցնի կոտորածի: Թուրքական քաղաքականությունը վկայում է այն մասին, որ Թուրքիան չի առաջադրի վերջնագրային պահանջները և կհասնի fait accopli այդ տարածքների տիրապետման իմաստով: Հայ բնակչությանը բնակվելու համար չի մնացել ոչ մի հողակտոր: Ես կարծում եմ, որ այդպիսին է թուրքերի մտադրությունը: Լեյշմանի միջոցով Հայկական ազգային

խորհրդի հեղինակավոր պատվիրակությունը խնդրում էր Գերմանիային պաշտպանել հայ ժողովրդին լրիվ ոչնչացումից և որ հայկական տարածքի մնացած հատվածները դրվեն Գերմանիայի հովանավորության տակ: Իմ տրամադրության տակ ես ունեմ պաշտոնական փաստաթուղթ այդ հարցի հետ կապված: Հայերի ոչնչացումը թույլ չտալու նպատակով անհրաժեշտ է Թուրքիայի վրա իրականացնել համառ և անընդհատ ճնշում: Խնդրում եմ, որքան հնարավոր է արագ ուղարկել ռազմանավ, քանզի արդեն Փոթի է ուղարկվել մի գումարտակ և իմ հայտարարության հետ կապված հանձնարարականներ փոխանցել հայերի դրության պաշտոնական քննարկման համար: Հարկավոր է ձեռնարկել անհապաղ գործողություններ:

The Armenian Genocide during the First World War /W. and S. Gust (ed.) in cooperation with Taner Akcam: Documents from German State Archives. [A-2187. DE/PA-AA/ R14100. DuA Dok. 395 (re). 1918-05-23-DE-001].
ГАОТОМС, т.1, стр. 313.

№ 70

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԱՌՈՒԹՅԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԹՈՒՐՔԵՐԻ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԿՈՎԿԱՍՈՒՄ ՏԻՐՈՂ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ՇԱՐԱԴՐԱՆՔՈՎ

26 մայիսի 1918թ.

Թուրքերի գործողությունները մարեցին Կովկասի հետ սիրալիր համաձայնություն կնքելու հույսերը, իսկ Անդրկովկասյան միությունը կազմալուծվեց: Ելնելով այդ նոր բարդ և ցավալի իրավիճակից, Ձերդ գերազանցություն, բարեհաճեցեք բանավոր բարեկամաբար, բայց կտրականապես հայտնել հետևյալը՝

1. Կայսերական կառավարությունը իրավունք է վերապահում իրեն ձեռքերի ազատություն տալ Կովկասում ընթացող բոլոր իրադարձությունների հետ կապված: Կառավարությունը ընդհանուր առմամբ հետաձգում է իր գնահատականի արտացոլումը այն միջոցառումների նկատմամբ, որոնք ձեռնարկվել են Կարսի, Արդահանի և Բաթումի գավառների սահմաններում և սահմաններից դուրս՝ կապված Բրեստ- Լիտովսկի պայմանագրին դրանց համապատասխա-

նելիության հետ:

2. Կայսերական կառավարությունը չի կարող ոչ հավանություն տալ, ոչ էլ պաշտպանել Կովկասում թուրքական զորքերի առաջխաղացումը և հիշատակված երեք գավառների սահմաններից դուրս տարածվող թուրքական քարոզչությանը: (...)

4. Կայսերական կառավարությունը կոչ է անում օսմանյան կառավարությանը երաշխավորել համապատասխան վերաբերմունքը հայերի նկատմամբ այն շրջաններում, որոնք օկուպացված են Թուրքիայի կողմից: Կառավարությունն իրեն ավելի կոնկրետ առաջարկություններ անելու իրավունք է վերապահում:

5. Կայսերական կառավարությունը անհրաժեշտ է համարում օսմանյան կառավարության ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, որ գործող քաղաքական պայմանագրերը Թուրքիային թույլ չեն տալիս որևէ պահանջներ ներկայացնել Գերմանիային, որ վերջինս պաշտպանի կամ աջակցի նրան նման ռազմական և դիվանագիտական գործողություններում, որը նա ձեռնարկում է առանց մեր համաձայնության կամ էլ հակառակ մեր խորհրդի: Մենք հանում ենք մեր վրայից ամբողջ պատասխանատվությունը նման ինքնակամ ձեռնարկված միջոցառումների համար և դրանց հետանքների համար պետք է պատասխան տա Թուրքիան: Եթե կամայական անջատողական գործողություններից ելնելով Թուրքիայի ընդհանուր դրությունը կբվատթարանա և պայմանագրով երաշխավորված նպատակների իրականացումը կդրվի կասկածի տակ, ապա Թուրքիան ստիպված կլինի համաձայնվել դրա հետ... Նմանապես մենք չենք կարող պաշտպանել Թուրքիային, եթե թուրքական կողմից թույլ տրված լինեն անօրինականություններ Կովկասի քրիստոնյա բնակչության նկատմամբ:

Գեներալ Լյուդեդորֆն արդեն հանձնարարություն է տվել գեներալ ֆոն Զեկտին դադարեցնել ռազմական գործողությունները, և նա կտեղեկացնի Էնվեր փաշային այն մասին, որ քաղաքական ղեկավարությունն օժտված է գլխավոր հրամանատարության անվերապահ աջակցությամբ:

Ակնկալում եմ արագ հաղորդագրություն Ձեր կողմից ձեռնարկված քայլերի մասին...

Հանձնարարականներ 1-ին կետի հետ կապված՝ խիստ անձնական և հույժ գաղտնի: Մենք չենք կարող օժանդակել Թուրքիայի քաղաքականությանը, որն իրականացվում է Կովկասում՝ անգամ փոխհատուցումների դիմաց: Հնարավոր է, որ խոսքը կարող է լինել

միայն այն մասին, որ մենք... կարող ենք թույլ տալ... Բրեստի պայմանագրով նախատեսված սահմանների խախտում, պայմանով, որ թուրքական կառավարությունը վերջնականապես կսահմանափակի իր պահանջները Մարիցայի 1915թ. դրությամբ առկա կես տարածքի նկատմամբ:

3-րդ և 4-րդ կետերի հետ կապված խնդրում եմ, գեներալ ֆոն Լոսսովի հետ համաձայնեցնելով, առաջարկություններ ներկայացնել Վրաստանի սահմանների և հայերի նկատմամբ պատշաճ վերաբերմունքի երաշխիքների մասին: Հայկական հարցում մենք չենք կարող բավարարվել Թուրքիայի հավաստիացումներով:

Politishes Archiv des Auswdrtigen Amtes des kaiserlichen Deutschlands (Politarchiv), Korst./Ankara, R7208, Ab. 22075.
ГАОТОМС, т.1, стр. 313-314.

№ 71

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ՌԻԽԱՐԴ ՖՈՆ ԿՅՈՒԼՄԱՆԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԻՆ

3 հունիսի 1918թ.

Ամբողջությամբ արհամարելով իրենց տված խոստումները, թուրքերը հետևողականորեն ձգտում են իրենց նպատակին հասնելուն՝ հայերի ոչնչացումը Կովկասում, կամ իրենց պասիվ հավանությամբ թույլ են տալիս, որ դա կատարվի:

Politishes Archiv des Auswdrtigen Amtes, Ableilung I A, Turkei, 183/51, Ar3533, N 1178.
ГАОТОМС, т.1, стр. 316.

№ 72

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՌԱՅԽՍԿԱՆՑԼԵՐԻ ՄՈՏ ՀՐԱՎԻՐՎԱԾ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

3 հունիսի, 1918թ.

Մասնակցում էին՝

Նորին գերազանցություն պարոն ռայխսկացլերը
պետական քարտուղար ֆոն Կյուլմանը,
կրտսեր պետական քարտուղար ֆոն Ռադովիցը,
գեներալ-մայոր ֆոն Լոսովը,
դեսպանորդ ֆոն Ռոզենբերգը,
գաղտնի խորհրդական դոկտոր Հեպերտը,
գնդապետ ֆոն Վինտերֆելդը,
դեսպանատան խորհրդական Պրիտվիցը,
տնօրեն Դոյտելմոզերը:

ԼՈՍՈՎ -... Անդրկովկասի արևելյան մասում (Բաքու և Ելիզավետպոլ) Թուրքիան արդեն վաղուց ունի պանիսլամական հենակետեր: Նա ցանկություն ունի տիրանալ ամբողջ Կովկասին, սակայն ոչ այն բանի համար, որ այնտեղ կարգուկանոն հաստատի, այլ նրա համար, որ թալանի երկրամասը:

Առաջ են մղվում երեք ուժեր՝

1. Էնվերի թիկունքին կանգնած նոր թուրքական իմպերիալիզմը:

2. Թալեաթի կառավարող կուսակցությունը, որը ցանկանում է բնաջնջել բոլոր հայերին ոչ միայն Թուրքիայում, այլև նրա սահմաններից դուրս: Հալիլը մեղմ է, բայց անվճռական:

3. Կոստանդուպոլսի ֆինանսական խոշոր գործարարները, աճող ավազակային վարչախումբը: Այս ուժը թերևս ամենազորեղն է:

Գերմանիային փորձում են ներքաշել այդ գործի մեջ, սակայն նպատակաուղղված ձևով նրանից թաքցնում են այն տեղեկությունները, որոնք թույլ կտային կողմնորոշվել Կովկասում տիրող իրական դրության մեջ:

Տրապիզոնի վերջնական արձանագրությունը նախատեսում էր, որ Բրեստի պայմանագիրը հիմք կծառայի Կովկասի հետ խաղաղություն հաստատելու համար: Սակայն թուրքական կառավարությունը համաձայն չէ դրա հետ: Բանակցությունները կշարունակվեն Բաքումում, քանզի այնտեղ կարելի է լավագույն ձևով այդ բանակցությունները մեկուսացնել արտաքին աշխարհից: (...)

Խաղաղության հաստատումը Անդրկովկասի և Թուրքիայի միջև, ըստ Հալիլի, Թուրքիային կտա ամբողջ Հայաստանը, ընդհուպ մինչև Երևանի և Էջմիածնի մերձակայքերը, այնուհետև՝ տնտեսական գերիշխանություն Կովկասում, վերահսկողություն Բաքու տանող երկաթգծի վրա:

Անդրկովկասցիները պատրաստ էին ամեն ինչի, միայն թե

Գերմանիայն լիներ պայմանավորվող կողմ: Սակայն թուրքերը մերժեցին դա: Գեներալ ֆոն Զեկտին վախեցրին Մոսուլում իբր թե տիրող բարդ իրավիճակի մասին խեղաթյուրված զեկուցագրերով, որպեսզի նրան ավելի զիջողական դարձնեն թուրքերի ցանկությունների հանդեպ: Թուրքական պահանջները մեծացան ընդհուպ մինչև Հյուսիսային Կովկասի նկատմամբ հավակնություններ ունենալու աստիճանի: (...)

ԿՅՈՒԼՄԱՆ - Այս տեղեկությունները հաստատում և լրացնում են Բեռնսդորֆի տեղեկությունները և հաղորդագրությունները Կովկասի ժողովուրդների մասին: Թուրքերը չափազանց անհուսալի են: Նրանց համար, ով լավ գիտի թուրքերին, դրանում ոչ մի նոր բան չկա:

Մենք կարիք չունենք ճանաչելու Կովկասի հետ Թուրքիայի պայմանագրի ստորագրումը, քանի որ իրական ուժ ունեցող համաձայնագրով սեպարատ խաղաղության պայմանագրերը բացառվում են: Ավստրիան մեր հետ միասին բողոք կարտահայտի դրա դեմ: Այնուամենայնիվ, վստահ չեմ դրա նպատակահարմարության մեջ: Մենք խզում չենք ուզում Թուրքիայի հետ (...):

Էնվերը ազգայնական է, երազող, փայփայում է նապոլեոնական երազներ, ցանկանում է կոծկել իր հին կովկասյան խայտառակությունը: Թալեաթը ցանկանում է ցրել իր հասցեին հաճախ հնչող մեղադրանքները կիսատ գործողությունների և թուլության մասին:

Այն ժամանակ մենք Թուրքիային տվեցինք շատ երաշխիքներ: Հազիվ թե կարելի է վերադարձնել Միջագետքն ու Պաղեստինը: Այդ իսկ պատճառով մինչ այժմ մենք սահմանափակվում ենք նրանով, որ ասում ենք՝ այն ամենի հետ, ինչ դուք անում եք Կովկասում, մենք ոչ մի առնչություն չունենք: Ուստի նախկին երաշխիքների մերժումը կարելի է հիմնավորել՝ վկայակոչելով թուրքերի կողմից պայմանագրի խախտումը:

Թուրքերը ծրագրում են հայերի նոր կոտորած: Այդ իսկ պատճառով մենք նրանց հայտարարեցինք, որ նման գործողությունը մենք ստիպված ենք դիտել իբրև պայմանագրին հակասող և չենք պատրաստվում մեր վրա վերցնել պատասխանատվություն դրա համար, ամբողջ աշխարհի առաջ:

ԼՈՍՈՎ - Բաքուն դեռևս բոլշևիկների ձեռքում է: Սակայն անգլիացիներ և ֆրանսիացիներ այնտեղ չկան: Վլադիկավկազում լրիվ անիշխանություն է: Խորհուրդն անօգնական է: Ներկայիս դրությամբ Գրոզնին նավթի արդյունահանման առումով ավելի արդյու-

նավետ է, քան Բաքուն, սակայն այնտեղ հավակնություններ ունեն հյուսիս-կովկասյան ժողովուրդներ:

Մենք կարող ենք թույլ տալ, որ թուրքերը մահմեդական և թաթարական երկրներում օգտվեն արտոնություններից, համենայն դեպս քաղաքական և կրոնական առումով: Մեր համար պետք է հասնենք արտոնությունների քրիստոնյա երկրներում, հատկապես Վրաստանում և Հայաստանի մնացած մասում (այն կլինի ոչ մեծ): (...)

ՌԱՅԽՍԿԱՆՑԼԵՐ - Անգլիացիները և ֆրանսիացիները արդեն այժմ Հռոմի Պապին տրամադրում են հայերի հանդեպ թուրքական գազանությունների նկատմամբ մեր, իբր թե ներողամիտ, վերաբերմունքի դեմ:

ԼՈՍՈՎ - Ցավոք, մենք թուրքական տեղեկատվություն ենք ստանում միայն Թիֆլիսից, քանի որ մեր այնտեղի ռադիոկայանները չափազանց թույլ են, և թուրքերը հեռագրով ուղարկում են միայն գրաքննված փաստերը:

ԿՅՈՒԼՄԱՆ - Բեռնսդորֆը նույնպես խորհուրդ է տալիս մեզ հովանավորել Վրաստանին և Հայաստանին: (...)

Zentnales Staatsarchiv Potsdam (ZSTA) R/K2458/9, B1. 201-207.
АВГАТ, стр. 512-516.
ГАОТОМС, т.1, стр. 314-316.

№ 73

ԳԵՆԵՐԱԼ ԼՈՍՈՎԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹՅԱՆԸ

6 հուլիսի, 1918թ.

Դեսպանի կողմից թուրքերի վերաբերմունքի բնութագրումը անսպասելի չէր: (...)

4. Այն, որ Թուրքիան ցանկանում է հանդուրժել միայն փոքր Հայաստան, հասկանալի է: Կկարողանա՞ արդյոք Գերմանիան համաձայնվել արևելահայերի հետագա ոչնչացման հետ այն բոլոր մեղադրանքներից հետո, որոնք մեզ ներկայացվեցին արևմտահայերի ոչնչացման հետևանքով, կորոշեն քաղաքական հաստատությունները:

5. Տարածքային հերթական զիջումները, որոնք պահանջում

են թուրքերը, դրանք անվանելով սահմանների կանոնակարգում, կապված են Բաթումի, Արդահանի և Կարսի շրջանների հետ: Դրանց տիրապետման վերջնական քաղաքական կարգավիճակի սահմանումն, անշուշտ, պետք է որոշվի միայն համաժողովրդական հանրաքվեի միջոցով: Նման զիջումները դեպի հյուսիս և արևելք կառանձնացնեն տարածության մի շերտ, որը վերջնականապես կանցնեի թուրքերի տիապետման տակ և որի շուրջ հետագա քննարկումներն անհնար կլինեին: Ենթադրվում են, որ այդպիսով թուրքերի օգտին կարող է վերջնականապես լուծվել Բաթումի և այլ տարածքների տիրապետման իրականում դեռևս անկայուն կարգավիճակի հարցը:

Politarchiv, Konst/Ankara, R14102 Ab.29018.
ABГAT, стр. 546-547.
ГAOTOMC, т.1, стр. 317.

№ 74

ԿՈՎԿԱՍՈՒՄ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԿՐԵՍ ՖՈՆ ԿՐԵՍԵՆՇՏԱՅՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԱՈՒԹՅԱՆԸ

Թիֆլիս, 10 հուլիսի 1918թ.

Եպիսկոպոս Մեսրոպը, իր կյանքը վտանգի ենթարկելով, Երևանից եկավ, որպեսզի օգնություն խնդրի գերմանացիներից: Նրա խոսքերով, գրեթե կես միլիոն հայեր սովամահ կլինեն, եթե անմիջապես թույլ չտրվի հայերի վերադարձը Սարդարապատ-Իգդիր և Դավալու շրջաններ, որպեսզի հավաքեն բերքը:

Հարգելի եպիսկոպոսի նկարագրությունը ցնցող է: Թուրքերի մտադրությունը ողջ հայ ազգին մատնել սովի՝ ակնհայտ է: Էսադը չնչին պատրվակներով մերժեց հայ գաղթականներին և ազգային խորհրդի հայրենիք վերադառնալու իմ խնդրանքը:

Կենտրոնական տերությունների ուժեղ ճնշումը թուրքերի վրա հանդիսանում է մարդասիրության և քաղաքականության պարտադիր պահանջ:

Deutschland und Armenien, 1914-1918. Sammlung Diplomatischer Aktenstücke. Hrsq. únd eingel. von Dr. Johannes Lepsius. Potsdam, 1919, N 404.
ГAOTOMC, т.1, стр. 317-318.

№ 75

ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԿՅՈՐԴ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ OSSTՈ ԼՈՍՍՈՎԻ ՀԵՌԱԳԻՐԸ

11 հուլիսի 1918թ.

Դատելով այն բոլոր հաղորդումներից և տեղեկություններից, որոնք հասնում են ինձ Թիֆլիս (Վրաստան), հավիվ թե կարող է որևէ կասկած առաջանալ այն հարցում, որ թուրքերը պարբերաբար նկատակադրվում են ... այն մի քանի հազար հայերի ոչնչացմանը, որոնց նրանք առայժմ ողջ են թողել:

Politishes Archiv des Auswdrtigen Amtes, Ableilung I A, Turkei, 183/51, A31345. 1918.
ГАОТОМС, т.1, стр. 318.

№ 76

ԿՈՎԿԱՍՈՒՄ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՍԻԱՅԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԵՆԵՐԱԼ ԿՐԵՍ ՖՈՆ ԿՐԵՍՍԵՆՇՏԱՅՆԻ ԶԵԿՈՒՅՑԱԳԻՐԸ ՌԱՅԽՍԿԱՆՑԼԵՐ ՀԵՐՏԼԻՆԳԻՆ

Թիֆլիս, 11 հուլիսի 1918թ.

Միայն Գերմանիան է ի վիճակի ստիպել Թուրքիային հրաժարվել կենդանի մնացած հայ ազգի ոչ մեծ հատվածին, պարբերաբար սովի մատնելով, ոչնչացնելու նրա հանցավոր ծրագրի իրագործումից:

Գերմանիան պետք է գիտակցի այն փաստը, որ պատմական տեսակետից նա պետք է պատասխանատվություն կրի, եթե այժմ չօգտագործի իր ուժն ու ազդեցությունը մահմեդականների կողմից քրիստոնյա ժողովրդին ոչնչացումից պաշտպանելու համար:

Ես կխնդրեի Ձերդ գերազանցությանը թույլ տալ ինձ արտահայտել անձնական կարծիք այն մասին, որ բազմաթիվ նամակներից և հաղորդագրություններից հետո, որոնք ես այստեղ ստանում եմ, հավիվ թե կարող է որևէ կասկած լինել այն հարցում, որ թուրքերը մտադրված են պարբերաբար սովահարության կազմակերպման ճանապարհով, ոչնչացնել մի քանի հարյուր հազար հայերի, որոնք

դեռևս ողջ են մնացել:

Ես չէ, որ պետք է Ձերդ գերազանցությանն ասեմ ո՛չ այն պարտքի մասին, որը Գերմանիան իբրև քրիստոնյա երկիր պետք է կատարի հայ քրիստոնյաների հանդեպ և ո՛չ էլ այն ազդեցության մասին, որը կունենա այդ քայլը մեր երկրի և ամբողջ քրիստոնյա աշխարհի հասարակական կարծիքի վրա: Ես միայն կցանկանայի Ձերդ գերազանցության ուշադրությունը հրավիրել այն փաստի վրա, որ եթե մեզ չհաջողվի թուրքերից պաշտպանել հայերին, ապա Կովկասում և հարևան երկրամասերում մեր հեղինակությունը խիստ կտուժի, իսկ տնտեսական և քաղաքական ծրագրերի իրագործումը, որը մենք այժմ իրականացնում ենք , չափազանց կդժվարանա:

Մեզ վճռականորեն կմեղադրեն բարի կամք չդրսևորելու մեջ կամ էլ կորոշեն, որ մենք չունենք բավարար ուժ և վճռականություն թուրքերին ստիպելու համար, որ համաձայնվեն մեր մտածելակերպի հետ: Մենք ձեռք կբերենք անհաշտ թշնամիներ ի դեմս բազմաթիվ վրացահայերի, որոնք, իրենց հարստությունից ելնելով, շատ ազդեցիկ են, և մենք մեր հակառակորդներին կտրամադրեինք բացառիկ արդյունավետ քարոզչության միջոցներ մեր դեմ:

Այսպիսով, ես խոնարհաբար խնդրում եմ Ձերդ գերազանցությանը, որ որքան հնարավոր է արագ թուրքական կառավարության վրա իրագործվի վճռական ճնշում՝ բոլոր եղած միջոցների կիրառմամբ, որ նա դուրս բերի իր զորքերը Հայաստանից, թույլ տա այն հայերին, որոնք լքել են իրենց տները, վերադառնալ իրենց օջախները, ստեղծի պայմաններ, որ հայերն առանց արգելքների կարողանան հավաքել իրենց բերքը վտանգ չզգալով իրենց կյանքի և ունեցվածքի համար, և որ այն հայերը որոնց քշել են բանվորական ջոկատներ, ազատ արձակվեն և անհապաղ վերադառնան տուն:

Wolfgang and Sigrid Gust (ed.) in cooperation with Taner Akcam: The Armenian Genocide during the First World War: Documents from German State Archives. A31345. DE/PA-AA/ R14103. DuA Dok. 405 (gk):
ГАОТОМС, т.1, стр. 246.

№ 77

ՖԵԼԴՄԱՐՇԱԼ ՀԻՆԴԵՆԲՈՒՐԳԻ ԿԱՐԾԻՔԸ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սարսափելի իրադարձությունները, որոնք կատարվեցին ou-

մանյան կայսրության ամբողջ տարածքում և պատերազմի ավարտին, ինչպես նաև տեղի ունեցան Անդրկովկասի հայկական մասում թուրքերի կողմից, ներկայացվում էին իբրև պարզապես ներքին գործ...

Թուրքիայի մասնակցությունը պատերազմում բացահայտեց թուրքական կառավարման ամենամոռալ կողմերը, այսինքն՝ թուրքերի վերաբերմունքը հայերի նկատմամբ: Հայկական հարցը ... կախված էր պանթուրքական, ինչպես նաև պանիսլամական գաղափարախոսությունից: Այդ հարցի լուծման փորձը ուղեկցվում էր ազգային ատելությամբ և կրոնական թշնամանքով ... Թուրքիան իրականացնում էր հայերի ոչնչացման քաղաքականություն:

P. von Hindenburg, Feld Marshal Aus Meinem Leben. Leipzig: Hirzel, 1934, p. 168-169.
ГАОТОМС, т.1, стр. 319-320.

№ 78

ԳԵՆԵՐԱԼ ԼԻՄԱՆ ՖՈՆ ՍԱՆԴԵՐՍԻ ՇՏԱԲԻ ՊԵՏ, ԹՈՒՐՔԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՄԱՅՈՐ ՖՐԱՆՑ ԿԱՐԼ ԷՆԴԵՐՍԻ ԿԱՐԾԻՔԸ ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անշուշտ, երկրագնդի վրա ոչ մի ժողովուրդ այդ աստիճան չտուժեց առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, որքան հայերը: Կոտորվեց ավելի քան 1,2 մլն հայ:

Die Turkei, 4th ed. Munich: C.H.Beck, 1918, p.161: The Ottoman Empire: A. Troubled Legacy: Views, Comments and Judgements by Noted Experts Worldwide. Comp. by Vahakn N. Dadrian for the Association of Genocide Scholars. Williamsburg (USA), 1997, p.56.
ГАОТОМС, т.1, стр. 320.

№ 79

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՇՏԱԲԻ ՊԵՏ ԳԵՆԵՐԱԼ ԷՐԻԽ ԼՅՈՒԴԵՆԴՈՐՖԻ ԿԱՐԾԻՔԸ

Թուրքերը մշտապես ապաշնորհ քաղաքականություն էին վարում իրենց այլազգի բնակչության նկատմամբ: Նրանք ղեկավար

վում էին ամեն ինչ վերցնելու և ոչինչ չտալու սկզբունքով ... Նրանց ոչնչով չարդարացված վերաբերմունքը հայերի նկատմամբ շատ վնասեց Թուրքիային:

Հայերի դաժան կոտորածը ... իրականում լուրջ սխալ էր և ոչինչ չի կարող արդարացնել այն: Գերմանիայի կանցլերը զզվանքով դատապարտեց այդ գործողությունները:

General Erich Ludendorff. Meine Kriegserinnerungen 1914-1918. Berlin: Mittler and Sohn, 1919, s.136, 500
ΓΑΟΤΟΜΣ, т.1, стр. 320.

[1700դր]

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ

ՄԱՏԵՆԱՇԱՐ թիվ 4

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (1915-1918 թթ.)

Ֆորմատ՝ 60×84 1/16, 13,7 տպ. մամուլ:
Թուղթ՝ օֆսեթ 80 գ/մ^2,
Տպաքանակ՝ 300

A II 89172

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրատ.
220089172